

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

Ե Ր Կ Ե Ր

ՀԻՆԳ ՀԱՏՈՐՈՎ

Գ

ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ադոնց Ն. Գ.

Ա 205 Երկեր. հատ. Գ., Հայերենագիտական ուսումնասիրություններ / Հրատարակության պատրաստեց Պ. Հ. Հովհաննիսյանը. - Եր.: Երևանի պետ. համալս. հրատ., 2008. - CXCII + 496 էջ + 1 ներդիր:

Նիկողայոս Ադոնցի երկերի երրորդ հատորն ընդգրկում է հայոց լեզվի քերականությանը և ընդհանրապես հայերենին նվիրված ուսումնասիրությունները: «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» աշխատությունը հայերեն լույս է տեսնում առաջին անգամ, մյուսները տպագրված լինելով սփյուռքի մամուլի էջերում, քիչ են հայտնի ընթերցողներին:

Հասցեագրվում է հայագետներին և ընթերցող հանրությանը:

ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-8084-0931-6

© Հովհաննիսյան Պ. Հ., 2008 թ.
© Վարդագարյան Օ. Մ., 2008 թ.
© ԵՊՀ հրատարակչություն, 2008 թ.



FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Խմբագրական հանձնաժողով

**Հովհաննիսյան Պ. Հ.
Մադոյան Ա. Գ.
Ստեփանյան Պ. Գ.**

Հատորը հրատարակության պատրաստեց

Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Նիկողայոս Ադոնցի Երկերի սույն Գ հատորն ընդգրկում է նրա քերականագիտական, լեզվագիտական, ավելի լայն առումով՝ հայերենագիտությանը վերաբերող ուսումնասիրությունները: Իր կրթությամբ և նախասիրություններով Ադոնցը առավելապես հայագետ-պատմաբան էր: Սակայն չպետք է մոռանալ, որ նա բազմակողմանի կրթության, հետաքրքրասիրությունների ու պատրաստության տեր մտավորական էր: Էջմիածնի Գևորգյան ճեմարանում ուսանելու տարիներին նա ստացել էր փայտուն կրթություն: Ճեմարանում գերակշռում էին հայագիտական առարկաները և մասնավորապես հայոց լեզվի գիտակարգի ուսումնառությունը, որ դասավանդում էին Ժամանակի ամենափայտուն մասնագետները: Ադոնցի և իր սերնդակիցների վրա մեծ ազդեցություն են գործել ճեմարանի ուսումնասեր միջավայրը և հայոց լեզվի ուսումնասիրության դրվածքը: Հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառում այստեղ ստացած հիմնարար գիտելիքները ավելի խորացվեցին ու համակարգվեցին Ս. Պետերբուրգի կայսերական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի՝ գրականության և արևելյան լեզուների բաժանմունքի սանսկրիտ-պարսկերեն-հայերեն մասնագիտացված դասընթացներին հետևելիս: Համալսարանում նա ունկնդրել է Ն. Մառի (հայոց լեզու), Ս. Ֆ. Օլդենբուրգին (սանսկրիտ), Վ. Կ. Երնշտեդին (պարսկերեն) և այլոց: Այստեղ նա մեծ ջանասիրությամբ ուսումնասիրել է ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից լեզուներ: Ադոնցն ազատորեն տիրապետում էր բազմաթիվ լեզուների՝ հունարեն (հին և նոր), լատիներեն, սանսկրիտ, պարսկերեն, թուրքերեն, վրացերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն և ռուսերեն: Ամենայն նրբություններով տիրապետում էր հին (գրաբար) և միջին հայերենի գաղտնիքներին:

Սակայն, հակառակ ուսուցչապետ Ն. Մառի սպասելիքների, Ադոնցը հենց սկզբից չմտավ լեզվաբանության ասպարեզ: Մառը հատկապես խրախուսում էր իր այն սաներին, որոնք մասնավորապես զբաղվում էին բնագրագիտական, լայն առումով՝ բանասիրության և լեզվաբանության հարցերով: Սակայն այդ ժամանակ Ադոնցին առավելապես հետաքրքրում էին պատմագիտության խնդիրները, և պատահական չէ, որ նրա մագիստրոսական թեզը՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (պաշտպանել է 1909 թ. ապրիլի 5-ին), նվիրված էր զուտ պատմագիտական նյութի, թեև՝ առկեսում ուղեկցող լեզվաբանական պրպտումների արդյունքներով: 1909 թ.

մարտին պրոֆ. Գր. Խալաթյանցին ուղղված նամակում Ադոնցը հարկադրված էր խոստովանել, որ «Մառը այսպիսի հարցերով (այսինքն՝ պատմագիտության – Պ. Հ.) պարապելը վաղաժամ է համարում և գովեստներ նրանից սպասել չէ կարելի»¹: Մակայն հանուն ճշմարտության, պետք է նկատել, որ Մառի հարցում Ադոնցը այնքան էլ իրավացի չէր: Որպես պաշտոնական ընդդիմախոս Մառը շատ բարձր է գնահատել իր սանի մագիստրոսական թեզը որպես «հայագիտության հույժ նշանակալից երևույթներից մեկը»²:

Մագիստրոսական թեզի պաշտպանությունից հետո Մառի պնդմամբ Ադոնցը ձեռնամուխ եղավ հայ և հույն բովանդակ քերականագիտական մտքի նշանակալից արդյունքներից մեկի՝ Դիոնիսիոս Թրակացու և նրա հայ մեկնիչների քերականագիտական գործերի մանրակրկիտ ուսումնասիրությանը: Այդ նպատակով նա պարբերաբար այցելում է Էջմիածին, Վիեննա ու Վենետիկ և պարապում տեղի ձեռագրապահոցներում, թերթում բազմաթիվ բնագրեր և երկարատև ու տքնաջան աշխատանքից հետո պաշտպանության ներկայացնում իր դոկտորական ատենախոսությունը, որի պաշտոնական ընդդիմախոսներն էին Ն. Մառը և Ս. Ն. Ժեբելը: Թե նրանք որքան բարձր են արժեվորել իրենց ընթերակայի թեզը, ակներև է դառնում ընդդիմախոսականների հետ թուրքիկ ծանոթությունից³, միայն բավարարվենք Մառի հետևյալ եզրակացությամբ՝ «Հայկական բանասիրության յուրաքանչյուր ուսումնասիրողի համար «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները», անկասկած, պետք է դառնա սեղանի գիրք»⁴:

Եվ իրոք, Ն. Ադոնցի այս աշխատությունը կարևոր դեր խաղաց հայ քերականագիտական մտքի, հունարան դպրոցի և հարակից խնդիրների հետագա ուսումնասիրության բնագավառում⁵: Ահա թե ինչու անհրաժեշտություն էր դարձել սույն երկասիրության նաև հայերեն թարգմանությունը: Այդ ուղղությամբ մի անհաջող փորձ կատարվել էր դեռևս 1926 թ.՝ Վիեննայի

¹ Պ. Հ. Հովհաննիսյան, Նիկողայոս Ադոնցի անտիպ նամակներից, տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1988, № 3, էջ 91-92:

² Տե՛ս **Н. Я. Марр**, Выступление на защите диссертации Н. Г. Адонца "Армения в эпоху Юстиниана" - текст выступления и материалы к нему, 1908 г., Архив Н. Я. Марра, А-996, л. 262, հմմտ. В. А. Миханкова, Николай Яковлевич Марр, М.-Л., 1949, стр. 165.

³ Ձույզ ընդդիմախոսականներն էլ, որպես գրախոսություններ լույս են տեսել "Христианский Восток" պարբերականում, տե՛ս **Н. Я. Марр**, Дионисий Фракийский и армянские толкователи, ХВ, 1916, т. 5, вып. 1, стр. 52-66. **С. Н. Жебелев**, նույն տեղում, էջ 67-72. Տե՛ս նաև Ն. Մառի գրախոսականի երկրորդ հրատարակությունը՝ **Н. Я. Марр**, Кавказский культурный мир и Армения, Ереван, 1996, стр. 309-323.

⁴ Տե՛ս **Н. Марр**, նշվ. աշխ., էջ 66:

⁵ Անկասկած, սույն իրողությամբ է բացատրվում աշխատության ֆրանսերեն թարգմանությունը (Լուվեն, 1970):

Մխիթարյանների նախածեռնությամբ: ՀՀ Ազգային արխիվի Հայկ Բերբերյանի թողնում է պահվում այդ թարգմանության սևագիր օրինակը, որն իրականացրել է Գ. Ա. անվանատառերով մեկը: Ցավոք, մեզ չհաջողվեց պարզել թարգմանչի անձը: Ակներև է միայն, որ նա ռուսահայ է: Ադոնցը ծանոթ է եղել թարգմանության այս փորձին, և մնացել է խիստ դժգոհ: Հարցի պարզաբանման տեսանկյունից արժեքավոր են հատկապես 1928 թ. հունվարի 12-ին «Հանդես ամսօրյա»-ի խմբագրությանն ուղղված Ադոնցի մամուլի հետևյալ տողերը. «Երեկ միայն ստացա պ[արոն] Բերբերյանից¹ վերջին քարտը, ուր ... կհարցնեք Դիոնիսիոսի թարգմանության մասին:

Դիոնիսիոսի սույն բնագիրը չկար հոս (այսինքն՝ Փարիզում - Պ. Հ.) և պետք կար ապսպրել Պետերբուրգից: Հագիվ նորերս ստացվեց շնորհիվ Մառի: Պ[արոն] Բերբերյանը, կարծեմ պ[արոն] Փաշայանի² հետ նախապես պիտի ուղղեն թարգմանությունը, հետո գուցե պետք լինի աչքի անցնելու»³: Անկասկած է, որ Դիոնիսիոսի հայերեն թարգմանությունը չի գոհացրել Ադոնցին և հրատարակության համար նա չի տվել իր համաձայնությունը:

Այսու ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Ն. Ադոնցի այդ գլուխգործոցի հայերեն նոր թարգմանությունը, որի արժանիքների և վրիպումների մասին իր անաչառ խոսքը կասի ներհուն ընթերցողը: Սակայն մի բան հստակ է և շատ որոշակի՝ Ադոնցի այս երկասիրության հայացումը ժամանակավրեպ չէ և համոզված ենք, որ այն դեռ երկար ժամանակ կծառայի որպես ուղեցույց՝ հայ քերականագիտական մտքի համակողմանի ուսումնասիրության համար:

Բացի «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» երկասիրությունից, այս հատորում տեղ են գտել նաև հայոց լեզվի ուղղագրությանը նվիրված Ն. Ադոնցի «Գրական նշմարներ. լեզվական ուղղագրական» (1904), «Ուղղագրական և տառերի բարեփոխության հանձնաժողովին» (1927) ծրագրային հոդվածները, քերականագիտական մի քանի աշխատությունների վերաբերյալ լույս տեսած գրախոսությունները և ստուգաբանական աշխատություններից երեքը:

Նկատի ունենալով հատորի ծավալի անհարկի ընդարձակումը, ինչպես նաև տպագրական, տեխնիկական և այլ կարգի բարդություններ, սույն Գ հատորից դուրս թողեցինք Ն. Ադոնցի ստուգաբանական ընդարձակածավալ աշխատությունը՝ «Հայերեն ստուգաբանական բառարան»-ը (ստու-

¹ Խոսքը բանասեր, պատմաբան, խմբագիր, ֆրանսահայ հասարակական աչքի ընկնող գործիչ Հայկ Պերպերյանի մասին է:

² Ակնարկում է գրող, թարգմանիչ, ազգային պատվիրակության խորհրդական Լևոն Բաշայանին (1868-1943):

³ Վիեննայի Մխիթարյանների դիվան, Ն. Ադոնցի ֆոնդ (նամակը մեզ է տրամադրել վաշինգտոնյան արևմտագետ Ռ. Ադայանը, որին հայտնում ենք մեր երախտագիտությունը):

զարանել է 92 բառ)¹, «Հայ-վրացերեն բառարան»-ը (32 էջ)², «Հայոց լեզվի փոխհարաբերությունները իրանական և հարեթական լեզուների հետ» (Ֆրանսերեն, ձեռագիր, 20 էջ)³, «Մուշի բարբառը» (20 էջ)⁴ և այլն⁵: Թվարկված աշխատությունները կարիք ունեն լուրջ ուսումնասիրության, դրանցից շատերի էջերը թափված են կամ ցրված թողոնի այլ թղթապանակներում: Անհրաժեշտ է հոգաձու մի ձեռք՝ դրանք կարգի բերելու և ապա նոր միայն հրատարակության պատրաստելու:

Այսպիսով առկա նյութը փաստում է, որ հայերենագիտությունը Ն. Ադոնցի համար չի եղել պատահական հրապուրանքի առարկա: Այս բնագավառում նրա կատարած ներդրումը հարստացրել է հայոց լեզվի քերականության ուսումնասիրությունը բազմաթիվ արժեքներով, որոնք իրավամբ նրան դասել են հայոց լեզվաբանության մեծերի առաջին շարքում: Նշելի է նաև, որ երկերի սույն հատորում զետեղված 14 ուսումնասիրություններից 13-ը Մայր Հայրենիքում լույս է տեսնում առաջին անգամ:

Ինչպես նախորդ հատորները, այս հատորը ևս ունի աշխատասիրողների ծանոթությունների բաժին: Ծանոթությունների համարները դրվում են ծանոթագրվող հատվածի կամ բառի կողքին՝ կլոր փակագծերի մեջ, արաբական թվանշաններով: Բնագրային կրճատ գրված բառերը, կիսատ կամ բաց թողնված արտահայտությունները և բացատրության կարոտ տեղիները վերականգնել ենք՝ դրանք դնելով ուղիղ [] փակագծերի մեջ: Տեքստային առանձին վրիպակներ և ակնհայտ, հիմնականում տպագրական բնույթի, սխալներն ուղղել ենք առանց որևէ ծանոթության:

Հատորում զետեղված նյութերը հրատարակվում են նույնությամբ՝ միայն որոշ ուղղագրական ու կետադրական միջամտություններով և մասնակի խմբագրական շտկումներով: Ճշգրտել և լրացրել ենք հղված սկզբնաղբյուրների անվանումները, հեղինակների անվանատառերը և այլն:

Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

¹ Տե՛ս Համազգայինի Բեյրութի գրական պահոց, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան Թ/Ա-8: Բառարանի մասին մոտավոր գաղափար կարող է տալ ծանոթությունների բաժնում դրանից բերված մի քանի բառերի ստուգաբանությունը (տե՛ս աստ, էջ 460-461):

² Անդ, Պահարան, I, գգրոց Բ, թղթածրար 5:

³ Անդ, Պահարան I, գգրոց Բ, թղթածրար 2:

⁴ Անդ, Պահարան Է/Ա-8:

⁵ Թողոնում առկա է նաև անավարտ, բազում էջերի ակնհայտ կորստով մի մեծածավալ «Հայերեն արմատական բառարան» (անդ, Թ/Ա-8):

ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ARS DIONYSII GRAMMATICI
ET
ARMENIACA IN EAM SCHOLIA**

**DAVIDIS PHILOSOPHI, ANONYMI AUCTORIS,
MOYSIS QERDOLI, STEPHANI SIUNIENSIS,
HAMAMI ORIENTALIS ET
CREGORII MAGISTRI**

**ԱՐՈՒԵՍՏ ԴԻՆԻՍԵԱՅ ԶԵՐԱԿԱՆԻ
ԵՒ
ՀԱՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՔ ՆՈՐԻՆ**

**ԴԱԹԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ, ԱՆԱՆՈՒՆ ՄԵԿՆՉԻ
ՄՈՎՍԵՍԻ ԶԵՐԴՈՂԻ, ՍՏԵՓԱՆՈՍԻ ՍԻՆԵՑԻՈՑ,
ՀԱՍԱՍԻ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ ԵՒ
ԳՐԻԳՈՐԻ ՍԱԳԻՍՏՐՈՍԻ**

ՆԱԽԱԲԱՆ

Սույն աշխատությունը նվիրված է քերականական այն գրականությանը, որ ծաղկել էր հայոց մեջ Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ»-ի կապակցությամբ: Դիոնիսիոսի ոչ ծավալուն աշխատանքը հնում մեծ համբավ էր վայելում: Թարգմանված լինելով քաղաքակիրթ գրեթե բոլոր լեզուներով, այն հայտնվել էր նաև հայերենով և սկիզբ դրել համապատասխան մեկնողական գրականության: Այժմ առաջին անգամ հրատարակվող բնագրերը հայ բանասիրության առջև ծառայած ընթացիկ խնդիրների տեսանկյունից շահեկան են ոչ այնքան որպես այդպիսիք, որքան այն դերով, որ դրանք կատարել են հայ դպրության պատմության կարևորագույն մատենագրական հոսանքներից մեկի ձևավորման մեջ: Ի նկատի ունենք Հունարան դպրոցը, որն այժմ գայթաքար է մեր գիտության համար:

Հին հայկական կյանքին առնչվող բազմաթիվ հարցերի ուսումնասիրությունն անհնար է դառնում առանց նախապես հետազոտելու և բացահայտելու նշված դպրոցի դիմագիծը: Դա պարզ է բոլոր նրանց, ովքեր աշխատում են մեր բնագավառում: Գիտակցելով այն վճռական դերը, որ խաղացել են քերականները հիշյալ դպրոցի սկզբնավորման և զարգացման գործում, մենք ձեռնամուխ եղանք հաճախ հիշատակվող, սակայն ոչ ոքի կողմից չուսումնասիրված քերականական երկերի հետազոտությանը: Այս նպատակով 1911 թ. մեր խնդրանքով Կայսերական գիտությունների ակադեմիան պատվիրեց Էջմիածնից բերել քերականական բովանդակությամբ երեք ձեռագիր մատյան: Սակայն մեզ հետաքրքրող հեղինակների անունները կրող այս մատյանները չարդարացրին մեր ակնկալությունները: Մտիպված եղանք նույն 1911 թ. ամռանը մեկնել Վենետիկ և Վիեննա, խնդրո առարկա երկերը փնտրելու, իսկ հաջորդ` 1912 թվականին` Էջմիածին, այնտեղ պահպանվող ձեռագիր նյութերին անձամբ ծանոթանալու նպատակով: Աշխատանքի ընթացքում մեկ անգամ ևս, 1913 թ. ամռանը, հարկադրված եղանք ուղևորվել Վենետիկ:

Պրպտումները մեզ հանգեցրին այն եզրակացության, որ առաջին քերականների` Դավթի, Մովսեսի և Ստեփանոսի բուն` հեղինակային երկերը, որպես առանձին գործեր, մեզ չեն հասել (1): Այն նյութերը, որ ձեռագրերում կրում են նրանց անունները, ոչ այլ ինչ են, եթե ոչ Մովսեսի «Քերականության» Ստեփանոս Սյունեցու աստվածաբանական մեկնությունները (2):

Մեզ հաջողվեց պարզել, որ փնտրվող երկերը պահպանվել են Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Երզնկացու և Եսայի Նշեցու հետնազույն քերականական բանաքաղների կազմում: Հաջորդ խնդիրն էր՝ համեմատելով նշված բանաքաղները, առանձնացնել դրանց մեջ ներառված ավելի վաղ հեղինակների գործերը: Ահա այս աշխատանքն է կատարված ներկա հետազոտության մեջ:

Ստացած արդյունքները ստուգելու և վերականգնված բնագրերի վավերականությունը կամ ընդունելիության աստիճանը որոշելու համար անհրաժեշտ համարեցինք համեմատել դրանք հույն մատենագրության մեջ առկա նմանատիպ լուծմունք-մեկնությունների (scholia) հետ (3): Մենք չէ, որ դատելու ենք, թե ստացած արդյունքները որքանով են արդարացնում մեր նախաձեռնած՝ կարծես անշնորհակալ գործը՝ ինչպես մեթոդաբանական դրվածքի, նույնպես և իրականացման առումով:

Ն[իկողայոս] Ա[ղոնց]

I. ՉԵՌԱԳԻՐ ՀՈՒՑԱՐՉԱՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Քերականական գրականությունը և դրա նշանակությունը հին հայկական մատենագրության համար: Սույն աշխատանքում օգտագործված ձեռագիր հուշարձանները: Դրանց տեսությունն ըստ Էջմիածնի վանքի, ինչպես նաև Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների մատենադարաններում պահված ձեռագրերի:

Հին հայ մատենագրության նշանակալից ոլորտներից մեկը քերականական գրականությունն է: Այն, ինչպես և հոգևոր կյանքի ցանկացած այլ ոլորտ, ունի սեփական խնդիրներ, որոնց ուսումնասիրությունը զուրկ չէ գիտական հետաքրքրությունից: Թեև քերականական գիտությունը վաղուց առանձնացել է և դարձել ինքնուրույն առարկա, սակայն հնում այն ուսումնասիրվում էր ճարտասանության և փիլիսոփայության հետ միասին, համարվելով ընդհանրապես մտահայեցողական գիտակարգի անհրաժեշտ օղակ: Այս հանգամանքը առավել ընդգծում էր քերականական գիտելիքների նշանակությունը, դրանց հաղորդում առանձին կշիռ:

Առաջին քերականի համրավը (4) ձեռք է բերել Դիոնիսիոս Թրակացին, որն ապրում էր Ք.ա. II դարում, Պտղոմեոս Փիլոմետորի օրոք (180-145): Հռչակավոր Արիստարքոսի աշակերտը լինելով, նա առաջինը համակարգեց իրենից առաջ գոյություն ունեցող նյութերը մի այնպիսի շարադրանքով, որ այն մինչ օրս չի կորցրել իր նշանակությունը: Նրա երկը կրում է «Քերականական արվեստ»՝ *Τέχνη γραμματική*¹ խորագիրը (5): Դիոնիսիոսի «Արվեստը» ավելի ուշ, Կոստանդին Մեծի ժամանակները տեղափոխելու փորձերն այժմ վերջնականապես համարվում են անհիմն: Մեզ հասած տեսքով այն արդեն ծանոթ է եղել կայսերական ժամանակների հայտնի քերականներին՝ Ապոլլոնիոսին և Հերոդիանոսին, ինչպես և Ներոնի ժամանակակից՝ հռոմեացի քերական Ռեմմիոս Պալայմոնին (6):

Դիոնիսիոսի երկը բացառապես վերաբերում է ստուգաբանությանը (7) և չի արժարժում շարահյուսության խնդիրներ: Քերականության այդ մասը զարգացրել էր վերոհիշյալ Ապոլլոնիոսը՝ Դիսկուլոս մականվամբ (8), որն ապրել է Դիոնիսիոսից երկու դար հետո, Անտոնինոս Պիոս կայսեր օրոք:

¹ Dionysii Thracis Ars Grammatica, Գ. Ուլիգի (G. Uhlig) նոր քննական հրատարակություն, Լայպցիգ, 1883 (9):

Ապոլլոնիոսի «Շարահյուսության մասին» (*Περὶ συντάξεως*) աշխատությունը մեզ է հասել չորս գրքով, թեև ոչ ամբողջական տեսքով: Նրա որդին ու աշակերտը՝ Հերոդիանոսը, իր հորից ոչ պակաս հռչակվել է որպես հունարենի առգանության տեսաբան¹:

Դավիթ Հայի՝ Դիոնիսիոսի քերականության լուծմունքում Հերոդիանոսի վերաբերյալ պահպանել է մի հետաքրքիր, սակայն, ըստ երևույթին առասպելական տեղեկություն. իբր Հերոդիանոսն այրել է բոլոր այլ քերականների գործերը՝ բացի իր հոր գրքից: Դրանով մա ցանկացել է հավերժացնել միայն իր հոր՝ Ապոլլոնիոսի հիշատակը, և կամ խնայել է իր հոր աշխատանքը՝ բովանդակալից լինելու պատճառով: Դիոնիսիոսի աշխատությունը այս տխուր ճակատագրից խուսափել է երևի Հերոդիանոսի ձեռքը չընկնելու պատճառով, կամ թերևս վերջինս այն պահել էր երեխաներին կրթելու համար:

Հույն մտավոր աշխարհում Դիոնիսիոսի ոչ մեծ երկին վիճակվել է անմասխաղեպ մեծ հռչակ և լայն ճանաչում: Հնում այն ջանասիրաբար մեկնվել է բազմաթիվ վերլուծագրողների կողմից², թարգմանվել շատ լեզուներով (10), այդ թվում նաև հայերեն:

Ինչպես հույների, այնպես էլ հայերի մոտ Դիոնիսիոսը դարձավ քերականական մշակույթի կենտրոն. նրանից էին մեկնում և նրան էին հանգում հետագա դարերի բոլոր հեղինակները: Ե՛րբ է առաջացել հայերեն թարգմանությունը, ո՛վ էր դրա հեղինակը, ինչպիսի՛ մեկնություններ է ունեցել, ո՞ր դարին են դրանք պատկանում և ինչպե՛ս են հարաբերակցվում միմյանց՝ այս հարցերը թեև արժարժվել են, սակայն տակավին լուծված չեն:

Այս և մի շարք այլ հարցերի ուսումնասիրությունը պահանջվում է ոչ միայն հանուն քերականական հուշարձանների, այլև այն նշանակության համար, որ քերականական գրականությունն ունի հին հայկական կրթության մեջ եղած գրական դպրոցների հույժ կարևոր խնդրում: Դպրոցների խնդիրը՝ հայ բանասիրության ամենակնճռոտ հիմնահարցերից մեկն է: Դրանց առկայությունը վաղուց է նկատվել և հաստատվել: Դրանք երկու ուղղություն են, մտքի և ոճի երկու հոսանք, որ անցնում են ամբողջ հին գրականությանը, ավելի ճիշտ՝ դրա սկզբնական շրջանով: Այդ հոսանքները ժամանակագրական առումով հստակ չեն տարանջատվում. ընթանում էին դրանք գուգահեռաբա՞ր, թե՞ հաջորդում էին մեկը մյուսին, այսինքն՝ արդյո՞ք դրանք գոյատևում էին կողք-կողքի, թե՞ մեկը մյուսին էր փոխարինում,

¹ Grammatici Graeci, I, III, p. 129; W. Von Christ, Geschichte der Griechischen Literatur, III Aufl., §§ 564-565.

² Դիոնիսիոսին վերաբերող լուծմունքները հավաքել և հրատարակել է Ա. Հիլգարդը՝ «Հույն քերականներ» մատենաշարում. Scholia in Dionysii Thracis Artem Grammaticam, Grammatici Graeci, v. I, pars III, Lipsiae, 1901.

թե՞ երբեմն հատվում էին՝ այս ամենը պարզ չէ, և մնում է տակավին չհետազոտված և իր բարդությամբ՝ դժվար լուծելի:

Հոսանքների երկու հուները նշմարվում են ամենայն պարզությամբ. դրանցից մեկին արտաքինից բնորոշ է հունաբանությունների հանդեպ մեծ հակում, ուստի և կարող է կոչվել «հունաբան» (11): Բանն, իհարկե, միայն լեզուն չէ: Խոսքի ուրույնությունն այստեղ զուգադրվում է մտքի յուրահատկությամբ: Ինչպիսիք էլ լինեն դպրոցի ծագման մերձավոր դրոշմատվածները, դրանց ընդհանուր հիմքն է ակնածությունը հելլեն կրթության առջև¹: Քերականական գրականության՝ նշված դպրոցին պատկանելն ակներև է: Իսկ դրա ազգակցությունը սույն դպրոցի ամենագլխավոր և, թերևս, ամենավաղ գործերի, այն է՝ Փիլոն Եբրայեցու երկերի թարգմանությունների հետ (12), դրան առաջնակարգ կարևորություն է հաղորդում:

Հունաբան դպրոցը ընդարձակ է և ընդգրկում է զանազան երկերի շրջանակ: Այստեղ կան ոչ միայն զուտ փիլիսոփայական գրվածքներ, այլև բոլոր այն դավանաբանական և ջատագովական երկասիրությունները, որոնց մեջ նկատվում է ծանոթություն փիլիսոփայական ուսմունքներին: Այս դպրոցի ոգով են տոգորված նաև ազգային պատմագրության որոշ հուշարձաններ, թեև ավանդաբար դրանք վերագրվում են այլ դպրոցի և այլ միջավայրի (13): Հունաբան դպրոցի կամ հոսանքի հուշարձանների հետազոտումը, դրանց փոխադարձ կապերի պարզաբանումը՝ առաջին հերթին ժամանակի առումով՝ մի խնդիր է, որի լուծումը պետք է նախորդի հին հայ մատենագրության զանձարանի համակարգման ավելի ընդհանուր փորձերին:

Այդպիսի համակարգման նպատակը հայերի հոգևոր կյանքի զարգացման փուլերի բացահայտումն է: Այս կյանքի բազում արդյունքների կորստի պատճառով այժմ մեզանից սպրդում է նույնիսկ գրական կյանքի հաջորդական զարգացման գիծը: Մենք անկարող ենք դասավորել մեզ հասած գրական զանձերն իրենց ծագման բուն հերթականությամբ, չենք կարող դրանցից յուրաքանչյուրին իր սեփական տեղը հատկացնել ժամանակագրական շղթայում: Բայց այն, ինչ չի հաջողվում անել առանձին հուշարձանների նկատմամբ, թերևս հնարավոր կդառնա, եթե դրանք քննենք ըստ առանձին խմբերի: Հայ դպրության սկզբնական փուլի մատենագրական ժառանգության ցրված լինելու պարագայում կարելի է, այնուամենայնիվ, առանձին հուշարձանների միջև նկատել որոշակի փոխադարձ ձգողություն: Այն երբեմն հասնում է որակների և հատկությունների ընդհանրության՝ ընդհանրություն, որ շաղկապում է հուշարձանների տվյալ դասը միասնական խմբի կամ դպրոցի կապերով: Առանձին խմբերով հուշարձաններն ուսումնասիրե-

¹ Հմմտ. Մովսես Խորենացու՝ հույն գիտության մասին հիացական խոսքը. «մայր կամ դայեակ իմաստից» ([«Պատմութիւն Հայոց», Ա, 2]):

ը կարող է արդյունավետ լինել և հենակետ ընձեռել առհասարակ վիճահարույց երկերի թվագրման համար:

Քերականական գրականությունը վառ շերտ է Հունարան դպրոցի մեջ: Հնարավոր է նույնիսկ, որ առաջին քերականներն են եղել նշված դպրոցի հիմնադիրները: Ուստի պետք է քերականական գրականությանը մեծ նշանակություն վերագրել ինչպես դպրոցի բնութագրի, նույնպես և հայ իրականության մեջ դրա առաջացման ժամանակը և այլ հանգամանքներ ճշգրտելու գործում: Ցավոք, քերականության ոլորտը ևս կիսում է մեր հուշարձանների ընդհանուր ճակատագիրը. առավել վաղ հեղինակների բուն երկերը մեզ չեն հասել:

Ներկա աշխատասիրության նպատակն է պարզել և որոշել, թե մեզ հետաքրքրող խնդրի առնչությամբ ի՞նչ է պահպանվել ձեռագիր գանձարաններում, ի՞նչ է կորել անդարձ և ի՞նչ կարելի է վերականգնել՝ վերլուծելով հետագա ժամանակների բանաբաղությունները, որ ընդգրկում էին [խնդրո առարկա] մեկնությունները:

Շարադրանքում մենք կցանկանայինք հետևել այն հաջորդականությանը, որով ընթացել է մեր միտքն ու աշխատանքը. ուստի նախ և առաջ մենք առաջարկում ենք տալ մեր աշխատանքի հիմքում ընկած կամ որևէ իմաստով օգտագործված ձեռագրային նյութի տեսությունը:

I

Չեռ. 2297 (= 2253 ըստ տպագրված ձեռագրացուցակի), Էջմիածնի վանքի մատենադարանի. փոքրածավալ մատյան (14), որ գրվել է հայտնի Գրիգոր Տաթևացու ձեռքով իր ոչ պակաս հայտնի ուսուցչի՝ Հովհան Որոտնեցու պատվերով, հայոց տոմարի 852 թվականին (=1403) և ունի հետևյալ բովանդակություն.

1. *Յաղագս քերականութեան*, թթ. 1-42, Դիոնիսիոսի բնագիրը:
2. *Մովսեսի քերդողի յաղագս քերականութեանց*. թթ. 43-120:
3. *Մովսիսի քերդողափոր մեկնութիւն քերականի: Գրականութիւն ստուգարանի քերականութիւնդ*. թթ. 121-126:
4. *Վերլուծութիւնք բացերեսապէս բազմազան բառից եւ բայից յոքնախումբ շարադրութեամբ արարեալ զսա Առիստակիսի գրչի ի խնդրոյ բազմաց յարհեստ գրչութեան: Աստուածազանից արանց առաջի*. թթ. 130-219:
5. *Գէորգեայ վարդապետի արարեալ ի խնդրոյ Ստեփանոսի մականուն*

Գոյներ Երիցանց Կայծառան: Անպարաս անճամբ ճեռնարկեցի ի գրել զսա. քք. 219-260:

6. *Առստակէսի բառագրոցն քաղեալ և այս վասն լծորդութեան: Եւ այս են առաջին լծորդութիւնք. քք. 260-270:*
7. *Յաղագս հաւաքաբանութեան Արիստոտէլի: Գիտելն է ճանաչելն զպատճառ իրին. քք. 273-289:*
8. *Յաղագս պատրանաց գրոցն: Եւ արդ զի դիտաւորութիւն մեր է յառաջիկայ յիրողութեան խօսիլ ի սոփիստիքա տրամաբանութենէն. քք. 290-337:*
9. *Յաղագս տրամաբանական տեղեացն: Եւ արդ վասն զի յաղագս տրամաբանական տեղեաց հանդերձեալ ենք ասել. քք. 337-368:*
10. *Յաղագս հնգից ընթեանրից. քք. 369-387 (բնագրի վերջում կարդում ենք. այսպէս իմացաւ եւ Դաւիթ փիլիսոփոսն հայկազեան, 387):*
11. *Գիրք վեց սկզբանց. քք. 388-400:*
12. *Համառօտ հաւաքումն վերլուծութեան վեցից սկզբանց գրոց. քք. 401-453:*

Գլխավոր հիշատակարանը գտնվում է վերջում և հայտարարում է. Ձստացող սորին գտիեգերալոյս մեծ վարդապետն հայոց Յովհաննէ<ս> Որոտնցի եւ զիս սակաւ աշխատողս Գրիգոր սպասաւոր նմին աղաչեմք զձեզ յիշել ի տէր ամէն. քվ ՊԾԲ գրեցաւ վերջին զիծս ընդ հովանեաւ սուրբ առաքելալոյս միաբանից ուխտիս Տաթևոյ:

Հինգերորդ բնագրից հետո կարդացվում է. Փառք փրկչին Յիսուսի և իշատակ գրչիս Գրիգորի պիտականուն վարժապետի. ամէն. ք.260բ:

Առկա է նաև մատյանի վերջին տերերից մեկի հիշատակագիրը: Մք Կարայետ, Մարգիս եպիսկոպոս զինեցի գորականս իշատակին ձեւ ծնաւդաց իմոց և այլն, 271բ:

Ազատ թերթերը լրացված են ուշ բոլորագրով. Բառք քերականին՝ երրորդ դրվագի վերջում, քք. 126-129. Հոլովք անուանց, 272: Վերջին էջի վրա գետեղվել է հետևյալ չափածոն.

*Եւ այսաւր եղև պայծառ զարուն,
զան եւ թշունքն պար առնուն
քաղցր եղանակն հաւերուն,
դիւրար բլթուլ հետ ծաղկընուն
շատլրի կենէ ի վերայ վարդուն:*

Ա՛խ, ա՛խ, ինչ եմ, խիստ մեղաւոր եմ ես, վայ է ինձ, վայ է ինձ:

Չեռ. 2359 (= 2316 ըստ տպագիր ձեռագրացուցակի), Էջմիածնի վանքի (15): Մատյանի մի մասը գրված է Եսայի վանականի՝ 1636 թ., մյուսը՝ Վարդերես Լեհացու կողմից, և ունի հետևյալ բովանդակությունը.

1. *Քերականություն*, թթ. 1-14, Դիոնիսիոսի բնագիրը:
2. *Մեկնություն բառից քերականին՝ ի յառաջն գիտ ի բառգիրքն* (տե՛ս բնագիր 4), *բայց տեղ էր այս (է) ստուգիւ: Մովսեսի Խորենացույ բան իմաստութեան*, թ. 15:
3. *Յառոգանութեան պատառիկս զոր գտի*, թ. 18:
4. *Բառք քերականի*, 19-21. երկրորդ անգամ՝ թ. 23-25:
5. *Նախադրություն բանի ի ցոյցս պատճառի հաւաքման մեկնութեան քերականին եւ աղերս խնդրոյ աշխատողիս Յովհաննիսի առ սպասատրդ բանի*. թ. 25-28: *Ի խնդրոյ տեսն Յակոբայ հայոց Կաթողիկոսի եւ վարդապետաց մերոյ եղբարց արարեալ զհաւաքումն քերականին մեկնութեան Յովհաննիսի Երզնկացոյ ուսումնականի զրոց*. թ. 29-158:

Հեղինակի հիշատակարանը գրքի վերջում պակասավոր է (տե՛ս ստորև):

6. *Քերականություն է հմտություն ստոյգ վերծանութեան եւ անթերի գրչութեան: Հարցումն. քանի են մասունք քերականութեան: Պյս. վեց. թթ. 158-215:*
7. *Քերականություն է A մասանց բանի: Ձի՞նչ է բան: Պյս. բան է հետեւակ բանի շարադրություն. թթ. 215-234:*
8. *Նուսատ Յոհաննէս վարդապետի Եզնկացոյ, որ եւ Ծործորեցի, արարեալ համառօտ տեսություն քերականին. թթ. 236-314:*
9. *Հարց. զի՞նչ է քերականություն: Պյս. հմտություն է. թթ. 315-385: Ոմն Դավիթ Ամղեցու զործ է, որը Հովհաննեսի քերականության վերամշակումն է հարց ու պատասխանի ձևով և հիշատակարանով. Յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր եւ զյետնեսս յԱմբաջուցն զԴաւիթս, որ աշխատեցայ հետ բանական արհեստիս, այսինքն քերականիս, զայնս, որ յառաջին քերթողաց ասացեալ էր եւ մեկնեալ պարզ, զնա յերկուս զծեցի, այսինքն ի հարցումն եւ ի պատասխանիս, ի վարժումն մանկանց նորագունից, զի ի հարցանել միոյն հարկ լինիցի միւսոյն տալ պատասխանի, որ վասն այնորիկ յաւժարեսցին ուսանել եւ մի՛ հեղզասցին: Իսկ ի տեղիս տեղիս զերկարն, որ ձանձրացուցա-*

մէր զընթերցողն, զնա կարճացուցի, եւ զկարճսն, որ զմիտս բանին պարզ ոչ յայտնէր, զայն երկարացուցի չափաւոր: Այս նույն երկը գտնվում է, ըստ Հ. Տաշյանի ձեռագրացուցակի, նաև Վիեննայի մատենադարանի թիվ 84 (թ. 2) և թիվ 95 (թ. 1) մատյաններում:

10. *Յաղագս քերականութեան համառօտ լուծմունք ի տէր Առաքել Միւնեցաց եպիսկոպոստ ի մեկնութիւն քերականութեանս պէսպէս յատկութեամբ պարզեալ վասն ղիւրալուր հասկանալոյ զխորութիւն բանին քերականին եւ յաղագս նախերգանի քերականութեանս առաջին, որ ասէ յաղագս քերականութեան, թթ. 386-442:*

Եսայիի հիշատակարանը չորրորդ՝ *Բառք քերականին* բնագրի վերջում ասում է. «*զԵսայի վարդապետ գծող քերականի բնարանին եւ բառին յիշել աղաչեմ թվին ՌՉԴ (= 1636 թ.) մայիսի 1/է: Նաեւ Առաքել Միւնեցոյ լուծմունքս, որ ի վերջ գրքիս, գրեցի իմով ձեռամբ ի դուռն ս. Էջմիածնայ տօնի Շք Յովհաննու եւ Աթանազոս, աւուր Ը-շրթի եղեւ աւարտ: Աւաղ կենացս սաթ հազար ալֆ, վայ զիս ո՛հ ո՛հ»:*

III

Չեռ. 2372 (=2239 տպ. ձեռագրացուցակի) Էջմիածնի մատենադարանի 1621 թ. (16) հետևյալ բովանդակությամբ.

1. *Մեկնութիւն բառից քերականութեան. թթ. 1-4 (=ձեռ. 2359, բնագիր 4):*
2. *Յաղագս մեկնութեան քերականին, զոր արարեալ է մեծ վարդապետին Վարդանայ ի խնդրոյ թագաւորին Հայոց Հեթմոյ. թթ. 5-63:*
3. *Առգանութեան պատառիկս զոր գտի. 63 (= ձեռ. 2359, բնագիր 3):*
4. *Մովսեսի Խորենացոյ բան իմաստութեան: Թթ. 64-65 (= ձեռ. 2359, բնագիր 2):*
5. *Նշանագիրք. թթ. 65-67:*
6. *Վերլուծութիւն բացերեւապէս բազմազան բառից եւ բայից յոքնախումբ շարագրութեամբ արարեալ զսա Առիստակիսի գրչի ի խնդրոյ բազմաց յարհեստ գրչութեան. թթ. 68-107 (=ձեռ. 2297, բնագիր 4):*
7. *Գեորգեայ վարդապետի արարեալ ի խնդրոյ Ստեփաննոսի մակնուն Գոյներիցանց Կայթառաւնցոյ մեղսաներկ անձին. թթ. 108-124 (= ձեռ. 2297, բնագիր 5):*
Խրատք գրչութեան զոր արարեալ էր զսա յառաջագոյն ի խնդրոյ ումեմն. թթ. 124-132:
8. *Այս բառք բաղաձայնք հոմանունանց բազմածեալ զամենայն որ ինչ միանգամ են անուանք հերթայեցի յարեմս եւ ի մարգարէս եւ ի նոր*

- կտակարանս, քարգմանեալ եւ մեկնեալ յերրայեցոյն ի յոյնն եւ ի յունէն ի հայ կարգաւ ըստ նշանագրաց այֆարեթիցն երրայեցոց թէ զինչ միաբանութիւն անուանց ունիցին. քք. 133-152:*
9. *Այս բառք են քերթողականք վասն չափոյ հոմերական տառիցն. քք. 152-226:*
 10. *Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն սակս բառ է գեղջուկ. քք. 226-235:*
 11. *Թարգմանութիւն պարսիկ բառից ի Վարդան գրոց. ք. 236:*
 12. *Շաղկապ է:*
 13. *Հոյովք անուանց. Եծ:*
 14. *Արդ թուին երրայեցիք զգիրս զայս ձեւ արինակի, ք. 237 աստվածաշնչյան գրքերի թվարկում:*
 15. *Բառք Գալիանոսի բժշկի Մխիթարա վաղամեռուկ. քք. 238-247:*
 16. *Թարգմանութիւն դեղոց, զոր ընտրեալ են իմաստունք. քք. 240-242:*
 17. *Յիշատակարան գրոցս. քք. 247-253:*
 18. *Վասն Ըծ-ն պարզեաց մարդոյն. ք. 258:*
 19. *Գալիանոսի. արար Եծ զգլուխն Բ մասն. քք. 259-263:*
 20. *Հարց. զի՞նչ է իմաստասիրութիւն. քք. 263:*
 21. *Մովսէսի քերդողի յաղագս քերականութեանց. քք. 264-303 (= ձեռ. 2297, ք.2):*
 22. *Մովսէսի քերդողի հար մեկնութիւն քերականի. քք. 303-304, պակասավոր է (= ձեռ. 2297, քնագիր 3):*
 23. *Հց. Պղատոն զԱրիստոտէլ որպէս ընդունէր. ք. 305:*
 24. *Նորին Գրիգորի աշակերտի Յոհաննու Որոտնեցոյ լուծումն համառատ դժուարիմաց բանից ի զիրս գրչութեան, որ(ն) յԱռիստակիսէ հոնտորէ. քք. 306-312:*
 25. *Նորին Գրիգորի լուծումն համառատ ի խրատ գրչութեան Գէորգեա վարդապետի, զոր նախ խնդրեալ էր Կոստանդեա գրչի եւ ապա Գոյներիցանց Ստեփաննոսի. քք. 313-319:*
 26. *Դարձեալ խրատ նոյն Գէորգ վարդապետի առ Ստեփաննոս Գոյներիցանց գրեալ. քք. 319-321:*
 27. *Յաշխարհացն լուծմունք. քք. 322-325:*
 28. *Դաւիթ փիլիսոփայն է ի Հաւթք գաւառէ ի Հերեթն գեղջէ, աշակերտ Սահակայ եւ Մեսրովրայ, քուերդողի Մովսէսի քերդողի հարն ի Վից, որք ընտրեցան ուշեղք, փափկածայնք եւ երկարոզիք ամենայն առաքինութեամբ զարդարեալ, որ յետ ԲԺ ամի սրբոյն Գրիգորի ի գտանել գրոյն ազգիս ընտրեցան եւ յետ Վր ամի գտանել գրոյն եւ կոտորումն սրբոց Վարդանանց, ի բաժանումն հայրապետաց յեր-*

կուս Յոհան Մանդակունի ի Պարսից կողմն կա կաթողիկոս եւ Գիւտ
ի Յունաց կողմնս, յաշակերտաց սրբոց քահանայիցն: Թ. 321բ:
29. Նախ սսի գօտի կուսութեան. ք. 22:

Գլխավոր հիշատակարանը զետեղված է 243-րդ թերթում.

Փառք եւ պատիւ հար անեղին
Անպար, անհաս եւ անմահին:
Արդ ես տկար անձն անարժան
Գծաւ տառիս իմաստութեան
Հասեալ ի կէտն ավարտման
Հնչեմ ձայնի բան զոհութեան:
Եթէ կամիս ըզթվականն
Կալ եւ հաշուեա զքսան յորելեան
Երկեռակի տասն բեր յայն
Ի դոսն թի ընդ երկոտասան:

(Ի դոսն, ըստ երևոյթին, աղավաղված «Բ դ-սն» է, այսինքն՝ «2×4»= 8:
Թվականն է . 50×20+2×3×10+2×4+12=1080):

Յուսով անմահին աստուծոյ ի թվիս շրջագայութեան հայկազեան մեծ
տաւմարի հազար եւ ութսուն գծագրեցաւ եւ յանկ ելեալ կատարեցաւ տառս
իմաստասիրական զամենիմաստ հանճարով ճոխացեալ զիրքս այս, որ ունի
կաճառեալ բովանդակ ի յինքեան զմեկնութիւն քերականին քացայայտեալ
ի տրամարան եւ իմաստախոռ մեծին Վարդանա: Այլ եւ խրատ եւ սահման
զրչութեան արհեստի վերլուծեալ բազմազան ճոխութեամբ վեհագոյն
մակածութիւնն Առիստագիսի գրչի: Եւ զթերին նորա լցեալ յաւելուածով մեծ
վարդապետին Գէորգեայ: Այլ եւ զքառզիրքն շարագրեալ զհետ միմեանց:
Ընդ նմին եւ զՊարֆիրն եւ զվերլուծութիւնք նորին արտադրեալ ներհուն
հռետորին Դաւիթ Ներզիմացոյ անյաղթ փիլիսոփայի: Եւ զաշխարհաց
զիրքն մեծ իմաստասերին Արիստոտելի եւ այլ սուղ ինչ, զոր տեսանէք: Ընդ
որս եւ զմեկնութիւն քերականին աշխոյժ ախոյանին Մովսէսի քերթողա-
հարն:

Եւ արդ եղեւ սկիզբն եւ կատարումն այսմ գծագրութեանս ի յերկիրս
Արարատեան ի յոտն Արագածու ի սահմանս զհուղաքաղաքին Կարփու ի
հրեշտակարնակ մենաստանս Շր Կարապետի ընդ հովանեաւ բարձրաբերձ
երկնահանգէտ Շր Ա՛ածնի տաճարիս, որ մակադրեալ յորջորջի Յոհանա-
վանք, որ է այժմ դպրոց եւ ժողովեալ կան յուլով համբակատիպ մանկուք ի
յուսումն եւ ի վերձանութիւն Եծաշունչ գրոց հրամանաւ եւ ծախիւք ~ն
Մովսէսի սրբազան կաթողիկոսի ընդհանուր հայկազեան սեռի կրկին լու-
սաւորչի:

Եւ արդ աստանար կամիմ հակիրճ եւ համառատ բանի վիպել ի տա-
ռիս զկենցադավարութիւն սորա (հաջորդում է Մովսես կաթողիկոսի կյանքի
և գործունեության շարադրությունը, որն ավարտվում է հետևյալ գրու-
թյուններով).

Արդ տարվոռք իմաստութեան եւ վայելոռք այսմ քերթողական արհես-
տիւ ճոխացեալ տառիս, յիշեցէք յաւժար կամաւք ի մաքուր յաղօթս ձեր
զամենեւնիս եւ զպատուական հայրապետս մեր, յորոյ սակս յայսմ վայ-
րի բանս ճառեցաւ, որոյ վեհ հրամանաւն գծագրեցաւ զիրքս այս իմաս-
տասիրական, զտեւնչալի խաղալիկս աշակերտեալ ուսման սիրող մանկանց:

Նաեւ ընդ բազմավաստակ Շր հօրս յիշեցէք զբազկակից եղբարքն եւ
զաշակերտեալ մանկունքն իւր զյոզմահանճար եւ զբազմարուեստ զԽաչա-
տուր վարդապետն Կեսարացի եւ զմաքրասնունդ եւ զշահողն ամենայնի
զՓիլիպպոս վարդապետն, որ յուրվ եւ բազմադիմի երկ եւ աշխատանք
ունին ընդ անարժանութիւնս մեր ուսմամբ եւ ոգէշահ խրատով, զոր տէրն
Քրիստոս հատուցանէ վարձս բարեաց ընդ տրիտուրն աշխատանաց աստ
եւ կրկնակի զայստեանն ամէն:

Այլ եւ յիշեցէք ի Շր սրտի ձերում զաշակերտակից սոցա եւ զհամշիրաք
վարդապետքն, զխարազնագեացն զԹումայ վարդապետն եւ զԱրիստա-
կէս վարդապետն եւ զբաջ տելետիկն զՄելքիսէթ վարդապետն <եւ> Ջաքա-
րիա վարդապետն եւ զմիւս Խաչատուր վարդապետն եւ զՅակոբ վարդա-
պետն եւ զկայծակնամաքուրն զտէրն (յ)Եսային, որ յուրվ աշխատի ի վերա
միաբանից եղբարցս, եւ զաղօթասէր եւ զբաղձալին բնաւից զհամշիրաքն իմ
զտէր Ղազարն եւ զտէր Յակոբն եւ զտէր Գրիգորն եւ զտէր Միմոնն եւ զայլ
համաշունչ եւ զմիախորհուրդ եղբարքս եւ զաշակերտեալ մանկունքս, որ
կան կաճառեալ եւ ժողովեալ ի համալսարանի կաթողիկոսարանիս, զոր
ամենագութն աստուածն ալլն:

Այլ եւ անարժանս եւ տարորոշեալս բացորոշարար ի յոքունց բազմավէր
զուրվ յոզի եւ ի մարմին խոցեալ եւ վիրաւորեալ ի թունալից ժանեաց բան-
սարկուին, որ կամակար մտօք հետեւիմ դրժանաց նորին: Չոր եւ թախան-
ձեմ զհանդի<պ>ողք տառիս յիշել ի մաքրափայլ յաղօթս ձեր զիս զտառա-
պեալ մեղօք մեռեալ Ղուկասս, որ կամ ի կաճառ վերոյգրեալ հարցս եւ եղ-
բարցս իբրեւ սկի լայն ի ջոլիրս խաշանց եւ որպէս զթխատեսակ զագաւսս ի
պարս աղաւնեաց: Քանզի եւ ես տրուպս եղէ խուն ինչ պատճառ զրութեան
քերթողական տառիս այս հրամանաւ սրբազան հայրապետիս մերոյ, վասն
որոյ հայցեմ ի սուրբ հարցդ եւ եղբարցդ, յորժամ վայելէք եւ զմայլիք յայսմ
իմաստութենէ զինոյ, յիշման արժան առնէք առաջի զենման անմահ գա-
ռինն Յիսուսի և ալլն:

Եւ դարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ, ով Շր ընթերցողք, զի յիշման

արժանի առնէք առաջի Քրիստոսի Շք եւ մաքուր աղափիւք ձեր զմիարանք Շք ուխտից Յոհանավանից, որ է այժմ դպրանոց, որպէս կանխաւ ճառեցաք. քանզի աստ առ դրան Շք Կարապետիս գրեցաւ եւ սրբագրեցաւ եւ ծաղկեցաւ եւ կազմեցաւ իմաստապատում տառս այս ի մէջ քազմահոյլ եղբարքս: Եւ արդ յիշեցէք զժերուցի տէր Բարսեղն, որ է հայր եւ խնամածու մանկանցս եւ զտէր Պետրոսն համախոհ նմին եւ զՄիմէռն զաւագ սարկաւագն, զծաղկօղ գրոցս եւ զՍտեփանոս քահանայն, որ մեծաւ աշխատութեամբ գրեաց զսայ ի վայելումն ուսումնասէր մանկանց, եւ զՄարտիրոս ջահընկալն, որ աշխատեցաւ ի սրբագրելն եւ ի վերջ գրոցս Ուտար գրեաց. այլ եւ զմիս Մարտիրոսն ընթերցող, որ կոկեաց զթուղթն եւ զայլ համախոհ եղբարքս արժանի առնէք յիշման և այլն:

Անդ, ազատ մնացած տեղում ստացողներից մեկի հիշատակարանն է. *Ջվերտաին ըստացող քերականութեան եւ գրչութեան արհեստիս Յոհան վարդապետ մակ անուն եւ տեղեալ Կարճեւանցի կոչեցեալ յիշեսջիք աղաչեմ, ով ընթերցողք:*

Ուշ սեփականատիրոջ հիշատակարանը. *Յիշատակ է այս բառք գիրքս Մըրայտուրեցի Թաթևոսի, որդի ~ր Ղուկասին, մօրն Մայրեանին եւ որդոյն իւրոյ Մըմբաթին, խնդրեմ և այլն, ք. 246: Կրկնվում է ք.132, ինչպես նաև գլխավոր հիշատակարանից առաջ, ք. 246:*

Երկրորդ գրչի՝ Վարդերեսի հիշատակագիրը գտնվում է չորրորդ բնագրի վերջում, ք. 157. *Ջմեղատր գրիչս սուտ անուն Վարդերյես Լեհըցիս յիշեցէք ի Քրիստոս աղաչեմ զձեզ, ինչպես և 215-րդ թերթում. զմեղապարտ գրիչս զՎարդերեսըս Լեհըցիս յիշեցէք ի տէր. Ե գրիչով Ուտար իմ գրեր, օրն Ե տետր:*

225-րդ թերթում XXI տետրը նշանակված է հայկական և լեհական թվերով. *Վա Շյ, որոնց ներքո ծանոթագրվում է. Հային. այլ լեհի գիր է, գրել իմ, որ խալատես ոչ հսապումն:*

Վարդերեսի գրությանը հանդիպում ենք ևս մեկ անգամ ք. 314. *Աղաչեմ զձեզ, սիրելիք, վասն աստուծոյ համար, որ եթէ կարդալով, եթէ օրհնակելով, թէ Ե Ե սղալ գտանէք եւ գրիս նուաստութեան համար չի լինի թէ նեղանայք, որ իմ կարողութիւնս այսչափ էր. մեղապարտ զժողս սուտանուն Բ. Դ. Զ. Ն. Ո. Ըգ -սրս յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր եւ յիշողն յիշեալ լիցի ի միս անգամ գալուստն քրիստոսի ամէն: Հեղինակի մտահղացմամբ նշված թվերի ներքո թաքնված է նրա անունը. Բ. Դ. Զ. Ն. Ո. Ըգ տառերի թվային արժեքները [=3.10. 5. 40. 50. 500. (2+3)] մի կողմից, և «վ-ա-ր-դ-ե-ր-ե» [3000.1.5000.4.5.5000.5] առանց «ս» տառի պետք է համապատասխանեն միմյանց:*

Գլխավոր հիշատակարանի համաձայն, ձեռագիրը պարունակում էր

նաև Պորփյուրի երկը, որը նրա մեջ չենք գտնում: Թերևս դրանով է պայմանավորված տետրերի համարակալման անհետևողականությունը. մինչև *1/ա* համարը (թ. 240) հաշիվը ճիշտ է ընթանում, սակայն հաջորդ տետրը նշված է *1/բ* տառերով, որոնք ջնջված են և փոխարինված *Վբ* թվով, լուսանցքում տրված նշումով. *օրինակն հենց էր*: Հին համարակալման թվերը ջնջված են և հաջորդ տետրերում ընդհուպ մինչև վերջինը, որը նշված էր *1/բ* թվով և շտկված է *1/ք*: Նշումից երևում է, որ մեր ձեռագիրն ընդօրինակվել է վնասված օրինակից իր մեջ եղած բոլոր շտկումներով հանդերձ:

IV

Չեռ. Գ.գ. 1273, Վենետիկի մատենադարանի (17). Վարդանի քերականական աշխատության ընդօրինակությունն է, որ կատարել է 1614 թ. գրիչ Առաքելը, Դիոնիսիոսի բառգրքով և Մովսեսին վերագրվող «Բան իմաստութեան» երկով հանդերձ.

1. *Մեկնութիւն բառից քերականին*. թթ. 1-8.
2. *Քերականութիւն է հմտութիւն* (Վարդանի աշխատությունը).
3. *Մովսէսի Խորենացոյ Բան իմաստութեան*:

Հիշատակարանն ասում է.

Աստանօր յանգ ելեալ կատարեցաւ տառս այս իմաստապատում, որ կոչի քերական, արարեալ եւ մեկնեալ զսա մեծ վարդապետին հայոց Վարդանայ Կիլիկեցոյ ի խնդրոյ բարեսպաշտ թագաւորին Հեթմոյ: Ի թուիս հայոց ՌԿԳ (=1614 թ.), ամիս հայոց ահկի Դգ, աւարտումն եղև ձեռամբ մեղապարտ եւ յետին գրչի ի մայրաքաղաքս Կոստանդնուպոլիս ի դուռն սուրբ Նիկողայոս Չմիւռնացոյ հայրապետին եւ այդ սրբոցն, որ աստ կան հաւաքեալ, ի պատրիարզութեան Յովհաննէս վարդապետին ի խնդրոյ բարեսէր եւ հեզահոգի եւ ընթերցասէր Թորոս սրբասուն կրօնաւորի: Առաքել՝ գրիչ. վարպետն՝ Հիզանցի տէր Մարտիրոս քաջ փիլիսոփայն եւ երաժիշտն:

Չեռ. Ը.գ. 1104, [Վեներտիկի մատենադրանի] (18), ժողովածու, առանց հիշատակարանի եւ տարեթվի, հետևյալ բովանդակությամբ.

1. *Յաղագս <քերականութեան>*, քթ. 1-16, Դիոնիսիոսի բնագիրը, գրված հին բյուրգրով.
2. *Հիմնարկէք եկեղեցւոյ: Ժողովէ աստուածային քահանայապետն ի տեղին նուիրեալ*, քթ. 27-43, բյուրագիր.
3. *Սուրբ հարն մերոյ Մովսէս: Քերթող է, որ զմասունս գիտէ բանին*, քթ. 45-101: Մինչև ք. 57-րդը գրչությունը երկաթագիր է, այնուհետև գալիս է հին բյուրգիր, որով գրված է և առաջին բնագիրը՝ Դիոնիսիոսի քերականությունը, սակայն տեղ-տեղ փոխարինվում է սովորական՝ երկրորդ հոդվածի բյուրգրով.
4. *Պիսիդեայ է պատառիկս: Ով մշտաշարժ երկնի բնութեան զննածնի իմաստագործ ձեռնանցն*, քթ. 101-105.
5. *Գլուխք երկրորդ արինաց*, քթ. 105-115: *Երկրորդումն արինաց: Այս են պատգամք*, քթ. 115-259:
6. *Ժողովումն մեկնութեան ատարանին Մատթէի: Միտոյ զարութիւն զերազանց է*, քթ. 263-441, Ներսես Շնորհալու մեկնությունը:
7. *Յաղագս խնդրոյ ընթերցումին չր վարդապետաց, ներածություն հաշորդ հոդվածի. Ամենայն տամից տէրունականաց*, քթ. 445-482:

VI

Չեռ. Ա.դ. 875, [Վեներտիկի մատենադրանի] (19), նույնպես ժողովածու: Առկա է հետագա ստացողի և նորոգողի՝ Վարդան Բաղիշեցու հիշատակագիրը՝ ՌՃԻ թվականից (= 1671 թ.):

1. *Քերականութիւն*, քթ.1-24, Դիոնիսիոսի բնագիրը, սկզբի 8 թերթերը ավելի հին են, քան մատյանի մնացած մասը:
2. *Գրիգորի Մագիստրոսի եւ կիտանտի որդոյ Վասակա մարտիրոսի մեկնութիւն քերականի*, քթ. 25-141:
3. *Մասունք մարմնոյն*, ք. 141:
4. *Յաղագս Դ ստորոգութեանց մասանցն Արիստոտելի*, քթ. 142-146:
5. *Բառք երրայնցւոց*, ք. 146:
6. *Բառք յունարէն*, ք. 164:

7. *Բառք քերականաց*, ք. 165:
8. *Բառք որ ինչ ի խորանն եւ այլոց անյայտից*, ք. 223:
9. *Բառք Վարդան գրոց*, ք. 229:
10. *Մեկնութիւն նշանագրաց ալֆաբէնից եբրայեցոց*, ք. 230:
11. *Անուանք խեցեմորթացն*, ք. 230:
12. *Հանդէսք բանաստեղծաց փաղանունաբար*, ք. 231:
13. *Նշանագիրս այբուբենից*, ք. 243:
14. *Բառք Գաղիանոսի բժշկապետի*, ք. 248:
15. *Բառք գովասանականք ոգեայ*, ք. 255:
16. **Դաւթի փիլիսոփայի Ներգինացոյ յառաջարանութիւն Մահմանաց իմաստասիրութեան**. ք. 268:
17. *Դաւթի փիլիսոփայի ընդդէմ առարկութեանց չորիցն Պիհոռնի*, ք. 367:
18. *Մեկնութիւն բանից Դաւթի փիլիսոփայի, որ է կատարումն նորին տառի, որով վասն սահմանացն իմաստասիրութեան, ասացեալ Ներսիսի, եղբար կաթողիկոսի հայոց Գրիգորիսի, ուրումն սիրողի իմաստութեան*:
19. *Գիր փիլիսոփայական*:
20. *ՅԱրարածոց մեկնչէն*:
21. **Պատճառ սահմանաց գրոց**: *Մեծն Դաւիթ եւ Եզնակ Կողբացին գնացին յԱթէնս եւ լուան եւ տեսին քիծս ի վերա վարդապետացն եւ զայրացեալ մեղադրեցին: Եւ սորա զչարեալ ասեն զհայս կարծողս եւ չարճճիս եւ հակառակս եւ փորձողս, զոր յիշէ աստուածաբան, եւ խորհել չթողուլ զոր անդ ի հայոց ուսանիլ եւ չգոյր պատճառ այլ, բայց անելի իմանալն քան զայլս ազգաց. եւ զի էր ի նոսա շատ ինչ հակառակութիւն: Պիհոռնացիք եւ սքեստացիք, որք ալադիմեանք կոչին, այս է հակառակ կալ, որք սովորեցին բազում բանս ի սուրբ գրոց հենգնել, որպէս զտէրունիսն եւ զԴաւթի գրանս թէ «հաւատացի զոր եւ խօսե՜ցայ»: Նոյնպէս եւ զիմաստասիրութիւն անգոյ ասացին եւ անէ եւ պատահմունք եւ անսահման: Առնէ զայս զիրք թէ կարող են հայք զայս եւ թ՛է՞ դուք ընդէր զայս անտես արարեալ զհայս ամբաստանէք: Ոմանք ասեն թէ ի տեղն գրեաց եւ զօրինակն ի հետ երեր եւ կէսք թէ յերկիրս գրեաց եւ առաքեաց, որպէս Ստեփաննոս զիր թուխթն: Բայց յոյնք ասեն Ո՛ զիրք ունել զԴաւթի եւ յիրեանց ազգէ ասեն զնա. այլ յայտնի է ազգական եւ աշակերտ է Մովսէսի քերթողի եւ առ մեզ են սորա զիրք *Ի. ա. բարձրացու՜ցէք*>, *բ. սահմ՜անաց*>, *գ. պէտքն, դ. մեկնութիւն քերականին. են եւ այլ ճառք առանձնականք եւ մեկնութիւն վերնագրաց սաղմոսին: Կարող էր եւ բազմաց աստուածատուր իմաստիցն, զի գրնական եւ զշնորհականն**

- քաջ ունէր զատ յուսմանէն: Այլ վասն անհշխանութեան եւ ազգիս անընդելութեանն խափան եղեւ: Չայս զհրքս ի նոցունց գրոց հաստատէ զկարն յայտնել. ք. 391: Գրված է նոր քերթի վրա, ուրիշ ձեռքով, կոնաձև, քերթի երկու երեսը լցնելու համար: Արդյո՞ք դա հին քնագրի համառոտումը չէ:*
22. *Պատճառք գրութեան քերականի. ք. 393, քաղվածք Հովհաննես Երզնկացու առաջաբանից:*
23. *Հարցմունք եւ պատասխանիք իմաստասիրաց. ք. 408:*
24. *Դաւթի փիլիսոփայի յաղագս արուեստաւոր իմաստասիրաց՝ հույն փիլիսոփաների թվարկում:*

VII

Ձեռ. 38 Տաթևի, այժմ՝ Էջմիածնի վանքի (20): Գրիգոր Մագիստրոսի Քերականության ընդօրինակությունն է, կատարված, ինչպես երևում է Շմավոն վարդապետի հիշատակագրից, մինչև 1469 թվականը, երբ ձեռագիրը, որ դրանից առաջ տարվել էր վանքից, վերադարձվել է ըստ պատկանելոյն:

Գրիգորի մաժիշտոտսի եւ կիտաւնտի, որդոյ Վասակայ մարտիրոսի: Մեկնութիւն քերականի, գոր եղեալ է զայլոց եւ զհւրոց յաւելուածոց միտս. քք. 22-124:

Գրիչ՝ Լևոն. Եւ յիշատակ գրչիս Լեւոնի ամէն:

Շմավոնի հիշատակագիրն ասում է. *<զ>Շմաւոն /ըդս յիշեցէք որ զքերական գիրքս ի <Ս>արկաւագանց վանիցն քերաք ի <վանս> Եւստաթէի <Հ>ք առաքելոյս: Գիրքս այլ ի Տաթեւ վանիցս է եղել <տարա>ծ. /ըդ Գրիգոր Յովաննէս վիին էր տուել մականուն Կարմիր. մեք այլ վերստին քերաք ի վանքս: Յիշեցէք սրտի մտաւք զմեղաւք զառածեալս զՇմաւոն /ըդս եւ Բծ զյիշողքդ յիշէ ի կեանսն ամէն: Ի թվ. ՋԸ էր, երբ քերաք զգիրքս:*

VIII

Ձեռ. Գ.ք. 871, Վեներիկի Մխիթարյանների մատենադարանի (21), Գրիգոր Մագիստրոսի քերականության ընդօրինակում, փոքրադիր, առանց հիշատակարանի և տարեթվի, նոտրգիր.

Գրիգորի մաքիստրոսի եւ կիմտօնտի, որդոյ Վասակա մարտիրոսի: Մեկնութիւն քերականի, գոր եղեալ է զայլոց եւ այլ եւս յաւելեալ յիւրոց իմաստիցն:

Չեռ. Է.գ. 306, Վենետիկի մատենադարանի (22), Հովհաննես Երզնկացու քերականական աշխատության ընդարձակ խմբագրության (23) հոյակապ ընդօրինակությունն է: Չեռագիրն ընդօրինակվել է նրա աշակերտ Թորոսի կողմից, ըստ երևույթին, հեղինակի կենդանության օրոք և ունի բնօրինակի արժեք: Սկզբում, թերևս ինքն իսկ Հովհաննեսը գետեղել է Դիոնիսիոսի քերականությունը: *Քերականություն է հմտություն*, թթ.1-21 (հավելվածում տեղադրված է բառգիրք՝ *Բառք քերականին*, որին հաջորդում է *աստուած* բառի հոլովումը): 22-րդ թերթից սկսվում է Հովհաննեսի երկը՝ հանգամանալից նախարանով, որը մենք վերլուծելու ենք վարը: Ընդարձակ ավարտական հիշատակարանը նույնպես պատկանում է հեղինակին և հայտնում է հետևյալը.

Ցիշատակարան գրոցս

Մեծասքանչ եւ զարմանահրաշ բանաւոր կենդանիս այս մարդ միեւնոյն կազմած եռակի տարորոշմամբ զանազանի, միտք գոլով իմանալի եւ եռամասնեա հոգի եւ մարմին զգալի. վասն որոյ եւ բարեացն սորա փարթամութիւն յերիս զանազանի հոգեկան եւ մարմնական եւ որ շուրջ զմարմնովն: Եւ հոգեկանք են իմաստութիւն եւ հանճար, աստուածային ուսմանցն զիտութիւն, առաքինութիւնք անկեղծ եւ հաւատք ուղիղ: Իսկ մարմնականք են քաջազգացութիւն եւ առողջութիւն, գեղեցկութիւն եւ զարութիւն: Իսկ որ շուրջ զմարմնովն իշխանական ճոխութիւն, բարետոհմութիւն ազգի, ստացուածոց փարթամութիւն եւ տոհմաւոր սիրելիք: Արդ որ զկարգ կազմածին իւր տեսանէ, անտի եւ զիմաստագործ կարգ արարչութեանն աստուծոյ ծանիցէ եւ զվերնոցն ազգակից միտս սկզբնատիպին բարութեամբն կերպարեսցէ: Իսկ որք զվերինն առ ներքինն դարձուցանեն, նոքա զհոգւոյ անմարմնութիւն ի մարմնոյ թանճութիւն յեղափոխեալ շրջեն: Իսկ որք զվերինն խորհին ըստ Պաւլոսի եւ ելս ի սրտի դնեն ըստ Դաւթի եւ յոտն կան եւ զնան աստի ըստ Միքեա եւ ա՛ւն յարուցեալ երթիցին ընդ Յիսուսի, կատարելոյն բաղձայն բարութեան եւ զմարմին եւ զմարմնական բարիսն եւ որ շուրջ զմարմնովն են պանծալիք յանմարմին հոգւոյն փոխեն յազնուականութիւն եւ զմարմնոյ ծանրութիւն հոգիացուցեալ, զարարչականն ճշմարտեն պատկերագործութեանն նմանութիւն:

Արդ վերնական աստուածային բարեացն ի կերպ կազմածին ստուգապէս պատկերագրողն բարեպաշտութեան եւ իմաստութեան տիրապէս տարփաւորն, աստուածասէր թագաւորն հայոց Հեթում, որդի Լէոնի բարեպաշտի, որդւոյ իմաստուն արքային Հեթմոյ հաւր եւ մաւր Չապելի սրբոյ թաղուհւոյ, դստեր առաջին պսակաւորին Լէոնի, որդւոյ Ստեփանեա, որդւոյ

XXX

Լեւոնի, որդւոյ Կոստանդեա, որդւոյ Ռուբէնի մեծ<ի> իշխանին, յերկուց թագաւորական ցեղիցն սերեալ զարմի ի Բագրատունւոյն եւ յԱրծրունւոյն. յայտոսիկ թագընկալաց եւ յիշխանաց բարձրագահից բողոքոջ բարեպաշտութեան բուսեալ եւ ծաղիկ զարմանային ի ճմեռնացեալ ժամանակիս երեւեալ, սաղարթաւոր եւ բազմոստեան արքայական տնկոյն պտուղ քաղցրաճաշակ ի համս եւ ի հոտս հասեալ, հայկական սեռին եւ Արամեանս ազգին բեկելոց եւ խոցոտելոց յայլայեզու ազանց սպեղանի եւ դեղ դիրացուցիչ բարեգարդութեան կարգաց եւ կրամից եկեղեցւոյ եւ մանկանց նորին դասաւորութեան պայծառացուցիչ, վարժ աստուածային գրոց սրբոց եւ պատուող ուսումնականաց եւ գիտութեան հմտականաց, բարեզութ ամ մեհնեսեան եւ խնամածու:

Յորմէ եւ ես նուաստ Յոհաննէս Երզնկայեցի բազում խնամ սիրոյ եւ անատութիւն գթոյ վայելեցի. եւ զի յոյժ գթասէր եւ ուսումնասէր ունէր քարս բարեմիտ թագաւորն, որ եւ ի դ<ա>ռն ժամանակիս, յորում աշխարհ ամենայն իբրեւ զծով անդնդական խորովք խռովեալ եւ ամբոխեալ ծփէր (24) եւ աւազանման որդիք Աբրահամու անաւրէն ազգն Իսմայէլի եւ աղախնածին որդիք Հազարու ծանրացեալ ի վայր քարշեալ ծածկէին զաստեղացեալ որդիս հարն հաւատոյ վասն պայծառ լուսոյ անաքիճութեան ի նոսա նուագելոյ եւ բռնացեալ նեղէին մաշել սրով եւ գերութեամբ: Իսկ բարեսէր թագաւորն Հնթում իբրեւ զաստղ լուսանշոյլ փայլէր եւ զաղքատութիւն եկեղեցւոյ մար զարդարեալ ծածկէր եւ ոչ դադարէր ի գիրս ստանալոյ եւ յեկեղեցւոյ զանձս յաւելուած ամենելոյ: Վասն որոյ եւ ես նուաստ Յոհաննէս Երզնկայեցի, բիր բարեաց պարտական խոհեմամիտ եւ իմաստութեան պատուող արքայի, ընծայեցի զփոքր զայս գրքունք, որ կոչի քերական, ամ ի քերել եւ սրբել, պարզել եւ զտել զամենայն բանախասութիւն եւ իրագործութիւն վեցեակ կատարելաթիւ սորին մասամբքն կատարելագործել զբանաւորութիւն ի վեցերեկի ատուր ստեղծեալ մարդոյն, զվերծանութիւնսն անզանութեանցն ընթեռնուլ արուեստի, զգրուցատրութիւնն իմաստապէս եւ ոչ ռամկականացն սովորութեամբ լեզուաց գաւառաց եւ պատմութեանց ազանց համառատ համեղախասութեամբ, համեմատութեանցն լծակաւ զբայիցն եւ զբանիցն ուղղել մէտս կշռոց, զդատումն քննողութեան ամենել ի տաղիցն չափողութիւն եւ ի ճառիցն ուղղամիտ հարազատութիւն. տեղեկանալ եւ տառիցն զանազանութեան եւ բառիցն ի բանսն շինողութեան, վերահասու լինել վանգիցն եւ փաղարութեանցն փոխայեղութեանց, բանալի ունել բանին զութեակ մասունս քերթողութեանն, ամենու զիմաստս անուանցն հասարակաց եւ մասնականաց եւ ընդ նորումքք անկեալ տեսակացն եւ ի խոնարհմունս բայիցն, յաւելելոյ եւ շաղկապելոյ եւ այլոց մասանցն արուեստի անդամոց մարմնոյ:

Արդ ի յայսմ ժամանակի, որ էր թուականիս հայկազնեան տումարի ՉԽԲ, գրեցաւ զրքունքս. որ եւ յայտասիկ ատուրս ժամանակաց բազում եղեւ աղէտս ողորմանաց եւ զգայական սուգ եւ կսկիծ ազդողական քրիստոնէից ազգի յանաւրէն սուլտանացն Եզիպտոսի, զորս պարտ է յիշել կարճառատ բանի: Ձի ՉԼԸ թուականին սուլտանն Եզիպտոսի Ալֆի անուն առ գՏրապօլիս զերեքպարսպեան ամբողջեամբ պատեալն գեղեցկաշէն քաղաք, անցեալ զարաւքն ընդ մուտս ծովուն, յաւարի առեալ զանչափ գանձսն, որ ամբարեալ կայր առ փարթամացեալ բնակիչսն, աւերեալ յատակեցին զպարիսպ քաղաքին եւ քակեցին զհրաշագարդ եկեղեցիսն:

Իսկ ՉԽ թուին որդին Ալֆէ, Մելիք-Աշրաֆ անուն, խակամիտ եւ զազանարարու առ զմեծահռչակ եւ բազմամբոյս քաղաքն զԱքայ, զոր ունէին ազգ ֆրերացն, տունն Դամբլուն եւ Ոսպեթալին (25). անարի եւ թոյլ գտեալ ազգն արիական առաջի անարիւնացն, մատնեցաւ քաղաքն ի պաշարումն եւ առաւ եւ սպառեցան սպանմամբ սրոյ եւ զերութեամբ, զի տուրք անարիւնացն զաւագանածին տունկսն բանաւոր թաւափէին զգլուխսն ի մարմնոց իբրեւ զտերեւս ծառոց եւ այլքն վարեցան ի գերութիւն իբրեւ զճագս հաւուց ի բունոյ բնակութեանցն իւրեանց եւ ազնուականքն եւ ազատածինք, ճոխքն եւ փառաւորք գնացին ի ստրկութիւն, եւ մնաց քաղաքն բազմորդի իբրեւ զմայր սեւազգեստ ի վերայ մանկանց իւրոց:

Իսկ ի թուականին ՉԽԱ յաւելաւ ահ եւ երկեղ դողումն եւ սասանութիւն յերկիրն հայոց ի Կիլիկիայ, զի վիշապագլուխն այն, որ առ զԱքայ, դիմնաց ի դարանէ <իւրմէ> (26) ահագին շնչմամբ եւ դողորդելով անհուն զարաւք, հեծելաւք եւ հետեւակաւք, ըստ Երեմիայի զուժմանն բօթի. «եւ առիծն ի մորոյ իւրմէ սատակել զազգս, խաղաց եւ ել ի տեղուջէ իւրմէ առնել զերկիր զաւերակ եւ քաղաքք քակտեսցին առ ի չգոյէ բնակչաց ի նոսա, վասն որոյ ասէր, ի վերայ այդորիկ քրճագ<գած մար- >¹ դասէր թագաւորին. կա<յ>աք եւ մնայաք մինչեւ ի թիւս թուականին ՉԽԲ եւ վ<ս>տահանայաք յողորմութիւնն աստուծոյ պարգեւ լինել շինութիւն աշխարհիս յ<ուս>ոյ եւ սիրոյ թագաւորին, որ յաստուած եւ ի սուրբս նորա: Իսկ աստուած, որ ոչ ամաչեցուցանէ <զ>յուսացեալսն իւր ըստ հայցմանն Դաւթի եւ երաշխաւորութեանն Պաղոսի եւ որպէս փորձի ի բովս ոսկի եւ արծաթ, նոյնպէս ընտրէ զսիրտս աստուած ըստ Սողոմոնի, հայեցեալ ի համբերատար ժուժկալութիւն թագաւորին մերոյ եւ ի նեղութիւնս, զոր կրէր

¹ Երեմիա Մարգարեի խոսքերը (Դ, 7), որ ընդհատվում են մեկ թերթի պակաս լինելու պատճառով: Մույն հիշատակարանի մի մասը, աղբյուրը չնշելով, հրատարակել է Գ. Ալիշանը «Յիշատակագիր ժամանակակից» խորագրով («Հայաստանում», էջ 500): Ալիշանի ընդօրինակութեան մեջ առկա է [բնագրի] այն մասը, որը չկա մեզ մոտ, ինչի համար և նրան ենք հղում հետաքրքրվող ընթերցողին: Այդ հիշատակարանի մեկ այլ հատված Ալիշանը գետեղել է նույն տեղում, էջ 511, «Յիշատակարանը Յովհաննու Երզնկացույ» շարքում: XXXII

երկիրս հայոց. եւ որ ի ձեռնն ունի զսիրտս քազաւորաց, որպէս սահմանս ջուրց, եւ ընդ որ կոյս կամի նայեցուցանել, դարձուցանէ զնա եւ որ մինչեւ ցայս վայր թոյլ ետ գոռոզաբարձու սուրբանին սրտմտական քարկութեամբ իբրեւ զհոսանս գետոց գոռալ հեղեղաբար յարձակմամբ գերել եւ գերվել եւ զազանային ցասմամբ ցսպառումն սպառանալ ըստ Նաբուգոդոնոսորայն ի վերա Երուսաղէմի, դարձոյց զսահմանս սրտմտութեան նորա եւ նայեցոյց խոհականին վարել ընտրու<թեամբ> եւ գթալ որպէս Կիրոսս առ գերեալսն յԵրուսաղէմ<է ի> Բաբելոն:

Ձի ի նոյն թուիս ՉԽԲ ի մուտ<ս> <յու>նիս ամսոյ եկին ղեսպանք պատուաւորք ի <սուլ>տանէն եւ բերին ամօխտս մեծագին եւ <պատու>ական զգեստոց, դալաթ <եւ> ղիւայ, ան<ձին> քազաւորին եւ Լ եղբար նորա: Բերին եւ թուրքս երդման զսուլտանին եւ զմեծամեծ <ամի>րայոց նորա եւ հաստատեցին դաշինս <սիրոյ> եւ խաղաղութեան ընդ քազաւորն Հեթում: Առին ի նմանէ երդումն հաստատութեան, ընկալան եւ պատմուծանս զարդոց ամենայն եկեալքն ի սուլտանէն: Առաքեաց <եւ> առատամիտ քազաւորն մեր բազում բեռնն արծաթոց եւ զանազան կտաւս ոսկենկար մետաքսից եւ բազմութիւն ձիոց եւ ջորոց եւ այլ իրս նորագիւտս աղերս եւ հարկ սուլտան: Եւ եղև այս սիրոյ եւ խաղաղութեան հաստատութիւն խնդութիւն մեծ երկրին հայոց: Էր եւ աղերս գթութեանն աստուծոյ ի մեզ քարերարելոյ յոյս եւ հաւատ եւ սէր եւ ողորմածութիւն քազաւորին, զի որ զդառն ջուրն Մեռայի արար ըմպելի անուշահամ <հնոյն Իսրայէլի, զդառնութիւն> բարոց սուրբանին քաղցրացոյց ընդդէմ քազաւորին մերոյ եւ եկեղեցոյ Քրիստոսի:

Արդ որք ընթեռնոյք զայսքան յիշատակի եւ ամօտիք յարուեստական գրոյս իմաստութենէ, յիշեսցիք բարի յիշմամբ զբարեպաշտ քազաւորն Հեթում, հայցել ի Քրիստոսէ թողութիւն մեղաց եւ խնդրել արքայութիւն անմահական կենաց. յիշել ընդ նմին եւ զսրբասնունդ եւ զբարեբարձու եղբարս նորա, զորս սնուցանէր երկիրդի տեառն եւ ուսմամբ իմաստութեան եւ զբարի արմատ ծնաւոր արհնութեան զաւակացս, զի եւ դուք գթութեամբ յիշեալ լիջիք յամենարհնեալ յիշումն աստուծոյ, ամէն ամէն:

Այնուհետև զալիս է մատյանի վերջին ստացողի հիշատակարանը. զվերջին ստացող սորա զՎարդան վարդապետն յիշեցէք յետ մահուն ի սուրբ ուխտ Ակներոյ:

Թ. 135. Որք հմուտ եւ տեղեակ իսկ էք առաջնոյ արինակին որ յաղագս անուանս ճաշի, եւ այժմ տեսանէք միայար եւ ըստ կարգի, զորս երեք եւ չորք կրկին էր եղեալ, կարծեմ եւ յուսամ թէ ղիւրութեամբ եւ հեշտաբար լընթեռնուլն եւ յաւարտելն յիշէք զսակաւ աշխատանս մեր:

*Ո՞հ աղաչեմ զգրող սորին յիշեա. արինակողք գրոյս, գրեցէք զչորս տողս քանի - այս վերջին խնդրանքը, թեև վերաբերում է Հովհաննեսի դրվագին, սակայն ոչ թե նրանից է, այլ իր իսկ գրչի, Հովհաննեսի աշակերտի կողմից. վերջինիս անձը որոշվում է թ. 162-րդի վրա գտնվող հեղինակային մի այլ գրությանը հավելող՝ գրչի նշումից. **Դերանունս խիստ անյայտ եւ խառնակ էր ի մեկնչացն, այլ եւ գոր հնար էր, ըստ կարի մերում պարզեալ եղեւ: Ի հմտանալն քում իմաստիցս, ո՛վ ուսումնասէրդ, աղաչեմ յիշել զսակաւ աշխատաւդս ի սմա զՅոհաննէս վարդապետ: Ընդ նմին եւ զմեղաւք զառածեալ անձնս, զգրող սորին, զԹորոս Կլայ<եցի> եւ զաշակերտ վարդապետիս Յոհաննիսի: Եւ որք յիշէք, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ :***

X

Չեռ. Բ.դ. 990, Վենետիկի մատենադարանի (27) նույնպես Հովհաննես Երզնկացու ընդարձակ քերականության ընդօրինակությունն է: Չեռագիրը սկզբնապես պարունակել է տոմար և քերականություն: Տոմարն այժմ պակասում է. թերևս այն պոկվել է և գտնվում է այլուր: Առկա է Հակոբ գրչի հիշատակարանը, որում նշվում է տարեթիվը, սակայն, ցավոք, այս ցուցումն այնքան խառնաշփոթ և անհասկանալի է, որ թվագրումը մնում է շատ կասկածելի: Հիշատակարանում ասվում է հետևյալը.

Էջ յի ը. Փառք քեզ կօնի քօղ արեգսագոյն կիսայգնդի եւ Դէմետրի արարիչ...

Յամի երեսներորդի երկրորդ երրորդի (sic) յորելեանի միոյ քիսեքիստոնի մին ղիմպիադի թուարերութեան ժամանակի մարդեղութենէ փրկչի. նայ եւ ըստ համարոյ յարեթագին տումարի հարիւր քսան եւ ութ (վերևից շտկված է՝ երեսուն եւ երկու) ինդոսի երկրորդին ամի եղեւ սկիզբն եւ յաւարտումն գրի, որ է տումար եւ քերական հետ երկոքին ի մի տեղեւ մի կասպ, յամսեանն հայոց Ահեկի, տգոնի միոյ նոնոսի, յերրայեցոց յամսին թամուզի, ինդոսի միոյ ողոմպիադի հռոմայեցոց յամսեանն յուլին առաջնումն ատուր շքթ ի ժամն V:

Արդ սայ գրեցաւ ձեռամբ յոգնամեղ եւ անպիտան սոսկանուն Յակոբ սզատրին, արթուն անուամբ կոչեցեալ եւ գործովք ի քուն մահու ընկլուզեալ: Այլ եւ անմեղադիր լերուք ոչ թէ հմուտ գոլով գրչութեան արուեստի, որպէս եւ <յ>այտ է ի գործ<ի>ս: Արդ երեսանկեալ մոխրայթաւալ ղիմաւք աղաչեմ եւ մաղթեմ զդասս լուսերամ կրաւնատրաց եւ աշխատասէր քանասիրաց, որք աւգտիք ի սմանէ կամ արինակէք, յիշեցէք զտարակուսեալս մեղաւք եւ զմոլորեալս մտաւք, զգրաւդս զայս. եւ որք սրտի մտաւք յիշէք զմեզ եւ դուք յիշեալ լիջիք առ տէր յաւուրն ահեղ ատենին ամէն:

XI

Չեռ. Ա.է. 1736, Վեներտիկի մատենադարանի (28), Երզնկացու քերականության ընդարձակ խմբագրության ընդօրինակությունն է, որը քվազրվում է Հայոց տոմարի ճճն տարով, այսինքն՝ մեր քվարկությամբ 1656 քվականով:

XII

Չեռ. Բ.գ. 957, Վեներտիկի մատենադարանի (29), Հովհաննեսի նույն աշխատության նոտրգիր ընդօրինակությունն է, հավանաբար՝ XIX դ. սկզբի: Գրիչ՝ Ստեփանոս քահանա:

XIII

Չեռ. Ը.ք. 174, Վեներտիկի մատենադարանի, 1332 ք. (30), Հովհաննես Երզնկացու քերականության համառոտ խմբագրություն:

1. *Յաղագս քերականութեան*, էջ 1-45, Դիոնիսիոսի քնագիրն է, հավելումով. *Արծարծմունք խոնարհմանց քայից. յաղագս աղաթից. աղաթական ներգործական ներքսակա ամանակի միատրական*. քք. 45-48:
2. *Այլ ուստեք ճարտասան յաղագս բնութեան: Բան եւ սահման եւ բնութիւն զմիջոցէ ասին եւ ստուգարանի բնութիւնը բանութիւն, որ է այս, որ ինչ ասին զումեքէ*. քք. 48-50:
3. *Յաղագս շրջագայութեան երկնից քէ որպէս իմաստասիրացն թուեցաւ*. քք. 51-54:
4. *Յաղագս անճրեաց քէ զինչ է*, քք. 54-56. *յաղագս բոլր*, 56. *յաղագս որոտման*, ք. 57. *յաղագս անուանց հողմոց*, ք. 60. *յաղագս փոթորիկ հողմո, զոր ի բաջաղանս եւ յառասպելս վիշապ հանել ասեն*, ք. 61. *յաղագս որ յաղ նշան լինի պէսպէս*, քք. 61-62 (երատ. «Արարատ», 1896, փետ., մարտ):
5. *Միշտ քաղճանք բանին բնատրեալ է*. քք. 65-373:
6. *Այլուստ քան է: Լծորդութիւն է*. քք. 373-392 (այս դրվագը առկա է սույն ձեռագրում նաև վերը, ք. 271):
7. *Բան այլուստ: Եւ զի սահման եւ բնութիւն յաւսիցէ զիր եւ ամենայն ինչ սահմանաւ ճանաչի*. քք. 393-403:
373-րդ քերթում զտնվում է մի հիշատակարան, որում ասվում է. *Գրեցաւ*
XXXXV

քերականաց տառս ձեռամբ սուտանուն արեղայ Ներսէս գրագրի ի թուականիս հայոց ՉՉԱ (=1332 թ.) յանապատին սրբոյն Կիրակոսի ի խնդիր սրբամաքուր եւ արդիւնաբան վարդապետի Յովաննէսի, որոյ տէր աստուած վայելեալ տացէ ընդ երկայն արուրս ամէն:

XIV

Չեռ. Ե.ա. 289, Վենետիկի մատենադարանի (31), Գրիգոր գրչից կատարված նույն աշխատության ընդօրինակություն:

Նուստ վրդպտի Յոհ<ա>ն<ե>սի Եզրնկեցոյ, որ եւ Ծործորեցի, արարեալ համառատ տեսութիւն քերականի. թ. 3. Յոհաննու Ծործորեցոյ արարեալ համառատ մեկնութիւն քերականին, որ Երզնկացի կոչեցեալ:

XV

Չեռ. Թ.գ. 1317, Վենետիկի մատենադարանի (32), Հովհաննեսի նույն աշխատության շատ ավելի ուշ ընդօրինակություն, որ բացի Դիոնիսիոսի բնագրից զուգորդվում է նաև Պորփյուրի «Ներածությամբ»: Առկա է մատյանի ստացողի հիշատակագիրը. *Ես անպիտան Յակոբ երէցս ստացա զսա ի վայելումն մեղապարտ անձին իմոյ եւ ի յիշատակ ծնողաց իմոց ի թվին հայոց ՌԾԴ (= 1605 թ.):*

XVI

Չեռ. թիվ 336, Վիեննայի մատենադարանի (33), Եսայի Նչեցու քերականական աշխատությունը:

Մեկնութիւն քերականի, արարեալ Եսայեա վարդապետի, հաջորդում է Դիոնիսիոսի բնագրին: Ընդօրինակությունը 1360 թվականի է, նկարագրությունը տես չ. Տաշյան, Չեռագրացուցակ, թիվ 336:

XVII

Չեռ. Ա.գ. 994, Վենետիկի մատենադարանի (34), Եսայիի նույն աշխատության օրինակն է: Ինչպես և նախորդ ձեռագրում, այստեղ առկա է նախ Դիոնիսիոսի քերականությունը, թթ. 3-38. յաղագս ոտից գլխի վերջում, թ. 37, կարդում ենք. Եսայի յիշեսցի: Բայերի խոնարհումը՝ խոնարհմունք բայից գրավում է ընդամենը մեկ էջ՝ մինչև յարականի բազմաւորական, էկոփեայք.

XXXVI

թ. 38. Այնուհետև գալիս է Եսայիի երկը հետևյալ վերտառությամբ.

Քերականութեանն վերլուծութիւն քան առ քան, ձեռամբ Եսայեա հաւաքեալ. քք. 39-263:

Ընդօրինակման տարեթիվը անհայտ է. Մխիթարյան հայրերը կարծում են, որ սա ինքնագիր է, հիշատակարանի Եսայիին համարելով հեղինակ: Թերևս այդպես է, թեև Դիոնիսիոսի բնագիրը, որում գտնվում է հիշատակարանը, գրված է այլ ձեռքով, քան Եսայիի աշխատությունը: Բացի այդ, Եսայիի երկի առաջին էջերի ընդօրինակումը թերի է, ունի բացեր, որոնք լրացված են տողի վերևում կամ լուսանցքում: Մի գուցե իրավացի է հ. Ղ. Ալիշանը, երբ ենթադրում է, որ սա՝ քերականության նախնական ուրվագիծ է՝ շտկված իր իսկ Եսայիի կողմից: Նրա ձեռքով են գրվել Դիոնիսիոսի բնագիրն ու քերականության վերնագիրը¹:

XVIII

Չեռ. Ե.ա. 671, Վենետիկի մատենադարանի (35), նույնպես Եսայիի երկի՝ Հովհաննեսի ընդօրինակությունն է (*Յովհաննէս սպասաւոր*), էկզ (1415 թ.):

XIX

Չեռ. Դ.գ. 46, Վենետիկի մատենադարանի (36), նույնպես Եսայիի երկի ընդօրինակությունն է: Առաջին էջն ընկած է, օրինակը վատ է պահպանվել: Պակասում է նաև Դիոնիսիոսի քերականությունը:

XX

Չեռ. Բ.գ. 442, Վենետիկի մատենադարանի (37), ժողովածու բովանդակությամբ, փոքրադիր մատյան, որը պարունակում է.

1. *Յաղագս զոյի էության եւ պատահման սրբոյն Յոհաննու Դամասկացոյն ասացեալ եւ թարգմանեալ ի հայ լեզու ի յունարէն զոյ Բագարատա Մամիկոնեան: Ներածութիւն իմաստասիրութեան, որ է*

¹ Առաջին էջը վերարտադրված է [Բ.] Ալիշանի կողմից, «Այրարատ», էջ 132. գիրը հմմտ. Հ[այր] Գարեգին [Հովսեփյան], *Քարտեզ հայ հնագրության*, տախտ. ՉԲ, № 130:

իսադոյիկի, զկնի այսր եւ զամենայն իմաստասիրութեան գործարան, որ է զանունն ըստ հելլենացոց բարբառի, քք. 1-44:

2. *Դաւթի փիլիսոփայի էակաց զիրք, քք. 83-96:*
3. *<Մովսեսի քերդողի յաղագս քերականութեանց: Քերդող է, որ զմասունս – ծովական բանին> եւ ոչ անդնդական խորոցն զիտակ: Սկիզբը պակասում է: Վերջում զտնվում է .*
4. *Մովսեսի քերդողի հար մեկնութիւն քերականի: Գրականութիւն ստուգարանի մինչև ստուգարանութիւն (վերջինիս բացառությամբ): Սրանից հետո զալիս է կրթական բան Մամբրէի դրվագից. Հարցնես այս իրք – ի բայէ (= ձեռ. 2297, Էջմիածնի մատենադարան, բնագիր 2):*

XXI

Ձեռ. Ս.ե. 822, Վենետիկի մատենադարանի (38), Է ծա (=1402 ք.), բազմաբովանդակ մատյան, որը, ի թիվս այլոց, պարունակում է.

1. *Ժամանակացոյցք Մովսիսի քերթողահարն:*
Ստեփանոս [զրչի] հիշատակարանը. *Արդ ի վերջին ժամանակիս ի Է ծա թուականիս ձեռագրելոյ յիշատակիս ձեռամբ անարհեստ զրչիս տխմար եւ ծոյլ Ստեփանիս եւ սուտանուն արեղաիս ...*
2. *Հարցումն Դաւթի իմաստասիրի: Փրկչական կիրքնգալութիւնք միապէս. քք. 31ք-33:*
3. *Խնդիր ~ն Մուշեղի ընդդէմ Արիանոսի, Եւտիքէ<ի> եւ Նեստորի եւ Քաղկեդոնի: Աշմարտութիւն ամենայն ուստեք յայտնի. քք. 59ք-85ք:*
4. *Երանելոյն Թէոդորոսի ընդդէմ Մայրագոմացոյն (իրատ. Հովհաննու Օճնեցու երկերում) (39):*

XXII

Ձեռ. 47, Վիեննայի մատենադարանի, liber causarum [Գիրք պատճառաց] չճկն (= 1725 ք.) (40): Նկարագրված է Հ. Տաշյան, Ցուցակ ձեռագրաց: Ի թիվս այլոց պարունակում է հետևյալ բնագրերը (41).

1. *Սկիզբն եւ պատճառ բարձրացուցե<ք>ն ճառի տեսութեա>ն*

Հրաշագործողն արարածոց աստուած, որ ի սկզբանէ գոյացոյց զամեն-
XXXVIII

նայն, յետոյ հոգացեալ վասն մարդոյն, որ ի պատկեր իւր արար եւ տէր եւ թագաւոր այլոց արարածոցն կացոյց ի դրախտին վայելչութեան: Իսկ յանկանել նորա յարագութեան կենացն, մահ թագաւորեաց ի մարդիկ, մինչ յերեւիլ (42) երկրորդն Ադամայ ի կերպարանս նախահօրն, որով փրկեցաք ի մահուանէ եւ լցան տիեզերք փառօք նորա եւ շնորհօք ամենաստորք հոգւոյն, որ հեղալ ի դասս (43) եւ նոքօք յամենայն ազգս եւ թագաւորութիւնս. որ եւ ի ձեռն Գրիգորի Պարթեւի, որ յետ Թադէոսի առաքելոյ մեծաւ նեղութեամբ լուսաւորեաց զՀայաստան աշխարհս (44). եւ ի նմին հաւատոյ հաստատութիւն անշարժ կացին մինչեւ ի ժամանակս մեծին Սահակայ եւ Մեսրոպայ: Եւ մինչև ցայն ժամանակ նշանագրօք ասորոց եւ յունաց վարէին հայք, զի թեպէտ եւ ունէին զիր, այլ ոչ գոլով ի նոսա ծայնաւոր, յաղագս այնորիկ ոչ կատարէր բան, այլ խեցքեկելով իմն անկատար մնացեալ լինէր: Իսկ ի ժամանակս Սահակայ եւ Մեսրոպայ եւ Վռամշապիտոյ թագաւորի հայոց խնդիր արարեալ մեծաւ ջանի սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ, զնացեալ Մեսրոպ (45) առ ասորիս եւ առ յունականսն ոչինչ օգտեցան: Յայնժամ <յ>աստուած ապաւինեալ, աղօթից պարապէին անդադար, մինչեւ ի հոգւոյն սրբոյ որպէս առաքելոցն հրով նոյնպէս եւ աստ, իբր թաթ ձեռին երեւէր զրելով ի վերայ եւ հաստատելով ի սրտին իբր ի ձեռն: Եւ այնչափ մեծագոյն էր պարգեւն, մինչ ոչ միայն հայոց, այլ եւ վրաց եւ ադուանից արար զիրս հաստատունս:

Բայց մարթ է գիտել ըստ կար<ի> թէ ուստի տուաւ այս շնորհ ազգի մարդկան, զի անշունչ մեկանաւ իբր կենդանի բանականաւ խօսին: Յետ ելիցն Ադամայ ի դրախտին վայելչութե<ւ>նէ ասի թէ ունէին ամենայն ազգն, որ աճեաց ի Մեթայ եւ ի տանէն Կայեննի, զմի զիր, ոմանք թէ զերբայեցին եւ այլք թէ զարաբացի զիրն: Իսկ յորժամ լեզուքն բաժանեցան յաշտարակին քակիւն, որով եւ քակեցաւ ի միմեանց բնութիւն (46) ամենայն ազգաց, յետ այնորիկ եւ առանձին ամենեցուն զիր տուաւ: Կիսոց (եւ) ազգաց լի եւ պատարուն, որպէս երբայեցին եւ յոյնն եւ արապն, որ կոչի պարսիկ, իսկ կիսոցն այնպիսի (47) իբրեւ զմերն, որ ոչ յօղաւորէր (48) բան կատարուն:

Իսկ ահա յետ առնելոյն (49) սրբոյն Մեսրոպայ (50) զաստուածատուր ձիրն սկսան ժողովել (51) զմանկունս փափկածայնս եւ երկարոզիս եւ քաջամիտս հրամանաւ Թէոդոսի կայսեր եւ Վռամշապիտոյ թագաւորի հայոց:

Եւ արդ այսպիսի խնդրոյ դնէին (52) վարդապետք եկեղեցւոյ սկիզբն եւ պատճառ այսպէս: Յոլովս եւ զանագանս գտաք զրեալ պատճառս ներբողեցին անհաւաստիս թէ ուր եւ էր աղագաւ եւ յու՛մէ հարկաւորեալ զրեաց զսա մեծիմաստն Դաւիթ փիլիսոսփայ: Չի ոմանք յԱթէնս ասացին ատենաբանել զսա եւ այլք ի Կոստանդնուպոլիս եւ կէսք Յերուսաղէմ ի Գողգոթային յա-

ուոր խաչվերաց տօնին: Այլ ի ճշմարտապէս արանց եւ <ի> քննող պատմութենէ գժամանակն եւ զպատճառն այսպէս գտաք զրեալ եթէ հոգեկիր թարգմանիչք հայրերէն ընթերցմանց եւ գտիչք աստուածապարզեւ զրոյն շքն Սահակ եւ Մեսրոպ (53) ստացան աշակերտանոցս ալֆափետաց մանկունս ուշեղս, փափկածայնս եւ երկարոզիս եւ կարգեցին դպրոցս հրամանաւ մեծի կայսեր Թէոդոսի եւ Վռամշապետի արքային հայոց յամենայն տեղիս: Եւ այսպ զկատարելագոյնսն ի նոցանէ արս կորովամիտս եւ առաքինիս առաքեցին յիմաստասիրութեան մայրաքաղաքն ի Բիւզանդիոն եւ յԱթէնս եւ յԱղէքսանդիա(յ) այլ եւ ի կողմանս ասորոց ուսանել զգիր եւ զլեզու յունարէն, հելլենական եւ ասորերէն: Իսկ նոցա կրթեալք յայտոսիկ ի մանկականն հասակի, անդրէն դարձեալք թարգմանէին զաստուածեղէն կտակարանս (54), յեղաշրջեցին ի հայ լեզու եւ զվարդապետութիւնս մեկնողականս աստուածաշունչ մատենից, յորոց էր մի եւ առաջին Դաւիթ փիլիսոսփայ, համալծորդ Մովս<ի>սի Խորենացոյ եւ (55) Գառնրկայ եւ Եզնիկանն (56), Մամբրէի եւ Կորեան եւ այլոց յորովից: Եւ ի ծերութեան հասեալ ժամանակ հարկաւորին (57) ի սուրբ հայրապետէն հայոց Գիւտայ եւ ի պատուաւորաց ժամանակին ներբողել, այսինքն զովել, զխորհուրդ խաչին որ այժմ կատարի նովաւ մեծամեծ սքանչելիք: Եւ յայլոց ասի թէ էր սա ի ժամանակս հայրապետին հայոց Յովհաննու Մանդակունւոյ եւ Վահանայ, որդւոյ Մանգնոսի, որդւոյ Վարդանայ: Այլ մեզ ստուգելի թուի Գիւտայ հայրապետութեամբ եղեալ խնդիրս: Եւ առեալ սուրբս այս ցուցանէ թէ որպէս հին օրինակօքն հաւաստի նոր ճշմարտութիւնս եւ թէ աստ (58) ի միւս անգամ յայտնութեան որդւոյն աստուծոյ, նա է յոյս ապաստանի հաւատացելոց: Իսկ թէ զինչ էր պատճառ հարկելոյն զնա յայսպիսի մեծ խնդիր ասասցուք: Էր ի ժամանակին յայնմիկ տարածեալ աղանդն Նեստորի, որք ոչ աստուածածին զՄարիամ ասէին եւ ոչ զիսաչն աստուածընկալ եւ աստուծոյ խաչ: Քանզի յանդգնէին սոսկ մարդ ասել զբարձրացեալն ի վերայ խաչին (59): Այսպէս եւ զՄարիամ մարդածին ու ոչ աստուածածին համարէին: Յայսպիսի խնդրոյ հարկաւորեալ սուրբն այն եւ (60) սքանչելի այրն Դաւիթ ի բազմախումն վկայութեանց եւ օրինակաց, ի հնոցն եւ ի նորոցն, առնու յԱղամայ եւ ի դրախտէն մինչեւ (61) ի միւսանգամ զայլուստն եւ համեմատէ զօրինակսն ընդ ճշմարտութեանս որ ի Քրիստոսէ եւ ցուցանէ զՄարիամ աստուծոյ ծնող եւ զիսաչն աստուծոյ խաչ եւ հալածէ զաղանդն զայն ի Հայաստան երկրէս: Եւ զի ի խնդրոյ Գիւտայ եւ առաջնորդաց ժամանակին էր, գտաք ի գիրս թարգմանչացն ի սկիզբն այսր ճառի ընդդէմ խնդրողացն պատասխանի (62) այսմիկ յասելն. «Չառ ի աստուածուստ (63) պատուեալ զերիցս երջանկի զմեծի հայրապետիդ եւ զաթոռակալի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ եւ վերա(յ)դիտողի զաստուածահրաման

խնդիր հարկապահանջ հոգեւորական հարկին եկեղեցական գործառու-
թեան (64), զոր հրամայեցէր մերում կրտսերութեանս զրով դրոշմել ի
քարտիսի ի մատենագրութեան, զի կացցէ մնասցէ յարձանագիր անջնջելի
յիշատակ յազգաց յազգս զկնի մեր եկելոցն, զոր ոչ այլ ազգ ինչ ինձ զմտաւ
ածել, քան թէ իշխանականը քո ըստ գերագանցութեան պատիւը նկարել
զհարկեցուցիչ եւ զանհնարին հրամանաց ծանրութիւնը, յաղազս <որո՞ւ>
սարսափել սարսիմ (65) եւ երկիւղ ոչ դուզնաքեայ բերեմ յիս¹ :

Եւ էր մեծն Դաւիթ փիլիսոփայ ազգաւ ի Հարքայ ի Հերթն (66) գեղջէ,
աշակերտ Մովս<ի>սի (67) քերթողի, ի ժամանակս Վահանայ, որոյ Մագ-
նոսի, որոյ Վարդանայ եւ ի ժամանակս Յովհաննու Մանդակունոյ: Եւ
սկիզբն առնէ ասելն (68) այսպէս. «Բարձրացուցէք զտէր աստուած մեր,
մարգարէն ձայնէ, երկրպագեցէք պատուանդանի սրբոյ ոտից նորայ(յ)՞»: Ասի
յոմանց թէ վասն գերակատար իմաստութեան կամեցաւ ինքնախօսու-
թեամբ դնել սկիզբն եւ ոչ ուստեք առնուլ վկայութիւն: Եւ մինչ զայս ած
զմտաւ, արգելաւ իմաստութիւն (69) եւ ոչ կարաց խօսել: Այլ ոչ է կարծել ի
դէպ այս նմա, զի որպէս յայլ ամենայն կեանսն իւր խոնարհութեամբն էր
պայծառ, առաւել այսու: Այլ այսպէս իմաստութեամբ, զի որպէս աստուածարան
(70) Գրիգոր ի մարգարէն սկսանի ի ծննդեան ճառին յասելն. «Ուրախ
լիցին երկինք եւ ցնծասցէ երկիր», նոյնպէս եւ սա առնէ յասելն՝ «Բարձրա-
ցուցէք զտէր աստուած մեր», ետես դարձեալ զի նոր կտակարանք (71)
հիմնեցեալք են ի մարգարէից, զնոյն եւ սա ախորժելով եդ: Եւ թէ այսպէս
(72) նոցա հրամայեցաւ ի մարգարէն բարձրացուցանել զտէր աստուած,
մեզ զհարդ այնպէս հրամայիցի նոցա երկրպագութեամբ եւ պատարագօք
փառաւորել եւ պատուիրանին պահպանութեամբ եւ յիշատակաւ երախ-
տեացն: Իսկ մեր փառաւորիմք հաւատով եւ սրբութեամբ, խոնարհութեամբ,
ողորմութեամբ եւ չարչարակցութեամբ փրկութեան մերոյ կատարողի ըստ
այնմ թէ «փառաւոր արարէք զաստուած (73) ի մարմինս ձեր»³. եւ չարչա-
րանացն կցորդութեամբ փառացն հաղորդիցիք⁴: Յաւելու զտէրն եւ զաս-
տուած անուն ի վերայ Քրիստոսի, զի արարիչ եւ խնամիչ է ընդ հօր, տիրա-
կան իշխանութեամբ փրկեաց զմեզ եւ տանջէ զթշնամին մեր: Մարգարէն
ձայնէ ի հեռաստանէ, զոչեաց զայսոսիկ Դաւիթ այլովքն հանդերձ: ԹՔ. 325-
328:

¹ Հմմտ. Դաւիթ Անյաղթ, Վեներտիկ, [1883], էջ 102:

² Անդ, էջ 103:

³ Ա Կոր. 2, 20:

⁴ Հռոմ. 2, 17:

2. *Սկիզբն եւ պատճառ Մահմանացն գրոցն, Դաւթի վարդապետի գուգնալ ի տեսութիւն զհորաւոր զհուտ:*

Այսպէս պարտ է իմանալ զպատճառ գրոցս, որ Մահմանաց կոչի: Յորժամ զնաց մեծ եւ կատարեալ փիլիսոփայն Դաւիթ ի մայրաքաղաքն իմաստութեան յԱթէնս եւ վարժեալ եղեւ ամենայն իմաստութեամբ, մինչեւ ընդ առաջին իմաստունսն համարել զնա: Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ քազում հակառակութիւն ի մէջ իմաստասիրացն վասն իմաստութեան, ոմանք անգոյ ասելով եւ այլք օրինակ ի մէջ բերելով թէ որպէս էքս ի ծորման եւ ի հոսման են եւ ոչ ունին դադարումն, այսպէս եւ իմաստասիրութիւն գոյութիւն ունի, քայց ոչ դադարէ: Եւ ոչ միարանէին ասացեալքն նոցա առ միմեանս եւ սակս այտորիկ քազում վրդով էր ի մէջ նոցա, զոր մի ըստ միոջէ ցուցանէ մեծս Դաւիթ. յինքն առեալ զամենայն հոգս իրին, եղծ զամենայն հակառակութիւնս նոցա եւ եցոյց գոյաւոր զիմաստութիւն եւ ասեալ զբանս նոցա եւ եցոյց միմեանց հակառակ զոյ: Նախ սկիզբն դնէ եւ լուծանէ զնոցա ասացեալսն եւ ապա հաստատէ զհորսն, որպէս յառաջ մատուցեալ ասէ առ ներհակսն. երկու յեղանակօք պատահեր ձեզ՝ ընդդիմութեամբ եւ ընդդիմադարա(յ)կայութեամբ: Եւ զոր ասէն այսպիսի է. ընդդիմութեամբ առ տեղեալ կալ ընդդէմ նոցայն բանից, իսկ ընդդիմադարակայութեամբն այն է, զնոցայն եղծանել եւ զհորն հաստատել: Եւ այսպէս ի քազում ճառս տրամատելով տեղեակ առնէ զնոսս խնդրոյն եւ ցուցանէ Լ զոյ սահման իմաստութեան, զորս առաջիկայ զիրսոյ գտանես եւ զամենայն բանս գրոց այսպէս գրելով եւ տալով նոցա պատասխանէ:

Եւ յոմանց ասի դարձեալ, թէ ոչ յԱթէնս, այլ յորժամ եհաս համբաւս այս ի լսելիս նորա, գալով ոմանց անտի յուսումնականացն եւ պատմելով զանհաշտ խռովութիւն որ ի մէջ իմաստասիրացն էր: Եւ յայնժամ ասեն արար զզիրս զայս եւ առաքեաց առ նոսս, զի բարձրէ ի նոցանէ խռովութիւն: Եւ արարեալ օրինակ զայն թողու ի հայոց աշխարհիս, որ է այս զիրք ի պէտս բանի սպասաւորաց:

Եւ թէ որ հարցանէ թէ ի վերնագիրն զիր անունն ընդէր ոչ է եղեալ, թէ նորա արարած է այս զիրք: Վասն զի ոչ ունէին հպարտ ազգս հայոց զիմաստս վարդապետաց իւրեանց, ոչ եղ զանունն, զի մի՛ կորուսցեն եւ կամ մի՛ առաւել պատվեսցեն այլք: Իսկ ի Բարձրացուցեացն սկիզբն յետոյ եղին զնորա անունն եւ Մահմանաց զիրս ոչ գտեալ եղեւ յայնժամ եւ այլ յետոյ չարարին փոյթ դնել զանուն նորա: Ասաց սա չորս զիրքն. առաջին՝ զԲարձրացուցեալքն, երկրորդ՝ զՄահմանացն, երրորդ՝ զՔերականին մեկնիչն, չորրորդ՝ զՊէտքն, զոն եւ առանձինն այլ ճառեր. արար հինգերորդ՝ եւ սաղմոսին պատճառ, եւ զի ոչ գոյր փափագանօք խնդրող, վասն այն եւ նա ոչ արար զիրք այլ, զի մի՛ նախատեսցի, որպէս յառաջդ ասացաք: Ապա թէ ոչ իմաստուն էր առաւել քան զառաւել: Թ. 328-329:

3. Սկիզբն եւ պատճառ քերականին Դաւթի փիլիսոփայի

Քերականութեան արուեստ յարտաքնոցն է. զի նոքա մեծաւ ջանիւ ինքնին առին զընտրութիւն ճայնից եւ բառից եւ կոկորդի խօսից եւ թէ ոյք են անտեսաց ճայնք եւ ոյք ողբականք: Եւ սկիզբն է սորա այսպէս. քերականութիւն է հմտութիւն ի բուն իմաստնոցն յայտնեալ եւ շարագրեալ. եւ սորա մասունք են L: Առաջին վերծանութիւնն է, արուեստ թէ որպէս ներկուտ, այսինքն յիւր մտաց ընտրեալ զարուեստն: Երկրորդ՝ զրուցատրութիւն ներգոյս, այսինքն յստակ եւ քերեալ զկարգ յեղանակին: Երրորդ՝ թէ որպէս լեզուաց քարգմանութեամբ մարթ է զհին պատմութիւն կամ զնոր իմանալ զմեկնութիւն, զոր բացատրութիւն կոչէ: Չորրորդ՝ թէ որպէս զստուգաբանութիւն իմաստուք ճշգրտիւ: Հինգերորդ՝ թէ որպէս զհամեմատութիւն իրաց զինչ եւ է մարթաստուք ճանաչել: Վեցերորդ՝ թէ որպէս մարթ է քննել զիմաստնոցն քերդածս, զի եւ որք յիմաստասիրութեան են, առաւել սա(յ) է յատուկ:

Արդ զի L աստուգութիւն զսահման իմաստութեան, ցուցցուք թէ ոյք էին ասացողքն: Առաջին՝ Պիթագորաս ասաց թէ իմաստասիրութիւն է գիտութիւն զոյիցս, ըստ որում զոյք են: Երկրորդ՝ Պիթաս իմաստասէր ասաց թէ իմաստութիւն է աստուածայնոց եւ մարդկայնոց իրաց: Երրորդ՝ Պղատոն ասաց թէ իմաստութիւն խոկումն մահու է: Չորրորդ՝ իմաստասիրութիւն է աստուծոյ նմանիլ ըստ կարի, նոյն Պղատոն ասաց աստուծոցն եւ սուրբքն աստուծոյ դարձուցին: Հինգերորդ՝ իմաստասիրութիւն Արիստոտէլ ասաց արհեստ արուեստից եւ մակացութիւն մակացութեան: Վեցերորդ՝ իմաստասիրութիւն Պիթագորաս ասաց թէ (իմաստ ասի թէ) իմաստասիրութեան սիրելութիւն է իմաստութիւն կատարեալ: Թ. 329-330:

XXIII

Ձեռ. Ը.բ. 632, Վենետիկի մատենադարանի (74), փոքրադիր մատյան, բազմազան բովանդակությամբ, առանց տարեթվի և հիշատակարանի, XV դարից ոչ վաղ: Ուշագրավ են հետևյալ բնագրերը.

1. Բարսղի Կեսարի՝ <Գ>րագիտութիւն է վարժ կրթական հմտութիւն. համանգամանք եր<կ>ակի բանական, գործական վասն գեղեցկասութեան. հայերէն ուղղախաւսութիւն բազմափորձ ըստ տաղից եւ ըստ կարգաց գիտութիւն. եւ մասունք են նորա F. կարդացողականն, բացումն մեկնութեան, դատողական կշռումն իւրաքանչիւր գրոց: Ի կարդացողութենէն ուղղէ զկուտ շաւիղ գրածանութեան հայկեկելով ըստ առաջնորդ ասից նշանին զպարունակեալ միտսն կալեալ նշանին: Իսկ ի մեկնութենէն բանա զմիտս լեզուացն եւ հնագէտ պատմու-

քեանցն քացատրել զստուգարանութիւն համեմատ նմանել միմեանց զասումն: Իսկ դատողականուն կշռել, զառաւելն հանել եւ զքերին լնուլ, զիտել զհրաքանչիւր գրոցն զրաժանական: Եւ զիծ ասի զիրն եւ զգծեալն եւ դրոշմեալն, իսկ քերել ապականել եւ ջնջել ասէ. եւ զիծ որպէս քիթդանն եւ ականցն զիծ եւ ի սոցանէ ինքնաձայն են ը, է. եւ բուն երկար ա, է, ս: Թ. 8.

2. *Յաղագս քեւոց ԸԺ-ից. քք. 8-9:*
3. *Մովսեսի Խորենացոյ բան իմաստութեան. քք. 12-14:*
4. *Հ/ց եւ պԵտ. քք. 44-147 – քերականության մեկնություն հարց ու պատասխանի ձևով. սկիզբը պակասում է: Կան հետաքրքիր տեղիներ. օրինակ, Դավթի տաղի մեկնություն¹, որ բերում է Անանունն իր քերականության մեկնության մեջ, ք. 129:*
5. *Մովսեսի քերդողի յաղագս քերականութեանց: Քերդող է որ զմասունս զիտէ. քք. 147-229:*
6. *Յաղագս գոյի էութեան եւ պատահման սրբոյն Յոհաննու Դամասկացոյն. քք. 248-287 (= ձեռ. Բ.գ. 442, բնագիր 1):*
7. *Մովսէսի քարքմանչի եւ քերթողի մեկնութիւն քերականի: Քերականութիւնսդ անուն իսկ զրականութիւն ստուգարանի. քք. 281-305:*

XXIV

Չեռ. Է.գ. 1244, Վենետիկի մատենադարանի, չ\զ (1307 ք.) (75), ինչպես վկայում է Եզեկիել գրիչը, ք. 497: Բովանդակությունը բազմազան է, այլոց մեջ առկա է.

1. *Յաղագս քերականին պատճառ Դաւթի փիլիսոփայի ասացեալ: Քերականութիւն արուեստ յարտաքնոցն է (հրատարակված է Դավթի երկերի մեջ, էջ 599): Այնուհետև գալիս են.*
2. *Բանք ի Մահմանաց գրոց յԱրիստոտելէ: Բառք զիրթողականք: Բառք Փիլոնի: Մեկնութիւն բառից քերականի և այլ բառարանային նյութեր:*
3. *Վարդանի «Պատմութիւն»-ը:*
4. *Հարցումն Վաչագանա իշխանի եւ պատասխանի Պետրոսի Միւնեաց դիտողի, ք. 620 և հաջորդը:*

¹ Այն մեջբերում է հ[այր] Ղ. Ալիշանը՝ «Հայապատում», մասն Ա, էջ 42. Դաւիթ փիլիսոփայն տաղ եւ պատմութիւն է արարեալ ի վերայ Տիգրանայ և այլն: XLIV

Չեռ. Թ.դ. 8, Վեներտիկի մատենադարանի, *Էկր* (=1413 թ.) (76), պարունակում է.

1. *Լուծմունք Պարապմանց Տաթևացույ.*
2. *Ն Դաւթի փիլիսոփայի ի խնդրոյ Աշոտոյ պատրկի: Բան գոր հարցէք, թթ. 176-180:*
3. *Նորին աշակերտի Թեոդորոսի Դակոն կոչեցեալ առ երկարնակսն ընդդիմադրութիւն: Անտաղական բանն աստուած, թթ. 180-183:*

Չեռ. Ե.գ. 1232, Վեներտիկի մատենադարանի (77), առանց տարեթվի, պարունակում է զանազան մանր բնագրեր, այդ թվում նաև հետևյալները.

1. *Վասն պատճառի քերականիս որպէս եւ գրեալ էր յոմանց եւ արդ պարզաբար ասացից ի մասունս եւթն թվոցս:*
ա. Առաջին օրինակն այս, որպէս անխաւս եւ խաւսուն կենդանիք ամենայնք առանց գիտելո գրի ծանուցանեն միմեանց զբարս վասն սիրո եւ կռուոյ. եւ ոչ այսչափ միայն, այլեւ ի նոցանէ նախազէտ ազդմամբ աւզտեալ լինին եւ իմաստուն մարդիկ:

բ. Սոյնպէս եւ որք զկնի Ադամա որդիք նորա մինչ յԵնովս եւ ի սմանէ մինչ յաւեր աշտարակին առանց գրի վարեցան նշանատր բանիք եւ բառովք, որպէս զայն նշան ի քէ եւ այսր է փքին եւ նոցա նշանքն ունենին չափ որպէս կանկուն եւ քայլ ոտին որ է թվեալ զարեհատի:

<գ.> Եւ չափք նշանացն եին թուով ինն, որպէս եւ զլխատր մասունք քերականիս:

դ. Ապա վասն փոփոխման մարդկութեանս եւ մահկանացու բնութեանս ոչ կամեցան կորուսանել զարուեստ խաւսից զ<ուզ>ապէս եւ անմարմին նշանատրս:

ե. Նոքա որպէս եին բազմակեցիկք եւ ի յեզուս միախաւսիկք, ուժով եւ լի մեծ հանճարովք զվերա<ւ>ստ առեալ զիմաստս աստուածայինս զանտեսն ածին ի տես եւ զգեցուցին բանին մարմին, որ կապեցաւ զծիւ ի նամակի որպէս մարգարէութիւն եղեալ սա բանին, որ մարմնացաւ առ սուրբ մարմին:

զ. Գտաւ զհրս ոչ միայն յԵնովսա եւ որ զկնի գոր կորուսին յաշտարակին, այլ եւ ազինք երեք վերստին ի շնորհացն աստուծոյ գտան զգիրս

նախ քան գրասն մատենն Մովսեսի:

է. Լատինք եւ պաղեստինք եւ արապիկք հաստատեցին զիրս թուով Վդ, զոր թւպէտ <աւ>ելի ունին եւ այլ ազինք, ի նոցանէ են որոշմամբ շնչով ճեղնայ եւ աճնցուցեալ, որպէս զբազում բանսն, որ են շաղկապի միացուցեալ:

Այս են պատճառք վասն սոսկ թվոց զրիտ, զոր ծանուցի եւ արդ վասն ի նոցանէ ծներոցս զրեցից սակս քերականիս թէ զինչ է անուն սորա, զոր են թուով նախկի երիս անուամբ կառուցեալ. նախ գրականութիւն, երկրորդ քերթողութիւն, երրորդ քերականութիւն: Եւ որպէս յանառիկ ամբոց գրականութեանս դրամ<ք>ք մտանեն ի քերթողութիւն եւ սովաւ բացեալ ժառանգեն զամենալի տաճար քերականութեանն:

Եւ արդ քննեսցուք զնախկի ասացեալ գրականութիւնս, զոր հմտութիւն կոչեցին վասն տառից հնոցն Վդ թվոյն ալփափետաց, զոր ի մերոց թարքմանչացն պատճառաւ թանճր լեզուիս վեցիցս վեց մերոց տառից յգ շարել զրիս: Նախ պարտ է հմտանալ վասն նոցա եւ ճայնիցն որ ի նոսա, զոր առգանութեամբքն հեք եւ բանն բաղկանա եւ բանիս սորին մասունքն գոյանա, զոր Դիոնեսիոս զոստա ասաց հմտութիւն: Թթ. 1-4: Այսպես շարունակվում է մինչև թ. 6, հաջորդ թերթերը վնասված են և խառնված: Այստեղ շարադրվում է «Եթոնագրեանք»-ի նման մի բան (78): Էջ 12-ում գետեղված է աղյուսակ, և, իբրև դրա մեկնություն, հետևյալը. Պատճէն եաթնագրեանից աղիսակիդ, զոր ի դիմիդ է. զիր յգ յա<յ>թէ մինչեւ ի քէ: Քերականս ի բազում տեղիս գրած է թէ առասպելաբանութեամբ պատմի որ է այլաբանութիւն: Բայց ըստ արուեստիս սորա այլ իմն ունին իմացմունս, որպէս եւ գրեալ է թէ որպէս քաղաքք եւ պարիսպք, որպէս նոքա եւ սոքա են: Եւ ասացին քերթողքն թէ չէր պարտ ի հասարակաց արիւնակի գսա լուծանել, այլ կնքեցին եւ զչափ սմին եւ ըստ յունականին վասն չափոյն խոնարհմունք ասացին եւ ի հայք հոլովք անուանեցին զչափն, որպէս ար եւ արեգակն արեգական: Եւ աղիսակս այս ունի զամենայն արուեստ գիտութեան առ իւր, որպէս եւ ցուցից ի հին գրոց զայս. արարչական գիրքն այս ւն ւն ւն եւ անձայնք են այս ը ը ծ(ը) ք և այլն մինչև թ. 30: Վերջանում է հետևյալ նշումով. Աստ հաստատեցաւ ցանկալի արհեստս D, նախ գրականութիւնն համառատ եւ ապա(յ) քերթողական արուեստս, որ վասն տառից եաթանցն, զոր մերոց սրբոց վարդապետացն ի սրբոյն Դաւթայ եւ Մովսիստ եւ յԱնանիայէ Շիրակացոյ համարողէ էին ի բազում զիրս տողեալ արհեստս այս, զոր ի բազմացն զրեցի եւ լուծի ըստ արուեստին եւ ոչ ի մտացս սուտ ինչ կամ յաւտար գրոց աստ զծեցի, այլ զարձան մերոց հարցն հաւատացեալ եւ ի ջանասէր յաշատակերտացն ոչ թագուցի եւ զմեզ եւ զհարկողսն այս մատենիս ճեր աղաթիցտ յանձն արարի զտէր Բարսեղ եւ զհարազատ

նորին զարքայն հայոց զՀեթում եւ զԼեւոն որդի նորին, աշակերտ այս մատենիս, յիշեցիք առ Քրիստոս պահել պսակ չր եւ թԵզ ամենայն հայոց ամսմամբ ~ն եւ Եյ ՅՎ:

2. Վասն բառի եւ վասն բանի: Այս են մուտք քերականիս, որ ի Դիոնե-սիստէ սորին գտողէ են եղեալ զլուխս թվով ութ, որ ի բանէ. ք. 31 և հաջորդը: Թ. 66-ում, ի բազում զիրս քերականս գտանի թէ սերմանի մախ քան հնճի եւ իմացեալ յետոյ ազդի բանի, զոր եւ վասն այսր սակ քերթողն Մովսէս, ոչ կամեցաք (ը)զսա(յ) լուծանել յայտնի, զի մի հասարակաց մանկունք մտցին յարուեստս, զոր (ը)զսա տուաք բարձրագունիցն եւ կատարելոցն զիտել եւ ոչ ի տկարագունիցն ի լսելիսն արկանել, զի զիմամալիսս մախկի դասէ քան զտեսամելիսս¹. եւ արուեստս բարձանի յերիս՝ ի բարի եւ ի միջակ եւ ի չար², որպէս էր տունկն մախա(յ)հարն ի մէջ ծառոցն վասն զիտելոյ զբարի եւ զչար. եւ առ լծորդս ունի կցորդութիւն ընդունելութիւնս. ասաց քերթողն թէ պարտ էր զլծորդս եւ զլեզուաց խաւտութիւնս քան զվերծանութիւնն մախդասել եւ այսու հմտանալ եւ յայսն մտանել դիրաւ³:
3. Վասն անուանն յ մասանցն զորմէ խաւտեցաւ Պորփիրոս եւ այլաբանեաց զանունն. ք. 77 և հաջորդը:
4. Վասն տառի եւ վասն բառի, որ ի գրոց Արիստոտէլի մեկնութիւն քերականիս. ք. 90 և հաջորդը:
5. Յաղագս քերականութեան. ք. 125, Դիոնիսիոսի բնագիրն է. վերջին քերթերը վնասված են:

XXVII

Չեռ. Թ.գ. 39, Վենետիկի մատենադարանի (79), Արիստակեսի բառգիրքը, հավելված Դիոնիսիոսի բնագրով, թթ. 323-351: Առկա է նաև *Նորենաց-ւոյ Բան իմաստութեան*, ք. 355: Գրությունը նուրբգիր է, գրիչ՝ Մարկոս. զմե-ղօք լցեալ Մարկոս յիշեցէք, ք. 135:

XXVIII

Չեռ. Դ.դ. 968, Վենետիկի մատենադարանի (80), երկու ձեռագրից ի մի տուփի: Առաջինը պարունակում է զանազան բնագրեր՝ *տոմար*, *վասն կագ-մութեան մարդոյ*, *աշխարհագրութիւն Վարդանի*. գրությունը՝ նոր ժամանա-

¹ Հմմտ. Մովսէս, Մեկնութիւն, էջ 161-165:

² Հմմտ. Դավիթ, Մեկնութիւն, էջ 79¹⁰:

³ Հմմտ. անդ, էջ 84²³⁻²⁴, 85¹²⁻¹⁴:

կի շեղագիր, թթ. 1-245: Երկրորդ մատյանը ավելի լավ որակի է, առաջինից շատ ավելի հին, գրությունը բոլորգիր է, պարունակում է.

1. *Անանիայի Շիրակունոյ երիցս երանեալ վարդապետին, վասն որպիսութեան կենացն*¹, թթ. 247-254:
2. *Քերականութիւնս, որ կոչի Ուզրեանք, զուգեալ ի Դաւիթ յանյաղք փիլիսոփայէ եւ ի հռոմայ վարդապետէ, որ կոչի անունն Փիմիկ:*

ա, ե, է, ը, ի, ո, լ

Եւ են այսոքիկ Ուզրեանքն այսպէս. բանայ զմիտս, զոր կամիս ճանաչել: յԱղամայ մինչեւ ի Մովսէս եւ ի Մովսիսայ մինչեւ ի Դաւիթ, ի Դաւթայ մինչեւ ի Քրիստոս, ի Քրիստոսէ մինչեւ ի միս անգամ գալուստն կարէ զիտել այս Ուզրեանքն:

Այրն երրորդութիւն է, որ է անբաւ հաշի յկէ եւ զնայն պարտ է Ուզրեանքն, զի ի վերայ վեցին, որ է զարութիւն իմաստութեան եւ բան ստեղծէ կամ ժամուց եւ լ մասամբ:

Կալ զգլուխ զարարութեան եւ խաչակերպ թագածն եւ լ տառիք ի խոնարհ զանց արա(յ) եւ տուր Ուզրեանքն եւ այնու բովանդակի, եւ այն է անուն որդոյն աստուածոյ, թ. 255:

Աժճո մի գործ ունին. բիմս միախորհուրդ են. զլլխ համախորհք են. զլլնտ միացեալ են. եճշր միագն են. զկից , էիզլ , ըծպի , թղջր , թ. 257:

Սոքաք զմիմեանս հարցանեն, զմիմեանս քննեն եւ պատասխանեն յիրեաց, զի թագաւոր է այրն, հրամայէ ճորտերուն:

Արդ տուր զգիրն զրոց եւ բաժանեա(յ) ի H մասունս. R գիր արուականք են, R գիր լերկական, R գիր իզական, R գիր թվական (36 տառից բաղկացած ամբողջ այբուբենը բաժանվում է չորս խմբի, յուրաքանչյուրը՝ իննական [նշան]):

Այս արուեստս Լռեկին, զոր զովեցան Անանիա Շիրակունացին եւ ասաց. զանձ ծածկեալ է յերկիրն հայոց եւ ակն թաքուցեալ է ի տունն Թորքոմայ, զի մայր է սա(յ) ամենայն իմաստութեան: Այս է եւ թուոց աղբիւրն ամենայն իմաստութիւն հանդերձ ամենայն բաժանմամբ: Եւ թէ տեսին զսա(յ) ճարտարք յունաց ի մերում նահանկիս եւ զարմացան, զի մի գիրն Երեւանս յասի. թ. 261:

Եւ եթէ կամեցիս, ուսիր զցանկն եւ զվկայութիւնն եւ զբովանդակն ի բերան եւ զխորագրերն զամենայն զլխոյ եւ նա(յ) քեզ պատճառ ցո՛ւցանէ:

¹ Տե՛ս Բ. Պատկանյանի հրատարակած *Անանիայի Շիրակունոյ Մնացորդք բանից*, ՍՊԲ., 1877, նաև «Հայապատում», էջ 232:
XLVIII

զՀոմիանոսի իմաստասիրացն այլ առ ի այտ բերեալ զճառն հոգեպատում տեսողացն բան զոր Փինիկ վարդապետն եւ Մովսէս հռովմայեցին առ փիլիսոփայութեան իւրեանց եղանակեցին N զիր եւ յետոյ Մեսրոբ վարդապետն մին չափաւորելով ի զուգագրութիւն մտացն, եւ են սոքա թուով Պգ զիր. եւ առեալ յայտնապէս ի նոցանէ (Lք եւ) Lէ բանայիս բռնելով Պգ զրին. ք. 271:

Բնագրին ք. 254-ում կցված է շրջանակ 36 շառավիղներով, որոնց միջև շրջանակով զետեղված է *ա* տառը այբուբենի յուրաքանչյուր հաջորդ տառի հետ միասին. *ա, աբ, ագ* և այլն մինչև *աք*: Կենտրոնում գտնվում է մի շրջանակ *այս է դուռն Լռեկին, զոր կոչի արհեստ համարողական* բառերով: Կան տառերի և այլ շարքեր:

XXIX

Չեռ. *Ա.է. 1736*, Վենետիկի մատենադարանի (81), ԿճԵ (=1646 ք.), պարունակում է, ի միջի այլոց.

1. *Յովհաննու Որոտնեցոյ մեկնութիւն Ստորոգութեանց* (կազմված է հեղինակի կողմից *Է կէ*=1416 ք.):
2. *<Գ>աւթայ հայոց փիլիսոփայի եւ Փիլիկա հռովմայեցոց վարդապետի եւ Հոմերայ արուեստաւորի եւ Մովսեսի քերթողի խնդիր փափագման մասանց սիրոյ յաղագս վարժողական ուսմանց:*

XXX

Տաթևի վանքի ձեռագրերի մեջ մենք, դեռ ուսանող եղած ժամանակ, նկատել էինք նույն այս աշխատության ևս մի օրինակ (82), ինչպես նշված է մեր օրագրում.

Քերականութիւն կոչի Ուագրէնք, զուգեալ ի Դաւթա փիլիսոփայէ, ի Հռովմայ վարդապետէ, կոչեցեալ անուն <Փ>ինիկ, քք. 1-17: Այժմ ձեռագիրը պետք է որ գտնվի Էջմիածնում:

II. ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՉԵՈՒԳՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

Քերականական նյութերի համապատկերը: Դիոնիսիոսի [երկի] գրչագրերը և դրանց փոխհարաբերությունը: MS, Գրիգորի, Վարդանի, Հովհաննեսի, Եսայի քերականական երկասիրությունները և դրանց ձեռագրերը: Մովսեսի և Դավթի անունները կրող կամ նրանց վերաբերող բնագրերը: Բառարանագրական նյութեր: Ուղղագրություն:

Վերը նկարագրված ձեռագիր մատյաններն այն մասում, որն էական է մեր խնդրի համար, պարունակում են քերականական բովանդակություն ունեցող հետևյալ հուշարձանները.

I. **Դիոնիսիոսի** երկը պահպանվել է բազմաթիվ գրչագրերով, որոնք գտնվում են 2297, 2359, Ը.գ. 1104, Ա.դ. 875, Է.գ. 306, Թ.գ. 1317, Ը.ք. 174, Ա.գ. 294, 336, Թ.գ. 39, Ե.գ. 1232 (ինչպես նաև 2372 (=337), Բ.գ. 1273) ժողովածուներում:

Դիոնիսիոսի աշխատության գրչագրերը սովորաբար հանդիպում են իբրև վերը քվարկված հեղինակների քերականական գործերի նախաբան: Դրանց միջև էական տարբերություն չկա, համեմայնդեսպա, չկան այն բնորոշ տարբերությունները, որոնք կարող էին հիմք ծառայել դրանց խմբավորման համար: Դա հարկադրում է տարբերակել գրչագրերն ըստ իրենց տեղադրության, այսինքն՝ նշել այն հեղինակների անունները, որոնց գործերին նախադրված է [Դիոնիսիոսի երկը]: Գրչագրերի դասդասման այս՝ զուտ արտաքին հատկանիշի [ընտրությունը] հիմնավորվում է նաև ներքին բնույթի որոշ տվյալներով:

Ուստի մենք տարբերակում ենք Դիոնիսիոսի աշխատության Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Երզնկացու, Եսայի Նչեցու օրինակները, ընդ որում նշում ենք նրանց անունների համապատասխան տառերով այն գրչագրերը, որոնք օգտագործում ենք մեր՝ Դիոնիսիոսի երկի հրատարակման քննական տողատակում. M – Մագիստրոսի գրչագրերը, E – Երզնկացու, իսկ J և N՝ Եսայի Նչեցու (J – Վենետիկի ձեռագրում և N – Վիեննայի):

Դիոնիսիոսի երկը գտնվում է նաև քերականական մի աշխատության կից, որը ձեռագրերում կրում է Մովսեսի անունը, սակայն իրականում, ինչպես կտեսնենք, ոչ այլ ինչ է, եթե ոչ Մովսեսի գործի կապակցությամբ Մտեփանոսի կազմած մեկնությունը: Ինչպես աշխատությունը, այնպես էլ դրան

կցված Դիոնիսիոսի բնագիրը նշում ենք MS (վենետիկյան ձեռագիր) և T (Էջմիածնի, մախկին Տաթևի ձեռագիր) տառերով: Այս գրչագիրը՝ բնագրի որոշ հատկություններով, իսկ Վենետիկից՝ մաս ընդօրինակման ժամանակով, թվում է, ավելի հին են, քան մնացած գրչագրերը:

Վարդանի քերականությունը, որքան մենք կարող ենք դատել, ելնելով մեր տրամադրության ներքո եղած գրչագրերից, օժտված չէր Դիոնիսիոսի բնագրով: Սակայն այն պարբերություն առ պարբերություն համարյա ամբողջությամբ բերվում է բուն մեկնության մեջ. այս նյութից մենք երբեմն քաղում էինք որոշ տեղեկություններ. արդյունքները նշված են մեր համեմատություններում V^o տառով:

Նման քաղվածքներ Դիոնիսիոսից հանդիպում են մաս մեր կողմից վերականգնված Դավթի, Անանունի, Մովսեսի, Ստեփանոսի և Համամի մեկնություններում. դրանք նշվում են համապատասխան սկզբնատառերով՝ D^o, A^o, M^o, S^o, H^o:

Հովհաննես Երզնկացու աշխատության մեջ հանդիպում են ընթերցվածներ, որոնք չեն համընկնում Դիոնիսիոսի երկի՝ իր գործածած օրինակին: Պարզ է, որ նման դեպքերում մա կախված է կողմնակի աղբյուրներից. այդպիսիները նշում ենք E^o տառանիշով:

Նմանատիպ դեպքերը Եսայիի մեկնության մեջ նշվում են J^o տառանիշով:

E₂ տառանիշով մատնանշվում է Դիոնիսիոսի երկի այն գրչագիրը, որը կցված է նույն Հովհաննես Երզնկացու համառոտ քերականությանը (83):

Արիստակեսի բառամբերքին կցված՝ Դիոնիսիոսի «Քերականության» գրչագրին հղումները նշում ենք A տառով:

Դիոնիսիոսի երկի առկա գրչագրերը խոր հնությամբ չեն առանձնանում: Դրանք բոլորն էլ սկիզբ են առնում հետմագիստրոսյան († 1058 թ.) ժամանակներից: Մասամբ, թերևս, այս պարագայով է բացատրվում դրանց վատ վիճակը: Կան բնագրային թերություններ, որոնք ընդհանուր են բոլոր օրինակների համար՝ հանգամանք, որը դրանց շաղկապում է մեկ ընդհանուր ժառանգական գծով: Եթե բնագիրը միանգամայն անթերի է և գրչագրերը միանման են, ապա անշուշտ դրանց ծագման խնդիրը վերանում է կամ կորցնում է նշանակությունը: Բայց եթե բնագիրը աղճատված է, և դրա թերություններին մասնակից են բոլոր գրչագրերը, ապա բնական կլինի դրանք բխեցնել մեկ վնասված մախագաղափարից:

Դիոնիսիոսի ներկա բնագրի դրսևորած թերություններն ակնհայտ են և տարակույսի տեղիք չեն տալիս: Քանի որ հայերեն թարգմանությունը բառացի է, այսպես ասած «նյութական», և տառ առ տառ համապատասխանում է հունարեն բնօրինակին, ուստի և վերջինիս օգնությամբ դժվար չէ դի-

տել և հստակ որոշել հայերեն բնագրի և բնօրինակի տարածայնող կետերը: Երբեմն բնօրինակի անբավարար փոխադրությունը վերագրելի է թարգմանչին: Ներկա գրչագրերի ուշագրավ թերությունները հետևյալներն են.

ա. Բոլոր գրչագրերում բացակայում է հեղինակի անունը. և ոչ մեկում չի պահպանվել Դիոնիսիոսի անունը պարունակող խորագիրը: Իսկ մեկնիչներից միայն Դավիթն է, որ գիտե, թե իր կողմից մեկնվող երկը պատկանում է Դիոնիսիոս Թրակացուն¹: Անանունից և Մովսեսից, ցավոք, պակասում է ներածությունը. դժվար է ասել՝ նրանք ծանոթ են եղել Դիոնիսիոսի [անվան] թե ոչ: Ստեփանոսն, ամենայն հավանականությամբ, ձեռքի տակ է ունեցել մի օրինակ, որում հեղինակի անունը բացակայում էր: Համամն, որ ապրում էր IX դ. կեսերին, ոչ միայն չի ճանաչում Դիոնիսիոսին, այլև նրա աշխատանքը վերագրում է Հոմերոսին²: Անշուշտ նա ևս իր տրամադրության ներքո ունեցել է անանուն օրինակ և մոլորվել է այնու, ինչ ասվում է Հոմերոսի մասին Դիոնիսիոսի 6-րդ գլխում:

բ. Բոլոր օրինակներում կարդացվում է *գրեալ*, էջ 4¹⁸, փոխանակ ակնկալվող *մակագրեալ*-ի, որը կհամապատասխաներ հունարեն բնագրի *ἐπιγράφας* բառին: Որ դրանում մեղավոր չէ թարգմանիչը և կամ այն հունարեն օրինակը, որից կատարվել էր թարգմանությունը, երևում է նրանից, որ ճիշտ ընթերցվածը պահպանել է Անանունի մեկնությունը³:

գ. Նայ բաղաձայնների մասին ասածը, էջ 8²⁰, չի համընկնում հունարեն բնագրի ամբողջ ծավալին. հայերեն բնագրում սկզբից եղել էր մի արտահայտություն, որ համապատասխանում էր հունարենի *καὶ ὄγρὰ καλεῖται*, ինչը պարզվում է նույն Անանունից. *նայք - այսինքն խոնար*⁴:

դ. Հոմերոսից վերցված տողը, էջ 11¹⁴⁻¹⁶, աղճատված է. դրա աղավաղված լինելը վկայում է բնօրինակով չհաստատվող *արեւ* բառը: Թեև Դավթի [մեկնությունում] այս տողը մեջ է բերվում նույն խաթարված ձևով, պետք է խոստովանել, որ այն վնասված է: Դավթի երկը, ինչպես կտեսնենք, պահպանվել է ուշ հեղինակների բանաբաղերում, այնպիսի պարագաներում, որոնք չէին կարող այն փրկել աղավաղումներից կամ շտկումներից: Ավելորդ չէ

¹ Տե՛ս էջ 83²⁻¹⁵: Մխիթար Այրիվանեցու հայտնի ձեռագրում (84) նույնպես կա Դիոնիսիոսի բնագիրը, որի լուսանկարում, ինչպես հայտնում է հ. Գարեգինը, նշված է հեղինակի անունը. *Յաղագս քերականութեան Դիոնեսիոսի ասացեալ*:

² Տե՛ս էջ 269³⁴⁻²⁷⁰¹, 280^{13,17}, 283^{6,13}: Ուշագրավ է, որ Հոմերոսի անունն է կրում Դիոնիսիոսի երկասիրությունը նաև Մուշի սր. Կարապետի վանքի ձեռագրերից մեկում, ինչպես երևում է հանգուցյալ [Գ.] Սրվանձաթյանցի տեղեկությունից: 1083 (=1634) թվականի այս մատյանն ունի խորագիր. «Այս ինչ գիրքս խում գտանի, էակք Դարթի և Մովսիսի: (Որ ունի) գրնաբանն Պորփիրի, եւ գրեականն Հոմերոսին եւ գմեկնութիւնն Մաժիստրոսին ֆիլիսոֆայ Գրիգորին», Հնոց եւ նորոց, Կ.Պոլիս, 1874, էջ 36: Հոմերոսի Քերականություն ասելով, հասկացվում է Դիոնիսիոսի բնագիրը:

³ էջ 132⁵:

⁴ Տե՛ս էջ 134, հմմտ. Դավթ, էջ 96:

նկատել, որ մի քանի գրչագրերում ընթերցվում է *պատճառ*, իսկ մյուսներում՝ *պատճառք*. առաջին ընթերցվածը թարգմանություն է տողի առաջին կետում գտնվող հունարեն *αίτιη*, իսկ երկրորդը՝ ըստ երևույթին, երկրորդ կեսի *αίτια* բառի, մի հանգամանք, որում չի կարելի չտեսնել անուղղակի ապացույց այն բանի, որ հայերենում առկա էր նաև տան երկրորդ կեսը. *այլ աստուածք են ինձ պատճառք*:

ե. 14-րդ գլխում, էջ 24-25, հայերեն բնագրում զանազանվում է ութ խոնարհում, մինչդեռ հունարենում՝ վեց, սակայն հետագայում թվարկվում է ոչ թե ութ, այլ տասը խոնարհում: Թվում է, որ երկու դաս, այն է՝ 8 և 9-րդը հավելվածներ են, որոնք խորթ են սկզբնական թարգմանությանը: Այս դասերը առկա են արդեն Համամի մեկնությունում՝ մի հանգամանք, որ չի կարող օգտագործվել մեր դեմ, այլ ցույց է տալիս միայն հավելվածների խոր հնությունը:

զ. 17-րդ գլխում, էջ 27³⁻⁴, ներկա հայերեն բնագրից պակասում է *եւ ստորադասեալ* [արտահայտությունը], սակայն սկզբնապես այն ընթերցվում էր՝ ինչը երևում է նույն հայերեն բնագրից, որում մի փոքր վարը բերվում է որպես օրինակ. *եւ ստորադասական է այս, որզան որ*:

է. Նույն գլխում, էջ 27¹³, *զայսով սխալ* ընթերցվածը անցնում է բոլոր օրինակների միջով, մինչդեռ հարկավոր է կարդալ *զայս, ով*, համապատասխան հունարենի *την (85) ὦ (86)*, որտեղ *ὦ* [բացականությունը] պարզապես փոխադրված է *ով* ընդունված հնչյունային համարժեքով:

ը. «Յադագս նախադրութեան» գլուխը, էջ 30, նույնպես տեղիք է տալիս որոշ տարակույսների: Դավթի գործում, էջ 118¹⁵, կա ցուցում, որի համաձայն հունարեն լեզուն ունի 18 նախդիր՝ 6 պարզ և 12 բարդ: Այս տեղեկությունները առկա են նաև Դիոնիսիոսի [հունարեն] բնագրում, սակայն դրանք բացակայում են ներկա հայերեն թարգմանությունից: Թերևս այստեղ Դավիթը կախված է հունարեն մեկնությունից, որը, ինչպես կտեսնենք, եղել է իր տրամադրության ներքո՝ իր մեկնությունը կազմելու ժամանակ: Սակայն ավելի հավանական է, որ դա հիշատակվում էր նաև հայերեն թարգմանության մեջ, և այդ պատճառով նա հարկ է համարել կանգ առնել այս հանգամանքի վրա:

թ. 20-րդ գլխում, էջ 31²³⁻²⁴, գտնվում է բոլոր գրչագրերի համար ընդհանուր *ծղացի* բառը, որը, հավանաբար, սովորական միջտողային բացատրություն է, հավասարազոր [բնագրի] *մուրցացի* [բառին], դրանց դիմաց հունարենում առկա է ընդամենը մեկ բառ:

ժ. Առոզանության մասին գլուխը նույնպես ոչ լրիվ է համընկնում բնօրինակի հետ: Բացի այդ, *Դիկդիկոն* աղավաղված բառը ընթերցվում է բոլոր օրինակներում. միայն մի մեկնության մեջ հանդիպում է *Դիկլիտոն*: Առոզա-

նությանը վերաբերող երկրորդ հատվածը որոշ մասերով ավելի մոտ է հունարենին: Երկու տարբերակի առկայությունն արդեն իսկ բնագրի վնասված լինելու նշան է: Կարելի էր կարծել, որ երկրորդ հատվածի թարգմանությունը կատարել է Մագիստրոսը, սակայն նրա քերականության մեջ դրա հետքերը չեն նշմարվում:

ի. Արվեստի սահմանումը, էջ 42, առկա օրինակում բացակայում է: Այն մեջբերվում է Դավթի երկում, նրա՝ քերականության ներածությունում: Դրա մասին խոսում են նաև հույն վերլուծագիրները, Դիոնիսիոսին [վերաբերող] իրենց լուծմունքների ներածություններում: Խնդիրը հույն է, ինչ և նախդիրների մասին գլխում, և դրա վերաբերյալ մեր նկատառումը կիրառելի է նաև տվյալ դեպքում:

լ. Ուրբերին նվիրված գլխում, էջ 43-44, ուրբերի [տեսակների] հերթականությունը չի համընկնում [հունարեն] բնօրինակի հետ: Թեև այս դեպքը կարելի է բացատրել և հունարեն բնօրինակով, որն օգտագործել էր հայ թարգմանիչը: Նմանապես և այն հանգամանքը, որ բառի սահմանումը, էջ 12, հայերենում կազմում է առանձին գլուխ, մինչդեռ հունարեն բնագրում այն միացված է հաջորդ՝ խոսքին վերաբերող գլխին, ինչպես և այն, որ բայերի հարադասությունը պակասում են դերբայական ձևերը, թեև առկա է դերբային վերաբերող գլուխը՝ [մի խոսքով.] տարածայնության այս և նման այլ դեպքեր հույնպես կարող են բացատրվել հայերեն թարգմանության համար նախագաղափար ծառայած հունարեն օրինակի պատահական հատկություններով:

Չանց առնելով առավել կամ պակաս վիճահարույց տեղիները և հիմնվելով ակնառու այն օրինակների վրա, որոնք հավաքված և գետնեղված են Դիոնիսիոսի բնագրի մեր ծանոթագրություններում *Armenius discrepans*՝ [«տարածայնող հայերենը»] խորագրի ներքո, հանգում ենք այն եզրակացության, որ մեզ հասած Դիոնիսիոսի [թարգմանության] գրչագրերը ծագում են մի ընդհանուր, նշված իմաստով աղավաղված մայր-գրչագրից:

Քանի որ այս աղճատումներից մի քանիսը հանդիպում են [դեռևս] Համամի երկում, դրանով որոշվում է և մայր-ձեռագրի վաղնջական հասակը, որն, այսպիսով, բարձրանում է ընդհուպ մինչև IX դարին նախորդող ժամանակները, այսինքն՝ հայոց դպրության նախաբազրատունյաց դարաշրջանը:

Առկա գրչագրերի տարբերությունները ձեռագրախմբերը զատորոշող բնույթի չեն, այլ բացառապես տարընթերցումային են: Օրինակները միմյանցից սահմանազատել հնարավոր չէ՝ տարընթերցումները թույլ են տալիս որոշել միայն դրանց զարգացման ընդհանուր գիծը: Ե՝ այսինքն Երզնկացու օրինակը, անշուշտ սերում է M (Մագիստրոսի) օրինակից. E-ից կախված են

E₂, J և N, այսինքն՝ օրինակներ, որոնք կցված են Երզնկացու համառոտ քերականությանը և Եսայի Նչեցու երկին: MS և T, այսինքն՝ Մովսես-Ստեփանոսի քերականությանը հարող բնագրերը, միևնույն գրչագրի տարբեր օրինակներ են: Մագիստրոսի գրչագիրը, թվում է, նույն կարգի է, միայն MS և T-ն մեզ են հասել, որոշ չափով սրբագրված ըստ E օրինակների: Մեր T գրչագրում այդպիսի շտկումների հետքեր նույնիսկ պահպանվել են լուսանցքներում: Ճիշտ նույն կերպ E₂ սրբագրվել էր ըստ MS կամ T-ի, ինչպես դա երևում է մեր գրչագրի լուսանցքների նշումներից: Վարդանի գրչագիրն առավել մոտ է MS [օրինակին]: Ինչպես կտեսնենք, նրա ընկերակից՝ Կիրակոս [Գանձակեցուն] քաջ հայտնի էր MS երկը. շատ հավանական է, որ այն ծանոթ է եղել նաև Վարդանին:

Ասածս լուսաբանելու համար բերենք հետևյալ օրինակները.

էջ 2²⁸, սոցայն – խտրութեան MS M D^o (=E^o).

սոցայն - խտրութեանց T.

սոցայն - խտրութեանց E E₂ J N.

էջ 3¹⁻³, տապալեն – յարկացոցեն MS E₂ J.

տապալեն – յարկացուցանեն T V (-ուցանեն սրբագրված է).

տապալէ - յարկացոցէ M.

տապալէ - յարկացուցանէ E (-ուցանէ սրբագրված է).

3¹ գոյնս MS T V.

գոյնս M.

գոյնս E E₂ N J.

(գայն Հովհաննես Կաթողիկոսի մեջբերմամբ՝ Պատմութիւն, էջ 1).

6²², եւ են միջակքն] եւ են բարակքն M E. այս ընթերցվածը բացատրվում է արևմտյան բարբառի ազդեցությամբ, որն անցել էր Մագիստրոսից Անանունի բնագիրն ևս, էջ 133¹⁵:

7²¹, գճայնաւորսն M E N J.

գճայնորդսն MS T, գճայնաւորսն մյուսները:

8¹⁸, մի մի MS T, մու մու այլ օրինակները. շարակցեալ MS T, շարակացեալ այլ օրինակները:

9², ի հնգիցս յայսցանէ M E₂ E J=N.

11²¹⁻²², եզ անձայն] եզանձայն M E E₂ N=J.

14¹², որգոն] որպիսի M E E₂ J=N.

14¹⁹, ստացիւքն] ստացչիւքն T V, ստացչաւքն MS.

15¹²⁻¹³, մակսաստութիւն] մակսաստկութիւն E E₂ J (T-ն սրբագրված է ըստ E-ի).

- 15₂₁, *անբաղդատակի* T MS, *ընբաղդատակի* M, *անբաղդատականին* E
E₂ J=N.
- 17₁₈, *ենթանկեալ* ենթակալ M E.
- 19₁₃, *նրամ* նրէն MS T.
- 19₂₀, *Աւարան* T MS, *Աւարրեան* M, *Աւարեան* E E₂ J.
- 10₂₂, $\frac{\text{որն}}{\Psi}$ M, *ամենայն որ ն* E.
- 20₂₄₋₂₅, *տոհմ*, *պար*, *ամբոխ*, *հոյլ* MS.
տոհմ, *պար*, *հոյլ*, *զեն* T.
տոհմ, *պար*, *զեն*, *հոյլ*, *շեղջ* M E E₂ J.
- 21₁₈, *ճիթենի* իղենի MS (T գրչագրում թերթը պոկված է).
- 23₁₄₋₁₅, *վարդապետեմ*, *սահմանարանեմ* վարդապետեմ կամ *հակարանեմ* MS T.
- 23₂₁, *նորմէ* MS, *յորմէ* M E E₂ J T (սրբագրված է ըստ E-ի).
- 24₁₃, *բենի*, *որգոն ջամբեմ* և այլն T MS (E₂-ն սրբագրված է ըստ T-ի).
- 25₁₂, *կահեմ* պահեմ T (E₂-ում կ-ն սրբագրված է պ ըստ T-ի).
- 25₂₄, *ն* երկրորդն *ոյի* MS V T (սրբագրված է -ումն ըստ E-ի).
ն երկրորդումն *նոի* ն M.
ն երկրորդումն *ոյի* E E₂ J.
- 26₂₆, *յարեիւն* T MS] *յարին* M E E₂ J.
- 27₉, *յարեիւն* MS] *յարին* մյուս գրչագրերը.
- 33₅₋₆, $\left. \begin{array}{l} \text{հրաշական, իհ} \\ \text{ն բաքասական} \end{array} \right\} \text{հրաշական բաքասական MS H}^\circ$
M (ավելացված է *իհ*).
- 33₁₉, *մատարկաց* MS.
մատարաց M T (T-ի լուսանցքում *մարտակցաց*).
մարտակաց E E₂ J.
մարտարկաց V.
մարտակացն H^c.
- 34₁₀, *մատհրամանոյն* MS T J (= լուսանցքում *մաթ*).
մութհրամանոյն M.
մ. թհրամանոյն E V.
- 35₁₉₋₂₀, *արտարերեալ ջոկամանեն* MS T.
արտարերեն ջոկամանեալ M E E₂ J.
- 35₂₅, *զայսն* MS M, *զայլսն* մյուս գրչագրերը.
- 36₂₄, *բաղկապել* MS, *շաղկապել* մյուսները (J-ում սրբագրված է *բաղ-*).
- 38₉, *չորթ* T E₂, *երեթ* MS M E J.
- 64₈, *երկիմ* նսքին M E.

Առաջարկած օրինակները բավականաչափ են պահպանված գրչագրերի հարաբերությանը վերաբերող մեր տեսակետը լուսաբանելու համար: Դրանց հարաբերությունն ավելի ցցուն է երևում *կոփիմ* բայի հարացույցների տարընթերցումներում, ուր տառերի մտահմար և անհմաստ գուգակցությունները վերարտադրվում են միանման ձևով միևնույն խմբի գրչագրերում:

II. Չեռագրերում Մովսեսին վերագրվող քերականական աշխատությունը իրականում Մտեփանոսի՝ Մովսեսի երկի աստվածաբանական մեկնությունն է: Յուրաքանչյուր գլխում մախ մեջ են բերվում Մովսեսի խոսքերը, ապա օժտվում են Մտեփանոսի մեկնությունով, ընդորում լուսանցքում ամեն անգամ նշվում է համապատասխան հոդվածի հեղինակի՝ Մովսեսի կամ Մտեփանոսի անունը, որոշ գրչագրերում այս անունները դրվում են միասին համապատասխան էջերի ստորին լուսանցքում: Երբեմն ընդօրինակողների մեղքով անունները բաց են թողնվում, երբեմն էլ ճիշտ չի նշվում, թե երկու հեղինակներից ում ինչ է պատկանում: Ավելի հանգամանորեն այս երկի մասին կխոսվի դրա հրատարակության առիթով (87): Առայժմ բավարարվեմք նշելով, որ այս աշխատությունը հանրածանոթ էր: Կիրակոս պատմիչը Սուրբ Հոգու ծագման վերաբերող լատինների հետ բանավեճում հղում է դրան և երկու անգամ մեջբերում կատարում, ընդորում առաջին մեջբերումը սխալմամբ վերագրում է Մովսեսին, թեև երկուսն էլ պատկանում են Մտեփանոսին¹:

Այս աշխատությունը ծանոթ էր մաև Հովհաննես Երզնկացուն, ինչպես կարելի է դատել նրա ակնարկություններից²: Դրա մասին գիտեր և Գրիգոր Մագիստրոսը, և, հավանաբար, այնտեղից է վերցրել այն ամենը, ինչ կա նրա քերականության մեջ Մովսեսի քերականությունից: Դրա հռչակը վկայվում է մեզ հասած գրչագրերի բավականին մեծ քանակով: Մենք օգտագործել ենք մեզ մատչելի վերը նկարագրված հինգ գրչագրերը.

Չեռ. Ը.գ. 1104, էջ 45-101:

Չեռ. 2297, էջ 43-120:

¹ Կիրակոս [Գամճակեցի], Պատմութիւն, գլ. 48, էջ 188. Եւ Մովսէս Խորենացին ասէ ի մեկնութեան քերականին. սուրբ հոգին առնչունակ է և այլն. եւ Մտեփանոս Միւնեսց եպիսկոպոսն ասէ. քանզի բոլիւ է ի հօրէ իբր յակամէ և այլն:

² Հովհաննեսն իր քերականության վերջին գլխում ոտքերի մասին նշում է. այլ եւ ոմանք յառաջին մեկնողացն ոչ տալով ընդարձակութիւն ըստ տեղւոյն մեկնութեանց. եւ կէսք ըստ ալլարանութեան բանս շարադրեցին, ք. 204:

Չեռ. 2372, էջ 264-303:

Չեռ. Ը.թ. 632, էջ 147-229:

Չեռ. Բ.գ. 422, էջ 97-163:

Բացի առաջինից, մնացած գրչագրերը կազմում են միևնույն տարբերակի խումբը: Առաջին գրչագիրը, չնայած իր բոլոր թերություններին, մնացածներից անհամեմատ բարվոր վիճակում է: Մնացած չորս օրինակները սերում են միևնույն նախատիպից, որում ինչ-որ պատճառով թերթերը խիստ խառնված են եղել: Թերևս սկզբնօրինակը հնամաշ և պատառոտված էր, և տգետ դպիրը ընդօրինակում էր ինչպես պատահի, անկարող լինելով հաղթահարել դժվարըմբռնելի բնագիրը:

«Ընդհանուր (երկակի) վանկերի մասին Դավթի փիլիսոփայի» հոդվածից հետո (որի պատկանելությունը Դավթին մենք վիճարկում ենք¹) գալիս է մի հատված. «Արդ գերկավանգսն կատարեաց եւ յեռավանգն փոխեցաւ եւ ղնէ զԱբրահամ» և այլն՝ այսինքն «արդ, նա ավարտել է երկվանկ ոտքերի [մասին դրվագը], և անցել է եռավանկերին և Աբրահամ [բառը] բերել է [որպես օրինակ]» և այլն:

Այստեղ խոսքը ոտքերի մասին է. հետագայում խոսվում է վերջատանջ, քողաքորթ, քողադատ, ատարտեղ, ներգեւ, սոնք, այսինքն՝ անապետոս, ամփիրբաքիոս, ամփիմակրոս և այլ ոտքերի մասին:

Այս հատվածին անմիջապես հարում է մի ոչ մեծ դրվագ առոգանության մասին՝ *առոգանութիւնք են Դ* և այլն, որի վերջում կարդում ենք հետաքրքիր հիշատակարան. *Ստեփ. սարկ. յեռն եւ ի քառն*, այն է՝ «Ստեփանոս սարկավագ. երեքի և չորսի մասին»²: Հիշատակարանը ցույց է տալիս, ի դեպ, որ Ստեփանոսն իր մեկնությունը գրել էր երիտասարդ տարիներին, երբ նա դեռ սարկավագ էր: Դա կարևոր է պարզելու համար, թե ինչպես են հարաբերվում Ստեփանոսի և Մովսեսի մեկնությունները, ինչպես և Ստեփանոսի մյուս երկը՝ *Դիոնիսիոսի [քերականության] մեկնությունը*:

Ոտքերին և առոգանությանը վերաբերող հատվածները հայտնվել են ոչ իրենց տեղում՝ թերթերի հետևառաջ ընկնելու պատճառով: Այս անկարգությունն ընդհանուր է բոլոր գրչագրերի համար, ներառյալ առաջինը, որն այլ

¹ Տե՛ս էջ 44:

² Մխիթարյան հ. Գաբրիել (Ավետիքյանի) խոսքերով՝ «Կայ Յովհաննես Սարկավագի անունով գրուածք մի որ կըսվի *յեռն եւ ի քառն*, բայց թէ արդեօք անուանի Սարկավագ վարդապետն Դա դարուն, կամ թէ ուրիշ մը՝ չի գիտցըլիր. բանն ալ անյայտ է», տե՛ս «Քերականութիւն հայկական», Վենետիկ, 1815, էջ 160, § 413: Մեզ չհաջողվեց ստուգել հ. Գաբրիելի տեղեկության հավաստիությունը Վենետիկի մատենադարանի տվյալներով, բայց հակված ենք մտածելու, որ նա ի նկատի է ունեցել մեզ հետաքրքրող դրվագը, սակայն շփոթել է հեղինակի անունը:

առումով շատ ավելի բարվոք վիճակում է:

Նշված չորս գրչագրերում այստեղից սկսած էջերը նույնպես խառնված են, այնպես որ գլուխների հաջորդականությունը ևս խախտված է: Դրա մասին պատկերացում տալու համար առաջարկում ենք հոդվածների գլխակարգությունը ըստ առաջին գրչագրի, իսկ կողքից հռոմեական թվանշաններով նշում ենք դրանց հաջորդականությունն ըստ չորս աղավաղված գրչագրերի:

III	{	<ԺԱ> ՅԱՂԱԳՍ ԲԱՈՒԻ <ԺԲ> ՅԱՂԱԳՍ ԲԱՆԻ <ԺԳ> ՀՈԼՈՎԶ ՎԵՑ
II	{	<ԺԴ> ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ ԲԱՅԻ <ԺԵ> ՅԱՂԱԳՍ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ <ԺԶ> ՅԱՂԱԳՍ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ
V	{	<ԺԸ> ՅԱՂԱԳՍ ՅԱԻԴԻ <ԺԹ> ԴԵՐԱՆՈՒՆ
VII		<ԺԾ> ՅԱՂԱԳՍ ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ
I		<Ի> a. ՅԱՂԱԳՍ ՄԱԿԲԱՅԻ b. ԴԱՐԴԵԱԼ ՄԱԿԲԱՅ
VI	{	<ԻԱ> (a.) ՅԱՂԱԳՍ ՇԱՂԿԱՊԻ b. ... բաղմատք
VIII		<ԻԲ ՅԱՂԱԳՍ ԱՌՈԳԱՆՈՒԹԵԱՆՑ>
IV		<ԻԴ> ՅԱՂԱԳՍ ՈՏԻՑ

Պատկերը պարզ է. բոլոր գրչագրերն ունեն ընդհանուր աղճատում 22-րդ՝ «Առոգանության մասին» և որոշ չափով 24-րդ՝ «Ուտքերի մասին» գլխում: «Առոգանության մասին» գլուխն իր տեղում չէ դրանցից և ոչ մեկում. դրա մնացորդները, ինչպես տեսանք, պահպանվել են վերը՝ 10-րդ գլխի վերջում: Ինչ վերաբերում է մնացած գլուխներին, ապա միայն առաջին օրինակն է պահպանում ճիշտ հաջորդականությունը՝ մնացած չորսը ներկայացնում են ավերածության պատկերը: Դրանցում ոչ միայն առանձին գլուխներ, այլև միևնույն գլխի տարբեր մասերը ցրված են ինչպես պատահի: Կան և այլ թերություններ, որոնց չենք անդրադառնա, մամանավանդ որ դա տվյալ աշխատանքի պահանջներից դուրս է:

MS աշխատությունից օգտվեցինք Մովսեսի բնագիրը վերականգնելու համար: Բաղդատություններում այն նշվում է երկու հեղինակների անունների սկզբնատառերով միասին՝ MS, ընդորում գրչագրերի տարածայնությունների դեպքում դրանցից առաջինը նշում ենք որպես MS₁, երկրորդը՝ MS₂, երրորդը՝ MS₃: Մնացած օրինակները չեն օգտագործվել, քանի որ համընկնում են MS₂ և MS₃ հետ:

III. Գրիգոր Մագիստրոսի «Քերականութեան մեկնութիւն»: Սա այն աշխատությունն է, որ Գրիգոր [Մագիստրոսը] գրել էր իր որդու, հռչակավոր Գրիգոր Վկայասերի խնդրանքով¹: Գրիգորի՝ մեծ հեղինակություն վայելող քերականական երկասիրությունը հետագայում դուրս է մղվել դպրոցից և առհասարակ գործածությունից Հովհաննեսի ավելի հանգամանալից բանաբաղով, որը լույս է ընծայվել 1293 թ.: Դրանով է բացատրվում Մագիստրոսի գործի գրչագրերի համեմատաբար հազվադեպ լինելը: Առայժմ այն հայտնի է միայն երեք վերը նկարագրված գրչագրերով.

Չեռ. Թ.գ. 875:

Չեռ. 38:

Չեռ. Գ.բ. 871:

Մագիստրոսի երկը բաղդատություններում նշում ենք M տառով, իսկ դրա գրչագրերը հերթով՝ M₁, M₂, M₃: Մագիստրոսի քերականությունն ամբողջ ծավալով ներառվել է Հովհաննեսի բանաբաղի մեջ. դրանից բազմիցս օգտվել էր նաև Եսայի Նչեցիին: Համադրություններում մեր կողմից ներգրավված են Հովհաննեսի, մասամբ նաև Եսայիի գործերը, E և J տառանիշերի ներքո:

Ամենահինը և բնագրի բարվոքության տեսակետից լավագույնը պետք է համարել առաջին գրչագիրը, այսինքն՝ Թ.գ. 875 ձեռագրինը: Մակայն դա ևս անթերի չէ. կա էական պակասություն՝ ընդհանուր բոլոր գրչագրերին: Մագիստրոսի աշխատությունը, ինչպես կտեսնենք, բանաբաղի բնույթ ունի և իր մեջ ամփոփում է ավելի հին հեղինակների մեկնությունները: «Յաղագս անուան» գրվածքն այն մասում, որը փոխառված է Ստեփանոսի երկից, ընդհատվում է ընդմիջարկությամբ, որը չի համապատասխանում շարադրանքի ընթացքին: Այն գրադեցնում է ձեռագրի 98-99-րդ թերթերը և բերվում մեր 204-205-րդ էջերի ծանոթագրության մեջ: Մենք ենթադրում ենք, որ այդ ամբողջ ընդմիջարկությունը, ամբողջ հատվածը պատկանում է Ստեփանոսին, սակայն ինչ-ինչ պատճառներով հայտնվել է ոչ իր տեղում:

Նմանապես դերանունների մասին գլխում, ձեռագրի 125-126-րդ թերթերում հանդիպում ենք մի փոքրիկ հատվածի, որը վերաբերում է «ստուգաբանութիւն», «համեմատութիւն» և «դատումն քերդածաց» [հասկացություններին], այն է՝ Դիոնիսիոսի առաջին գլխին: Այն զետեղված է մեր 216-րդ էջի ծանոթագրությունում:

¹ Մամուկ Անեցի, *Հաւաքմունք*, էջ 113: «Եւ սա (Վկայասէր) խնդրեաց ի հարէ իւրմէ զմեկնութիւն քերականին», հմմտ. *Կիրակոս Գամճակեցի, Պատմութիւն*, էջ 54. «սա խնդրեաց յիւրմէ մեկնել զարուեստն քերականի. զի էր նա իմաստասէր եւ մեկնեաց զնա արուեստատր բանի»:

Վերջապես, ձեռագրի 137-րդ էջում՝ «Յաղագս ոտից» գլխում հայտնվել են տողեր, որոնք, ինչպես նշվում է մեզ մոտ, էջ 124, վերաբերում են նախորդ՝ «Յաղագս առգանութեանց» գլխին: Ոտքի մասին գլուխը, իրեն խորք հավելումով հանդերձ, գտնում ենք նաև Հովհաննեսի մոտ, որն ընդօրինակել էր այն Մագիստրոսի [երկից]: Ուրեմն այս աղճատմամբ վնասված էր արդեն այն օրինակը, որը գտնվում էր վերջինիս ձեռքին: Այն, հավանաբար, գերծ չէր նաև վերոհիշյալ երկու ընդմիջարկություններից:

Մագիստրոսի գործի առկա գրչագրերը, համեմայնդեպս, տառապում են նույն աղճատումից. ուրեմն, դրանք սերում են միևնույն վնասված օրինակից: Մնացած հանգամանքներում գրչագրերն ունեն ինչ-ինչ տարբերություններ, որոնցից մի քանիսը շատ էական են: Դրանք մեզ թույլ են տալիս կապել M_2 և M_3 ավելի մերձավոր ազգակցությամբ:

Գրիգոր Մագիստրոսը, չհամաձայնելով այն բացատրության, որ Դավիթն է տալիս Հոմերոսի՝ Նեստորին վերաբերող տողի առնչությամբ, փոխարինել էր այն սեփական մեկնությամբ: Այն, ինչպես և սպասելի էր, առկա է M_1 գրչագրում, նույն մեկնության մասին խոսում է նաև Հովհաննես Երզնկացին: Սակայն M_2 և M_3 գրչագրերում Մագիստրոսի բառերի փոխարենն զարմանքով գտնում ենք Դավթի մեկնությունը: Այս՝ ձեռագրախմբերը զատորոշող տարբերությունը բավական զորեղ է M_2 և M_3 գրչագրերը հարազատացնելու համար: M_3 գրչի խոսքերից զիտենք, որ նրան նախագաղափար ծառայած օրինակում պակասում էր մի թերթ, որում գետեղված էր «Կապի մասին» գլխի բնագիրը՝ սկսած *զի ահա հարցեր* մինչև *յառնէր որ. ապա* էջ 122⁸-113¹⁰ և 154¹³-155¹¹. այդ պատճառով նույն հատվածը պակասում է նաև M_3 -ի մեջ. իրեն արդարացնելու համար գրիչը լուսանցքում նշում է. *յարինակն թուխք անկել է*: Քանի որ M_2 -ում այս, ինչպես և M_3 -ի այլ բացթողած տեղիները առկա են, ինչպես երևում է ստորև բերվող համադրությունից, M_3 -ը չէր կարող ընդօրինակված լինել M_2 -ից, սակայն երկուսն էլ ունեցել են մոտակա ընդհանուր նախնի:

Ինչ վերաբերում է դրանց հարաբերակցությանը M_1 -ի հետ, ապա վերջինը կարելի է ընդունել որպես բնօրինակ երկուսի համար այն պարագայում, եթե միևնույն ժամանակ ենթադրենք, որ դրանց կապակցող միջանկյալ գրչագիրը որոշ չափով սրբագրված է եղել Եսայի Նչեցու դպրոցի սաներից մեկի կողմից Տաթևի վանքում: Գրչագրերի տարընթերցումներից ուշագրավ են հատկապես հետևյալները.

էջ 223¹, *մայկիստրոսի* M_1 , *մաքիստրոսի* M_3 , *մաժիշտոսի* M_2 , *մագիստրոսի* E J:

- 223₄, *եւ յիրոց յաւելեալ յիմաստից M₁.
եւ այլ եւս յաւելեալ յիրոցն իմաստիցն M₃.
եւ զիրոց յաւելուածոց միտս M₂:*
- 225₂₃, *զլինելոցն գուշակել M₁ E.
զեղելոցն » M₂
զհանդերձելոցն » M₃:*
- 83₁, *խափանի M₁, բանի M₂ M₃ E, բանա J:*
- 185₄, *յառաջարկութեամբ M₁.
յառաջընտրութեամբ M₂ M₃ E:*
- 189₂, *յաւելեալ M₁ E J, փոխանակեալ M₂, փոխան եղեալ M₃ (մեր
ծանոթագրութիւններում նշված չէ):*
- 191₁₈, *գաւճառն M₁ M₃ E, գպաճառն M₂:*
- 83, *ըստ գտիչ M₁, գգտիչ M₂, ստուգիչ M₃:*
- 184₃₋₄, *եւ արդ գտեալ զիր նախ քաղղեացիք եւ ապա հելլենացիք եւ
զկնի նոցա այլք մի ըստ միոջէ M M₂ E, նախ փիւնիկեցիք, ք.
եզիպտացիք, գ. եբրայեցիք, դ. արգիացիք, ե. քաղղեացիք,
զ. հելլենացիք, է. հայք եւ ապա այլք M₂ (ծանոթագրութիւններում
նշված չէ): Բացի դրանից, M₃-ի լուսանցքում կարդաց-
վում է վասն գրագիտի: Սա, երևի, դրվագի խորագիր է՝
դրվագ, որից փոխառվել են M₃-ում քվարկված անունները:*
- 83₁₉₋₈₄₁, *ի սմանէ - սկիզբն արուեստիս] բացթողման պատճառով M₂-
ում կարդացվում է որպէս ի բնարուեստիս (ի ...բն արուեստիս
ընթերցվածից):*
- 185₈, *մեզ արուեստաւորս գորչափութիւն սորա, զոր ճառնացն եւ
յայտնել պակասում է M գրչագրում, ի տարբերութիւն E-ի:*
- 160₇₋₈, *մասնական ծովագնաց է բանին եւ ոչ անդնդական խորոցն
գիտակ, չկա M և E-ում, ի տարբերութիւն MS գրչագրի:*
- 186₂₁₋₂₂, *եւ կամ ճային - աղուեսուն չկա M₁-ում, ի տարբերութիւն M₂
M₃ E:*
- 192₂₋₁₀, *վերձանման տեսակների քվարկման մեջ տարածայնում են
միմյանց բոլոր գրչագրերը:*
- 198₂₋₃, *այլ այլ եւս - անգեցելոյ, չունի M₂:*
- 137₄₋₅, *Անանունի օրինակը M₂-ում փոխարինված է Դիոնիսիոսի
բերած օրինակով, ի տարբերութիւն M₁ M₃ E գրչագրերի:*
- 150₁₁₋₁₅₁₂₂ *Դ եւայս – իմս, բաց է թողնված M₃-ում:*

IV. **Հովհաննես Երզնկացի**ն քերականությունը (88) կազմել է բարեկամների՝ հայոց դպրության նախանձախնդիրների առաջարկությամբ և խնդրանքով: Դրա լույս ընծայելու ժամանակից՝ 1293 թվականից ի վեր այն դարերով սպասարկում էր հայոց դպրոցները որպես համընդհանուր ճանաչում ստացած դասագիրք: Այս պատճառով պահպանվել են դրա բավական մեծ քանակությամբ օրինակներ: Մեզ մատչելի և վերը նկարագրված ձեռագրերում ներկայացված գրչագրերը հետևյալներն են.

Չեռ. Է.գ. 306, քք. 22-210:

Չեռ. Բ.դ. 990, քք. ա-յիթ:

Չեռ. 2359, քք. 29-158:

Չեռ. Ա.ե. 1736:

Չեռ. Բ.գ. 957:

Առաջին՝ հեղինակին ժամանակակից օրինակը գրվել է նրա աշակերտ Թորոսի ձեռքով և ամեն ինչով գերազանցում է մնացածներին: Այն մեզ թվացել էր այնչափ վստահելի, որպեսզի զանց առնենք դրա ստուգումը՝ այլ գրչագրերի հետ համեմատելով: Ամբողջապես ապավինելով Թորոսի ձեռագրին, մենք միայն դիպվածաբար էինք դիմում մյուս գրչագրերին առանձին տեղեկությունների համար: Հաճախակի դիմում էինք Ա.ե. 1736 գրչագրին, իսկ երբեմն՝ Բ.դ. 990-ին, գլխավորապես հեղինակի՝ աղբյուրներից վերաբերող լուսանցանիշները ստուգելու համար:

Աշխատանքի ընթացքում, սակայն, մեր մեջ կասկածներ ծագեցին ձեռագրի ենթադրյալ թվականի, և, գուցե, նույնիսկ դրա՝ Թորոսին, Հովհաննեսի աշակերտին, պատկանելության առթիվ: Մխիթարյան մատենադարանների ցուցակներում ձեռագիրը թվագրվում է 1293 թվականով, ամենայն հավանությամբ, վերը բերված գլխավոր հիշատակարանի հիման վրա: Սակայն դա ճիշտ չէ. հիշատակարանը պատկանում է հեղինակին, և դրանում ցուցված 1293 թվականով նշվում է գիրքը կազմելու, կամ, ավելի ճիշտ, դրա լույս ընծայման, և ոչ թե ձեռագրի ընդօրինակման ժամանակը: Հեղինակի հիշատակարանը երկասիրության անկապտելի մասն է, և որպես այդպիսին այն ընդօրինակվում է գրիչների կողմից: Այսպես, այն ամբողջությամբ առկա է Բ.դ. 990 գրչագրում, և ոչ լրիվ՝ թիվ 2359 ձեռագրում, ինչից, անշուշտ, չի բխում, թե այս գրչագրերը նույնպես վերաբերում են 1293 թվականին:

Թվականը որոշելիս մխիթարյան հայրերը, ելնում էին, հավանաբար, ևս մեկ հիշատակագրությունից, ուր հեղինակի անունից հետո՝ *գսակաւ աշխատաւս ի սմա զՅոհաննէս /րդ*, նշված է նաև Թորոս գրչի անունը՝ *եւ զգրող սորին Թորոս Կլայ[եցի] եւ զաշակերտ վարդապետիս Յոհաննիսի*¹: Բայց,

¹ Տե՛ս վերը, էջ XXXIV:

ճիշտն ասած, այս նշումը նույնպես վճռական չէ. քանի որ այն նույնպես կրկնվում է այլ ձեռագրերում, ուստի հարցն այն մասին, թե արդյո՞ք այս օրինակը Թորոսի ինքնագիրն է, թե՞ դրա հասարակ պատճենը՝ իր հիշատակարանի վերարտադրությամբ հանդերձ, մնում է բաց:

Կա հեղինակային երրորդ հիշատակագրությունից և՛ իր գործերը հիշելու խնդրանքով՝ *գսակաւ աշխատանս մեր*. գրիչն ավելացրել էր դրան նաև իր կողմից՝ *զգրող տողին յիշեա*: Չնայած ընդօրինակողներին ուղղված նրա աղաչանքին՝ *զրեցէք զշորս տողս բանի*, օրինակներում դրանք միշտ չէ, որ պահպանվում են. այսպես, Ա.Է. 1736 մատյանում գրչի խոսքերը փոխարինված են *զՄիքայէլ յիշեա* գրությամբ: Եթե 1293 թվականը ոչ միայն աշխատության ավարտման, այլև մեր գրչագրի ընդօրինակման տարեթիվն է, ապա վերջինս պետք է ընդունել իբրև բնօրինակ կամ դրան համագործօրինակ, քանի որ այն գալիս է հեղինակի աշակերտից: Թերևս ձեռագիրը պատկանում է իրեն իսկ՝ Թորոսին, սակայն գրվել էր ոչ թե 1293 թվին, այլ մի փոքր ուշ, ընդորում հեղինակի հիշատակարանին նա ավելացրել է նաև իր սեփականը:

Հաշվի առնելով այն, որ Թորոսի գրությունից բացի չկա և ոչ մի այլ նշում, ընդամին ձեռագիրն ընտիր է և գրիչը, լինելով այդքան փորձառու և հմուտ, չէր թողնի այն առանց ընդունված հիշատակարանի, պետք է համաձայնել, որ այն Թորոսի գրչի արդյունքն է¹:

Ինչ վերաբերում է տարեթվին, ապա լինի դա բուն աշխատության լույսընծայման տարին, թե ավելի ուշ, երբ, թերևս, հեղինակը տակավին ապրում էր, ապա այն չի նսեմացնում ձեռագրի, որպես հեղինակային բնօրինակին համագործօրինակի արժեքը: Չեռագրատներում մեր ուսումնասիրությունների ժամանակ դեռևս չունեինք այն կասկածները, որ հետագայում առաջացան: Միանգամայն վստահելով ձեռագրին որպես Թորոսի գրչագրի, որ կազմվել էր 1293 թվականին, մենք չէինք տեսնում որևէ անհրաժեշտություն ձեռագիրը՝ այլ օրինակների հետ համեմատելու, առավել ևս այն պատճառով, որ աչքի անցկացնելուց և առանձին տեղեկություններ քաղելուց հետո մենք համոզվեցինք մեր գրչագրի՝ մյուսներից անհամեմատ լավը լինելու մեջ: Թորոսի գրչագիրը նախագաղափար է ծառայել բազմաթիվ ընդօրինակությունների, ինչպես կարելի է դատել որոշ գուտ արտաքին նշաններից. օրինակ, որոշ ձեռագրերում դատարկ են թողնվում հենց այն էջերը, որոնք Թորոսի գրչագրում նույնպես բաց են մնացել:

¹ Շատ հավանական է, որ Թորոսն այն անձնավորությունն է, որ ապրում էր Հեթում բազավորի եղբոր՝ Հովհաննես Եպիսկոպոսի օրոք (1279-1293) և նրա համար է ընդօրինակել Էջմիածնի մատենադարանի հայտնի մատյանը, որն, ի դեպ, պարունակում է Իրենեսոսի աշխատությունը (89), տե՛ս «*Քարտեզ հայ հնագրության*», էջ 204, № 93, 94:

V. **Հովհաննես Երզնկացի**ն ունի ևս մի քերականական աշխատություն (90)՝ **ավելի համառոտ խմբագրությամբ**, իր մատենագրական և պատմական արժեքով շատ ավելի նվազ, քան ընդարձակ քերականությունը: Այն ներկայացված է վերը նկարագրված մատյաններում հետևյալ գրչագրերում.

Չեռ. Ը.թ. 174:

Չեռ. Թ.գ. 1317:

Չեռ. Ե.ա. 289:

Չեռ. 2359:

Այս երկի մատենագրական շահեկանությունը կայանում է դրա՝ Եսայի Նչեցու մամանատիպ գործի և նույն հեղինակի ընդարձակ քերականության հետ ունեցած առնչությունը պարզելու մեջ: Մեր աշխատության մեջ այս խնդիրը չի արծարծվում՝ Հովհաննեսի համառոտ քերականությունը մենք օգտագործել ենք որպես օժանդակ միջոց ինչ-ինչ տեղեկություններ քաղելու համար:

VI. **Եսայի Նչեցու Քերականությունը** շատ բաներում նման է Հովհաննես [Երզնկացու] նախորդ երկասիրությանը: Եսային, Գլաձորի վանքի առաջնորդը, ակամավոր մանկավարժը, հիմնել էր Գլաձորում մի դպրոց (91), որից դուրս են եկել հարյուրավոր վարդապետներ: Նա Հովհաննեսի երեց ժամանակակիցն է. վերջինս եղել է նրա վանքում և նույնիսկ ունկնդրել է նրա դասախոսությունները: Դրանով են, հավանաբար, բացատրվում երկու աշխատությունների միջև եղած ընդհանրությունները: Եսայիի քերականության գրչագրերը հետևյալն են.

Չեռ. 336:

Չեռ. Ա.գ. 994:

Չեռ. Ե.ա. 671:

Չեռ. Դ.գ. 46:

Առաջին՝ 1360 թվականի օրինակը, որը պահվում է Վիեննայի Մխիթարյանների մոտ, հեղինակին գրեթե ժամանակակից է: Մենք օգտվել ենք դրանից և՛ Մխիթարյանների մատենադարանում, և՛ հետագայում, այդ ձեռագրի պատճենից, որը հատուկ մեզ տրամադրել են Մխիթարյան հայրերը, ինչի համար և հայտնում ենք նրանց մեր երախտագիտությունը: Եսայիի աշխատությունից մեր քաղած տվյալներն, ինչպես արդեն ասացինք, ծանոթագրություններում նշվում են իր անվան սկզբնատառով՝ Ե:

Երկրորդ, վենետիկյան ձեռագիրը՝ Ա.գ. 994, գրեթե հասակակից է Վիեննայի գրչագրին: Դեռևս պարզ չէ, արդյոք այն կարելի է համարել հեղինա-

կային սևագրություն, բայց շատ հավանական է, որ այն կրում է Եսայիի ձեռքի հետքերը:

Մենք օգտվել ենք երկու գրչագրերից էլ, սակայն՝ տարածամասնակ, ինչը բացառում էր դրանց բաղդատության հնարավորությունը: Թեպետ նման բաղդատությունը մեր ներկա աշխատանքի խնդիրներից դուրս էր: Ընդհանուր դիտարկումները խոսում են գրչագրերի լիովին նույնը լինելու օգտին, նույնանուն են նաև դրանց նախորդող Դիոնիսիոսի բնագրերը: Եվ դա հասկանալի է գրչագրերը հեղինակից առանձնացնող ժամանակամիջոցի կարծությունից: Թեև մենք տարընթերցումները նշում ենք մերթ առաջին գրչագրով, մերթ՝ երկրորդով, երբեմն էլ՝ ըստ երկուսի, ընդհանուր առմամբ մեկի ցուցումները հարիր են և երկրորդին, ուստի պետք է ընդունել, որ J և N օրինակները համագոր են և փոխարինում են միմյանց:

VII. Վարդանի քերականությունը նկարագրված ձեռագրերում ներկայացված է երկու գրչագրով.

Չեռ. 2372, բնագիր 2:

Չեռ. Բ.գ. 1273, բնագիր 2:

Սա Դիոնիսիոսի բնագրի մեկնությունն է: Այն գրվել է Հայոց Հեթում I (1226-1269) թագավորի խնդրանքով՝ նրա սեփական կարիքների համար: Այս հանգամանքը հիշատակվում է աշխատության բուն խորագրում, ինչպես և նույն հեղինակի՝ թագավորին ուղղված խրատներից մեկում. *Եւ ապա երեսօք յԱնդուլն հրամայեցիք, որ գրեաք ձեզ ժղլանք (92) ի մեկնութենէն քերականիմ՝*:

Համանման աշխատություններից Վարդանի մեկնությունը տարբերվում է իր մատչելիությամբ: Ակներև է, որ հեղինակը հարմարվել է դեռևս երիտասարդ՝ *տղայահասակ*¹, իր կրթությունը լրացնելու կարիք ունեցող թագավորի պահանջումներին և պատրաստվածությանը: Դյուրամատչելիության [ձգտումը] երևում է և՛ շարադրանքից, և՛ բովանդակությունից, որը զերծ է [ավելորդ] գիտականությունից: Մեր նպատակների համար Վարդանի մեկնությունը օգտակար չէր կարող լինել. դրանից մենք օգտվել ենք առավելապես այն մասերում, որոնք փոխառված են Դիոնիսիոսից: Բաղդատություններում Վարդանը նշված է V տառով, տարընթերցումների դեպքում առաջին գրչագիրը՝ V₁, իսկ երկրորդը՝ V₂:

Վարդանի մեկնությունում հանդիպում են հետաքրքրական տեղեկու-

¹ Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 470: *Ժղլանք* բառն անծանոթ է, հավանաբար, կիլիկյան բարբառից է:

² Անդ:

թյուններ: Շատ բարձր արժեք ունի նրա մի դիտողությունը «Խոնարհման մասին» գլխի վերջին պարբերության վերաբերյալ, որն ավելորդ չենք համարում մեջբերել. *գեչն եւ զայքն դասէ ի միում հէզի եւ զԿորճէիցն յայտնէ մեզ զթանճր եւ զբառբարիկոն¹ բառն, զի նոցայցն է այս բառս գեամ, զոր մեք զամ ասենք, զի զայս Բարձուշատեցին ասէ եւ Գորոզացին: Եւ զյղարկեմ-ն եւ զյղեմ-ն յոմ եւ զլոյսն լուս ասեն ռմանք եւ զգայլն՝ զոյլ եւ զգառն՝ զոռն: Բայց ասեն թէ կայ առ մեզ եւս գեղեցկաբանութիւն, զոր այլք չունին յազգաց՝ սոցա, դոցա, նոցա². որք առ իս կան սոցա ասեմ, եւ զոր առ քեզ՝ դոցա, եւ որ յիսնէ եւ ի քենէ հեռի են, նոցա ասեմ: Բայց յետոյ գտաւ այս արուեստաւոր բառս:*

Ստադիո չլինելով ըստ էության քննարկելու Վարդանի խոսքերը, նկատենք ի միջի այլոց, որ դրանք տեղ չեն թողնում կասկածելու, որ հայերենի որոշ գավառաբարբառների համար այդքան բնորոշ առանձնահատկությունը, այն է՝ ետնալեզվայինների փափկացում կամ «յոտացիա» (= *կյա, գյա՝ կ[ա], գ[ա]*-ի փոխարեն), զնում է դարերի խորքը, ընդհուպ մինչև Վարդանի ժամանակները և ամենևին էլ վերջին դարերի արդյունք չէ, որ ինչպես ընդունված է համարել, ձևավորվել է թյուրք-թաթարական բարբառների ազդեցությամբ:

VIII. Երթնագրեանք (բառացի «յոթնատառ» կամ «յոթ տառի մասին») գրվածքը ձեռագրերում հաճախ է հանդիպում: Մեզ հասանելի են եղել հետևյալ գրչագրերը.

Չեռ. Դ.դ 968:

Չեռ. Ա.է. 1736:

Չեռ. Ե.գ. 1232:

Տաթարի վանքի ձեռագիրը:

Այս աշխատությունը ոչ այնքան քերականական, որքան կաբայական բնույթի է: «Յոթ տառ»-ը հասկացվում է որպես յոթ ձայնավոր, որոնք անվանվում են մնացած տառերի բանալիներ: Ըստ հեղինակի, ձայնավորները ծառայում են ոչ միայն բառերի կազմության, այլև գաղտնիքները բացահայտելու և լուծելու համար: Ընդորում ներկայացվում են տառերի աղյուսակներ և զուգակցություններ, որտեղ հաշվի է առնվում նաև դրանց թվային արժեքը: Օրինակ՝ *աժճա* (=1.10.100.1000), հեղինակողի դատողությամբ նշանակում է միևնույն գործի մասնակիցներ, *բիմս* (=2.20.200.2000)՝ համախոհներ և այլն:

Գրվածքը վերագրվում է մերթ Դավիթ Հռոմեացուն, Փյունիկ մականուն-

¹ Հմմտ. Դավիթ, Մեկնութիւն, էջ 93¹³⁻¹⁴:

² Հմմտ. Ամանուն, Մեկնութիւն, էջ 149^{7,8}:

նով, մերթ ցմանապես հռոմեացի Մովսեսին, կամ դրանց երկուսին միասին, հռչակավոր մաթեմատիկոս Անանիայի համահեղինակությամբ: Անշուշտ, չի էլ կարելի մտածել, որ այսքան պատկառելի մատենագիրներ հաղորդ են եղել նման բարբառանքի: Բայց դրա հորինողին պետք են եղել մեծահռչակ անուններ, որպեսզի այս անհեթեթությունը հավաստի երևար դյուրահավատ մարդկանց աչքերին: Բնականաբար, նա կանգ է առել քերականական և մաթեմատիկական գրականության մեջ ճանաչում ստացած հեղինակությունների՝ Դավիթ, Մովսես, Անանիա և նույնիսկ Հոմերոսի վրա: Սկզբից, ըստ երևույթին, խոսքը վերաբերում էր միայն Դավթին՝ Փյունիկ մականունով: Այս մականունը, որ նշանակում է «փյունիկեցի», պետք է ամրագրեր Դավթի համբավը իբրև մաթեմատիկոսի. խարդախողին ակներևաբար հայտնի էր ձեռքի տակ եղած գրականությունից՝ «*եթ գթուականն փիւնիկեցիք գտին*»¹:

Դժվար է ասել, թե ինչ միջավայրում է առաջացել այս «Յաթնագրեանք»-ը և անմիջապես ինչ նպատակների էր այն ծառայում: Այն ունի պատկառելի հնություն և վայելում էր անտեղի լայն ճանաչում՝ դատելով այն հանգամանքից, որ այն հայտնի էր դեռևս XIII դ. և հետաքրքրության առարկա էր նույնիսկ Կիլիկիայի արքունիքում, ինչը երևում է հետևյալ ձեռագիր հուշարձանից:

IX. Վենետիկյան մատենադարանի վերը նկարագրված ձեռագիրը՝ Ե.գ. 1332 կազմված է երկու մասից. առաջինը վերաբերում է քերականությանը, երկրորդը՝ «Եթնագրեանք»-ն է: Առաջին մասում խոսվում է քերականության ծագման մասին, ընդ որում բերվում են բացատրություններ, որոնք, ընդհանուր առմամբ, նմանվում են Մագիստրոսի, կամ նրա աղբյուր՝ Ստեփանոսի [դատողություններին]: Դրանց հետ ծանոթ լինելու հետքեր դիտվում են Հովհաննես Երզնկացու երկում՝ Մագիստրոսից անկախ:

Քերականության այս հպանցիկ տեսությունը յուրօրինակ նախաբան է յոթ տառի մասին կշռադատության համար: Գլխավոր հիշատակարանում ասվում է (93).

Աստ կատարեցաւ ցանկալի արհեստս երկու, նախ գրականութիւն համառուտ եւ ապայ քերթողական արուեստս որ վասն տառից եւաթանցն, զոր ի մերոց սրբոց վարդապետացն, ի սրբոյն Դաւթայ եւ ի Մովսիսէ եւ յԱնանիայէ Շիրակացոյ համարողէ էին բազում գիրս տողեալ արուեստս այս , զոր ի բազմացն գրեցի եւ լուծի ըստ արուեստին եւ ոչ մտաց սուտ ինչ կամ յաւտար գրոց աստ գծեցի, այլ զարձան մերոց հարց հաւատացեալ եւ ի ջանասէր յաշակերտացն ոչ թագուցի, եւ զմեզ եւ զհարկողսն զայս մատենիս

¹ Դավիթ, Մահմանք իմաստասիրութեան, էջ 199:

ձեր աղաթիցը յանձն արարի զտէր Բարսէղ եւ զհարազատ նորին զարքայ Հայոց զՀեթում եւ զԼեւոն որդի նորին աշակերտ այս մատենիս, յիշեսցիք առ Քրիստոս պահել պսակ սուրբ եւ թագ ամենայն հայոց ամժամս տեսուն եւ Աստուծոյ Յիսուսի:

Հիշատակարանը հետաքրքրական է, սակայն, ցավոք, ոչ այնքան պարզ: Նախ, անորոշ է, արդյոք այն գրչին է պատկանում, թե հեղինակին, և արդյոք հիշատակած անձինք բոլորն են գրքի կազմման նախաձեռնողները, թե նրանցից առաջինը՝ Բարսէղն է հենց այն անձնավորությունը, որ գիրքը գրել էր թագավորի և արքայազնի պահանջով: Տարբեր ձևով կարելի է հասկանալ նաև հիշատակարանի բուն բովանդակությունը. արդյոք հեղինակը հայտնում է, որ նա առաջինն է, որ կազմել է այս «Երթնագրեանք»-ը՝ թվարկած հեղինակների մոտ գտած ինչ-ինչ նյութերի հիման վրա, թե խոսքը ինչ-որ բանաքաղության մասին է, որ կատարվել էր մինչև իր օրերը գոյություն ունեցող **քազմաթիվ մատյաններից**: Ելնելով հիշատակարանի ընդհանուր բնույթից, մենք հակված ենք կարծելու, որ հենց Բարսէղ եպիսկոպոսը պետք է համարվի հեղինակ ինչպես քերականական ակնարկի, այնպես էլ «Երթնագրեանք»-ի, որ նա գրել էր Հեթում թագավորի և թագաժառանգ Լևոնի խնդրանքով: Թերևս դա նման էր գրական այն «Ժղլանք»-ներին, որոնք նույն թագավորը պատվիրել էր Վարդանին:

Բարսէղ եպիսկոպոսը վախճանվել է 1275 թ.¹, իսկ Հեթումը գահ է բարձրացել 1226 թ. (94), և հրաժարվել դրանից իր որդու Լևոնի օգտին 1269 թ.: Այս հանգամանքներով և սահմանվում է մեր հուշարձանի առաջացման ժամանակը՝ XIII դ. կեսը:

X. Նկարագրված ձեռագրերում Մովսեսի անունն է կրում, բացի մեր քննած MS աշխատությունից, Գիոնիսիոսի առաջին երեք գլուխներին նվիրված ևս մի սեղմ մեկնություն: Այն սովորաբար հանդիպում է որպես վերը հիշատակված MS երկի հավելված, ինչպես դա երևում է մեր գրչագրերից.

Չեռ. 2297, քնագիր 3:

Չեռ. 2372, » 22:

Չեռ. Բ. գ. 442 » 4:

Չեռ. Ը. ք. 632 » 7:

Սա ավելի շուտ քաղվածք է, որ արվել էր առավել հանգամանալից աշխատությունից, թերևս, Մտեփանոսի, համենայնդեպս, ոչ Մովսեսի մեկնությունից, թեև տեղ-տեղ լսվում է Մովսեսի խոսքերի ազդեցությունը: Մեզ հաջողվեց բացահայտել այն երկասիրությունը, որից քաղված է եղել սույն

¹ Հ. Տաշյան, Յուգակ, էջ 906:

հատվածը. նշված գրչագրերից վերջինը՝ Ը.գ. 632 (95), դրա ամբողջական խմբագրությունն է: Դրանց առնչությունների մասին մենք խոսելու ենք դրանք հրատարակելու ժամանակ: Այժմ նշենք միայն, որ հատվածի վերջում կա մի փոքրիկ քերականական բնույթի մեջբերում՝ *Մամբրէի Վերծանողի* վերտառությամբ, որն առկա է նաև ամբողջական խմբագրության մեջ: Այս հանգամանքը չի կարող փաստարկ ծառայել ամբողջ մեկնությունը իրեն՝ Մամբրեին վերագրելու օգտին: Բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ սա «հավաքումն» է՝ Դավթի, Անանունի և Ստեփանոսի երկերից, վերջինիս գերակշռությամբ: Թերևս այս երկի հեղինակը նույնպես կրում էր «Մովսես» անունը, սակայն նա չունի և ոչ մի ընդհանրություն MS աշխատությունում Ստեփանոսի կողմից մեջբերվող Մովսեսի հետ:

XI. Մովսես Խորենացու «Բան իմաստության»՝ ձեռագրերում շատ հաճախ հանդիպող փոքրածավալ գրվածք. ավելորդ չենք համարում մեջբերել այն ամբողջությամբ ըստ ներքոհիշյալ գրչագրերից առաջինի.

Չեռ. 2359, քնագիր 2:

Չեռ. 2372, » 4:

Չեռ. Ը.ք. 632:

Չեռ. Թ.գ. 39:

Չեռ. Է.ա. 671:

ՄՈՎՍԵՍԻ ԽՈՐԵՆԱՅԻՆՑ ԲԱՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

Ցաստուծոյ խորհրդով եւ իմաստութեամբ հաստատեցաւ մարդկայինս տեսակ, իսկ անհմտութեամբ եւ ախտիւ պարտեցաւ ի չարէն եւ յինքենէ. յետոյ միջոց եղև երկոցունց ոչ ըստ բնութեան, այլ ըստ պատահման, զի ըստ երկոցունց կարողութիւն է կեալ իմաստութեամբ ըստ առաջնոյն, իսկ շամբշութեամբ ըստ որ յետնոյն: Նոյնպէս քերականութիւնս այս միասահման կալով ոչ կատարեալ իմաստութիւն, այլ տրամախոհս որոշողութեամբ ենթակայ ունելով զմասունս բանի զատել զբանաւոր ի բառաւորաց. վասն այնր ասի հմտութիւն, իսկ կատարեալ իմաստութիւն յաստուած տեսանի, որով հիմունս էարկ երկրի եւ որ բնակեցաւ ի խորագիտութեան (այլ ըստ հայցման եւ ըստ արժանոյ ի տեսանէ ձրի: Արդ թէպէտ եւ ոչ է կատարեալ), այլ ըստ մարմնոյ քաղաքաւարութեան զընտրելին յայտնէ, որպէս ընդ առապար պողոտա. իսկ անմտաց պատերազմաւո թուի լսելեաց, որք անտեղակ մնալով խրոխտեն եպերելով, զլացեալ զսա իբր դժուարաբանութիւն իմն: Այլ սա է լոյս մտաց եւ որպէս մեծաշուք զարդ ի թագաւորս, այնպէս է

LXX

սա յիմաստասէրս. որպէս նաւագնացութիւն է ծովային քանից եւ բնակէ ոչ ի հակամիտս, այլ <ի> հոգիս մտառուաց եւ լոյս տա շաղագ ըստ պատուիրանին տեառն:

Իսկ մեք զքերականութիւն պատուենք հանդերձ իւրովին մասամբ. զի սովաւ զանցեայն տեսանենք եւ ի ներկայումս զուարճանամք եւ զապառնիսն իմանամք հոգւոյն ալիամբ: Եւ քերականութիւն այսինքն զրականութիւն: Դարձեալ եւ գտաա, որ է ճշմարիտ տարր, այսինքն զիր, զի սովաւ զոյացեալ ունակացաւ քերականութիւն: Դարձեալ անուն եւ այլ մասունք քանի այսպէս են – յորժամ զաստուած ասենք կամ Ադամ՝ այն անուն է: Իսկ ասելովն՝ արար աստուած զմարդն, արար-ն քայ է: Եւ արհնեաց զնոսա աստուած <ի դրախտին>. արհնութիւն ընդունելութիւն է, իսկ ի դրախտին՝ յառ: Եւ ո պատմեաց քեզ. քեզ-ն դերանուն է: Նախդիրն՝ որպէս մարդն Ադամ, մարդկային ազանց սկիզբն: Իսկ մակբայ յառաջ ի դրախտին, յետոյ յանիծից երկրի, դարձեալ յերկինս: Իսկ շաղկապ, որպէս մարմին քանին աստուծոյ ընդ աստուած եւ ընդ մարդ:

Վասն այնորիկ պատուենք եւ մեք զարուեստս զայս, զի սովաւ անուրջքն յայտնին, որպէս տարակուսութիւն մեկնութեանց հանգէտ համարանութեամբ յայտ է եւ ոչ վայրաբար կամ ըստ ախորժականաց մարդկայնոց ըստ ամենայնի եւ յամենայնի փառս տեառն աստուծոյ յաւիտեանս. ամէն:

Խորեմացին, ի հարկե, չի կարող նման աշխատության հեղինակը լինել նույնիսկ ենթադրաբար: Այն պատկանում է անհայտ հեղինակի գրչին՝ հեղինակի, որը ծանոթ էր մեր կողմից վերը քննարկված՝ Մովսէսի անունը կրող՝ Դիոնիսիոսի առաջին գլուխներին նվիրված մեկնությանը: Դրա առաջին արտահայտությունը՝ **Գրականութիւն ստուգարանի քերականութիւնը** եւ հմուտն վեց մասամբ կարէ վարել զարուեստն. իսկ ամենակատար իմաստութիւն աստուած է, որ իմաստի (տրբ. իմաստութեամբ) հիմն էարկ երկրի, օգտագործվել է Բան իմաստութեան հեղինակի կողմից, որտեղ կարողում ենք. կատարեալ իմաստութիւն աստուած տեսանի, որով հիմունս էարկ երկրի, և, մի փոքր անց. եւ քերականութիւն այսինքն զրականութիւն:

«Բան»-ի անհայտ հորինողը հզոր քերական չէ, ինչը և երևում է խոսքի մասերի իր սահմանումներից: Բացի այդ, նրա ընկալմամբ, «**զքերականութիւն պատուենք հանդերձ իւրովին մասամբ. զի սովաւ զանցեայն տեսանենք եւ ի ներկայումս զուարճանամք եւ զապառնիսն իմանամք հոգւոյն ալիամբ**»: Նա կարծում է նաև, որ քերականությունը պատվավոր արվեստ է, «**զի սովաւ անուրջքն յայտնին**»: Այս ըմբռումները հարազատացնում են «Բան»-ը և դրա հեղինակին այն աշխարհի հետ, ուր հնարավոր էր «Երթնագրեանք»-ի նման գրվածքների ի հայտ գալը:

Ե.ա. 671 «Բանի» գրչագիրն ունի հիշատակարան. *Գրեցաւ ՉՂԹ (=1350 թ.) ի յունվարի ժէ*: Մխիթարյան հայրերն այս պատճառով ամբողջ ձեռագիրը թվագրում են 1350 թ., մինչդեռ այն գրվել է, ինչպես երևում է Հովհաննես գրչի սույն հիշատակարանից, *պկդ (=1415)* թվականին: Նշված 1350 տարեթիվը չի կարող համարվել նաև «Բան»-ի շարադրման թվականը. ավելի շուտ դա մեր ձեռագրին նախազադափար ծառայած մատյանի տարեթիվն է:

XII. Դավթի և մասամբ Մովսեսի կյանքին և գրական գործունեությանը վերաբերող նյութերը տրվում են հետևյալ ձեռագրերում՝

Չեռ. 2372, բնագիր 27:

Չեռ. 47, բնագիր 1,2,3:

Չեռ. Ա.դ. 875, բնագիր 22:

Չեռ. Է.գ. 1244, բնագիր 1:

Կշռադատությունը քերականության սկզբի և ծագման մասին նույնամուտ է Է.գ. 1244 ձեռագրում եղածի հետ, որը հրապարակել են Մխիթարյանները Դավթի աշխատությունների հատորում՝ այն տարբերությամբ, որ այստեղ ինչ-ինչ մասեր գեղջված են: Խղճուկ այս պատառիկները չեն կարող վերագրվել Դավթին. թվում է, որ դրա համար առիթ չի տալիս նաև գայթակղիչ վերնագիրը, եթե միայն ճիշտ ըմբռնենք այն: Դավիթը չէ, որ ճառում է քերականության ծագման և սկզբնավորության մասին, այլ մեկ ուրիշը՝ Դավթի քերականության «սկիզբն ու պատճառի»: Քերականության մասին դրվագների վերնագրերը հարկավոր է համադրել նախորդ՝ *Մահմանաց* գրքին վերաբերող դրվագների մանատիպ և ավելի անադարտ խորագրերի հետ. *Սկիզբն և պատճառ Մահմանացն գրոցն Դաւթի վարդապետի, զուգեալ ի տեսութիւն ղհորատր գիւտ*: Այս, ինչպես և քերականության վերաբերյալ դրվագի խորագիրը ոչ միայն հիմք չեն տալիս դրանք Դավթին վերագրելու, այլ ընդհակառակն, ապացուցում են, որ ուրիշ մեկն է գրում նրա մասին նրա գրքի առթիվ (96):

Ինչ վերաբերում է Դավթի և նրա ընկերների կյանքի մասին հատվածներին, ապա դրանք երևան չեն հանում որևէ նոր աղբյուր. նրա մեջ հայտնած տեղեկությունները ամբողջությամբ բղխում են արդեն հրատարակված հայտնի բնագրերից՝ *Բան յաղագս յաչվերացի* առնչությամբ Գյուտ կաթողիկոսի և Դավթի թղթակցությունից, ինչպես նաև Դավթի և Մովսեսի *Հարցմունքից*: Ուստի հարկ չկա կանգ առնել այս հատվածների վրա, իսկ վերոհիշյալ ձեռագիր հուշարձաններին կանդրադառնալով ստորև:

XIII. Արիստակեսի, Գևորգի և Գրիգոր Տաթևացու բառգրքերը և ուղղագրության կանոնները.

Չեռ. 2297, բնագրեր 4,5,6:

Չեռ. 2373, « « 6, 7, 24, 25:

Չեռ. Թ.գ. 39:

Բառարանագրային նյութերից հատկապես ուշադրության են արժանի այն [տեղեկությունները], որոնք կապ ունեն ուղղագրության հետ: Ուղղագրության խնդիրը վաղուց ի վեր գայթաքար է եղել հայ գրագետների համար: Եվ դա միանգամայն հասկանալի է, եթե նկատի առնենք այն անդունդը, որ բացվել էր կենդանի խոսակցական և կենդանի գրական լեզուների միջև, և որը ժամանակին համընթաց ավելի և ավելի էր խորանում: «Անհասանելի գրիչ» Արիստակեսի արժանիքը հենց այն է, որ նա առաջինը ձեռնարկեց ուղղագրության ամենավիճահարույց խնդիրների վերաբերյալ որոշակի նորմերի մշակմանը: Ծագումով Մեծ Հայքից, նա ծանոթ էր նաև կիլիկյան գրական միջավայրին, վայելում էր Ներսես Լամբրոնացու բարեկամությունը: Իր նախածեռնության համար նա պարտական էր Գրիգոր Լամբրոնացուն, Սկևռայի վանքի վանահորը: «Գրիգորից ստացած սերմերը Արիստակեսը բազմապատկեց պարարտ հողի նման» - ասում է նրա աշակերտ Գևորգը, - «և դրանց[ից ստացած] պտուղները ծավալեց լայն և հանգամանալից խրատներում»: Արիստակեսի կանոնները լրացրել է նրա հետևորդներից մեկը՝ Գևորգ Սկևռացին, որը և հայտնում է մեջբերած տեղեկությունները.

Չեռ. 2297, ք. 260. ոչ միայն ի նախագրելոցն առաջնոց հոիտորագոյն գրչացն շարագրութեանց, այլ եւ ի վերջնոցն քան զնոսա նոցին հետևողացն ի սոյնս. այսինքն յանհաս գրչէն Գրիգորէ Ղամբրոնեցոյ եւ եւս առաւել յԱրիստակիսէ երբեմն նորին ծանաւք եղելոյ ի Հայոց Մեծաց, որ պատճառս խրատու յաղագս այսոցիկ առեալ ի նախասացեալ գրչէն Գրիգորէ եւ ըստ արինակի պարարտ երկրի բազմապատկեալ, աճեցոյց զարդիւնս սերմանցն լայն եւ ընդարձակ խրատուց պատմաբանութեամբ ի շահ աւգտի հետեւողացն յարուեստ գրչութեան... որոց խրատուցն սուղ ինչ հանդիպեալ յոքնաթշուառ տառապեալս Գէորգ, թէպէտ զբնաւն անգիտանամ, սակայն փոքր ի շատէ, զոր վասն խնդրոյ եղբար մերոյ Կոստանդեայ հարկեցայ զրել, անտարակոյս ունի ճշմարտութիւն:

Գևորգը, Գրիգորի զարմիկն ու աշակերտը¹, իր կանոնները գրել է [ոմն] Կոստանդնուսի և Ստեփանոս քահանայի պահանջով՝ Ստեփանոս, որի մակա-նունը Գույներ Երիցանց էր (ավելի հաճախ հապավված՝ *Գոյներիցանց* ձևով): Գևորգը, Ստեփանոսը և նրանց աշակերտները կոչվում են «անհասանելի գրիչներ», քանի որ գրում էին զեղեցիկ և գրագետ, և թողել են բազմաթիվ մատյաններ, որոնք այժմ մեր մատենադարանների զարդն են հանդիսանում:

Արիստակեսի և Գևորգի կանոնների վերաբերյալ, որոնց քննությունը այժմ մեր նպատակից դուրս է, բավարարվեց մեկ ընդհանուր դիտարկու-մով: Մեր դիտումները ցույց են տալիս, որ ուղղագրությունն իբրև որոշակի գիտություն, անցել է զարգացման բուլբ այն փուլերը, ինչ և հայ դպրու-թյունն առհասարակ: Ընդհանուր առմամբ պետք է տարբերել նախաբազ-րատունյաց, բազրատունյաց և հետբազրատունյաց փուլերը: Բառավերջի ձայնավորների խնդրում պարզվում է, որ առաջին փուլում, որպես ընդհա-նուր կանոն, վերջնաձայն *ա, ռ, է* փակվում էին *-յ* ձայնորդով: Դիոնիսիոսի թարգմանիչը հստակորեն բացատրում է, որ հայերենում վերջատառ կարող են լինել բոլոր տառերը, բացի *ա, է, ռ* և *ը*-ից:

Բազրատունյաց դարաշրջանում, կենդանի խոսքի ճնշման ներքո, որ ավելի և ավելի մուտք էր գործում գրականության մեջ, այս նորը կորցնում է պարտադիր բնույթը և պահպանվում է միայն հնուտ գրիչների մոտ. մեզ հասած հնագույն ձեռագրերում, որ ծագում են Բազրատունյաց դարաշրջա-նից, նկատվում է բառավերջի *-յ*-ն բաց թողնելու միտումը:

Կիլիկյան դարաշրջանում, երբ խոսակցական լեզուն համարձակորեն իր ճանապարհն էր հարթում դեպի գրականություն, թվում է՝ պետք է հաղթելն ուղղագրության այն կանոնները, որոնք համապատասխան են հնչունական համակարգին: Սակայն ինչպես նոր լեզվին չհաջողվեց հասնել գրական լեզվի բարձունքին, այդպես և նոր կանոնները հարկադրված էին տեղի տալ հին կարգին: Սկևռայի դպրոցից սերող մի շարք հռչակավոր գրիչներ, ու-սումնասիրելով վաղեմի ձեռագիր ժառանգության լավագույն օրինակները, վերադառնում են դեպի հնությունը և վերականգնում գրության՝ դարձ ապ-րած կանոնները: Այսպես, Արիստակեսին է պատկանում այն կանոնի ձևա-կերպումը, ըստ որի բացառությամբ դերանունների և հրամայական եղանա-կի եզակի թվի (97) բոլոր այլ դեպքերում բառավերջի *-ա*-ն փակվում է [ար-դեն] համը *-յ* ձայնորդով: Նրա և իր մերձավորագույն հետևորդների մշա-կած ուղղագրությունը պարտադրող կանոնի գործություն է ձեռք բերել հե-տագա ժամանակների համար: Այն ընդունել են նաև Մխիթարյանները և

¹ Գ. Ալիշան, Հայապատում, էջ 505:
LXXIV

նրանց շնորհիվ է, որ այն տարածվել ու հաստատվել է ժամանակակից գրականության մեջ:

Մեր կողմից հրատարակվող հուշարձանների հիմնական մասը գալիս է հայ դպրության նախաքաղաքատունյաց դարաշրջանից, ուստի մենք մեր հրատարակման մեջ պետք է հետևեինք այն ուղղագրությանը, որը մենք ընդունում ենք այդ փուլի համար որպես կանոն: Մյուս կողմից, ներկա ձեռագրերից և ոչ մեկը չի իջնում մինչև նույն դարաշրջանը, անգամ դրանց մերձավորագույն նախագաղափարները այդքան հնության չեն հասնում: Այս հանգամանքը ևս պետք է հաշվի առնել, քանի որ հրատարակությունը պետք է հարմարեցնել գրչագրերի վիճակին, և ոչ հնացնել՝ դրանց տվյալներին հակառակ: Մեր տրամադրության ներքո եղած բոլոր օրինակները հետքազրատունյաց շրջանից են, սակայն դրանցից շատերն ընդօրինակվել են նախորդ, բազրատունյաց դարաշրջանի նախագաղափարներից: Եվ այս հանգամանքն արտացոլվել է օրինակների ուղղագրության մեջ: Գրության տարբեր կանոնների շփոթությունը ավելի ցայտուն երևում է բանաքաղներում: Հովհաննես Երզնկացին, իր ժամանակի օրինակելի մատենագիրն ու գրիչը, այնտեղ, ուր ինքնուրույն է գրում, հետևում է Արիստակեսի կանոններին, իսկ որտեղ արտագրում է հին հեղինակներից, օրինակ, Դավթից, նա շատ հաճախ պահպանում է առանց *-յ* ձայնորդի ուղղագրությունը:

Սրանից, իհարկե, դեռևս չի հետևում, թե այն պարագային, երբ Դավթի ուղղագրությունը նույնանում է Հովհաննեսի ուղղագրության, պետք է տեսնել Հովհաննեսի ազդեցությունը. մնան դեպքերը կարող են վերագրվել բնօրինակի ժամանակին, քանի որ Հովհաննեսի կանոնները ոչ այլ ինչ են, եթե ոչ հնի վերականգնում:

Այս պատճառով մենք, առանց հաշվի առնելու օրինակների խառն կամ երկատված ուղղագրությունը, ամենուրեք պահպանում ենք գրության միաձև համակարգը, որն ընդունում է բառավերջի *-յ*-ն, ընդորում բացառություն է արվել միայն *եթե*-ին՝ *եթէ*-ի փոխարեն, և *-եի* (փոխանակ *-էի*) անցյալ անկատարի վերջավորության, իբրև առավել բնորոշ հատկանիշների այն դարաշրջանի համար, որտեղից ծագում են մեր օրինակների մայր-գաղափարները:

Մենք չենք անդրադառնում այլ, ոչ պակաս բարդ ուղղագրական խնդիրներին, որոնցից մի քանիսն ունեն արդիական հետաքրքրություն: Հնչունական պառակտումը, որ առկա է հայերենի երկու հիմնական ճյուղերի միջև, վաղնջական ժառանգություն է, համեմայնդեպս, այն գալիս է շատ ավելի վաղեմի ժամանակաշրջանից, քան ընդունված է կարծել: Լեզվի զարգացումը վաղուց էր առաջ քաշում ձևեր, որոնց հնչունական արտահայտումը չէր համապատասխանում գրության հաստատված կանոններին: Կաղա-

պարված ուղղագրության խախտումները հին հայերեն բնագրերի հրատարակիչները դիտում են որպես ընդօրինակողների ոչ բավարար գրագիտություն, մինչդեռ հաճախ դրանք պետք է վերագրել բուն հեղինակների գրչին: Այս խնդիրները կարող են մասնավոր քննարկման ախտեղ բավական է նշել դրանց սկզբունքային կարևորությունը¹:

¹ Ոչ պակաս դժվարություն է հարուցում նաև հունարեն բառերի տառադարձությունը: Օրինակ, *ποιητικῶς* բառը կարող էր տառադարձվել տարբեր ձևով: Մելամադդեսի լուծմունքներից դատելով (*Grammatici Graeci*, III, 3, 15, 14₂₄₋₂₆) -*οι* երկրաբառը նրա ժամանակ արտասանվում էր որպես -*υ* (=ֆրանս. *υ*) այդպիսին էր դրա արտասանությունը տակավին IX դարում (**K. Krumbacher**, *Byzantinische Literatur*, էջ 585), ավելի ուշ այն հնչում էր որպես -*i*: *οι = υ* հնչյունը հայերենում կարող էր վերարտադրվել -*ι* («վյունի») միջոցով, որը քերականները հավասարեցրել են հունարեն *υ*-ին: Ուստի *ποιητικῶς* բառը «նյութական» փոխադրության դեպքում կհնչեր որպես *պոյետիկոսարար*, իսկ հնչյունական վերարտադրմամբ՝ *պլետիկոսարար*: Թե առաջին, և թե երկրորդ ձևը ավանդաբար գրագետ գրչի ներքո պետք է վերածվեր *պլետիկոսարար* ձևին: Այս երեք ձևերից ա՞րև է ընդունելի մեր բնագրի համար: Մեզ մոտ (էջ 184₁₅) հանդիպում է այս բառը և մենք նախընտրում ենք *պլետիկոսարար* ձևը (որը բնագիր է ներմուծվել անախորժ վրիպակով՝ որպես *պլետիկոսարար*) (98):

III. ԿՈՐԱԾ ԲՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Պատմագրական տեղեկություններ քերականների մասին: Առասպելական ու վավերականը դրանց մեջ: Հովհաննես Երզնկացու հաղորդումները հին քերականների մասին: Վաղ, այժմ կորած աշխատություններ ուշ բանաբաղների կազմում: Դրանց տարանջատելու հնարները: Դավթի, Անանունի, Մովսեսի և Ստեփանոսի բնագրերի վերականգնումը: Վիճելի հանգամանքների վերլուծությունը: Համամի քերականությունը:

Ներկա, ավելի շուտ՝ մեզ մատչելի ձեռագիր գրականության տեսությունը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ ժամանակը համեմատաբար քիչ նյութեր է պահպանել: [Հայկական քերականական ավանդության] սկզբի և Գրիգոր Մագիստրոսի դարաշրջանի միջև ընկած ժամանակամիջոցը մեզ տրամադրում է միայն Դիոնիսիոս Թրակացու թարգմանական բնագիրը և Ստեփանոսի՝ Մովսեսի աշխատությանը նվիրված աստվածաբանական մեկնությունը, այսինքն՝ այն գործը, որը մեզ մոտ նշված է MS տառանիշով: Այսպիսին է քերականական գրականության իրական վիճակը: Այն, սակայն, ամենևին էլ չի համապատասխանում պատմական գրականության մեջ այս առարկայի մասին եղած տեղեկություններին:

Հնում, ինչպես հայտնի է, քերականությունը, ճարտասանության և փիլիսոփայության հետ, կազմում էր բանական կամ տեսական արվեստների խումբը՝ *τέχνη λογική*, ի տարբերություն գործնական արվեստի՝ *τέχνη πρακτική*, որի մեջ մտնում էին ատաղձագործությունը, դարբնությունը և նման արհեստներ՝ մի բաժանում, որ համապատասխանում է արվեստի և արհեստի արդի ըմբռնմանը: Ընդորում քերականությունը հասկացվում էր շատ ավելի լայն իմաստով, քան այժմ, և եթե ոչ հավասարագոր, ապա շատ մոտ է եղել «բանասիրություն» հասկացության: Դիոնիսիոս Թրակացին քերականությունը սահմանում է իբրև գիտություն բանաստեղծական և «պատմողական» երկերի (99) մասին, դրանց փորձնական կամ գործնական ճանաչողության իմաստով: Նա քերականության մեջ զանազանում է վեց մաս:

Առաջինը՝ **վերծանությունն** է, կամ պարզորոշ ընթերցում՝ առոգանության կանոնների համաձայն:

Երկրորդը («գրուցատրոփին»)՝ **մեկնողությունն** է, այսինքն՝ ընթերցվածի վերլուծությունն ըստ գրական հնարների, այլ կերպ ասած՝ պոետիկա:

Երրորդը՝ **լեզուների և պատմության իմացություն**, որոնցից առաջինը, ըստ հույների, նշանակում էր հունարեն բարբառների ծանոթություն, և կոչվում էր «գլոսսեմատիկա», ըստ [արդի լեզվաբանության]՝ բարբառագիտություն:

Չորրորդը ստուգաբանությունն է, որը հները հասկանում էին որպես գիտություն բառերի ծագման և դրանց ուղղագրության մասին. ավելի ճշգրտորեն այն անվանվում էր «ալեթոլոգիա»՝ [«ճշտաբանություն»]. վերջին երեք մասերը Դիոնիսիոսից առաջ կազմում էին «դիոթոտիկայի», [այսինքն՝ «սրբագրական»] բաժինը:

Հինգերորդը («համեմատություն») համեմատությունն է («անալոգիա»), կամ բառի համեմատման ձևերի որոնում, ինչը հավասարազոր է «ստուգաբանության»՝ մեր կողմից ընդունված իմաստով, այսինքն՝ ուսմունք խոսքի մասերի մասին (100):

Վերջապես, վեցերորդ մասը («դատումն քերականաց») քննադատությունն է, բանաստեղծությունները դատելու հմտություն. այն համարվում էր քերականության մասերից ամենակարևորը:

Այս սահմանումից երևում է, որ այսպես կոչված քերականական արվեստն ընդգրկում էր ոչ միայն քերականությունը՝ բառի արդի իմաստով, այլև մի շարք այլ գիտություններ: Դրանք բոլորը միասին, ընդհանուր առմամբ, քերականությունը հավասարեցնում են գրականագիտություն հասկացությանը, նամանավանդ որ դրա վերջնական նպատակն էր դպրության ստեղծագործական ոլորտի քննությունը: Քերականական արվեստը դիտվում է իբրև բանաստեղծական երկերի ըմբռնման բանալի: Հայ դպրության վաղ, այսինքն «սուրբգրային» դպրոցը *γραμματική* բառը ամենայն ճշտությամբ թարգմանում էր որպես *դպրութիւն*¹, սակայն հունարանները, հորինել են նոր բառ՝ *քերական*՝ ինչպես կտեսնենք, հունարեն *γραμματική* բառի ստուգաբանության ազդեցությամբ: Նրանց է պատկանում նաև *քերդէլ, քերդող, քերդած* արտահայտությունները՝ *ποιεῖν, ποιητής, ποίημα* («ստեղծել», «ստեղծագործ», «ստեղծագործություն») նշանակությամբ: Քանի որ քերականության բոլոր թվարկված բաժինները համարվում էին անհրաժեշտ աստիճաններ, որ տանում էին դեպի բանաստեղծական երկերի ըմբռնումը, ապա, բնականաբար, դրանց ճանաչումը հավասարապես պարտադիր էր իրենց՝ բանաստեղծների համար: Ինչպիսին և լինել ստեղծագործական ձիրքը, որպեսզի այն դրսևորվեր պատշաճ ձևերով, հարկավոր էր հիմնովին

¹ Եզմիկ, Եղծ աղանդոց, էջ 28. *որպես ի դպրութենն դպիր կոչի և ի ճարտարութենն ճարտար*: Մեթոդիոս Պատարացու համատեքստի հետ համեմատությունը (101) ցույց է տալիս, որ *դպրութիւն*-ը արտահայտում է *γραμματική*-[իմաստը], իսկ *ճարտարութիւն*՝ *ῥητορικῆ* (G. N. Bonwetsch, Methodius von Olympus, 1891, S. 22, տես «Հանդես ամսօրյա», 1893, էջ 360): Բացի այդ, հայերեն Սաղմոսագրքում նույն բառը հանդիպում է 70, 15 տողում. *որպես ոչ թէ խարդախութիւն ինչ գիտէի ես դպրութեամբ*: Ցավոք, պարզվեց, որ տողը վիճահարույց է. հունարեն Յոթանասնից թարգմանության մեջ կարդում ենք. *ὅτι οὐκ ἔγνων πραγματίας*: Որոշ մատյաններում, սակայն, ինչպես, օրինակ, Վատիկանի ու Մինայի (The Old Testament in Greek, ed. H. B. Swete D. D., Cambridge, 1896) առկա է նաև *γραμματίας* ընթերցվածը, որը համապատասխանում է հայերեն բնագրին:

ծանոթ լինել այն գիտության, որը զբաղվում էր հենց այս ձևերով, այսինքն՝ քերականության: Այսպիսով, քերականն ու բանաստեղծը գտնվում էին ստեղծագործական միևնույն ոլորտում, մեկը՝ իբրև տեսաբան, մյուսը՝ և իբրև տեսաբան, և իբրև գործադրող:

Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ հայ հեղինակների գործածմամբ *քերդող* եզրույթը նշանակում է ոչ միայն «բանաստեղծ», այլև «քերական»: Երկրորդ նշանակությունը, թերևս, գերակշռում է. «*քերդող է, որ զմասունս բանին գիտէ*», ասվում է Մովսեսի մեկնությունում: Դավիթը և հետագա վերլուծագիրները *քերդողութիւն* բառը գործածում են *քերականութիւն* իմաստով¹: Էլիասի մեկնության հայերեն թարգմանության մեջ *քերդող* բառով հավասարապես թարգմանվում է հունարեն բնագրի և՛ *ποιητής*-ը, և՛ *γραμματικός*-ը²:

Վերլուծելով *քերդող* եզրույթը, մենք ձեռք ենք բերում այն ուղեցույցը, որը օգնելու է մեզ հայկական դպրության մեջ փնտրել քերականներին: Հայ մատենագիրների մեջ քիչ չեն *քերդող* մակդիրով հորջորջվողները, իսկ ոմանց համար այն անբաժան մականուն է: Պետք է կարծել, որ դրանով նրանք պարտական են իրենց՝ քերականական գրականության մեջ վաստակած համբավին՝ կամ որպես հեղինակներ, և կամ որպես գիտակներ: Լայն ճանաչում էր վայելում Մովսեսը, որին անվանում էին ոչ այլ կերպ, եթե ոչ *քերդող* կամ *քերդողահայր*: Ոչ պակաս հնչեղ էր Դավթի անունը, որին հորջորջում էին *անհաղթ փիլիսոփա* կոչումով: Նրանց կողքին հաճախ հիշատակվում է նաև Մամբրեն, որին անվանում էին *վերծանող՝ ձնալուծող*, եկեղեցական իմաստով, թե քերականական՝ հայտնի չէ: Ավանդությունը նշված անձանց նույնիսկ կապում է ազգակցական կապերով. Մամբրեն համարվում է Մովսեսի եղբայրը, իսկ Դավիթը՝ նրանց զարմիկը՝ տեղեկություններ, որոնք խիստ տարակուսելի են և արժանի չեն վստահության: Ինչևիցե, մեզ այժմ չի զբաղեցնում նրանց անձնավորությունների խնդիրը, որը լուծելու ենթակա էլ չէ. ավելի քան վտանգավոր է հավատ ընծայել ակներև առասպելական պատումներին:

¹ *Քերական* բառը կազմվել է *γραμματικός* եզրույթի հունարեն ստուգաբանության ազդեցության ներքո՝ ստուգաբանություն, որ բխեցնում է այս եզրույթը *γρόφω* բառից, հասկանալով այն *ξύω*-ի («քերել») իմաստով, տե՛ս *Դիոնիսիոս*, 4₁₄: Ինչ վերաբերում է *քերդող*, *քերդել* բառերին, ապա դրանց մեջ, ամենայն հավանականությամբ, պետք է տեսնել Արշակունյաց դարաշրջանի *կերտող*, *կերտել* ձևերը: Ուշ արտասանությամբ երկու ձևն էլ համապատասխանում են հին պարսկերենի *karta* և միջին պարսկերենի *kerden* «ստեղծել»՝ *ποιεῖν*, *ποιητής* իմաստով, ինչպես երևում է նաև Դիոնիսիոսի թարգմանությունից: Բայց կան նաև *քերթել* «կաշիմ պոկել», և *քրթել* «քոր գալ» հայերեն բառերը, և վրացերեն ქერტი «կեղևել» [«կեղև պոկել»] բառը: Այս բառերն իմաստով հարում են «քերել» բառին, և, հավանաբար, ոչ առանց դրանց ազդեցության էր, որ *քերդող* բառը ստացել է նաև «քերական»-ի նշանակություն:

² Էլիաս փիլիսոփայի Մեկնութիւն, էջ 54₂₄, 55₂, հրատ. Հ. Մանանդյանի, [ՄՊբ.], 1911:

Դավթի և Մովսեսի անունները չարաբաստիկ դեր են խաղացել հայկական մատենագրության մեջ: Նրանց շուրջ անորոշության մի այնպիսի մշուշ է կուտակվել, որ հնարանքի շերտերում գեթ ինչ-որ ճշմատություն որսալը տակավին մնում է հայագիտության ամենաբարդ և ամենակարևոր խնդիրներից մեկը: Այս անունները ձեռք են բերել հանգուցային կետերի նշանակություն. որոնց հստակեցումը խոստանում է լույս սփռել երկու ուղղությամբ՝ և նրանցից առաջ, և նրանցից հետո եկող դարաշրջանի վրա: Ցավոք, փաստական տվյալները խիստ սակավ են, իսկ պահպանված պատումները՝ այնքան խառնաշփոթ, որ անգամ իրականը ոչ պատմական բնույթի գունագարդ փառից մերկացնել անչափ դժվար է:

Պատումներից ամենահետաքրքրականն է՝ «Հայոց Սուրբ վարդապետներ Մովսեսի և Դավթի վիճաբանությունը երկաթնակների հետ»¹: Սույն ավանդությունից են ընձյուղում և այն կցկտուր գրույցները, որոնք մեջ բերվեցին վերը՝ ձեռագրերի նկարագրության բաժնում: Քննադատ հայացքով դիտելով «Վիճաբանությունը», չի կարելի չնկատել, որ այն կազմված է տարբեր, վերոհիշյալ հայրերի կյանքի այս կամ այն դրվագները ներկայացնող կտորներից, որոնք սկզբնապես, հավանաբար, շրջաբերվում էին առանձնաբար, և միայն հետագայում ի մի են բերվել և կազմել մի ամբողջություն: Որոշ, բավական ակնառու նշաններ խոսում են «Վիճաբանության» մի քանի տարբերակների առկայության մասին. նկատելի է նույնիսկ տարաբանությունների ամենացայտուն դրսևորումները հարթեցնելու միտում: Ինչևէ, կանգ առնել այս խնդրի վրա և զբաղվել պատումների քննարկմամբ, որքանով էլ դա ցանկալի լիներ, կնշանակեր առանց անհրաժեշտության շեղվել մեր անմիջական խնդրից: Այժմ այս հուշարձանում մեզ անմիջապես հետաքրքրում են միայն նշված հեղինակների գրական գործունեության վերաբերող ցուցումները:

«Վիճաբանության» մեջ խոսքը «Անհաղթ փիլիսոփա» կոչվող Դավթի, Մովսեսի, որ քերդողների հայր և գլուխ է, Մամբրե իմաստասերի, Աբրահամ հռետորի և նրանց նմանվող Պողոսի մասին է: Նրանք կրթություն են ստացել հունական գիտական կենտրոններում և այնտեղ երկար ժամանակ մնալու հետևանքով «լեզվով և կերպարանքով դարձել էին աթենացիներ»: Այս դիտողության մեջ հիանալիորեն արտացոլվել է հունաբանների [ամենավառ] բնութագիծը՝ հունարենով նրանց հափշտակված լինելը: Վերադառնալով, նրանք հայրենիքը գտան ծանր պայմաններում, աննպաստ

¹ Սրբոց վարդապետաց հայոց Մովսեսի եւ Դավթի Հարցմունք ըստ (sic!) երկաթնակացն, տե՛ս «Արարատ», 1879, ապրիլ-մայիս: Ավելի վաղ, 1874 թ., այն հրատարակել է [Գ.] Սրվանձախանցը Կոստանդնուպոլսում՝ Յաղագս սրբոց վարդապետացն հայոց Մովսեսի եւ Դավթի: «Հարցմունք»-ի մեզ հետաքրքրող մասը տպագրել է [Ֆ. Կ.] Կոնիքերը «Հանդես Ամսօրյա»-ում 1903 թ.: Այս մասը պակասում է «Արարատ»-ի բնագրից:
LXXX

իրենց ունեցած գիտելիքները կիրառելու համար: Երկիրը պառակտված էր. նրանց վիճակված չէր ապրել մինչև խաղաղության վերականգնումը, և «վիուլի կուտակված գանձը, որ վաղուց ի վեր նրանք պահում էին անոթում, տարան իրենց հետ ձիթեր Բաշխողի մոտ»¹:

Այս խոսքերը, իհարկե, չեն նշանակում, թե նրանք ոչինչ չեն գրել, այլ որ չէին կարողացել իրենց դրսևորել պատշաճ կերպով, համապատասխան իրենց պատրաստվածության: Այնուամենայնիվ նրանք հասցրին ինչ-որ բան գրել և մեզ թողնել ինչ-որ մատենագրական ժառանգություն: Մովսեսին, Հայոց Պատմություն և այլ երկեր հեղինակելու հետ մեկտեղ, վերագրվում է նաև **քերականության մեկնություն**. *արար եւ գրեականին մեկնութիւնն*: Նմանապես և *Դավթին*, բացի «Իմաստասիրության սահմանումներ»-ից, հատկացվում է նույնպիսի «Քերականության» մեկնություն. *արար եւ զմեկնութիւն քերականին*: Նրանց մյուս ընկերները՝ Մամբրեն, Աբրահամն ու Պողոսը նույնպես գրել են ինչ-ինչ բաներ, բայց թե ինչ՝ հուշարձանը չի նշում:

Վերը բերված դրվագներում *Դավթին* են վերագրում, բացի հիշատակված աշխատություններից, նաև *Ներքող ի սուրբ Խաչն (Բարձրացուցէք)* ճառը, Պիտոյից գիրքը, սաղմոսների մեկնություններ և առանձին ճառեր: Ընդորում, ուշադրության է արժանի մի դիտողություն այն մասին, որ, ըստ հույների, «Դավիթը գրել է յոթ գիրք և ծագումով իրենց ազգությունից էր»²: Այս նույն դրվագից իմանում ենք, որ «Իմաստասիրության սահմանումները» և «Բարձրացուցէք»-ը սկզբից շրջանառության մեջ են դրվել անհուն, հետո միայն փորձեր էին արվել դրանք վերագրելու *Դավթին*: Գոյություն ունեւր [պատումի] մի տարբերակ ևս, որը կապում էր *Ներքողի* հորինումը 614 թ., Սուրբ Խաչը Պարսկաստանից վերադարձնելու պահին³: Այս տեղեկությունները կարևոր են և պետք է հաշվի առնվեն *Դավթի* և նրա ժամանակի խճճված խնդիրը լուծելու համար: Պիտոյից գիրքը, մեզ հետաքրքրող հուշարձանի վկայությամբ, նույնպես պատկանում է *Դավթի* գրչին, մինչդեռ

¹ Եւ խնդրեցին ի Մովսիսէ գրով տալ ի նոցա զպատմութիւն Հայոց: Իսկ նա սկսեալ գրէր զպատմութեան Հայոց պատմագիրն եւ այլ բազում ինչ արար քննութիւն պէսպէս ճառեալ ի տնօրինութիւն փրկչին եւ բազում ինչ, արար եւ **գրեականին մեկնութիւն**, եւ արարին եւ զեղանակս երաժշտականացն ծայնատրս բազումս ի պէտս եկեղեցւոյ: Այլ վասն խօսից վարդապետութեանց ոչ էր առ ուրեք վասն դառն ժամանակին<:> արար(:

Եւ *Դավթ* (գրեաց) զՄահմանացն գիրսն, զոր էր առեալ ի փիլիսոփայիցն. արար եւ **զմեկնութիւն քերականին**:

Եւ ոչ ժամանեցին եյանել ի խաղաղական ժամանակի, զի զառլցեալ եւ զամբարեալ զգանձն զայն, որ ի վաղ ժամանակաց ի յամանի պահեալ ունէին, զոր եւ ընդ իւրեանս տարան առ տուղմ պարգեւացն եւ մնջեցին բարեօք ի Քրիստոս:

Արար եւ Մամբրէ, Պողոս եւ Աբրահամ ճառս ոչ սակաւս պէսպէս խորհրդոց: «Հնոց Նորոց», էջ 84-86, հմմտ. «Հանդես ամսօրյա», 1903, էջ 154:

² Վերը, էջ XXVIII:

³ *Դավթ*, հրատ. երկ., Վեներսիկ, 1833, էջ 102:

հայտնի է, որ ձեռագրերում որպես դրա հեղինակ նշվում է Մովսեսը¹:

Վիճելի չէ, համենայնդեպս, մեզ հետաքրքրող քերականական աշխատասիրության հեղինակությունը. և՛ Դավիթը, և՛ Մովսեսը գրել են քերականության մեկնություններ: Դավթի մասին այս ցուցումը հաստատվում է և վերոբերյալ «Մկիզբ և պատճառ Քերականի» դրվագում, որից երևում է, որ Դավթի հեղինակությամբ ճանաչվում էր ինչ-որ քերականական աշխատություն:

Երբ այս հուշարձաններից անցնում ենք պատմագիրներին, մեզ ապշեցնում է քերականներին նրանց անձանոթ լինելու փաստը: Ընդհանուր լուծությունը առաջին անգամ խզում է Ասողիկը, որը ճանաչում է «Մամբրեին, Մովսեսի եղբորը և երրորդին, ինչպես ասում էին, փիլիսոփային», ինչպես նաև «Դավթին՝ Մովսեսի աշակերտին, Հարք գավառից, Հերեան գյուղից»²: Բայց տեղեկությունների աղբյուրը դարձյալ մեր քննարկած ավանդագրույցն է, ընդ որում դրա այն տարբերակը, որը Դավթին զետեղում է Հովհաննես Մանդակունու, և ոչ Գյուտ կաթողիկոսի ժամանակներում. քանի որ հենց այս ժամանակագրությանն է հետևում Ասողիկը: Նույն հեղինակը հիշատակում է նաև «Եզրաս Անգեղացուն՝ Մովսես հռետորի, Բագրևանդ գավառի եպիսկոպոսի աշակերտին, նրան, ով բազմացնում էր հռետորների կաճառը»³: Նրան ծանոթ է նաև Համամը՝ որպես քերականության մեկնության հեղինակ, որն ապրել է IX դ. կեսերին⁴:

Սակայն ավելի վաղ շրջանի մեկնությունների կամ դրանց հեղինակների մասին Ասողիկը չի հայտնում ոչինչ: Նրանց մասին լուծում են և՛ Թովմա Արծրունին, և՛ Հովհաննես Կաթողիկոսը: Թեպետ վերջինս մատնում է իր՝ Դիոնիսիոսի աշխատության հետ իրականում ծանոթ լինելը: Այստեղ գտնում ենք Դիոնիսիոսի բնագրից վերցված երկու արտահայտություն. «*զի մի՛ տղայաբար ինչ յանդգնեալ զմիանգամ զրեալսն երկրորդեցից*» և «*զքերթողաց արութիւնս տապալեցից և զոյնս (102) վերծանողացն ծիծաղելիս յարկացուցից*»⁵:

¹ Հ. Գարեգին [Հովսեփեան], *Դավթ Հարքացի և Պիտոյից գիրքը*, «Արարատ», 1908, փետրվար:

² «Յայն ժամանակի Մամբրե եղբայր Մովսիսի, զորմէ ասեն երրորդ գտեալ ի փիլիսոփայս <տարընթերց՝ երրորդ գտեալ փիլիսոփայ> դառնայր ի Հայս, և Դավթ աշակերտ Մովսիսի ի Հարք գաւառէ ի Հերեան գեղջէ», տե՛ս Ստեփանոս Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, ՍՊԲ., 1885, էջ 80-81:

³ «Յորում ժամանակի Եզրաս Անգեղացի, աշակերտ ճարտասանին Մովսիսի եպիսկոպոսի Բագրևանդ գաւառի զրասս ճարտասանիցն բազմացուցանէր», անդ, էջ 82, ակնարկվում է Պիտոյից գիրքը: Քրիստափոր կաթողիկոսին նաև անվանում է «փիլիսոփայ», էջ 81:

⁴ Ասողիկ, էջ 159:

⁵ Հովհաննես Կաթողիկոս, Պատմութիւն, էջ 4 = Դիոնիսիոս, էջ 2₉-3₃: Հրատարակություններում *զոյնս* բառի փոխարեն սխալմամբ դրվում է *զայն*: Մոսկովյան հրատարակության մեջ *արութիւնս* փոխարեն կարդացվում է *արուեստ*, ընթերցված, որը հանդիպում է նաև Դիոնիսիոս-LXXXII

Հայոց իշխաններից մեկի կողմից արարներին հասցրած պարտության ամօքիվ նույն պատմիչը մեջբերում է Դիոնիսիոսի խոսքը. «*եւ առ նմա յարա-
ռոցեալ լինէր մակասատութիւն միոյն առ քազունս ասել թէ Դաւիթ արուորա-
գոյն քան զգէթացիսն*»¹: Դիոնիսիոսին վերաբերող գրականության հետ
ծանոթությունը նշմարվում է նաև նրա՝ Հովհաննես Օձնեցու մասին հայտ-
նած կարծիքից, իբրև մի մարդու, որ լավատեղյակ է բանաստեղծական ար-
վեստին, խոսքի մասերին ու դրանց պարագաներին²: Դիոնիսիոսին ծանոթ
է նաև «*Աղվանից պատմության*» խմբագիրը³:

Մեզ հետաքրքրող հեղինակների մասին Բագրատունյաց դարաշրջանի
պատմագիրների թողած տեղեկությունների տղությունը հատուկ է նաև ավե-
լի ուշ դարաշրջանի պատմիչներին: Սամուել Անեցին, Կիրակոս [Գանձա-
կեցին], Վարդան [Արևելցին], Մխիթար [Այրիվանեցին] կրկնում են նրանց
մասին միմիայն այն, ինչ կարդացել են մեր քննած աղբյուրներում:

[Թվարկած պատմիչներից] առաջինը տալիս է նոր անձանց անուններ.
775 թ. ներքո նա հիշատակում է «*Յայնմ ժամանակի էր Ստեփանոս դրան
երէց՝ որ բանիրուն ճանաչիր: Եհաս ի կատարումն ամենայն իմաստութեան
եւ գրամարտիկոս արհեստից՝ հանդերձ հոգեւորական առաքինութեամբ*»:
Կային Հայոց աշխարհում և այլ վարդապետներ, շարունակում է նույն
պատմագիրը՝ «*ընտրեալք և լուսաւորք՝ տէր Եփրեմ եւ Անաստաս՝ եւ Խաչիկ՝
եւ Դաւիթ Հռոմայեցիւն. եւ մեծ իմաստասէրն Ստեփանոս Սիւնեցիւն՝ աշա-
կերա Մովսէսի*»⁴:

Այստեղ կրկնակի հիշատակվող Ստեփանոսը՝ փիլիսոփան և երեսը՝
միևնու՞յն անձնավորությունն է, թե տարրեր, այնքան էլ պարզ չէ: Տարա-

սի երկի ձեռագրերում: Այս օրինակը ցույց է տալիս, թե ինչպես հեղինակները երբեմն սրբա-
գրվել են ըստ իրենց օգտագործած աղբյուրների:

Կարապետ վարդապետի, այժմ արդեն՝ եպիսկոպոսի հրատարակած ճառում՝ *Խոստովա-
նութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ բանին*, կարդում ենք. *եւ արդ օ՞ն առեալ զարհամարե-
լիսն նոցա քան ծիծաղելիս յարկացուցից եւ տապալեցուցից ի զարութենէ պատրաստ օգնա-
կանին մերոյ Քրիստոսի*, էջ 5: Դիոնիսիոսի արտահայտության ազդեցությունը այս խոսքերի
վրա ակնառու է: Այն հանգամանքը, որ այս քնորոշ արտահայտությունը հանդիպում է և՛ Հով-
հաննես Կաթողիկոսի [«Պատմության»], և՛ «Խոստովանության» մեջ, կարող է կռվան ծառայել
«Խոստովանությունը» Կաթողիկոսին, և ո՛չ Օձնեցուն վերագրելու օգտին:

¹ Նույն տեղում, էջ 192= Դիոնիսիոս, էջ 15:

² Հմուտ եւ տեղեակ գործի քերթողական շարագ<րա>ծաց, մասանց բանի եւ մասնակա-
նաց, նույն տեղում, էջ 57. ապա գալիս է. *այլ եւ վարժից սեռից եւ որք ընդ գոյացութեամբ են սե-
ռական տեսակարարութիւնք մինչեւ ցանհատ վայր եւ տարբերութեանցն եւս հանգամանաց եւ
պատահմանց ամանջատից ոչ ամտեղեակ ինչից երևում է Արիստոտելի և Պորփյորի աշխա-
տությունների հետ ծանոթ լինելը:*

³ **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից, էջ 71. *շարագրած յաղագս...ըստ
ներգոյս գրուցատրարար* = Դիոնիսիոս, էջ 1, հմմտ. նաև **Կիրակոս Գանձակեցի**, էջ 96: Նշենք
նաև Դիոնիսիոսի *հնազեա պատմութեանց* արտահայտությունը (էջ 1) Մնացորդաց գրքերի
նախադրության մեջ:

⁴ **Սամուել Անեցի**, Հուսարմուրք ի գրոց պատմագրաց, էջ 89:

կուսանքը չի լուծում նաև Կիրակոս պատմագիրը, որը բառացի արտագրում է այս տեղին Սամուելից¹։ Քեև նա դրանից առաջ էլ առիթ է ունեցել խոսելու Ստեփանոսի գործունեության մասին՝ Դավթի և Մամբրեի կապակցությամբ², այստեղ նա կրկին անդրադառնում է նրան, և Սամուելի խոսքերին ավելացնում է այն, ինչ մասամբ արդեն հայտնել էր Ստեփանոսի մատենագրության վերաբերյալ։ Նա լրացնում է Ստեփանոսի երկերի ցանկը մի քանի նոր, այդ թվում նաև «Մեկնութիւն քերականին» գործով։ Սակայն արդյո՞ք այս Ստեփանոսն էր այն «դրան երէց»-ը, որ հասել է «ի կատարումն ամենայն իմաստասիրութեան եւ գրամարտիկոս արհեստից», որին Կիրակոսը հիշատակում է Սամուելի խոսքերի հիման վրա, թե դա բոլորովին այլ անձնավորություն էր, ըստ երևույթին, պարզ չէր իրեն իսկ Կիրակոսին։ Սամուելի [տվյալներից ելնելով], նա Ստեփանոսին տեղադրում է Հայոց թվարկության 222 թվականի ներքո, ինչը հավասար է 775 թվականին, քանի որ Սամուելը Հայոց թվարկության սկիզբը համարում է 553 թվականը։ Այս երկու Ստեփանոսներին ամենայն վստահությամբ նույնացնելուն խոչընդոտում էր հենց այս տարբերիվը. ինչպես մենք, այնպես էլ նշված պատմիչները տեղյակ են եղել, որ Ստեփանոս Սյունեցին, որը հայտնի էր Կոստանդնուպոլսի պատրիարք Գերմանոսի (715-730) հետ վարած մամակազրությանը, ապրում էր VIII դ. սկզբին, Հովհաննես կաթողիկոս Օձնեցու օրոք. ուստի, նա չէր կարող նշված լինել 775 թվականի ներքո։ Անանիա կաթողիկոս Մոկացին (941-965) իր մամակներում Խաչենի ժողովի մասնակիցների թվում հիշատակում է նաև ոմն «հայր Ստեփաննոս, որ կոչէր քերական»³։ Դժվար է կարծել, որ այս Ստեփանոսը որևէ առնչություն ունենար «դրան երէց» Ստեփանոսի հետ, քանի որ նրանց տարանջատում է ժամանակի մեծ հատված։

Մեզ հետաքրքրող տեղեկությունների համար Սամուել ժամանակագիրը, ըստ երևույթին, պարտական է Ստեփանոս Սյունեցու թարգմանական գործերի՝ Նեմեսիոսի, Դիոնիսիոս Արիսպագացու և Կյուրեղ Ալեքսանդրացու երկերի վերջում դրված հիշատակարաններին։ Դրանք հար և մնան են իրար և հայտնում են այն մասին, թե թարգմանությունները կատարված են Կոստանդնուպոլսում «ի ձեռն Դավթի հիպատոսի եւ թագաւորական սեղանոյն կինաստի, եւ ի ձեռն Ստեփանոսի քահանայի եւ քերդողի, աշակերտի տեառն Մովսիսի Սիւնեաց եպիսկոպոսի»։ Տարբերությունը միայն տարբերվի մեջ է։ Վերջինս որոշվում է երեք՝ աշխարհի արարչագործության, ինդիկտիոնի և կայսեր գահակալության տարեթվերով։ Թվային ցուցումները մեկը

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 40-41:

² Անդ, էջ 17:

³ Հ[այր] Գալուստ [Տեր-Մկրտչյան], Անանիա Մոկացի, «Արարատ», 1897, մարտ, էջ 134:

մյուսին չեն համընկնում, և ակներևաբար աղավաղված են¹: Մակայն բանն այդ չէ: Հիշատակարաններից մեկում, որը կից է Նեմեսիոսի աշխատությանը, թվագրությունը տրվում է նաև ըստ Հայոց թվարկության, այն է *միա* = 772 թ.: Սա, անկասկած, ուշ ընդմիջարկություն է և խորթ է հիշատակարանի հեղինակի գրչին: Ընդմիջարկությունը բավական հին է և հասնում է մինչև XII դարը, Սամուելի և Կիրակոսի [Ժամանակը]: Այն արդեն ամկա

¹ Գիտնիստ Արիստակեսը թարգմանության հիշատակարանում, որ մեջբերում է Գ. Ջարր-հանայանը («Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց». Դար Գ-ԺԳ, Վեներտիկ, 1889, էջ 388), որպես տարեթիվ նշվում է.

«Ի վեցհազարերորդի երկերիւորդի քսաներորդի (6220) ամի արարածոց աշխարհիս<,> ըստ յունարէն թուոյ՝ ի չորեքտասաներորդի (14) *ինդիկտինի*, յերկրորդ (2) ամի թագաւորութեան Փիլիպպոսի (711-717)»:
Կյուրեղ [Ալեքսանդրացու] «Պարապմանց գրքի» հիշատակարանում, որը տպագրված է անդ, էջ 519.

«Ի վեցհազարերկիւրերորդի քսաներորդի չորրորդի (6224) ամի արարածոց աշխարհիս, ըստ յունարէն թուոյ՝ ի չորեքտասաներորդի (14) *ենդիկտինի*՝ յերկրորդ (21) ամի թագաւորութեան Անաստասի (713-716)»:
Նեմեսիոսի երկի հիշատակարանում, անդ, էջ 371, ինչպես և հրապարակված բնագրում (103), էջ 162.

«Ի վեցհազարերորդի երկերիւորդի քսաներորդի չորրորդի (6227) ամի արարածոց աշխարհիս,

ըստ յունարէն թուոյ ի չորեքտասաներորդի (14) *ինդիկտինի*.
Իսկ ըստ հայունս ՄԻԱ (772) <,>

առաջին ամի թագաւորութեանն Լեւոնի (717-741)»:

Թվերի անճշտությունը երևում է նրանից, որ 6220-ից մինչև 6227 թվականը, այսինքն՝ 7 տարվա մեջ երեք անգամ ցույց է տրվում ինդիկտինի 14-րդ տարին, որ ակներև անհեթեթություն է. եթե 6220 թ. = ինդիկտինի 14-ը, ապա 6224 թ. = ինդիկտինի 3-րդ տարվան, իսկ 6227 թ. = 6-րդ տարվան: Հ. Տաշյանը («Մանր ուսումնասիրությունք», էջ 14) գտնում է, որ արարչագործության 6227 թ., որը հավասար է Ք.հ. 719 թ., համապատասխանում է ինդիկտինի 14-րդ տարվան: Այս հաշվարկն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ ինդիկտինի տարին որոշելու համար հարկավոր է ոչ թե 719-ը բաժանել 15-ին, ինչպես անում է Հ. Տաշյանը, այլ 719+3, որովհետև մեր թվարկության առաջին տարին համընկնում է ինդիկտինի 3-րդ տարվան: Ուստի 719 թ. = ինդիկտինի 2-րդ տարվան:

Թվերը հնարավոր է ուղղել հետևյալ կերպ: Տարեթվերից ամենավստահելին և ճշգրիտը՝ Լևոն թագավորի առաջին տարին է, 717 թ.: Աշխարհի արարչագործության տարեթվի հետ այն համաձայնեցնելու համար պետք է կարդալ 6225՝ 6227-ի փոխարեն. իսկ ինդիկտինի ճիշտ տարեթիվն էլ կլինի 15-ը՝ և ոչ 14, որն ընդունելի կլիներ միմիայն այն դեպքում, եթե Լևոնի [գահակալությունը] սկսվեր 716 թվականից: Ըստ այսմ հարկ է շտկել և մնացած տարեթվերը. Անաստասի 2-րդ տարվա փոխարեն կարդալ 3-րդ տարի = 716 թ., որ հավասար է ինդիկտինի 14-րդ տարվան և աշխարհի արարչագործության 6224 թ.: Այնուհետև, առաջին հիշատակարանում սրբագրել ինդիկտինի 14-ը, վերածելով այն 10-ի (Դ-ի փոխարեն՝ Դ), ինչը համընկնում է աշխարհի արարչագործության 6220 թ. և Փիլիպպոսի 2-րդ տարվան, այն է՝ 712 թ.:

Այս երեք հիշատակարանների դիտարկումը տեղիք չի տալիս որևէ տարակուսանքի, թե երրորդ հիշատակարանի Հայոց թվականը ընդմիջարկություն է, ներմուծված տգետ դպրի ձեռքով: Մ. Չամչյանի օրինակում (*Պատմություն*, II, էջ 555) այն սրբագրված է՝ *ճկե* = 716: Մ. Բրոսսեի (*Histoire de la Sioumie*, p.83) տեղեկության համաձայն, Կյուրեղի աշխատության Ջուդայի օրինակում ևս նշված է Հայոց թվարկության ՄԻԸ = 779 թ., որ նույնպես պետք է համարել ընդմիջարկություն:

էր Նեմեսիոսի գործի այն օրինակում, որից օգտվել էր Սամուելը. այնտեղից էր վերցված 775 թ., կամ, ինչպես Կիրակոսի մոտ, Հայոց թվարկության 222 թվականը: Ստեփանոսի ժամանակակիցների թվում հիշատակված Դավիթ Հռոմեացին ոչ այլ ոք է, եթե ոչ հիշատակարանի Դավիթ հյուսպատոսը (104): «*Ղրան երէց*» տիտղոսը, որով Ստեփանոսին մեծարում է Սամուելը, ամենայն հավանականությամբ, թելադրված էր այն հանգամանքով, որ Ստեփանոսը համագործակցում էր պալատական և թագավորական սեղանի կենար Դավթի հետ¹: Հիշատակարանի Հայոց թվականի պատճառով մոլորված Սամուելը ստիպված էր բաց թողնել դրա վերջին մասը, որտեղ խոսվում է Ստեփանոսի՝ իբրև Մովսեսի աշակերտի մասին, գտնելով, որ այն չի համապատասխանում այն փաստերին, որ իրեն ծանոթ էին շատ ավելի վաղ ապրած Մովսեսի աշակերտ Ստեփանոսի մասին: Մինչդեռ Կիրակոսն արտագրում է հիշատակարանն ամբողջությամբ, անպատասխան թողնելով երկու Ստեփանոսների նույնության հարցը:

Մեր նկատառումները գալիս են համոզելու, որ 775 թվականի ներքո հիշատակվող «*գրամարտիկոս արհեստից*» կատարելության հասած Ստեփանոսը հենց ինքը՝ Ստեփանոս Մյունեցին է:

Այս հանգամանքը կարող է հաստատման, քանի որ Ստեփանոսի անվան ներքո, ինչպես կտեսնենք, պահպանվել է քերականական երկու աշխատություն, ուստի և ենթադրությունն այն մասին, որ բացի Ստեփանոս Մյունեցուց գոյություն է ունեցել ևս մի համանուն հեղինակ, կարող է որոշ գայթակղություն առաջացնել:

Այսպիսով, մեր ստացած տեղեկությունները հանգեցնում են միայն այն [եզրակացության], որ Դավիթը, Մովսեսն ու Ստեփանոսը քերականական երկեր են գրել: Այս տեղեկությունները պատշաճ հաստատում և լուսարանում են գտնում քերական Հովհաննես Երզնկացու մոտ: Հովհաննեսը՝ երևելի գրական անձնավորություններից է հայ դպրության այն սահմանագծային ժամանակամիջոցում, երբ հայոց անցյալի մասին դարերի ընթացքում ձևավորված պատկերացումը վերջնականապես քարանում է յուրատեսակ դրզմատիկ անասանության մեջ:

¹ Ավելի բնական կլիներ *ղրան երէց* արտահայտությունը հասկանալ պատրիարքարանին առընթեր քահանայի իմաստով, առավել ևս որ, Ստեփանոս Օրբելյանի [Պատմութիւն նահանգին Սիսականի, էջ 96] խոսքով. «*էր սա որդի աւագ երիցու մեծ մայրաքաղաքին Հայոց Դունայ, եւ սնանէր եւ գարգանայր ուսմամբ ի կաթողիկոսարանին Հայոց*»: Յավոք, այս տեղեկությունը որոշ անվստահություն է ներշնչում. այն, հավանաբար, նպատակ ունի մեկնաբանելու մեզ հետաքրքրող *ղրան երէց* տիտղոսը: Եվ առհասարակ Ստեփանոս Օրբելյանի չափազանց ներբողական ոճը՝ Ստեփանոսի կյանքի մասին պատմելիս, չի հաստատվում և ոչ մի նոր՝ մեզ որևէ այլ աղբյուրից հայտնի տվյալներով: Եթե անգամ նկատվում է որևէ նոր բան, ապա [շարադրանքի] միտումնավոր և երբեմն նույնիսկ առասպելական բնույթը վերացնում է դրա արժանահավատությունը:

Մեզ հետաքրքրող բնագավառում Հովհաննեսի աշխատությունը նշանա-
վորում է ավարտվածության հենց այսպիսի պահ: Այն *summarius* [ամփո-
փումն] է այն ամենի, ինչ արվել էր դրանից առաջ քերականական արվես-
տում և աղբյուր է վերջինիս գոյատևման համար նաև հետագա դարերում:
Այս երկասիրության մեջ Հովհաննեսը ոչ միայն հանրագումարի է բերում
փաստական նյութը, այլև հաղորդում բարձրարժեք պատմագրական և մա-
տենագրական տեղեկություններ: Դրանց մասին նա խոսում է իր երկի նա-
խադրության մեջ, որը մենք հարկ ենք համարում մեջբերել ամբողջությամբ
(105):

**ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԲԱՆԻ Ի ՅՈՑՑՄ ՊԱՏՃԱՌԻ ՀԱԲԱԶՄԱՆ
ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԶԵՐԱԿԱՆԻՆ. ԵՒ ԱՂԵՐՄ ԽՆԴՐՈՑ ԱՇԽԱՏԱՏՐԻՍ
ՅՈՂԱՆՆԵՍԻ ԱՌ ՍՊԱՍԱՌՐԴ ԲԱՆԻ**

*Ճշմարտության հաւատոյ բանին ուղիղ դաւանութեան պահողաց եւ
անախտ երկանց ծննդոց՝ դաստիարակ որդւոյ հոգեւորաց, քան զմեղոս եւ
կաթին քաղցրորակ, ճաշակաց, իմաստութեանն ստեամբք սնընդագոր-
ծացոյ. ընդ ձեզ եւ մանկանց ձերոց նորաբոյս եւ ուսումնատենչ համբակաց,
նորոյ Սիոնի սրբոյ գերագոյն գրկաց գգուեալ զաւակաց, ազարակին գան-
ձոյ եւ մարգարտին մեծագնոյ ընդ անցաւոր գոյիս գնողաց, որոց ցանկալի
ճոխութիւն բանի քան սուփերականն ոսկի, եւ քան զակունս լուսանշոյս՝ լոյս
մտաց եւ ճրագ ընթացից շաւղաց իմաստութեան ջահ տեսողաց. ընկալա-
րո՛ւք զաղերս բանի ի շրթանց եւ ապա զընծայս կառկառեալ բազկաց, եթե
հաճոյ թուեսցի ձեզ ըմպել ջուր ի ստոմանէ կաթի ջրոյ կարաւտացելոյ եւ
կերակրիլ ի նկանակէ հացից քաղցի սեղանոյ անկեալ փշրանաց:*

*Հաւանեցուսցէ զձեզ յայս աննախանձութիւն բարուց եւ հեզութիւն հոգւոյ
եւ իմաստութեան քաղցր բաղձանք. մի՛ ներհակաբար վարիք ի վարձ
քրտանց վաստակաւորի եւ մի սիրով տոչորեցելոյ ի գութ ուսումնակցացն
ազգի զանընդունակն գթութեան շնորհիցէք զատելութիւն: Ձի թէպէտ ոչ աղ-
բիւր ջրոյ նոր պատառեցաք եւ ոչ ի կորդ ազարակի սերմանց որայս բարդից
հնձեցաք, այլ միայն զխցեալ ջրհորս հարց մերոց բացաք եւ ի նոցունց
համբարաց ցորենոյ հաց ի կերակուր գործեալ հասուցաք, բայց ոչ առանց
աշխատութեան ուշոյ եւ խստի գատինս խորհրդոց ճմլելոյ:*

*Եւ այս ոչ ինքնաձեռք համարձակութեամբ վստահացեալ ի զարութիւն
եւ կամ զգիտութեան փառս յանձն անփառունակ ձգելով, այլ հնազանդ
հրամայաւղ հարանց եւ եղրարց հարազատաց խնդրոյ եղաք եւ ի յորդորմա-
նէ յարակցաց յայս յաւժարեցաք:*

Ձի ի պատահելն մեր յերբեմն ժամանակի ՉԼ թուին մերոյ գնալ յաստուածային քաղաքն Երուսաղէմ, ի տեսութիւն փրկագործ տնաւրիներեան Քրիստոսի աստուծոյ մերոյ: Եւ եկաք յերկիրն հայոց ի Կիլիկէ, ի թագաւորութեանն Լէոնի բարեպաշտի որ յԱռքինեացն, որդի Հեթմոյ աստուածասիրի, եւ կացաք ժամանակս ինչ առ վերադիտաւղն աթոռոյ սուրբ Լուսաւորչին մերոյ կաթողիկոսն հայոց տէր Յակոբ, հեղինակն հոգւոց եւ հանճարոյ իմաստութեամբ վարժն աստուածաշունչ գրոց, հմուտ եւ գտաւղ բանից իմաստնոց, աննախանձաբար սիրողն եւ պատուաւղն ուսումնասիրաց: Որ եւ հայրն մեր հոգեւոր հրամայեաց մեզ ասել **գրեալեացն դաս իւրոց աշակերտաց**, եւ ախորժելի եւ հաւանական եղել:

Վասն որոյ խնդրեաց ի մէնջ պարգութիւն ամենլ մեկնութեան նորին եւ լնուլ զթերին մնացեալ ի վերլուծական բանից մեկնողացն: Որ եւ աւուրս ինչ մնաց գործն անկատար սակս անպարապ գոլոյ եւ անդորր ի տեղոյ:

Եւ ապա շնորհագարդ ոմն ի վարդապետաց եկեղեցւոյ, Յովհաննէս անուն, հեզհոզի եւ առաքինասէր, կացեալ ժամանակս յորվս ի պաշտաւն սպասաւորութեան եկեղեցւոյ ի դուռն սուրբ Կարապետին որ ի Տարաւն, եւ ըստ շնորհի յաջողելոյն աստուծոյ հասեալ ի վարդապետական աթոռ ասել դաս եւ մեկնել զգիրս աստուածաշունչ աշակերտելոցն եկեղեցւոյ մանկանցն: Եւ իսկ թախանձելի թղթով եւ աղերսական բանի խնդրեաց ի մէնջ զայս իրագործութիւն, իրր յոյժ տեղեակ գոլոյ իւր լուծողական մեկնութեամբ յայտնեցելոցն եւ անյայտ եւ ծածուկ մնացելոցն:

Այլ եւ որ առ մեզ եին ուսումնակիցք եղբարք փափաքելով փութացուցանեին զմեզ յայս: Եւ մեր զի թէպէտ առձեռն էր պատճառն տկարութիւն մարմնոյ եւ անբաւականութիւն բանի, եւ տեղի եւս անպատշաճ ունողի, եւ կեանս ամբոխականս վասն նեղութեանցն, որ յաւուրս մերոյ ժամանակիս, մնայր անգործ յաւժարութիւն խնդրոյն:

Իսկ շնորհ ողորմութեանն աստուծոյ զթացեալ ի մեզ, այն որ տա թեւ աղաւնոյ հոգւոյն արժանաւորաց եւ յարուցանէ զանկեալ բազմամեա անդամալոյժն, արձակեաց եւ զիս ի կապոյ շղթայից երկրաւոր ցնորից: Եւ ետ դուզնաքեա անապատ ի հանգիստ եւ զիւտ աթեւանի եւ հասոյց ի լեռնն հանգստեան սուրբ Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի (106), յանապատսն որ ընդ հովանեաւ նորին, յորում մանկական հասակին էաք վարժեալ յուսումն դպրութեան, յանապատն որ յանուն սուրբ Սինասին:

Անդ սկիզբն արարաք եղբարք ոմանց ասել զգիրս աստուածաշունչս եւ ի յիշումն ածաք զխնդիրս պատկառելի եղբարցն: Եւ յաստուած ապաւինեալ եւ ի շնորհս սուրբ Լուսաւորչին, եւ եկեղեցեաց սուրբ լեռինս, եւ յաղաթս եւ յոյս խնդրողացն, զայս առաջին պտուղ յանապատի կենաց ընծայեցաք սուրբ եկեղեցւոյ մանկանց:

Բայց ցուցից ձեզ եւ զայս, զի մի՛ յաւելորդ եւ յանպէտս թուիցի աշխատութիւնս մեր: Վասնզի մեծապատիւ իշխան Մազիստրոս, որդի Վասակայ մարտիրոսի եւ հայր կաթողիկոսին տեսան Գրիգորիսի, տէր Վահրամ կոչեցելոյ, աշխատել էր ի հաւաքումն մեկնութեան սորա, եւ մինչ առ մերս ժամանակ այնու վարժէին վարդապետքն մեր զաշակերտեալսն իւրեանց:

Ապա զինչ հարկ էր այլոց ի մէնջ զայս խնդրողաց, կամ մեր առ այս ձեռնարկութիւն յաւարելոյ: Եւ ասացից նախ զպակասութիւն առաջնոյն. եւ երկրորդ զմերն յաւելուած բանից, եւ երրորդ սակաւ ինչ պատուէր հանճարասիրացոյ աւանդեցից: Չի հմուտն իմաստութեան Մազիստրոս իշխանն, աշխատեալ ի սմա, եւ երեք մեկնչաց բանս առ միմեանս եղեալ՝ զԴաթի փիլիսոփայի եւ զՄովսէսի քերթողի եւ զմիս իմաստնոյ, որոյ ոչ էր գրեալ անունն, արարեալ եւ ինքն յաւելուած բանից յինքենէ, որոյ տացէ տէր վարժս աշխատանացն, զի ընդ իշխանական հոգարարձութեանն եւ զայս ընձեռեաց մեզ աւժիտս:

Բայց զբանս մեկնողացն ոչ էր խառնեալ ընդ միմեանս եւ ոչ զհարաքանչիւր մեկնութիւն հանդէպ եւ կշիռ բանին եղեալ: Էին եւ այլ մեկնիչք որք ոչ էին հանդիպեալ նմա: Եւ բազումք ի մասանց բանին ոչ ունէին զմեկնութիւն. եւ էր զի կրկին եւ երեքկին էր եղեալ գերից մեկնչացն: Եւ կարգ շարադրութեան, թէ ո՞ր առաջին եւ ո՞ր երկրորդն, ոչ ունէր զյարմարութիւն: Մակս այսորիկ որոց ոչ գոյր լուծումն տարակոյս առնէր մտաց եւ որոց կրկին էր՝ ճանճութիւն ընթերցողին: Եւ նախադասութիւն եւ ստորադասութիւն ոչ ըստ տեղոյ գոյով աշխատանս էր շարաբանութեան:

Իսկ մեր ժամանակաւ տարեալ հոգք ժողովել զմեկնութիւնս քերականին եւ զտաք առանձնակի զամենեցունց արարեալսն եւ եղեալ ի մի զիրք: Չոր ուսումնասէր պարոնն Յոհաննէս, որդի մեծապատիւ եպիսկոպոսին մայրաքաղաքին Եզնկայի, գտեալ ուրեք արիւնակս հին եւ տուեալ փոխել, յորում էր **Դաթի փիլիսոփայի եւ Մովսիսի քերթողի**ն եւ այլ **F** մեկնիչս առանց անուան մեկնողին. էր ի նմա եւ **Բարսղի** մեկնութիւն: Գտայ եւ յանապատն Դերջնա զՀամամայ Արեւելից վարդապետի մեկնութիւնն. այլ եւ ի բառագրոցն Ընստակիսի, յայտոցիկ մեկնողաց գրոց, այլ եւ աստի եւ անտի լուծումն բանից արարեալ մերոց իմաստնոց: Եւ էր գոր **յայլ** իմաստասիրական գրոց զյարմարն եւ զդէպն եւ զնմանն բերեալ եղաք ընդ համազարի բանին եւ յայսցանէ ամենեցունց արարաք զմեկնութիւնս զայս: Եւ էր զի ի գաւրութենէ սոցուն եւ շնորհաց ի մերս ծնանէր պիտանութիւն բանի ի միտս: Եւ զամենայն մեկնողացն բան կշիռ եւ հանդէպ բանին եղաք, զկրկին եւ **զերեքկին** բանիցն երկարութիւն ի միաւորութիւն խառնեցաք. եւ որոց ոչ գոյր լուծումն մասանց բանի, լիով եւ անթերի գտեալ լցաք զթերութիւն: Բազում եւ այլ դրունս բանական արուեստի յայլմէ տեղոյ առ ազգակիցն խառնեալ յաւելաք:

էր զի եւ յարուեստ բանականութեանս անուանց զյուրվս, որ անծանաթ էր մերում ազգի, որոց հասու եղաք, փոքր ի շատէ նշանակելով, ծանաթ մանկանց եկեղեցւոյ արարաք: Եւ այսպէս զմերս դիտաւորութեան ասարտեալ մաւր մեր եկեղեցւոյ սրբոյ ընծայեցաք եւ զմանկունս ուսման ի փոյթ տրին յաւժարամիտ արարաք:

Վասն որոյ պատուիրեն ձեզ եւ յոյժ աղաչանաւք հայցեն, մի՛ անփոյթ ամենք կրթիլ վարժմամբ փոքու այսու գրովք, զի մեծամեծ եւ յուրվս է տուաւդ զաճումն մտաց եւ բազմաց է սա բանալի իմաստութեան դրանց:

Եւ յոյժ սրտաբեկեալ խոցիմ, յորժամ տեսանեն զազգս մեր անփոյթ արարեալ զիմաստասիրական ուսմանց եւ զիմտութենէ արհեստից բանականաց, մինչ զի զհանգամանս անուանց իմաստասիրացն գրոց անտեղեակ զուրվ, զորս յայտնեալ են հարքն մեր ի զիրս իւրեանց, զոր ընթեռնումք, զոր այժմ երկարութիւն համարիմ յիշել զանուանսն եւ կամ զպատճառ հեղձութեան ազգիս:

Այլ միայն զայս պատուիրեն, մի՛ ոք որ անտեղեակն է արհեստի գրչութեան ձեռնարկեսցէ զրել զսա եւ տապալել զերկս աշխատութեան բանասիրացն, այլ ստոյգ եւ ուղիղ գրչաց տացէ փոխել, զի իւր եւ այլոց լիցի պիտանացու:

Եւ մի՛ ոք նեղապատեալ ճանճութեամբ թողցէ զսակաւ բանք նախադրութեան իբրև զաւելորդ, որք փոխէքդ արինակաւ, կամ որք ասէք զայն աշակերտաց իբր յուրվ աշխատութեան զսակաւն ոչ տալով բարեմտութեամբ փոխարէն սիրոյ. եւ այսոքիկ այսքան:

Այսուհետև ի սկիզբն եկեսցուք առաջիկա գրոցս, զոր տէր առաջնորդեսցէ: Ո՛հ զաղբատս ի պատուական զանճէս յիշեա ի տէր:

Հովհաննեսի հաղորդման մեջ կան մեր խնդրի լուծման համար մի քանի արժեքավոր ցուցումներ: Ամենայն հստակությամբ այս ցուցումները հաստատում են Դավթի, Մովսեսի և երրորդ, իր իսկ Հովհաննեսի կողմից Անանուն կոչված մի անհայտ հեղինակի, քերականական աշխատությունների զոյությունը:

Դրանցից է օգտվել Գրիգոր [Մագիստրոսը] իր քերականությունը կազմելիս և օգտվել է այնքան լայնորեն, որ իր գործը ներկայացնում է հիշյալ հեղինակներից քաղվածքների «հավաքումն»՝ տեղ-տեղ իր սեփական հավելումներով հանդերձ: Ապա Հովհաննեսը հավաստիացնում է, որ ինքը ևս իր տրամադրության ներքո ունեցել է Դավթի, Մովսեսի և Անանունի գործերը՝ այն ընդօրինակությամբ, որն իրեն տրամադրել էր ուսյալ այր Հովհաննեսը, ծննդյամբ այն նույն Երզնկա քաղաքից, որից սերում էր նաև մեր հեղինակը: Երեք հեղինակների երկերը ամփոփված էին միևնույն մատյանում, որում

առկա էր նաև Բարսեղի՝ Մագիստրոսին անծանոթ կամ նրա կողմից չօգտագործված հեղինակի մեկնությունը: Հովհաննեսը հայթայթել է նաև Համամի մեկնությունը, որը նույնպես Մագիստրոսի ձեռքի տակ չի եղել: Բացի այդ, նա ներգրավել է նաև Արիստակեսի բառգիրքը, ինչպես և ուրիշ՝ փիլիսոփայական կամ այլ բովանդակության աղբյուրներ և հենվելով այս ամբողջ նյութի վրա, կազմել է իր երկասիրությունը: Հովհաննեսը կանխատեսում է այն հարցը, որ կարող է ծագել ընթերցողի մտքում, և ինքը բացատրում է, թե Մագիստրոսի՝ այդ մեծահամբավ հեղինակի աշխատության առկայության պարագային՝ աշխատություն, որ դպրոցներում որպես ձեռնարկ էր ծառայում, կարիք կա՞ր Հովհաննեսի մի նոր ձեռնարկության:

Ինչպես պարզաբանում է Հովհաննեսը, Մագիստրոսի գործը գերծ չէր որոշ թերություններից: Դրանցից ամենաեականը՝ շարադրանքի անկանոնությունն է: Դա կայանում էր նրանում, որ երեք հեղինակների մեկնությունները նա «*ոչ էր խառնեալ ընդ միմեանս*», այլ դրանք գալիս էին մեկը մյուսի հետևից առանձին-առանձին, ինչի պատճառով մեկնությունն իր գրաված տեղով չէր համապատասխանում մեկնաբանվող բնագրային [հատվածին]:

Այս վկայության իմաստն ըմբռնելու համար պետք է իմանալ, որ հիշված հեղինակների՝ Դավթի, Մովսեսի և Անանուցի երկերը ոչ այլ ինչ էին, եթե ոչ Դիոնիսիոսի բնագրի մեկնություններ: Ընդորում յուրաքանչյուր գլուխ քննվում էր ըստ առանձին մասերի և պարբերությունների: Այսինչ գլուխն, ասենք, մեկնվել էր Դավթի, Մովսեսի և Անանուցի կողմից: Մագիստրոսը բերում է դրանց մեկնություններն այնպես, ինչպես դրանք կան, դասավորելով մեկը մյուսից հետո: Մինչդեռ կարելի էր խմբավորել դրանք ըստ պարբերությունների, այսինքն՝ մեկնությունից առանձնացնել այն, ինչ նրանցից յուրաքանչյուրն ասում է տվյալ պարբերության վերաբերյալ, հավաքել [քաղվածքները] և դնել [համապատասխան] պարբերության ներքո:

Նյութի գատումն ըստ պարբերությունների Հովհաննեսին թվում է ավելի հստակ և նպատակահարմար, քան՝ ըստ գլուխների: Այդպիսի շարադրանքի դեպքում բացառվում են կրկնությունները, որ Մագիստրոսի որդեգրած համակարգի դեպքում անխուսափելի էր: Կարողավ, որևէ խոսքի մասին՝ դիցուք, անվան վերաբերող, Դավթի մեկնությունը, ընթերցողը պատրաստ է անցնելու հաջորդ խոսքի մասին: Մակայն նրան առաջարկում են ևս մի մեկնություն, թեև այլ հեղինակի, բայց նույն առարկային, նույն խոսքի մասին վերաբերող. այնուհետև գալիս է նաև երրորդ մեկնությունը՝ Անանուցի: Ահա այսպիսի կրկնությունների, միևնույն թեմաներին անընդհատ վերադառնալու համար է դժգոհում մեր հեղինակը, այն համարելով ձանձրալի:

Գրիգոր Մագիստրոսի աշխատության թերությունների թվում Հովհաննեսը նշում է դրա մեջ եղած բացթողումները, ինչպես և պակասավոր լինելը՝

այն իմաստով, որ հեղինակը չէր օգտագործել որոշ նյութեր, օրինակ՝ Բարսեղի, Համամի և այլոց մեկնությունները: Հովհաննեսի հավելումներն ու լրացումները, այն ամբողջ ավելցուկը, որը դիտվում է նրա երկում Մազիստրոսի [մեկնության] համեմատ, մենք ուսումնասիրել ենք ըստ իրենց աղբյուրների: Բայց առայժմ գործի այս կողմը չէ, որ մեզ հուզում է: Ներկա աշխատասիրության մեջ մեզ բացառապես հետաքրքրում է այն, ինչ միավորում է Հովհաննեսի և Մազիստրոսի երկերը, այն, ինչ ընդհանուր է դրանց միջև: Մազիստրոսի, մասնավորապես նրա շարադրակարգի նկատմամբ Հովհաննեսի քննական դատողությունները մեզ ընձեռում են բանալի մի քանի կորած երկերի բացահայտման և վերականգնման համար:

Հովհաննեսի քերականական աշխատությունը առանձնանում է որոշ հետաքրքրական հատկանիշներով: Այն գրական խճանկարի հետաքրքիր մի նմուշ է՝ վարպետորեն կարած զանազան աղբյուրներից քաղված կտորներից: Ներածական և ամփոփիչ գլուխները չհաշված, ամբողջ գրքում իրեն՝ հեղինակին է պատկանում մի քանի էջ: Նրա խնդիրն էր՝ մի ամբողջության մեջ շաղկապել տարբեր, շատ հաճախ միմյանց խորթ հատվածները: Հովհաննեսի երկի գլխավոր արժանիքն այն է, որ նա, գերազանց բանասերի հմտությամբ յուրաքանչյուր մեջբերման դիմաց՝ լուսանցքում, նշում է հեղինակի անունը, կամ աղբյուրը, որից այն փոխառված էր: Ըարադրանքի մեծ ռոն նկատելի է նաև Վարդան վարդապետի, հայտնի պատմագրի երկում, նրա՝ Ծննդոց գրքի մեկնության մեջ (107): Այս աշխատությունը դեռևս հրատարակված չէ և մեզ մատչելի եղավ Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների ձեռագիր օրինակներով: Մենք նկատեցինք, որ լուսանցքներում նշված են մեջբերումների աղբյուրները: Վարդանից, հավանաբար, այս հնարը ժառանգել է և Հովհաննեսը, որ ինքն իրեն Վարդանի աշակերտ է համարում¹: Աղբյուրների նշման շնորհիվ Հովհաննեսի գործը պատմագրական մեծ հետաքրքրություն է ձեռք բերում: Գրիգոր Մազիստրոսի քերականության բացակայության պարագայում անգամ, միայն Հովհաննեսի երկի շնորհիվ մենք կկարողանայինք պատկերացում կազմել մեզ չհասած որոշ ստեղծագործությունների մասին: Հարկավոր էր [միայն] դրանից առանձնացնել հատվածներ, որոնք նա վերագրում է այս կամ այն հեղինակին, ի մի բերել և դասավորել Դիոնիսիոսի քերականության [շարադրանքին] համընթաց: Այս դեպքում, [սակայն], տարակուսելի կմնար, թե որքանով այս կերպով վերականգնված՝ այսպես ասած, լաթակտոր բնագիրը ամբողջական է, և արդյոք այն չունի միջանկյալ բաց թողած մասեր:

¹ «Ցաղագս երկնային շարժմանց» գրվածքի հիշատակարանում՝ *Ես նուսատ Յոհանէս Երզնկայեցի, աշակերտ հոգելից հօրն եւ տուրք վարդապետին Վարդանայ, տն՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 512:*
XCII

Մագիստրոսի աշխատությունը փարատում է այս, [անշուշտ] արդարացի կասկածները: Երկու հեղինակների համատեքստերի բաղդատությամբ երևան է գալիս մի հետաքրքիր իրողություն. այն ինչ Հովհաննեսը բերում է ցրված, կցկտուր ձևով՝ երբեմն առանձին արտահայտությամբ կամ մույնիսկ բառով, Մագիստրոսի մոտ ներկայացված է միասնական, ամբողջական հատվածով: Այլ կերպ ասած, Մագիստրոսն ու Հովհաննեսն իրենց տրամադրության ներքո են ունեցել միևնույն աղբյուրները, բայց օգտվել են տարբեր կերպ. Մագիստրոսը փոխառում է ամբողջական հատվածներով, իսկ Հովհաննեսը մույն հատվածները տրոհում է մանր կտորների և զետեղում ցրիվ, միահյուսելով դրանք այլ հեղինակներից քաղած նմանաբնույթ մեջբերումների: Մագիստրոսն իր աղբյուրները չի նշում, իսկ Հովհաննեսը յուրաքանչյուր մեջբերման դիմաց լուսանցքում գրում է հեղինակի անունը: Հովհաննեսի ցուցումները միաժամանակ [կարող են] հիմք ծառայել Մագիստրոսի երկի վերլուծության, մասնատման և դրա կազմից՝ օգտագործած յուրաքանչյուր հեղինակին պատկանող հատվածների առանձնացման համար: Մեր խնդիրն է՝ երկու հեղինակների՝ Մագիստրոսի և Հովհաննեսի շարակարգի բաղդատությամբ վերականգնել նրանց կողմից ներառված ավելի վաղ երկասիրությունները:

Նշված խնդիրը լուծելու համար նախ հարկավոր էր պարզել Հովհաննեսի ցուցումների հավաստիության աստիճանը՝ ցուցումներ, որոնք մեր աշխատանքի ելակետ և հիմք էին կազմում, պարզել, թե որքան մեծ կարող է լինել մեր վստահությունը դրանց հանդեպ: Լուսանցքներում ցրված ցուցումները ստուգելու համար պահանջում էր քննական համակարգ, որը բնավ չէր [կարող] սպասվել գրչագրերի սովորական բաղդատությամբ:

Բանն այն է, որ ոչ միշտ պարզ է բնագրի և լուսանցքում դրան կցվող հեղինակի անվան առնչությունը: Շատ հաճախ դժվար է որոշել տվյալ անվան վերաբերող հատվածի սկիզբն ու վերջը: Հովհաննեսն ազատ է վարվում իր աղբյուրների հետ՝ փոխառելով դրանցից էջեր, արտահայտություններ կամ առանձին բառեր, նա չի առանձնացնում, չի մեկուսացնում դրանք, այլ շարում է կապակցված շարադրանքի ընդհանուր թելի վրա, այլ հեղինակներից համանման փոխառությունների հետ մեկտեղ: Երբեմն ստացվում է այնպիսի խառնուրդ, որ հեղինակը ստիպված է լինում դրա դիմաց դնել մի քանի անուն միասին:

Դրա հետևանքով միշտ չէ, որ հաջողվում է որոշել, թե ինչն ում է պատկանում: Այս գործը վեր է եղել նաև ընդօրինակողների՝ սովորական դպիրների ուժերից. նրանց գրչի ներքո լուսանցքում նշվող անունները վերև-ներքև էին ցատկում՝ երբեմն մի քանի տողով, նախ և առաջ զուտ արտաքին պատճառներով: Որքան որ գրագիրները ցանկանային հնարավորին չափ հարա-

զատ մնալ նախագաղափար ձեռագրին, չէին կարող այնպես համակերպվել, որ պատճեններն այն տող առ տող: Չափսերի տարբերությունն անզամբավական էր, որպեսզի տողերը այլ կերպ բաշխվեին, ուստի և խառնաշփոթ առաջացնեին հեղինակների անունների՝ համապատասխան տողերի դիմաց դասավորության մեջ:

Մեր կողմից կատարված՝ ձեռագրերի բաղադրությունը դժվար թե նպաստեր այս գործին: Թեպետ կարիք էլ չի եղել, մեր աշխատանքի հիմք ծառայած՝ Թորոս [գրչի] օրինակի անկասկած բարձր որակի պատճառով: Այնուամենայնիվ երբեմն մենք ստիպված ենք եղել դիմելու այլ օրինակների ևս: Լինում էին դեպքեր, երբ լուսանցքում չկար ակնկալվող անունը, կամ նկատվում էր, որ անունը համապատասխան տողերից տեղաշարժվել էր վերև կամ ներքև: Պարզ էր, որ լավագույն օրինակը ևս գերծ չէ թերություններից¹: Չեռագրերն անգոր էին վերացնել աշխատանքի ընթացքում ծագող կասկածները: Այսպիսի դեպքերում մեզ փրկում էր միմիայն մեր աշխատանքի հիմնաքարը կազմող մեթոդը:

Հայ հեղինակների քերականական գրվածքներն ըմբռնելու համար նախ և առաջ հարկավոր է Դիոնիսիոսի բնագրի կատարյալ իմացություն: Բոլոր գրվածքները շրջաբերվում են Դիոնիսիոսի *Արվեստի* շուրջ, որը առավելագույնս (par excellence) կոչվում էր քերականություն՝ *քերական* (108): Ուստի մենք ձեռնամուխ եղանք Դիոնիսիոսի ուսումնասիրությանը և ավելորդ չհամարեցինք բազմաթիվ ձեռագրերի ներգրավմամբ վերստին հրատարակել [նրա երկը]²: Գրիգոր [Մագիստրոսն] ու Հովհաննեսն ընթանում են Դիոնիսիոսի հետքերով, ընդորում ամեն անգամ բերում են նրա խոսքերը, և հետո միայն առաջարկելով սեփական մեկնությունը: Նույն կարգին հետևել են նաև այն ավելի վաղ հեղինակները, որոնց երկերից նրանք օգտվել են:

Ուշադիր կարդալով Գրիգոր [Մագիստրոսի] բնագիրը, դժվար չէ նկատել, որ նույն պարբերության ներքո մեծ մասամբ զետեղված են մի քանի մեկնություն, միևնույն հարցին հեղինակը վերադառնում է մի քանի անգամ: Պարզ է, որ նա իր առջև է ունեցել տարբեր հեղինակների երկերը և մեջբերում էր նրանցից յուրաքանչյուրի խոսքերը: Ովքեր են նրանք և ում ինչ էր պատկանում՝ այս հարցերը պարզաբանելու համար դիմում ենք Հովհաննեսին: Վերջինս կամ ամբողջությամբ է արտագրում Գրիգորից տվյալ տեղին, կամ էլ բերում է նույն կշռադատությունը բաժան-բաժան կտորներով,

¹ Դիցուք, Թորոսի գրչագրում, եթե մեր ուշադրությունից չի վրիպել, բաց է թողնված Դավթի անունը 172⁷⁻⁸ բնագրի դիմաց, և Անանունինը՝ 143⁸⁻¹⁷ դիմաց:

² Առաջին հրատարակությունը լույս է տեսել Փարիզում 1830 թ.: [Այն պատրաստվել էր Փարիզի] Ազգային գրադարանում պահպանվող՝ Հովհաննես Երզնկացու [մեկնության] երկու օրինակների հիման վրա [Հ.] Շահան-Չրպետյանի աշխատասիրությամբ՝ *Grammaire de Denis de Thrace, "Mémoire sur les langues dialectes et patois"* [մատենաշարում] (109):

որոնք երբեմն ներմուծվում են այլ աղբյուրներից փոխառված խոսքի մեջ: Մակայն մա լուսանցքում ամենուրեք, յուրաքանչյուր մեջբերման դիմաց նշում է, թե ով է հեղինակը: Այս պարագայում ցուցումներում պատահող անճշտությունները, որոնց մասին ասացինք վերը, բազում դեպքերում այլևս լուրջ խոչընդոտ չեն հարուցում: Եվ իրոք, եթե այն, ինչ ցրիվ է Հովհաննեսի մոտ, ամբողջական տեսքով կա Մագիստրոսի մեկնությունում, ուրեմն ամենևին էլ դժվար չէ Մագիստրոսի բնագրի հիման վրա որոշել, թե որտեղ է տվյալ հեղինակի պատասխանի սկիզբն ու վերջը, եթե անգամ դրա հեղինակի անունը լուսանցքում նշված լինի անճշտորեն՝ իրեն պատկանող տողերից բարձր կամ ցածր: Մի խոսքով, Հովհաննեսի օգնությամբ որոշում ենք հատվածի հեղինակին, իսկ Մագիստրոսի բնագրով՝ դրա ճշգրիտ ծավալը:

Այս ամենը և առհասարակ մեր աշխատանքի ընթացքը ընթերցողի համար ավելի ակնառու կլինեք, եթե մենք Մագիստրոսի աշխատության հետ մեկտեղ հրատարակեինք մաև Հովհաննեսի երկասիրությունը: Մակայն վերջինիս հրատարակումը հարկ եղավ հետաձգել: Թեպետ, Մագիստրոսի քերականության հրատարակումը այնպես է կատարված մեր կողմից, որ առանց այդ էլ գործի էությունը մեր առջև երևան է գալիս ամենայն պարզությամբ:

Մագիստրոսի երկը, որը ներառել էր վաղ հեղինակների մեկնությունները, ինքն իր հերթին ամբողջությամբ ներմուծվել է Հովհաննեսի քերականության կազմի մեջ: Մագիստրոսի առնչությունը ներգրավված հեղինակների հետ, ինչպես և Հովհաննեսի առնչությունը Մագիստրոսի հետ, ցայտուն կերպով երևում է մեր հրատարակության մեջ: Մագիստրոսի համահավաք աշխատությունը տարալուծված է բաղադրամասերի. կողքից, տողի սկզբից, յուրաքանչյուր հատվածից առաջ մենք նշում ենք դրա հեղինակի անունն ըստ Հովհաննեսի տվյալների և սահմանազատում ենք այն փակագծով այդ կողմից¹: Ստացած արդյունքը միանգամայն արդարացնում է Մագիստրոսի աշխատության խորագիրը, որը վկայում է, որ երկը բաղկացած է «այլոց» գործերից՝ հեղինակի հավելումներով: «Այլը»-ը, պարզվեց, Դավիթը, Անանունը, Մովսեսն ու Ստեփանոսն էին: Առանձնացնելով այն, ինչ պատկանում էր նրանցից յուրաքանչյուրին, մենք զետեղեցինք համապատասխան անունների ներքո:

Ստացվեցին քիչ թե շատ ամբողջական գրվածքներ, հատկապես՝ Դավիթին ու Ստեփանոսինը, որոնք համապատասխանում էին Դիոնիսիոսի բազմաթիվ դրվագներին: Գրվածքների ըմբռնումը դյուրացնելու նպատա-

¹ Նույնպիսի փակագծերով՝ երկու կողմից դրված, նշվում են մաև մեր սրբագրումները, եթե, մեր կարծիքով, տվյալ անունը պակասում էր. կլոր փակագծերը ցույց են տալիս, որ անունն ավելորդ է:

կով մենք հարկ համարեցինք յուրաքանչյուր հատվածին նախադրել Դիոնիսիոսի համապատասխան դրվագը կամ պարբերությունը, անջատելով բնագրից հատուկ փակագծով¹: Լուսանցքում նշվում են Մագիստրոսի և Հովհաննեսի երկերի թերթերը ըստ Ա. դ. 875 և Է.գ. 306 ձեռագրերի²: Այս ցուցումները կոչված են լուսարանելու, թե ինչ կապակցությամբ կամ հաջորդականությամբ են ընթանում տվյալ բնագրի մասերը երկու բանաբաղ հեղինակների մոտ: Ինչպես ասվեց, տարբեր հեղինակներից փոխառված հատվածները նրանց մոտ միախառնված են: Լուսանցքում մեր մատնանշած էջերը փաստում են միայն փոխառված հատվածի սկիզբը, անկախ նրանից, թե հատվածը ձեռագրում որքան թերթ է գրավում: Եթե միևնույն էջում բնագիրն ընդհատվում է մի քանի անգամ, ապա ամեն անգամ նշվում է թերթի համարը. իսկ եթե բնագիրը ընթանում է անընդմեջ մի քանի էջում կամ թերթում, ապա բավարարվում ենք միմիայն սկզբի էջի նշմամբ:

Մ և Ե նիշերի կրկնությունների հաճախականությունից ելնելով, կարելի է դատել այն մասին, թե որքան հաճախ է ընդհատվում բնագիրը խորթ տարբերով թե՛ Մագիստրոսի երկում, և թե՛ Հովհաննես Երզնկացու: Նույն դիտարկումը հնարավորություն է ընձեռում ստուգելու Հովհաննեսի դատողությունը Մագիստրոսի գործի, ինչպես և իր՝ դրա հետ առնչվելու մասին:

Նախ՝ որոշ տարակուսանք է առաջացնում Հովհաննեսի խոսքն այն մասին, թե Մագիստրոսն օգտվել էր երեք մեկնիչների՝ Դավթի, Մովսեսի և Անանունի երկերից: Մինչդեռ Մագիստրոսի աշխատության վերլուծությունը ցույց է տալիս, որ նա օգտվել էր նաև Ստեփանոսից: Իհարկե, Ստեփանոսի անվան բացթողումը կարելի է վերագրել գրչագրի խաթարվածությանը³, բայց թվում է, թե սա սովորական գրչի սայթաքում (lapsus) է, որ թույլ է տվել հեղինակն ինքը:

Հովհաննեսի հավաստմամբ, «գրանս մեկնողացն ոչ էր խառնեալ ընդ միմեանս»⁴: Այս դրույթն ընդհանուր առմամբ արդարացված է. իսկապես, բացի երկու առաջին գլուխներից, որտեղ Մագիստրոսը փորձում է միախառնել իր աղբյուրների տվյալները, բոլոր մնացած մասերում նա աշխատում է հետևել Հովհաննեսի նշած համակարգին: Դա կարելի է դիտել և մեր հրատարակած բնագրում: Երրորդ գլխից սկսած, Մագիստրոսը բերում է հիշված հեղինակների հատվածներն առանձին-առանձին. այսպես, օրինակ՝

¹ Այնտեղ, ուր փակագիծ չկա՝ Դիոնիսիոսի խոսքերը մեջբերել է ինքը՝ մեկնության հեղինակը:

² Մ տառանիշին կից թվերը նշում են ձեռագրի էջերը, իսկ Ե տառանիշից հետո՝ թերթերն ըստ մեր էջակալման:

³ Փոխանակ երեք (F) մեկնչաց, աստ, էջ LXXXVII, կարելի է կարդալ H մեկնչաց, և վարը, զՄովսեսի-ց հետո ավելացնել <ու զՍտեփանի>:

⁴ Աստ, էջ LXXXVIII:

- 3-րդ գլխում հերթով գալիս են՝ Մովսես, Դավիթ, Անանուն, Ստեփանոս,
- 4-րդ գլխում՝ Ստեփանոս, Մովսես, Անանուն, Դավիթ,
- 5-րդ գլխում՝ Դավիթ, Անանուն, Մովսես,
- 6-րդ գլխում՝ Դավիթ, Անանուն, Ստեփանոս, Մովսես և այլն:

Մագիստրոսի և Հովհաննեսի շարադրանքի տարբերությունը ցայտուն կերպով երևան է գալիս 13-րդ՝ «Յաղագս անվան» գլխում¹: Մագիստրոսը բերում է Դավթի մեկնությունը (որից հետո գալիս է իր իսկ Մագիստրոսի հավելումը), այնուհետև նույն թեմային վերաբերող Անանունի, ապա Ստեփանոսի և, վերջապես, Մովսեսի մեկնությունը: Մինչդեռ Հովհաննեսը չորս հեղինակների մեկնությունները միահյուսել է, որի հետևանքով Դավթի միահետ բնագիրը նա մասնատել է մոտ երեք տասնյակ կտորների: Դիոնիսիոսը տարբերակում է անունների առնվազն 23 տեսակ: Մագիստրոսը գետեղում է բոլոր 23 հատվածների մեկնությունները նախ ըստ Դավթի, ապա՝ ըստ Անանունի և այլն: Իսկ Հովհաննեսը յուրաքանչյուրից վերցնում է այն, ինչ ասվում է անվան ամեն մի տեսակի վերաբերյալ և բոլորը գետեղում է միասին: Այսպես, օրինակ, Դավթի՝ *փաղանուն* (հոմանիշ) [հատվածին] վերաբերող խոսքերից հետո (էջ 109¹⁶⁻¹⁹) Հովհաննեսն անմիջապես բերում է Անանունի մեկնությունը նույն բանի վերաբերյալ (էջ 144²²⁻²⁴), ապա Ստեփանոսի խոսքերը (էջ 209¹⁴⁻¹⁸): Եվ միայն հետո Հովհաննեսը անցնում է անվան հաջորդ՝ *բերանուն* տեսակին, և հերթով բերում է նույն հեղինակների մեկնությունները, սկսելով Դավթից (էջ 109²⁰⁻²¹):

Աշխատելով այս եղանակով, Հովհաննեսը, բնականաբար, երբեմն փոխատեղում է արտահայտությունները, կամ շարադրում սեփական խոսքերով, կամ բաց է թողնում առաջացած ավելորդ կրկնությունները՝ շարադրանքն ավելի կուռ և հավաք դարձնելու նպատակով: «Յաղագս անունան» դրվագի վերջում նա գետեղել է մի դիտողություն, որը պարզաբանում է նրա վերաբերմունքը Մագիստրոսի բնագրի նկատմամբ. «*Որք հմուտ եւ տեղեակ իսկ էք առաջնոյ արիւնակիւն, որ յաղագս անունան ճառի եւ այժմ տեսանէք միայար եւ ըստ կարգի, զորս երեք եւ չորք կրկին էր եղեալ, կարծեմ եւ յուսամ, թէ դիրութեամբ եւ հեշտարար յընթեռնուլն եւ յազտիլն յիշէք զսակաւ աշխատանս մեր»*² (110): Հեղինակի դիտողությունը միանգամայն արդարացվում է փաստացի դրությամբ:

Չանագան մեկնությունները միասնական գրվածքի վերածելու Հովհաննեսի ծրագիրը դյուրին չէր: Սակայն հակառակ աշխատանքը, այն է՝ այս գրվածքը սկզբնական բաղադրամասերի տարրալուծելը, շատ ավելի դժվար է:

¹ էջ 238-245:

² Տե՛ս վերը, էջ XXXIII:

Բնագրերի հրատարակությանը ուղեկցող ծանոթագրությունների մեջ մենք վերլուծում ենք վիճահարույց դեպքերն ու տեղիները, և ըստ կարելիվոյն տալիս ենք դրանց բացատրությունները: Դեպքերի մի մասը իրենց ծագման առումով բավականին պարզ են, ուստի և կարիք չկա դրանց անդրադառնալու: Դրանք ավելի շուտ աղավաղված տեղիներ են և վեճի առարկա չեն: Այդպես են բոլոր այն դեպքերը, երբ Հովհաննեսի հատվածները Մագիստրոսի համեմատ [այս կամ այն հեղինակին] սխալ են վերագրվում: Դրանցից զլխավորներն են.

Էջ 83¹⁶⁻¹⁹, 85²⁻⁴, 85⁹⁻¹⁴. առաջին երկու հատվածները սխալմամբ նշված են *Այլ Այլուստ*, իսկ հաջորդը վերագրված է Ստեփանոսին:

94¹²⁻¹⁷, որտեղ բաց է թողնված Դավթի անունը՝ դեպքը հատկանշական է. *գրնութեամբ երկարսն—սղիցն* բառերը E, այսինքն՝ Հովհաննեսի բնագրում հետևում են Անանունի խոսքերին առանց հեղինակի մատնանշման: Բայց որ դրանք պատկանում են ոչ թե Անանունին, այլ Դավթին, երևում է ոչ միայն Մագիստրոսի մեկնությունից, այլև այն հանգամանքից, որ վերջին արտահայտությունը՝ *որք ի ձգելն—սղիցն*, Հովհաննեսը բերում է կրկին անգամ, և հաջորդող խոսքերի հետ միասին վերագրում է Դավթին:

95³⁻⁴, *նոյնպէս--աւրիճակիդ* ներմուծված է Համամի խոսքի մեջ, [իսկ] ծանոթագրություններում նշված չէ:

95¹⁰⁻¹¹, արտահայտությունը կցված է Անանունի խոսքերին, թեև պատկանում է Դավթին:

96²¹, վանկի մասին գրվածքին անմիջապես հարում են նույն առարկային վերաբերող խոսքեր, էջ 135²⁻⁷, որոնք պետք է վերագրել Անանունին, թեև Հովհաննեսի մոտ նրա անունը նշված չէ:

101¹⁴⁻²⁰, բաց է թողնված Դավթի անունը. այս մասը և հաջորդը՝ մինչև էջ 102² Մագիստրոսի երկում գետեղված է նախորդ, ԺԱ զլխում:

110¹⁻⁴, բերված է *Այլ* անվան ներքո:

112¹⁻², *զի երկոքունք հարկաւոր է վարել անուան* Հովհաննեսի գրվածքում գտնվում է Ստեփանոսի խոսքերի մեջ: Հաջորդ արտահայտությունը՝ *վասն զի--էին* Մագիստրոսը կապում է *հաստատադրութիւնք*-ի հետ, սակայն հնարավոր է, որ այն հաջորդ զլխի ներածականն է:

- 130⁵⁻⁷, սխալմամբ վերագրված են Մովսեսին:
- 135²⁻⁷, բաց է թողնված Անանունի անունը և այն կարող էր սխալմամբ ընկալվել իբրև Դավթի մեկնության շարունակություն:
- 168²⁻⁵, հաջորդում է Անանունի, էջ 136²¹ խոսքերին, սակայն պատկանում են ոչ թե նրան, այլ ուրիշ հեղինակի՝ հավանաբար, Մովսեսին:

Նույն բնույթի են նաև էջ 147², 147²³⁻²⁴, 149⁵⁻⁶, 150¹⁷⁻¹⁵¹², 187⁵⁻⁷, 191¹⁴⁻²³, 211²³⁻²⁵ և այլ տեղիների խաթարումները:

Բայց կան իսկապես վիճահարույց, ավելի իրազնիմ լուսաբանման կարող դեպքեր: Թե ինչպիսիք են այդ դժվարությունները և ինչպես են հաղթահարվում, կերևա հետևյալ օրինակից: Խոսքն այն մասին է, թե ինչ է նշանակում **ողորբություն** ու **կատակերգություն**: Բերում ենք Մագիստրոսի բնագիրն ամբողջությամբ.

a. Իսկ օղորբութիւնն նոխազերգութիւնն սսի ըստ յունականինն առ ի պաշտանն առեալ Դիոնիսեա ումենն տուողի որթոյ, որ է պատմութիւնն յայտնի:

b. Եւ է օղորբութիւնն ոչ աշխարհական քան թէ արարուած քերդողաց զբաջացն գործեցեալ իրս եւ գարութիւնս պատմել ահաւորապէս եւ չքնաղ հանգոյն ըստ գործեցելոցն գերազանցութեամբ ամենայնի զհիցազնարար եւ ոչ կաղս ի կաղս ինչ եւ քամահելիս:

c. Իսկ զկատակերգութիւնն, որ եւ արարուածք քերթողացն ըստ իրումն պատշաճի:

a₁. Քանզի զօղորբութիւնն սակս այնորիկ ասենն նոխազերգութիւնն, զի զօղորբութիւնս իրենանց ի սկսանելն եւ ի կատարելն նոխազաւք մեծարեալ լինէին, որք նուիրէին ճամնեալք Դիոնիսի գտողի որթոյ:

b₁. Եւ զօղորբութիւնն զհիցազնարար, քանզի արարուած քերթողացն է:

a₂. Նա և մխիթարական, զորս ի վերայ մեռելոց եւ կամ այլ ինչ թշուառութիւն կրելոց առնեն:

b₂. Իսկ զհիցազնարար՝ զյորդորականն ասէ եւ զբաջալերականն եւ զներբողականն ի կենացս վաղճանելոցն:

c₁c₂. Իսկ ասելն եթն զկատակերգութիւնն աշխարհաւրէն. կատակերգութիւնն արարուած է քերդողաց, յանդիմանութիւնն վատ կենցաղավարելոց եւ անարի ծուլիցն եւ ընչասիրացն, որ ունի խրատս եւ յանդիմանութիւնս

*պիտանացու յաշխարհա<կա>ն ի(ւ)րս: Եւ ի վերայ այսպիսեացն զեպե-
րականն եւ զհեզնականն առնել ճառս եւ սօխչս որպէս ռամիկքն սովորաբար
ստեղծանեն առ այնոսիկ. խոյնպիսեաւ վարեսցիս եւ դու յընթեռնուլն
զայնոսիկ:*

Կողքից a b c տառերով նշված առաջին հատվածը վերաբերում է «*ող-
բերգութիւն*», «*դիցազնաբար*» և «*կատակերգութիւն*» բառերի մեկնությանը:

Երկրորդը՝ a_1b_1 տառերով, արծարծում է միմիայն առաջին երկու բա-
ռերը:

Երրորդ՝ a_2b_2 հատվածը նույնպես վերաբերում է այս երկու բառերին:

Եվ, վերջապես, վերջին հատվածում քննվում է «*կատակերգութիւն*» բա-
ռը, ընդ որում հնարավոր չէ չնկատել, որ այստեղ ևս կա կրկնակի մեկնու-
թյուն:

Պարզ է, որ այստեղ բերվում են երեք հեղինակներին պատկանող խոս-
քեր: Առաջինին պատկանում են abc -ն, երկրորդին՝ a_1b_1 , երրորդին՝ a_2b_2 , իսկ
վերջին հատվածը ներառում է երկու հեղինակների մեկնությունները՝ c_1c_2 :
Ովքեր են այս հեղինակները՝ հարցին պատասխանում է Հովհաննեսը: Իմա-
նալով Հովհաննեսի աշխատանքային հնարները, կարելի է, նույնիսկ չնայե-
լով բնագրին, ասել, որ նա այս ամբողջ նյութը շարադրելու է հետևյալ հեր-
թականությամբ. ab a_1b_1 a_2b_2 , և հետո նոր՝ c_1c_2 : Եվ իրոք, Հովհաննեսի բնա-
գիրը համոզում է մեզ, [որ դա այդպես է], և դա երևում է հետևյալից՝

a. Ձի գողերգութիւն ի հայումս նոխազերգութիւն ասի ԴԱԻԹ
*ըստ յունականին առ ի պաշտաւն առնելոյ Դիոնեսեսա ումեմն
գտողի որթոյ, որ է պատմութիւն յայտնի:*

*a₁. Եւ գողերգութիւն սակս այնորիկ ասեն նոխազերգու-
թիւն, զի յողբերգութիւնս իւրեանց ի սկսանելն եւ ի կատարելն
նոխազաւք մեծարեալ լենեին, որք նուիրեն
ձաւնեալք Դիոնիսեսա:* ԱՆԱՆ.

*b. Եւ դիցազնաբար ասէ. զի է ողբերգութիւն ոչ աշխար-
հական ձայն զոնեկաց քան թէ արարուած քերթողացն վեհա-
կանաց, զքաջացն գործեալ իրս եւ զարութիւնս պատմել
ահաւորապէս եւ չքնաղ հանգոյնս գործեցելոցն զերազանցու-
թեամբ ամենայնի դիցազնաբար եւ ոչ կադս ի կադս ինչ եւ
քամահելիս:* ԴԱԻԹԻ

*b₁. Ձի քերթողացն է արարուած եւ զի դիցազանց իմն
եղելոց իրք են եւ պիտանացու:*

ա₂. **Նաև մխիթարական, զորս ի վերայ մեռելոցն եւ կամ այլ ինչ թշուառութիւն կրելոցն առնեն:** ՄՍԵՓ.

բ₂. **Իսկ դիւցազմաբար՝ գորդորականն ասէ եւ գրաջարականն եւ զներբողականն ի կենցաղս վաղճանելոցն:**

Եւ շ. **Իսկ ասելն զկատակերգութիւն աշխարհաւրէն. կատակերգութիւն արարուածք է քերթողացն, որ եւ պիտանացու իսկ է [եւ րաժանի երկակի, ռմանց յանդիմանութիւն վատ կենցաղավարութեան եւ ռմանց յաւժարութիւն ի րարի կենցաղավարութեան], որ ունի խրատս րազումս պէսպէս դիմար: Կարգեալ յարիմակ եւ ի խրատ վայելչական պիտոյիցն:** ԴԱԽԹԻ ԵՒ ԱՆԱՆ.

Վատ կենցաղավարելոցն եւ անարի եւ ծուլիցն եւ ընչասիրացն եւ ի վերայ մոյնպիսեացն զեպերականն եւ զհեզմականն առնել ճառս եւ սոխչս, որպէս ռամիկքն սովորաբար ստեղծանեն առ այնոսիկ: Սոյնպիսեաւ վարեսցիս եւ դու յընթեռնույն: ՄՍԵՓ.

Այստեղից երևում է, որ մեջբերված հատվածներն իրոք պատկանում են տարբեր հեղինակների՝ Դավթին, Անանունին և Ստեփանոսին: Մեր կռահումը շարադրակարգի վերաբերյալ արդարանում է միայն Դավթի և Անանունի նկատմամբ: Ստեփանոսի ա₂բ₂ խոսքերը շղթայի մեջ չեն տեղադրված, այսինքն՝ ա₂ չի հետևում ա₁-ին, իսկ բ₂-ը՝ բ₁-ին, ինչպես սպասելի էր, այլ հարում են Անանունին այնպես, ինչպես Մագիստրոսի գրվածքում: Թերևս այս դեպքը պետք է բացատրել այն հանգամանքով, որ Մագիստրոսի մոտ նույնպես դրանք ինքնուրույն քերականական կշռադատություն չեն, այլ կապված են Անանունի նախորդ խոսքերի հետ, ուստի և Հովհաննեսը անկարելի համարեց խզել այս կապը:

Ինչ վերաբերում է կատակերգության մեկնությանը, այսինքն՝ Եւ շ. Եւ շ. հատվածներին, ապա Հովհաննեսը, հավատարիմ մնալով իր որդեգրած համակարգին, զետեղել է դրանք միասին: Դժվար է տարրալուծել և մատնանշել, թե ում ինչ է պատկանում, գլխավորապես այն պատճառով, որ Հովհաննեսի և Մագիստրոսի շարակարգերը փոքր-ինչ միմյանցից տարբերվում են:

Ըստ Մագիստրոսի, Դավթին է պատկանում Եւ շ. արտահայտությունը, այն է՝ *իսկ զկատակերգութիւն <աշխարհաւրէն>, որ են արարուածք քերթողացն ըստ իւրում պատշաճի*. իսկ Եւ շ. դրվագներից Եւ շ. պետք է վերագրել առաջին մասը, այսինքն՝ մինչև *ընչասիրաց յաշխարհական իրս*, իսկ մնացածը

կկազմի Ե-ը: Մինչդեռ Հովհաննեսի մեկնությունում Դավթի Ե-ն միաձուլվել է Անանունի առաջին արտահայտության հետ, ուստի և նրանց անունները լուսանցքում նշված են միասին: Հովհաննեսը կարդում է ինչ-ինչ բառեր, որ պակասում են Մազիստրոսի մոտ. արդյո՞ք դրանք պետք է համարել հեղինակային հավելում, թե դրանք իրոք եղել են Հովհաննեսի օգտագործած [Մազիստրոսի երկի] օրինակում: Վերջին դեպքում ավելորդ արտահայտությունը՝ *ես բաժանի երկակի*, մինչև *բարի կենցաղավարութեան* ավելի ճիշտ կլիներ վերագրել Դավթին: Դրան հաջորդող և իմաստով համազոր արտահայտությունը՝ *որ ունի*, մինչև *պիտոյիցն*, որը Մազիստրոսը տեղադրում է *որ ունի խրատս* մինչև *իրս* [հատվածի] համատեքստում, պատկանում է այլ հեղինակի, այն է՝ Անանունին (111): Իսկ այն, ինչ հետևում է սրան, Հովհաննեսի ցուցման համաձայն, փոխանված է Ստեփանոսից: Այսպիսի նկատառումներով ենք մենք ղեկավարվել վիճահարույց կետերը քննելիս:

Դավթի գրվածքը շեշտի մասին Մազիստրոսի մոտ ավարտվում է՝ *ոչ է միջոց, նախադասելով սորա գոլորակն, քանզի մարդկային բարբառոյ է արտահայտությամբ*: Այնուհետև գալիս են Անանունի խոսքերը նույն առարկայի վերաբերյալ՝ *իսկ ասելն – գպարոյկն*, 129¹⁸⁻²², և անմիջապես հետո՝ *ես դարձեալ տարակուսելի է թե ընդէր արդեք գոլորակն կիտին նախադասեաց. ասենք, վասն զի հարկաւոր է յասացուածին նախ գոլորակին ունել զկարգ եւ ապա կիտին, որպէս աւղասլից երամոցն*, 122²³-130³. այս խոսքերը Հովհաննեսը վերագրում է Դավթին:

Ապա Մազիստրոսն անցնում է տրոհության նշաններին և բերում է զանազան հեղինակների խոսքերը. դրանց վերջում, Անանունի՝ ստորակետի մասին խոսքերից հետո, *տրամախոհութիւնն* (130²¹) բառին հարելով, կրկին հայտնվում է *քանզի հարկաւոր է յասացուածին նախ գոլորակին ունել զկարգ եւ ապա կիտին* (91¹³) արտահայտությունը, և դրան հաջորդող տրոհության նշանների մասին դրվագը, որը վերագրվում է Դավթին:

Այս խոսքերը սերտորեն կապված են վերոհիշյալ և Անանունից մեջբերված խոսքերով ընդհատված արտահայտության հետ. *ոչ է – բարբառոյ է*: Խոսքն այն մասին է, թե ինչու Արվեստավորը, այսինքն՝ Դիոնիսիոսը, նախ ճառում է շեշտի, և ապա միայն՝ տրոհության նշանների մասին: Դավթի կարծիքով, դրա համար կա երկու նկատառում. նախ և առաջ, շեշտը՝ մարդկային խոսքի սեփականությունն է, և ապա՝ շեշտը խոսքի մեջ իսկ նախորդում է տրոհության նշաններին: Իսկ *ես դարձեալ տարակուսելի է – երամոցն* մեջբերումը այս մտքի կրկնությունն է, ուստի և, Հովհաննեսի ցուցման հակառակ, չի կարող, պատկանել նույն Դավթին, այլ, հավանաբար, պետք է վերագրվի Անանունին: Թերևս այս արտահայտությամբ Անանունը, Դավ-

քի նման, ավարտում էր շեշտի մասին իր ճառը, կամ սկսում էր հաջորդ՝ [տրոհությամբ] նշանների մասին գլուխը: Անանունը շատ բանով կախված է Դավթից, այս խոսքերը նա փոխառել է Դավթից, և Հովհաննեսը հիմք ուներ դիտել դրանք իբրև Դավթի սեփականություն:

Մագիստրոսի տրամադրության ներքո եղած Դավթի մեկնության օրինակը, հավանաբար, գլուխների ցանկ չի ունեցել: Այս պատճառով Մագիստրոսն երբեմն չէր կարող որոշել, թե ինչին է վերաբերում տվյալ արտահայտությունը՝ արդյոք այն ամփոփում է գլուխը, թե սկսում է նորը: Օրինակ՝ *այսպես ղենելով երկայնս եւ սուղս* (98₁₀) խոսքերը ավարտում են երկար վանկի մասին գրվածքը Մագիստրոսի ձեռագրի էջ 68-ում, և կրկին հայտնվում են էջ 71-ում, կարճ վանկի մասին գլխի սկզբում, էջ 98₁₃:

Կարճ վանկի մասին գլխում Մագիստրոսը նախ դնում է ընդհանուր վանկերին վերաբերող Դավթի մեկնությունը, սակայն անսպասելիորեն ընդհատում է այն *այսպիսի բառից հետո* (99₃), տեղ տալով կարճ վանկի մասին Անանունի գրվածքին (136₁₁₋₂₁): Դրան հաջորդում է հասարակ վանկերին վերաբերող մի նոր գլուխ, *իսկ հասարակութիւն* (168₇₋₁₉), որը Հովհաննեսը բերում է դարձյալ Դավթի անունով: Այս սկսվում է նոր գլուխ՝ «*Յաղագս հասարակ շաղաշարաց*», որում առաջին տեղը գրավում է առարկային վերաբերող Անանունի մեկնությունը (137₂₋₁₃), իսկ դրանից հետո ներմուծվում է Դավթի «*Յաղագս հասարակ շաղաշարաց*» այն գրվածքը, որի մի մասը մինչև *այսպիսի բառը* զետեղված էր նախորդ գլխում, ընդորում այս մասը կրկին ներկայացվում է և շարունակվում մինչև 98₁₉₋₁₀₀₁₈ հատվածի վերջը:

Անկանոն շարադրանքը և մեկնիչների խոսքերի ամփոփյթ ավանդումը՝ այն, ինչում Հովհաննեսը մեղադրում է Մագիստրոսին, այնուամենայնիվ, անակնկալ հետաքրքրություն է ներկայացնում այն առումով, որ դյուրացնում է զանազան հեղինակներից փոխառված մասերի բաշխումն ըստ իրենց պատկանելության:

Հովհաննեսը Դավթին է վերագրում միևնույն՝ «*Յաղագս հասարակ շաղաշարաց*» թեմայով երկու գրվածք: Դրանցից մեկը, այն է՝ *իսկ հասարակութիւն*, 168₇₋₁₉, ըստ երևույթին, պատկանում է այլ հեղինակի, ոճից դատելով՝ Մովսեսին: Նույն հատվածը գտնվում է նաև MS երկում, Ստեփանոսի՝ Մովսեսի քերականության մեկնությունում, հանգամանք, որը պետք է նպաստի մեր կռահման այն մասին, որ այս հատվածը հենց Մովսեսին է պատկանում: Սակայն և այստեղ այն անսպասելիորեն նշվում է Դավթի անունով: Դա տարօրինակ է առավել ևս այն պատճառով, որ MS ամենուրեք նախ ունի Մովսեսի խոսքերը, և ապա՝ Ստեփանոսի համապատասխան

մեկնությունները. այլ հեղինակների մասին խոսք անգամ չկա¹: Թե ինչպես պետք է բացատրել հեղինակի անստույգ նշումը՝ դա առանձին հարց է. համեմայնողեպս, նշումը սխալ է: Ոչ միայն Մազիստրոսը, այլև Հովհաննեսը քաջ ծանոթ են MS-ին: Թերևս, Հովհաննեսը MS-ի ազդեցությանն է պարտական, որ անճիշտ կերպով Դավթին է վերագրում այն, ինչ նրան չի պատկանում: Սակայն չի բացատրվում և Հովհաննեսի հակադարձ ազդեցության հնարավորությունը MS-ի վրա, թեև դա նվազ հավանական է:

«Յաղագս բանի»-ին վերաբերող Դավթի մեկնության երկու հատված, այն է՝ սկիզբը՝ *բայց մասն – միով* (102₁₁₋₁₅) և վերջը, սկսած *գալուէն*, մինչև *ի տերես*, 102₂₁₋₂₄, մասամբ բառով կապակցված, առկա են նաև MS երկուսում: Այս պատճառով մեկնության նշված մասը դառնում է վիճարկելի՝ այն կարող է պատկանել ինչպես Դավթին, նույնպես և Մովսեսին:

15, 16, 18 և 19-րդ գլուխների մեկնություններն ունեն մի ընդհանուր առանձնահատկություն: Դրանց մեկնությունների բնագրերը Մազիստրոսի մոտ ակնհայտորեն բաժանված են երկու կեսի: Ըստ Մազիստրոսի որդեգրած շարադրակարգի, առաջին մասը պետք է վերագրել Դավթին, իսկ երկրորդը՝ Անանունին և Մովսեսին: Քանի որ Հովհաննեսը առանձնացնում է երկրորդ մասի ավարտը և դնում այն Մովսեսի անվան ներքո, ապա, թվում է, որ դրանով լուծվում է և երկրորդ մասի՝ Անանունին վերագրելու խնդիրը: Այստեղ, սակայն, հանդիպում ենք որոշ խոչընդոտների: Բայց դա նույնպես խնդիր չէ: Դավթի և Անանունի խոսքերը Հովհաննեսը բերում է այնպիսի համակցությամբ, որ առանց Մազիստրոսի դժվար կլիներ հասկանալ, թե ում ինչ է պատկանում: Բնագրի երկրորդ կեսն, այն, որ մենք հատկացրինք Անանունին և Դավթին, ամբողջապես գտնվում է MS-ի կազմում: Դա նշանակում է, որ այն կամ ամբողջությամբ է պատկանում Մովսեսին, կամ Մովսեսը համապատասխան մասը փոխառել է Անանունից:

Բոլոր չորս գլուխներում էլ դրությունը նույնն է: Այս անորոշությունը մեր հրատարակության մեջ արտահայտված է այնպես, որ կասկածելի մասը, որի պատկանելությունը Անանունին կամ Մովսեսին վիճահարույց է, Մովսեսի բնագրում վերցված է փակագծերի մեջ:

ԻՔ՝ «Յաղագս առգանութեան» գլխի՝ Մազիստրոսի մեկնությունը պակասավոր է և խաթարված: Մեկնության՝ պարույկաձև շեշտին վերաբերող մասը, 123₁₉-124₅, Մազիստրոսի առկա գրչագրերում հայտնվել է հաջորդ 23-

¹ Գ. Զարրիանյան, *Հայկական հին դպրության պատմություն*, էջ 387, ասում է, որ *Մովսեսի քերթողի յաղագս դպրութեանց* երկը, մեր MS-ը, բանաբաղ է, կազմված զանազան հեղինակների գործերից, ընդ որում տալիս է ոչ միայն Մովսեսի և Ստեփանոսի, այլև Դավթի, Մազիստրոսի, Համամի, Արիստակեսի, Գևորգի և այլոց անունները: Մա թյուրիմացություն է կամ անախորժ սայթաքում. այդպիսի կազմություն ունի Հովհաննես Երզնկացու բերականությունը, և ոչ թե նշված MS գրվածքը:

րո՞ղ «Ցաղագս ուսից» գլխի վերջում: Նույն աղավաղված վիճակում այս բնագիրը գտնում ենք նաև Հովհաննեսի մոտ. ակնհայտ է, որ Մազիստրոսի աշխատության աղճատումը տեղի է ունեցել Հովհաննեսից առաջ: Մի՞թե տարօրինակ չէ, որ Հովհաննեսը, իր իսկ վկայությամբ ձեռքի տակ ունենալով Դավթի բուն աշխատությունը, բայց է թողել բնագիրը սկզբնազրով ստուգելու և սրբագրելու հնարավորությունը:

Մենք քննեցինք ամենախճճված դեպքերը, որոնց հանդիպեցինք մեզ հետաքրքրող բնագրերի վերականգնման ժամանակ: Կան և այլ բնույթի անհարթություններ, որոնք երևան են գալիս Մազիստրոսի և Հովհաննեսի շարակարգերը բաղդատելու ժամանակ. դրանք շեղումներ և տարաբանություններ են, թեև անկարևոր, բայց կարևոր բացատրության:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ Հովհաննեսն իր բոլոր գործողությունները կատարում է միմիայն Մազիստրոսի բնագրի հիման վրա. նա հավատարիմ է մնում Մազիստրոսի աշխատությանը այն մասերում, որոնք ամբողջում են Դավթին, Անանունին, Մովսեսին և Ստեփանոսին: Մազիստրոսի չմեկնած գլուխներն ու պարբերությունները զուրկ են մեկնություններից նաև Հովհաննեսի գործում: Երբեմն հանդիպում են առանձին արտահայտություններ, բառեր, նույնիսկ պարբերություններ, որոնք բացակայում են Մազիստրոսի մեկնությունում, սակայն դրանք չունեն և ոչ մի յուրահատկություն, որը թույլ տար կարծել, որ դրանք՝ իրեն իսկ Հովհաննեսին պատկանող հավելումներ են: Այն դեպքերում, երբ մտան հավելումներ, անկասկած, Հովհաննեսի ընդմիջարկություններն են, դրանք մենք գետեղում ենք ներքևում, ծանոթագրությունների մեջ: Բայց լինում են վիճելի դեպքեր, երբ չի կարելի վստահաբար ասել, թե տվյալ արտահայտությունն արդյոք պատկանում է Հովհաննեսին, թե արդեն առկա էր Մազիստրոսի երկի այն օրինակում, որից օգտվում էր Հովհաննեսը: Այսպիսի տեղիները, զգուշության համար, դրված են բնագրում անկյունավոր կիսափակագծերով, օրինակ, 185²⁵⁻¹⁸⁶, 186²⁻³, 187¹²⁻¹⁴, 190¹¹⁻¹², 194⁷⁻⁸, 208²⁰⁻²³: Հավելումներից մի քանիսն այն տեսակի են, որի մասին ինքը Հովհաննեսն ասում է, թե «էր զի ... ի մերս ծնանէր պիտանութիւն բանի ի միտս»:

Երբեմն Հովհաննեսի մոտ Մազիստրոսի շարադրանքին հակառակ նկատվում են և՛ բացթողումներ և՛ հապավումներ, բայց դրանք համեմատաբար ավելի քիչ են, քան սպասելի էր մի հեղինակից, որը դժգոհում է իր նախորդի շարադրակարգից: Դրանց թվում են 190¹⁶⁻¹⁷, 191⁶⁻¹², 193²⁴⁻²⁷, 199¹⁰⁻¹⁵, 201²³⁻²⁰²⁷, 201⁹⁻²¹ (11 փոխարեն 21 վրիպակ է), 204²⁻⁶, 214²²⁻²¹⁵³, 216¹³⁻¹⁹ և այլն:

Դավթի բնագրում երկու տեղի կա, որոնք չունի Մազիստրոսի երկը, և որոնք կարող էին ճանաչվել Հովհաննեսի սեփական՝ Մազիստրոսից անկախ փոխառություններ, այսինքն՝ Դավթի մեկնությունը Դիոնիսիոսի այն

հատվածի վերաբերյալ, ուր ճառում է դատողության` քերականության լավագույն մաս լինելու մասին (86¹⁰⁻¹⁴), ինչպես և հողի մասին դրվագը (115¹³⁻²⁴ և 150²⁻⁸): Ըստ Դավթի, «դատողական մասն...լուսագոյն է յամենեցունց. քանզի զհերձուածողացն ընդունայնաբանութիւն լուծանելով, որք ուղղափառութեան անուամբք կամեցան զհրեանցն արդարացուցանել վրիպանս, ի ստուգիւ քննութենէ դատելոցն յանդիմանի ատարտտի խառնուածն»: Թեև նման նկատառումներն ավելի հատուկ են MS գրվածքին, այնուամենայնիվ դրանց` Դավթին պատկանելը հերքելու համար չկա և ոչ մի բավարար հիմք: Թերևս այս տեղին առկա էր Մագիստրոսի երկի այն օրինակում, որը եղել է Հովհաննեսի տրամադրության ներքո:

«Ցաղագս յաղից» գլխի մեկնությունը, մեր կարծիքով, կազմված է երկու մասից. առաջինը մենք զետեղել ենք Դավթի, իսկ երկրորդը` Անանունի անվան ներքո: Երկրորդ մասն առկա է նաև MS-ում, ինչի պատճառով հողի մասին դրվագը կիսում է վերը նշված 15, 16, 18 և 19-րդ գլուխների ճակատագիրը: Հովհաննեսն իրավացի չէ, երբ երկու մասն էլ վերագրում է միայն Դավթին: Ակնհայտ է երկու հեղինակների ներկայությունը: Մեզ համար ավելի շուտ վիճարկելի է թվում, թե արդյոք Դավթին է պատկանում նույնիսկ առաջին մասը, թե այն վերագրելի է Անանունին, ինչպես և երկրորդը` Մովսեսին: Մագիստրոսի մեկնության պահպանված օրինակներում հողի մասին գլուխն իսպառ բացակայում է. այն փոխարինված է Մագիստրոսի սեփական մեկնությունով: Ինչպիսին է եղել վիճակը Հովհաննեսի ձեռքի տակ եղած օրինակում` որոշակի բան ասել հնարավոր չէ:

Հովհաննեսի մեկնությունում զանվող Անանունի բնագրում նույնպես, ի տարբերություն Մագիստրոսի, դիտվում է «համեմատութեան» մեկնություն (127¹²⁻¹²⁸), ինչպես և «նախատիպ» և «ածանցական» անունների բացատրություն (139¹⁶⁻²¹): Վերջինս Հովհաննեսի աշխատությունում հետևում է Համամի խոսքերին (258²³), և, թերևս, Հովհաննեսինն են:

Կասկածի տակ են մնում «համեմատութեան» և հողի մասին վերոհիշյալ դրվագները: Դա, սակայն, դեռևս բավական չէ ապացուցելու համար Հովհաննեսի ծանոթությունը Դավթի և Անանունի մեկնություններին` առանց Մագիստրոսի միջնորդության:

Հովհաննեսի կախումը Մագիստրոսից առավել ակներև է Մովսեսի բնագրում: Այնքան էլ պարզ չէ, թե ճանաչում էր արդյոք Հովհաննեսը Դավթին կամ Անանունին, սակայն կասկածից վեր է, որ նա իր տրամադրության ներքո է ունեցել Մովսեսի աշխատությունը: Չնայած դրան, նա Մովսեսի, ինչպես և Դավթի և Անանունի բնագրերի դեպքում չի շեղվում Մագիստրոսից: Մովսեսի մեկնությունները Մագիստրոսը փոխառել էր MS աշխատու-

թյունից¹ . նույն երկը ծանոթ է նաև Հովհաննեսին²: Մագիստրոսը չէր ներմուծել իր քերականության մեջ այն ամենը, ինչ MS գրվածքում կրում է Մովսեսի անունը: MS-ի առաջին գլուխը նա չի օգտագործել. մենք բերում ենք այն ըստ MS-ի, 159⁵⁻¹⁶: Հովհաննեսը տալիս է դրա հարասությունը, սակայն վերագրում է ոչ թե Մովսեսին, այլ մեկ ուրիշ հեղինակի՝ Այլ: Մնացածում նա հետևում է Մագիստրոսին: Մագիստրոսի երկից պակասող պարբերություններն առկա չեն նաև Հովհաննեսի մոտ: MS-ի համեմատ Մագիստրոսի մեկնությունում բաց թողած տեղիները բացակայում են նաև Հովհաննեսի երկից: Օրինակ՝ կիսափակագծերում գտնվող 165³⁻⁴ բառերը Մագիստրոսը, հավանաբար, վերագրում է Ստեփանոսի մեկնությանը, ուստի և բաց է թողնում, մինչդեռ դրանք Մովսեսի խոշոր պարբերության մասն են կազմում: MS գրվածքի ինքնուրույն օգտագործման պարագայում Հովհաննեսը երբեմն պետք է որ շեղվեր Մագիստրոսից՝ Մովսեսի և Ստեփանոսի բառերը սահմանազատելիս:

Մագիստրոսը բաց է թողնում 164¹⁴⁻¹⁵, 165³⁻⁴, 166²⁰⁻²¹, 173⁸⁻¹⁷⁴₆ տեղիները, չունի Ի և ԻԳ գլուխները. դրանք չկան նաև Հովհաննեսի մեկնությունում, մինչդեռ առկա են MS-ում: Եվ ընդհակառակը, կան տեղիներ, որոնք բացակայում են MS-ի մեզ հասած ձեռագիր օրինակների մեջ, սակայն դրանք առկա են Մագիստրոսի և Հովհաննեսի մոտ, օրինակ՝ 166¹⁵⁻¹⁸, 170¹¹⁻¹⁷¹₂₁, 172¹⁻¹²: Այս ամենը ցույց է տալիս, որ Հովհաննեսը, թեև ձեռքի տակ ունեցել է MS աշխատությունը, սակայն չի օգտվել դրանից, այլ սահմանափակվել է միայն Մագիստրոսի տրամադրած տեղեկություններով:

Նույնն է նրա վերաբերմունքը և այլ հեղինակների նկատմամբ: Արդյոք Հովհաննեսն իր ձեռքի տակ ունեցել է Դավթի, Անանուհի և Ստեփանոսի երկերը՝ մի հարց է, որին կտրուկ պատասխանել հնարավոր չէ: Ենթադրելի է, որ Հովհաննեսը շփոթել է իր բերած օրինակները և որպես նշված հեղինակների վավերական երկեր ընդունել է բոլորովին ուրիշ բան: Թերևս մեր տարակուսանքներն անհիմն են, և պետք է հավատալ Հովհաննեսի պարզորոշ հայտարարությանը: Միայն մի բան է մնում մեզ համար անսասանելի՝ որ Հովհաննեսը չի օգտվել նշված երկերից, եթե նույնիսկ իր ձեռքին ունեցել է, այլ բավարարվել է սուկ Մագիստրոսի մեկնությունից կատարած քաղվածքներով:

Մեր երկմտությունը ստիպում է մեզ պատասխանել ևս մի հարցի. Հովհաննեսը ո՞րտեղից կարող էր իմանալ, թե հեղինակներից որի՞ն ինչ է պատկանում: Չէ որ Մագիստրոսը չունի և ոչ մի ցուցում հեղինակների վե-

¹ Հետաքրքրական է MS-ի խորագրի համընկնումը Մագիստրոսի խոսքերին՝ «Արդ պարսասանլ գառաջիկայիցս յաղագս էին երկայնութեան», 162²²:
² Տե՛ս վերը:

րարերյալ՝ նրանց անունները նշված են միմիայն Հովհաննեսի աշխատության լուսանցքներում: Եթե նշված հեղինակների հետ Հովհաննեսի ծանոթ լինելը հերքվում է, ապա ի՞նչ փաստերի հիման վրա նա կարողացել է գլուխ հանել Մազիստրոսի համահավաք բնույթի աշխատանքից և յուրաքանչյուր հեղինակին հատկացնել իրենը:

Մեր ենթադրությանը նպաստող կովաններն այնքան ուժեղ են, որ մենք ստիպված ենք ընդունելու մեզ հասած Մազիստրոսի մեկնության օրինակների խաթարվածությունը ևս մի պարագայում և համաձայնել, որ սկզբնապես Մազիստրոսի գործի լուսանցքներում նույնպես նշվում էին հեղինակների անունները, և Հովհաննեսն իր տրամադրության ներքո ունեցել է հենց այսպիսի մի ընդօրինակություն: Հետևաբար ոչ միայն բնագրով, այլև լուսանցանիշերով Հովհաննեսը պարտական է բացառապես Մազիստրոսին:

Այլ դրության դեպքում հարկ կլիներ խոստովանել, որ Հովհաննեսը Մազիստրոսի բնագրին հետևել է ըստ նրա աղբյուրների, բուպեն մեկ դիմելով մերթ այս, մերթ այն հեղինակին՝ պարզելու համար, թե հեղինակներից ո՞ւմ է պատկանում տվյալ հատվածը, արտահայտությունը կամ բառը: Իհարկե, կարելի է պատկերացնել աշխատանքի այսպիսի ընթացք ևս: Անհասկանալի կմնա, սակայն, թե ինչո՞ւ դրա հետ մեկտեղ Հովհաննեսը սկզբնաղբյուրների՝ նշված հեղինակների բուն երկերի հիման վրա չի վերացնում Մազիստրոսի սխալներն ու թերությունները, այլ վերարտադրում է դրանք պատճենողի ճշգրտությամբ: Այսպես, օրինակ *երկիր* բառը, որը նշանակում է «աշխարհ» (թ. 98), Մազիստրոսի մոտ սխալմամբ ներկայացվում է իբրև *երկիր*՝ «երկրորդ» իմաստով, ինչի ազդեցության ներքո նախորդ արտահայտության մեջ ներմուծվել է *մի* բառը՝ «նախ և առաջ» իմաստով, 97²⁴: Հովհաննեսն ընդօրինակում է այս տեղին այնպես, ինչպես որ այն կա, մինչդեռ բնօրինակի հետ գործ ունենալու դեպքում նրանից սպասելի կլիներ այլ վերաբերմունք:

Այնուհետև Մազիստրոսի մոտ կարդացվում է (106²⁴⁻²⁵). *նոյնպէս իմանալի է: Եւ զգարմազանութիւնս* և այլն: Մխալ տրոհության պատճառով *իմանալի* բառը կապվել է նախորդ *նոյնպէս*-ի հետ. մինչդեռ այն քերականորեն շաղկապված է հաջորդ՝ *եւ զգարմազանութիւնս* բառերի հետ: Հովհաննեսը նույնպես պահում է սխալ ընթերցվածը, ուստի և ստիպված է լինում դուրս գցել *եւ զգարմազանութիւնս բարդիցն* հատվածը, նախադասությունը անհեթեթությունից փրկելու համար:

Հովհաննեսը հետևել է Մազիստրոսին նաև աղավաղված նախադասությունը (112²¹⁻²³) փոխադրելիս. այստեղ *անուանց* բառը սխալմամբ տարվել է նախորդ նախադասություն: Մի քանի անգամ Հովհաննեսը գանգատվում է, որ մեկնիչների խոսքերը խառնաշփոթ են և նրա համար դժվար է եղել

դրանք պարզաբանել¹: Մեկնիչների բուն երկերի առկայության պարագային նման գանգատը անտեղի կլիներ:

Վերջապես, եթե Հովհաննեսն իր ձեռքի տակ ունեցել է մեզ հետաքրքրող հին հեղինակների գործերը, ապա ինչո՞ւ նա չի լրացրել Մագիստրոսի երկում եղած քացերը: Նրա դիտողության համաձայն, քազում գլուխներ և պարբերություններ Մագիստրոսը թողել էր առանց մեկնությունների, և նա՝ Հովհաննեսը, փորձել է լրացնել քացերը: Մենք տեսնում ենք, սակայն, որ եթե անգամ նա ավելացնում է ինչ-որ բան, ապա այլ աղբյուրներից, և ոչ վերոհիշյալ հեղինակներից: Մի՞թե տարօրինակ չէ, որ նա զանց է առնում ճանաչված հեղինակությունները և դիմում է անհայտ անձանց օգնության՝ այլ, այլուստ և այլն:

Այս դիտարկումները մեզ իրավունք են տալիս եզրակացնելու, որ Հովհաննեսը ձեռքի տակ չի ունեցել նշված հեղինակների գործերը. եթե անգամ Երզնկայի անվանի քաղաքացի՝ պարոն Հովհաննեսի տրամադրած գրքերը (112) պարունակում էին մեզ հետաքրքրող աշխատությունները՝ այն իսկ հեղինակների, որոնց թվարկում է Հովհաննեսը, ապա նա, համենայնդեպս, դրանցից իր քերականությունը կազմելիս չի օգտվել:

Եզրակացությունը, որին մենք հանգեցինք, աննպաստ չէ նաև վերականգնված բնագրերի քննության համար: Եթե Հովհաննեսի քաղվածքները ևս հասնում են մինչև Մագիստրոսը, ապա մենք կարող ենք առավել ազատությամբ վարվել քաղված բնագրերի հետ: Բնագրային և այլ բնույթի թերությունները չպետք է մեզ զարմացնեն: Կտորտանքներից կազմած բնագրերը, հարկավ, չեն կարող հավակնել այն անխաթարության, որը ցանկալի է: Բայց մյուս կողմից, բանասիրական տեսակետից դրանց ընդունելի լինելը կարելի է պաշտպանել ոչ պակաս, քան այլ հնագույն հուշարձանների պարագային: Չէ որ դրանք նույնպես իրենց նախնական անձեռնմխելիությամբ մեզ չեն հասել:

Որքան էլ կցկտուր լինեն վերականգնված բնագրերը, դրանց կարևորությունն անժխտելի է: Հեղինակները և գրականության այն փուլը, որին դրանք պատկանում են, տակավին, ինչպես հայտնի է, որոշ իմաստով մնում են առեղծված: Այժմ կարող ենք վստահ լինել, որ մեր տրամադրության ներքո կան Գավթի, Մովսեսի և Ստեփանոսի՝ անշուշտ հեղինակային բնագրերը. որոշ անունների շուրջ կուտակված մշուշը փարատելու համար դրանք, թերևս, շատ ավելի հաստատուն հիմք են տրամադրում, քան այլ հուշարձաններ:

Ներկա բնագրերի վերականգնումով արդարացվում են և մեր կողմից վերը քննարկված մատենագրության մեջ առկա տեղեկությունները: Նրանք

¹ Տե՛ս վերը, էջ XXXIII:

խոսում են Քերականության մեկնությունների մասին, հասկանալով Դիոնիսիոսի երկասիրությունը, իսկ «մեկնություններ» ասելով՝ Դավթի, Մովսեսի և Ստեփանոսի աշխատությունները: Անանունի մասին չկա և ոչ մի հիշատակում: Նույն տեղեկությունները Դավթի և Մովսեսի անունների հետ մեկտեղ տալիս են նաև նրանց ընկերակից Մամբրե Վերծանողի անունը: Ինքնին միտք է ծագում միացնելու Մամբրեին և Անանունին: Մամբրեի անունով պահպանվել է քերականական բնույթի մի փոքրիկ պատառիկ, որը, սակայն, ոչ բովանդակությամբ, և ոչ լեզվով արժանի չէ նրա անվանը. այն, հավանաբար, նրան չի պատկանում, և կամ աղավաղված է: Չարմանալի չէ, որ այն ավանդազրույցներում, որոնցում հիշատակվում են Դավթի և Մովսեսի մեկնությունները, Մամբրեի որպես քերականի մասին չկա և ոչ մի տեղեկություն: Քանի դեռ փաստական իրադրությունը մեզ հայտնի չէր, մատենագրական տվյալները կարող էին որոշ արժեք ներկայացնել: Բայց այժմ, երբ հայտնաբերվեցին փաստերը, այդ տեղեկությունները փոքր ինչ այլ լույսով են ներկայանում: Մեզ համար պարզ է, որ վերը քննած ավանդազրույցն իր մեջ պարունակած տեղեկություններով հանդերձ, կազմավորվել է այն դարաշրջանում, երբ Դիոնիսիոսի քերականությունն արդեն շրջաբերվում էր առանց հեղինակի անվան, երբ Անանունի աշխատությունը դուրս է ընկել մատենագրական գործածությունից, սակայն դրանում տակավին պահվում էին Դավթին ու Մովսեսը: Եթե պետք է ավելի մերձավորապես սահմանել այս ժամանակաշրջանը, ապա այն հասնում է մինչև Համամից առաջ ընկած ժամանակը, քանզի Համամն արդեն չգիտե Դիոնիսիոսին որպես իրեն քաջ հայտնի քերականության հեղինակի: Ավելի ճիշտ կլիներ ասել, որ ավանդազրույցը մեզ զբաղեցնող մասում արտացոլում է նշված դարաշրջանի քերականական գրականության փաստացի վիճակը: Ուստի և ավանդազրույցի՝ Անանուն-Մամբրեին չճանաչելը դեռ չի կարող փաստ ծառայել նրա՝ իբրև քերականի, դեմ:

Հաստատվում են նաև Ստեփանոսի մասին տեղեկությունները: Թեպետ, պետք է վերապահություն անել. բերված վկայությունները վերաբերում են, ամենայն հավանականությամբ, MS աշխատությանը, այսինքն՝ ոչ թե Դիոնիսիոսի, այլ Մովսեսի քերականությանը վերաբերող Ստեփանոսի մեկնությանը: Այս աշխատությունը հասել է մեզ, և չնայած ձեռագրերում կրում է Մովսեսի անունը, իրականում պատկանում է Ստեփանոսին: Մովսեսին է պատկանում միայն սկիզբը, և առհասարակ՝ մեկնության ենթակա գլուխների սկզբնական խոսքերը: Այս հանգամանքի պատճառով թյուրիմացության մեջ ընկած ընդօրինակողները նրան են վերագրել ամբողջ երկը, որի գլխավոր մասն են կազմում Ստեփանոսի մեկնությունները:

Մեր կատարած աշխատանքի շնորհիվ բացահայտվեց, որ Ստեփանոսն

ունեցել է ևս մի երկասիրություն, այն է՝ Դիոնիսիոսի բնագրի մեկնությունը՝ *Մեկնութիւն քերականին*, ինչպես այն ճշտորեն անվանում է Կիրակոս Գանձակեցին, թեև, հավանաբար, սխալմամբ դրա ներքո հասկանում է MS գրվածքը:

Առաջին աշխատությունը, Մովսեսի մեկնությունը, որ Ստեփանոսը հեղինակել էր դեռևս սարկավազ եղած ժամանակ, ինչպես երևում է վերևում բերված հիշատակարանից, ոչ այլ ինչ է, եթե ոչ աշակերտի տուրք ուսուցչի հիշատակին: Մինչդեռ մեր կողմից վերականգնված Դիոնիսիոսի քերականության մեկնությունը հորինվել է ավելի ուշ, հավանաբար, վարդապետական-մանկավարժական գործունեության ժամանակ, և պայմանավորված էր, ինչպես և Հովհաննես Երզնկացու մեկնությունը, ուսումնական կարիքներով: Ստեփանոսի այս վերջին մեկնությունը հայտնի է շատ ավելի ուշ դարաշրջանի քերականին, Առաքել Մյունեցուն, որի բուն հեղինակային խոսքեր ավելորդ չենք համարում մեջբերել, մանավանդ, որ դրանք վերաբերում են ոչ միայն Ստեփանոսին, այլ առհասարակ քերականական գրականության ակնարկ են: Առաքելը նույնպես մեկնել է Դիոնիսիոսի երկը. այդ մեկնության վերը նկարագրված օրինակը մեր տրամադրության ներքո է եղել: Այն, ի միջի այլոց, տեղեկացնում է. «Թէ յումմէ քարգմանեցաւ եւ ով էր որ մեկնութիւն արար սորա. այսինքն (:) զի Դաւիթ փիլիսոփայն քարգմանեաց եւ մեկնեաց զսա(յ): Իսկ յետ սորա Գրիգոր Մագիստրոսն այլ ընդ(յ)արձակ մեկնեաց զԴաւթի մեկնեալն: Իսկ յետոյ Յոհաննէս վարդապետն մականուն Պլուզ համառօտեաց զնոյն վասն դիրալոր լինելոյ: Եւ յետ նորա Եսայի վարդապետն Գայլիճորոյ այլ համառօտեաց զնոյն, որ այժմ կայ ի միջի: Մոյնպէս եւ Ծործորեցին է համառօտեալ: Արդ երկու մեկնիչ կայ ի գիրքս այս. առաջին Դաւիթ մեկնած է, երկրորդն Ստեփանոսի Միւնեաց, որ ի Վայոց ձորն նահատակեցաւ»¹:

Թվարկված բոլոր հեղինակները մեզ արդեն ծանոթ են: Ծործորեցու մեկնության ներքո պետք է հասկանալ նույն Երզնկացու համառոտ քերականությունը՝ Երզնկացի, որն իր այդ մականունը ստացել է ըստ ծննդյան վայրի, և Ծործորեցի՝ ըստ բնակավայրի. իր կյանքի վերջին տարիները նա անցկացրել է Արտազի հին իշխանության տարածքում (այժմ՝ Մակուի խանության սահմաններում) գտնվող Ծործորի Սբ. Աստվածածնի վանքում: Նշված քերականության՝ մեր տրամադրության ներքո եղած օրինակների խորագրում երկու մականունն էլ առկա են²:

Իր ունեցած տեղեկությունների համար Մագիստրոսի, Հովհաննեսի և Եսայիի մասին Առաքելը պարտական է նրանց աշխատություններին անձ-

¹ Չեռ. 2359, ք. 389:

² Տե՛ս բնագիր, էջ XX և XXXVI:

նական ծանոթության: Ինչ վերաբերում է Դավթին և Ստեփանոսին, ապա նրանց մասին նա գիտե, ամենայն հավանականությամբ, Հովհաննես Երզնկացու աշխատությունից: Հնարավոր է, որ նա իր տրամադրության ներքո ունեցել է նաև այլ վավերագրեր, որոնցից և քաղել է տեղեկությունն այն մասին, որ Դավթին է կատարել Դիոնիսիոսի թարգմանությունը: Որ այս տեղեկությունը Առաքելի կողմից սովորական կռահում չէ, այլ հիմնված է ինչ-որ աղբյուրի վրա, երևում է նաև նրանից, որ Առաքելն իր՝ Դավթի «Մահմանքին» վերաբերող մեկնության մեջ հաղորդում է, որ Դավթը հայերից ճանաչում չստացավ, այլ «անարգեցին զնա եւ զբանս նորա, եւ հարեալ վիրատրեցին զնա. եւ նա զնացեալ ի Վիրս, անդ կացեալ վախճանեցաւ...»¹:

Դավթի կյանքի այս՝ վերին աստիճանի հետաքրքիր հանգամանքը այլ աղբյուրներից ծանոթ չէ և անկասկած մատնանշում է մի լավ վավերագիր, որը եղել էր Առաքելի տրամադրության ներքո: Դավթի և Ստեփանոսի բուն հեղինակային երկերը, նրանց՝ Դիոնիսիոսի Քերականության մեկնություններն Առաքելն իր ձեռքի տակ չի ունեցել. նրա տեղեկությունները զուտ մատենագրական բնույթ ունեն:

Հովհաննես Երզնկացին հիշատակում է նաև Համամի և Բարսեղի աշխատությունները: Համամի մեկնությունը նույնպես չի պահպանվել, համեմայնդեպս, զոնե մինչ այժմ ձեռագրերում չի հայտնաբերվել: Դրանից օգտվել էր Հովհաննեսը՝ և բավական շատ. ընդարձակ քաղվածքները, որ նա բերում է, մենք առանձնացրել ենք և դրել Համամի անվան ներքո: Դրանք լիակատար պատկերացում են տալիս Համամի երկի մասին:

Գալով Բարսեղին, Հովհաննեսը ոչ մի տող չի բերում նրա աշխատությունից: Երևի նրա երկասիրությունը ոչ մի շահեկանություն չէր ներկայացնում Հովհաննեսի առջև ծառայած խնդիրների լուծման, այսինքն՝ իր հետապնդած զուտ քերականական նպատակների համար: Մենք հակված ենք կարծելու, որ Բարսեղ քերականը ոչ այլ ոք է, եթե ոչ Հեթում թագավորի՝ նույն անունը կրող եղբայրը, այն անձը, որին մենք անդրադարձել ենք²:

Հետևաբար, Բարսեղի քերականական երկը, որ հիշատակում է Հովհաննեսը, պետք է նույնացնել Ե.գ. 1232 ձեռագրում գտնվող այն գրվածքի հետ, որին կից պահպանվել է Բարսեղի հիշատակարանը³: Եթե մեր ենթադրու-

¹ Գ. Ջաքիհանյան, Պատմություն հայ հին դպրության (Դ-ԺԳ), Վենետիկ, 1886, էջ 322:

² Տե՛ս քննադիր, էջ LXIX:

³ Դիոնիսիոսի Քերականության հրատարակիչը, [Հ.] Շահան-Ջրայետ[յանն] իր նախաբանում, էջ XXVIII, քերականների թվում հիշատակում է նաև Բարսեղ Շոնին. իսկ Հովհաննեսի հիշատակած Բարսեղի անվան ներքո նա հասկանում է Դպրեվանքի հայտնի վանահոր, որը, Վարդանի վկայությամբ («Պատմութիւն», էջ 69), ապրել է VII դարում: Ղ. Ալիշանը («Հայաստան», էջ 510) տարակուսում է, թե ով կարող էր լինել այս Բարսեղը՝ թերևս XII դարի CXII

թյունն ընդունելի է, ապա Բարսեղին կարելի է հանել քերականների շարքից, քանի որ նրա գրվածքը քերականության հետ ընդհանուր եզրեր գրեթե չունի:

Այսպիսով, մատենագրական տվյալները, բայց գլխավորապես՝ Մագիստրոսի և Հովհաննեսի բանաբաղների վերլուծությունը հաստատում են մինչև Մագիստրոսը եղած քերականական արվեստի հետ առնչվող հետևյալ անուններն ու բնագրերը՝ Դիոնիսիոս, Դավիթ, Անանուն-Մամբրե, Մովսես, Ստեփանոս, Համամ:

նույնանուն վանականը Քեսունից, քե Մաշկևորցին, Հովհաննեսի ժամանակակիցը (անդ, էջ 534-536): Ըստ հան-Ջրպետյանի, ինչպես և Ալիշանի ենթադրությունները միանգամայն անընդունելի են:

IV. ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ ԲՆԱԳՐԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Քննության սահմանները: Քննական ապարատը: Դավթի մեկնությունը և դրա անջուրությունը հույն քերականների լուծմունքներին: Նախերգան և προλεγόμενα: Համակարգված բաղադրություն գլուխ առ գլուխ և դրվագ առ դրվագ: Համեմատություն Մեյամպոդեսի, Հելիոդորոսի, Ստեփանոսի և Բյուզանդացու [մեկնություններ] հետ: Մատենագրական գուգահեռներ և մերձեցումներ:

Այն խնդիրը, որ մենք դրել ենք մեր առջև, ճիշտն ասած, սպառված է: Դա քննության առարկա բնագրերի առանձնացումն էր, վաղ քերականական աշխատությունների վերականգնում: Այս աշխատանքը կատարված է. վերականգնված բնագրերի հետ կապված կամ դրանց մեջ արտահայտված այլևայլ հարցերը ներկա աշխատանքի սահմաններից դուրս են: Դրանցից ամենաեականը, այն է՝ քերականական բնագրերի առնչության հարցը այլ հուշարձանների և դրանց՝ հունարան դպրոցի հարակից երկերի մեջ գրված դիրքի մասին, պահանջում է առանձին ուսումնասիրություն և նույնպես պետք է առայժմ մի կողմ դրվի, քանի որ դրա արդյունավետ քննարկումը հնարավոր է միայն նույնատիպ երկերի հետ համատեղ և դպրոցների ընդհանուր խնդրի սահմաններում:

Այդպիսի հարցադրման հնարավորությունը, իր հերթին, կախված է մի շարք մասնակի աշխատանքներից, որոնք պետք է նախօրոք կատարվեն տվյալ տեսակի յուրաքանչյուր երկի վերաբերյալ, նախքան դրանք գործածվեն նախահիշյալ խնդրի քննարկման միջոցին: Այլ վերաբերմունքի դեպքում անհնար կլինի դուրս գալ այն կախարդված շրջանակից, որ ստեղծվել է երկու վիճահարույց խնդիրների հարաբերություններից. մի կողմից՝ հայտնի հուշարձանների թվագրումը կախյալ է համարվում հունարան ուղղության ծագման պահից, և մյուս կողմից՝ այդ պահի ամրագրումը պայմանավորվում է վիճարկվող հուշարձանների հայտնվելու ժամանակով: Այդ պատճառով չի հաջողվում գտնել այն հենքը, որ որոշակի կայունություն հաղորդեր մասնագետների գիտակցության մեջ V-ից VIII դար հետ ու առաջ տարվող հուշարձաններին: Լույս ընծայվող քերականական հուշարձանները հաջողությամբ կարող են օգտագործվել տվյալ խնդիրը լուծելու համար այն դեպքում միայն, եթե դրանց վրա կատարվի հիշյալ աշխատանքը, ինչպես և ճշտվի համանման երկերի շարքում դրանց ինքնուրույն արժեքը:

Մեր բնագրերին ուղեկցող քննական տողատակը նպատակ ունի գտելու դրանք այն տարրերից, որ սպրդել են դրանց մեջ ժամանակի ընթացքում ի վնաս սկզբնօրինակի մաքրության: Այն հանգամանքը, որ դրանք մեզ են հասել բանաքաղութունների, այսպես ասած, օտար մարմնում, անխուսափելիորեն, որպես այդպիսի դրության հետևանք, պետք է առաջ բերեր աղճատվածություն: Բնագրերը վերականգնելիս մենք ձգտում էինք հետևել միմիայն ձեռագրային տվյալներին: Այդպես ենք վարվել, գիտակցելով, որ անհրաժեշտ է նախևառաջ ներկայացնել այն, ինչ տալիս են ձեռագրերը: Ետևումներն ու սրբագրումները մենք մեզ թույլ ենք տվել այնքանով, որքանով թույլ էին տալիս գրչագրերը, որքանով դրանց մեջ հիմք էին տեսնում՝ առայժմ ձեռնպահ լինելով այլ բնույթի նկատառումներից: Դեռևս գործը առաջ էր տարվում սոսկ ձեռագիր նյութերի շրջանակներում: Մենք ցանկացել ենք սպառել խնդրի այս կողմն այնպես, որ հետագայում ոչ մի երկմտություն կամ տարակույս չմնա, թե ինչպիսին էր դրությունը ձեռագրերում: Բնագրային տարամիտումներն ու տարընթերցումները, պակասող կամ հավելյալ կետերը, ուղղագրական առանձնահատկությունները նշում ենք ամենայն ճշգրտությամբ ըստ այն գրչագրերի, որոնց արժեքը հաստատված է մեր կողմից, և այնչափ, որքան այս հանգամանքները կարող են պիտանի համարվել որևէ տեսակետից:

Ընթերցվածները և գրության եղանակներն ընտրելիս, թերևս միշտ չէ, որ արդարացի ենք: Հարկ է նշել, որ այս պարագայում ղեկավարվել ենք ոչ միայն լեզվաբանական, այլև բանասիրական բնույթի նկատառումներով: Հայոց լեզվի պատմական զարգացման պարբերացումը դեռ ճշտված չէ, ավելի բարվոք վիճակում չէ և սկզբնական փուլի մատենագրական հուշարձանների թվագրությունը: Հին հայերեն գրավոր լեզվի մեջ՝ կենդանի ժողովրդական խոսքի տարրերի ներթափանցումը, կամ աշխարհաբարի ճնշման ներքո կատարվող՝ գրաբարի, այսպես ասած, ռամկացումը սկսվել է շատ ավելի վաղ, քան ընդունված է կարծել: Ընդհանրապես գրական հին հայերենի բնույթի և վիճակի մասին՝ իր հանդես գալու պահին և հետագա զարգացման ընթացքում մեզ մոտ կարծիք է ձևավորվել, որը մենք մտադիր ենք արծարծել առանձին: Հին բնագրերում առկա ռամկաբանությունների հանդեպ բացասական վերաբերմունքը պատմական իրականության տեսակետից միշտ չէ, որ կարող է արդարացված լինել: Հաճախ պարզվում է՝ բառաթերքը, բառերի կազմությունն ու ձևերը, լեզվաբանական առումով ռամկական, իրենց գրական կյանքով ավելի հին են, քան շատ այլ բառեր, որոնք թեպետ ըստ էության վաղնջական են, սակայն մատենագրության մեջ հայտնվել են ավելի ուշ: Գրական լեզվի և կենդանի խոսքի միջև հուշարձաններում նկատվող մրցակցությունը՝ փաստ է և կասկածի ենթակա չէ:

Բայց ոչ միշտ հին հուշարձաններում առկա՝ ժողովրդական բառերն ու արտահայտությունները կարող են կասկածելի լինել իբրև հետագա սրբագրությունների արգասիք: Դրանցից շատերը գրական լեզվի մեջ իրենց տեղը նվաճել են կամ ամենասկզբից, և կամ առաջին փուլում: Մի խոսքով, պետք է հստակորեն տարբերել լեզվական տվյալների մատենագրական հնությունը լեզվաբանականից՝ մի հանգամանք, որ նշանակալիորեն բարդացնում է հայկական բնագրերի քննական հրատարակության խնդիրը:

Հին հայկական ժառանգության նկատմամբ առկա թերհավատության պայմաններում, իսկ տվյալ դեպքում նաև այն հատուկ հետաքրքրության պատճառով, որ հարուցում են հունարան հուշարձանները, դրանց հրատարակությունը պետք է օժտված լինի ոչ միայն սովորական քննական ապարատով, այլև այս հուշարձանների արժանահավատությունը երաշխավորող պատմական տվյալներով: Թե ինչ են ներկայացնում մեր բնագրերը և թե որքանով դրանք վստահելի են տվյալ դպրոցին պատկանելու կամ հին լինելու տեսակետից՝ հնություն, որին դրանք հավակնում են ըստ ավելի ուշ շրջանի հեղինակների. ահա այն հարցերը, որոնք անպատասխան թողնելն անօգուտ կդարձնի քերականական բնագրերի՝ տվյալ դպրոցի արտադրանքի շրջանակի մեջ ներգրավումը:

Վերականգնված բնագրերից և՛ [ստեղծման] ժամանակով և՛ ներքին հատկություններով առավել հետաքրքրականը, Դավթի Մեկնությունն է: Մնացյալ հեղինակների մեկնությունները ցուցաբերում են Դավթի աշխատության հետ այս կամ այն աստիճանի ծանոթություն, և Դավթի [գործի] մասին եզրակացությունները կանխորոշում են դրանց ճակատագիրը ևս: Քերականական գրականությունը, ինչպես և հայոց դպրության յուրաքանչյուր այլ բնագավառ, կազմված լինելով բյուզանդական քրիստոնեական մշակույթի ոլորտում, կարող է և պետք է լուսաբանվի իր բյուզանդական սկզբնաղբյուրների առնչությամբ:

Հունարեն լուծմունքների հարստագույն հավաքածուն այժմ լույս է տեսել *Grammatici Graeci* մատենաշարով: Շարքի երրորդ հատորն ամփոփում է Դիոնիսիոսի «Արվեստին» նվիրված լուծմունքները՝ *Scholia in Dionysii Thracis artem Grammaticam*, 1901 թ. (113): Այստեղ գետեղված են երեք՝ Վատիկանի, Վենետիկի Մր. Մարկոսի մատենադարանի և Լոնդոնի լուծմունքների հավաքածուները: Դրանցից յուրաքանչյուրը՝ բանաքաղ է, կազմած զանազան քերականների երկերից, որոնք ամբողջությամբ չեն պահպանվել: Օգտագործած աշխատությունների հեղինակների անուններն են՝ Մելամպոդես-Դիոմեդես, Գեորգիոս Խոյրոբոսկոս, Հելիոդորոս, Ստեփանոս, Պորփյուրիոս և մի քանի ուրիշները (114):

Ցավոք, նրանց թե՛ ժամանակը և թե՛ փոխադարձ առնչությունները

հայտնի չեն: Մելամադոնեսի և Հելիոդորոսի երկերի մի մասը պահպանվել է մակ առանձնաբար: Այն [նյութը], որ կրում է Մելամադոնեսի անունը, որոշ ձեռագրերում վերագրվում է Դիոմեդեսին: Ենթադրվում է, որ նրանցից մեկը, հավանաբար, Դիոմեդեսը, օգտվել է Մելամադոնեսի մեկնությունից: Նույնպես կարծում են, որ Հելիոդորոսի անունով հայտնի մեկնությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ Գեորգիոս Խոյրոբոսկոսի երկը՝ իր իսկ Հելիոդորոսի շարադրությամբ: Ըստ երևույթին, Ստեփանոսը նույնպես կախված է Գեորգիոսից: Պորփյուրիոսից քիչ բան է պահպանվել, իսկ նրա անձնավորության մասին ոչինչ հայտնի չէ: Հիշյալ հեղինակների և նրանց երկերի, ինչպես և լուծմունքների ժողովածուների մասին պատմվում է հրատարակությանը նախորդած՝ Հիլզարդի հանգամանալից հոդվածում, որին և հղում ենք խնդրով հետաքրքրվողներին:

Բացի նշված լուծմունքներից, համադրության համար ներգրավել ենք մի փոքր մեկնություն ևս՝ Commentariolus Byzantinus, տեղադրված Հիլզարդի հրատարակության վերջում. մեր կողմից այն մեջբերվում է «Բյուզանդացու մեկնություն» անվամբ:

Դավթի մեկնությանը նախորդում է մի պատշաճ ներածություն՝ *Նախերգան*: Դրանում քննարկվում են արվեստին առնչվող ընդհանուր հարցեր: Դատողության առարկան, իսկն ասած, արվեստի սահմանումն է, որը գտնվում է Դիոնիսիոսի [*«Քերականության»*] հավելվածում: Ըստ այս սահմանման, արվեստները լինում են տեսական և գործնական. առաջինների մեջ են դասվում քերականությունը, ճարտասանությունը և փիլիսոփայությունը, իսկ երկրորդների՝ ատաղձագործությունը, դարբնությունը և դրանց նմանները¹:

Նշված բաժանումը մեկնելիս, Դավթին ելնում է մարդու երկատված բնությունից՝ բաղկացած *«յոգույ բանական է և ի մարմնոյ գործական է»*: Արվեստի երկու տեսակներից յուրաքանչյուրը, իր հերթին, տրոհվում է բարի, չար և միջին [մասերի]: Դավթի կարծիքով, արվեստավորը խուսափում է չարից և միջակից, և հետաքրքրվում միայն բարի արվեստով, *այլ թողով արուեստաւորին գյարին և զմիջակին* և այլն, 80₃: Մույն հղումից երևում է, որ մեր հեղինակը վերլուծում է արվեստի մասին հենց այն հավելվածը, որը ամկա է Դիոնիսիոսի հունարեն գրչագրերում, բայց չկա պահպանված հայերեն գրչագրերում: Մենք այն վերականգնել ենք Դավթի մեջբերման հիման վրա:

Շարունակենք հետևել մեր հեղինակի մտքի ընթացքին հույն քերական-

¹ Հմմտ. Փիլոն, *Այլաբանություն*, էջ 124. *Քանզի ոմանք յարուեստիցն տեսականք են, այլ ոչ գործականք, երկրաչափութիւն. և ոմանք գործականք են, այլ ոչ տեսականք, հիսունական, դարբնական և որ միանգամ ձեռագործք ասին:*

ների նույնանման դատողությունների կապակցությամբ:

Դավթի «նախերգան»-ը համապատասխանում է *προλεγόμενα* կամ, ավելի ճիշտ, հունարեն լուծմունքի ներածության *προοίμιον*-ին: Հայերեն բառի կազմության և նշանավորության մասին կխոսենք վարը: Հունարեն լուծմունքների ժողովածուներում հայտնի են մի քանի ներածություններ: Դրանք պահպանվել են Վատիկանի ձեռագրում և զբաղեցնում են 106-115, 115-124, 156-164-րդ էջերը: Դրանցից քաղված են համարվում երեք ուրիշ *προλεγόμενα*, զգալիորեն համառոտված խմբագրությամբ, էջ 1-4, 4-7, 7-10:

Հունարեն ներածություններում քննարկվում են նույն այն հարցերը, ինչ և Դավթի մեկնությունում: Նախ քան արվեստի սահմանման անցնելը, Դավթի պարզաբանում է, թե ինչ է նշանակում *սահմանում* ընդհանրապես, օգտվելով «մարդս բանաւոր, մահկանացու կենդանի է» օրինակից:

Հունարեն լուծմունքները նույնպես հարց են դնում, թե «ի՞նչ է սահմանումը»՝ *τί ἐστὶ ὄρος*, 106²⁵, և լուսաբանում են այն նույն օրինակով՝ «մարդ է կենդանի բանաւոր, մահկանացու»՝ *ἄνθρωπος ἐστὶ ζῶον λογικὸν θνητόν*, և այլն, 107¹⁰ և 156³⁰¹:

Ապա Դավթի բերում է արվեստի սահմանումն այն ձևով, ինչպես այն ընթերցվում է Դիոնիսիոսի մոտ: Հունարեն *προλεγόμενα*-ների [հեղինակները], հիշատակելով էպիկուրյանների և Արիստոտելի՝ արվեստին վերաբերող հայացքները, կանգ են առնում սահմանման այն բանաձևի վրա, որն ունի նաև Դավթի: Նրանցից մենք իմանում ենք նաև այն, որ այս բանաձևը պատկանում է ստոիկյաններին և ունի հետևյալ բովանդակությունը. «[արվեստը՝ վարժությամբ [յուրացված] հասկացությունների միասնականությունն է, բարենպաստ որևէ կենցաղային նպատակին]»՝ *τέχνη ἐστὶ σύστημα ἐκ καταλήψεων ἐγγεγυμνασμένων πρὸς τι τέλος εὐχρηστον τῶν ἐν τῷ βίῳ*, 2²⁵, 8³², 157¹⁸ (և 108³¹, որտեղ ներմուծված է *ἐμπειρίᾳ ψηροδου*):

Հայերեն քարգմանությունը, որ մեջբերում է Դավթի, ասում է. *արուեստ է բաղկացութիւն ի բողմանէ նախակրթեալ առ ի պիտանացու ինչ իրս որ ի կենցաղումս*, 80¹⁶:

Հայերենի փոխանցումն այնքան էլ ճշգրիտ չէ: *Κατάληψις* բառը [ծագում է] *καταλαμβάνω* [«ըմբռնել, հասկանալ»] բայից և նշանակում է «հասկացություն, հայացք»։ այն շփոթվել է *κατάληψις* «թողում», *καταλείπω* [«թողնել, լքել» բայից] (115): Հունարեն լուծմունքները ճիշտ են բացատրում. [«հասկացություններից», այսինքն՝ հնարանքներից, գիտելիքներից, տեսություններից]՝ *ἐκ καταλήψεων» οἶονεὶ ἐκ ἐφευρημάτων, ἐκ γνώσεων, ἐκ*

¹ Հունական մեկնություններից վկայակոչումներս ամենուր կատարվել են ըստ Հիլզարդի հրատարակության: Թվերը ցույց են տալիս մեջբերումների սկիզբը՝ էջերով և տողերով:
CXVIII

θεωρημάτων, 108³⁷: «*Ἦ προηδὲν ἀναλυτικῶς*», ըստ Դավթի, նշանակում է «*զոր ինչ եզիտ որ կրթելով, եւ յայսմ եւս մնացելովք, զինի իւր եթող ապագայիցն*»: Իմաստն այն է, որ արվեստները գոյանում և զարգանում են գիտելիքների կուտակման, սերնդից սերունդ փոխանցելու միջոցով: Միանգամայն նույն կերպ է հասկանում հույն արվեստի զարգացման ընթացքը, ամփոփելով է իր մտքերն [հետևյալ կերպով]. [«*և այսպես արվեստները, մեկից մյուսը փոխանցվելով, հասնում են կատարելության*»] *και οὕτως ἔξ ἐνός εἰς ἕνα συμπεραίουμεναι αἱ τέχναι τὸ τέλειον κατελήφασιν*, 109²:

Քննության առարկա արվեստի սահմանումը դեռևս համընդհանուր է Դավթի փիլիսոփայի «Մահմանք»-ում ավելի ճշգրիտ քարգմանությամբ, որին կանոնադաշտանք ստորև:

Դավթի արվեստներում զանազանում է օգտավետն ու վնասակարը, բարին և չարը: Հունարեն լուծմունքները, մեկնելով *εὐχρηστον* «օգտավետ, բարենպաստ, նպաստող» բառը, նույնպես սահմանազատում են օգտակար և անօգուտ արվեստները՝ «արվեստ»՝ *τέχνη* իսկապես կոչվում են միայն օգտակար նպատակների հետամուտ արվեստները, իսկ վնասակար նպատակներ ունեցողները կոչվում են «չարարվեստ»՝ *κακοτεχνία*: Դրանց թվին են պատկանում, օրինակ, կախարդությունը՝ *ή γοητευτική*, 109³², դեղավաճառները կամ օժանդակ պատրաստողները՝ *οἱ φαρμακοπῶλαι ἡγουν οἱ μύρψοι* «սուտ արվեստներ» են՝ *ψευδοτεχνία*, 110¹⁰:

Դավթի նույնպես վնասակար արվեստներ է համարում՝ *բովլոփին, դիբոփին, կախարդոփին* (116), իսկ բարի՝ *զիրք հոզևորք և երգք*:

Գործնական արվեստներից, ըստ Դավթի, օգտավետ են *հիսմոփին, դարբնոփին* (*τεκτονική, χαλκευτική*, 110²⁰), իսկ վնասակար են *դեղք մահարերք* (հմմտ. *φαρμακοπῶλαι և μύρψοι*):

Դավթի տարածայնում է հունարեն լուծմունքներին, ճանաչելով արվեստների նշված տեսակներում նաև ինչ-որ *միջին*, ընդ որում իբրև *միջին-ի* օրինակ՝ բանական արվեստների թվից բերում է *մրմունջք եւ պարք* (*ὄρχηστική*, 122³⁴), իսկ գործականներից՝ *աղեղնատրոփին եւ գեղարդատր լինել* (հմմտ. *στρατηγική*, 110²¹):

Հունարեն լուծմունքները տրոհում են *λογικαί* («բանատր») արվեստները՝ «գործնականների»՝ *ποιητικά* և «տեսականների»՝ *θεωρητικά*, և առջինի մեջ դասում են ատաղձագործությունն ու դարբնությունը, իսկ երկրորդի՝ աստղաբաշխությունն և իմաստասիրությունը: Այն ինչ Դավթին անվանում է «միջին», հունարեն լուծմունքներում դրվում է *πρακτικά*՝ «գործնականների» մեջ. *στρατηγική* (ազամավարություն) և *ὄρχηστική* (պարային արվեստ):

Հունարեն լուծմունքները զանազանում են նաև *μικτά* (խառը) արվեստ-

ներ, որոնք կարելի է նույնացնել Դավթի «միջին»-ի հետ: Մակայն, դատելով *ιατρική* [«բժշկութիւն»] օրինակից, դա այդպես չէ: Ըստ Դավթի, «բանական» *λογικαί* [արվեստներն են] *ինաստասիրութիւն, բանական բժշկութիւն, քերդողութիւն, ճարտասանութիւն*: Դիոնիսիոսի մոտ «բանականները» *λογικαί* ունեն միայն երեք ստորաբաժանում՝ «ինաստասիրութիւն»՝ *φιλοσοφία*, «քերականութիւն»՝ *γραμματική*, «ճարտասանութիւն»՝ *ρήτορική*: Բժշկությունը չի հիշատակվում: Լուծումները մեկում ասվում է, որ Դիոնիսիոսը հակիրճության համար նշում է արվեստների երկու տեսակ. *δύο μὲν οὗτος εἶπεν διὰ τὸ φιλοσύντομον*, իսկ իրականում հարկ է ճանաչել երեք տեսակ՝ «բանական», «գործական» և «խառն»՝ *λογικαί, πρακτικαί, μικταί*, և որպես վերջինիս օրինակ բերվում է «բժշկություն»՝ *ιατρική*, ինչպես անում են նաև մյուս վերլուծողները, բայց հավելելով «քերականությունը»՝ *γραμματική*, 162₈:

Դավթի կարծես քե ընդունում է «խառն»՝ *μικταί* տեսակը այնու, որ հիշատակում է *բժշկութիւն* *ιατρική*, բայց նա դասում է այն ոչ քե առանձին, «բանականների»՝ *λογικαί* և «գործականների»՝ *πρακτικαί* շարքը, այլ առաջին տեսակի մեջ:

Դավթի՝ արվեստի տրոհումը ըստ *կայուն եւ հասարակաց*-ի, ինչպես և *անցական եւ առանձին*-ի, հիմնվում է, ըստ երևույթին, արվեստի ճանաչողական նշանակության վրա՝ համեմատված գիտության հետ, և այս իմաստով համադրելի է լուծումները խոսքերին. [«Քանի՞ եղանակով է տարբերվում արվեստը գիտությունից: Երկու՝ <որպես> ամենաընդհանուրն ու ամենամասնավորը, նաև <որպես> սխալվող և անսխալ. ընդհանուրին վայել է անսխալը, իսկ մասնավորին՝ սխալականը»]՝ *κατὰ πόσους τρόπους διαφέρει τέχνη ἐπιστημῆς; κατὰ δύο, κατὰ τὸ καθολικώτερον καὶ μερικώτερον, καὶ <κατὰ τὸ> πταιστόν καὶ ἄπταιστον· προσήκει δὲ τῷ μὲν καθολικῷ τὸ ἄπταιστον, τῷ δὲ μερικῷ τὸ πταιστόν*, 162₁₄:

Լուծումներում ընդունված գլուխները՝ *τὰ εἰωθότα κεφάλαια*, 159₇, հիշատակում է նաև մեր քերականը: Սովորաբար լինում է այդպիսի ութ «գլուխ» (117), ինչպես դա երևում է ընդարձակ ներածականներից՝ *προλεγόμενα*-ից. [նպատակը, օգուտը, վավերականությունը, խորագիրը, տրոհումը, ուսուցանման եղանակը, [փիլիսոփայության] որ [բաժնում] է դասվում]՝ *ὁ σκοπός, τὸ χρήσιμον, τὸ γνήσιον, ἢ ἐπιγραφή, ἢ διαίρησις, ὁ διδασκαλικὸς τρόπος, τὸ ὑπὸ τί ἀνάγεται*, 159-161: Մյուս ընդարձակ ներածություն-*προλεγόμενα*-յում քննարկվում է միայն յոթ գլուխ, «ուսուցման եղանակի»՝ *ὁ διδασκαλικὸς τρόπος* բացառությամբ, 123-124: Իսկ համառոտ խմբագրության *προλεγόμενα*-յում նշվում է միայն վեց «գլուխ». [անհրաժեշտ է ... վեց գլուխ հետազոտել, որոնք և կարևոր են. խորագիր, հեղի-

նակ, նպատակ, օգուտ, կարգ, կատարում] *δεῖ δὲ ἀναγκαίως... τὰ εἰς κεφάλαια ζητεῖν· ταῦτα καὶ αὐτὰ ἀναγκαῖα ὄντα, ἐπιγραφήν, συγγραφέα, σκοπόν, χρήσιμον, τάξιν, τέλος*, 3-4:

Այս խոսքերից երևում է, որ հեղինակին ծանոթ են և այլ գրույթներ, բայց *ἀναγκαῖα* «անհրաժեշտ» կամ «կարևոր» նա համարում է միայն վեցը: Նրան համամիտ է մեր Դավիթը: Ահշտ է, նա ասում է՝ *հարկաւորարար (ἀναγκαίως) հեզի կատարի*, սակայն իրականում թվարկում է ոչ թե հինգ, այլ վեց գրույթ. *ըիտաւորութիւն, հարազատութիւն, վերագիր, վարդապետական, ըստ մասին բաժանումն, յարում եւ օգտակարն*, այսինքն՝ *ὁ σκοπός, τὸ γνήσιον, ἡ ἐπιγραφή, ὁ διδασκαλικός, ἡ διαίρησις, τὸ χρήσιμον*:

Συγγραφεύς [«հեղինակ»] ասելով, հասկանում են *τὸ γνήσιον* վավերականություն, ինչպես երևում է բացատրությունից. [իսկ հեղինակը՝ Դիոնիսիոս Թրֆեազիսն է] *συγγραφέα δὲ Διονύσιον τὸν Θρῆκα*, 4₁₄, 124₃, 160₂₄: Ուրեմն, Դավթի և հույն մեկնիչի տարբերությունն այն է, որ Դավիթը «կարգի»՝ *τάξις* և «ավարտման»՝ *τέλος* փոխարեն դնում է «վարդապետական»՝ *ὁ διδασκαλικός* և «բաժանումն»՝ *ἡ διαίρησις*: Հիմնվելով [«կարգ, քանի որ դրանով բարեկարգված է ամբողջ վարդապետությունը»]՝ *τάξιν, ὅτι αὐτῷ εὐτακτος πᾶσα ἡ διδασκαλία*, 4₁₇ բացատրության վրա, կարելի էր ենթադրել, որ հեղինակը շփոթում է «կարգը»՝ *τάξις* «վարդապետականի»՝ *διδασκαλικός*-ի հետ: Այդ դեպքում երկու հեղինակների միջև իբրև տարածայնության միակ կետ մնում է «կատարումն»՝ *τέλος* «բաժանման»՝ *διαίρησις* փոխարեն: Հետաքրքիր է, որ Դավիթը մեկնելիս փոխարինում է *ըստ մասին բաժանումն*՝ *ըստ մասին կատարումն* արտահայտությամբ, այսինքն՝ *διαίρησις*-ի փոխարեն գործածում է *τέλος*: Հույնը մեկնաբանում է. [«կատարումն, քանի որ ընթանում է մինչև եզրահանգում»]՝ *τέλος, ὅτι μέχρι τοῦ συμπεράσματος διεξέρχεται*, 4₁₈: Նույնպիսի իմաստ է դնում Դավիթն իր արտահայտության մեջ, երբ ասում է, որ *ըստ մասին կատարումն* նշանակում է «*թեպետ ի քերականութենէ սկիզբն առնելով առաջնորդէ մինչեւ ի վերջին մասն, եւ կամ ի վերջի մասնէն մինչեւ ի գլխաւորագոյն սկիզբն*»: Երկու հեղինակների խոսքը նույն պահանջի մասին է՝ որ դրված խնդիրը քննարկվի ամբողջությամբ: «*Գլխաւորագոյն սկիզբն*» ասելով, Դավիթն, ըստ երևույթին, ի նկատի ունի Դիոնիսիոսի բուն քերականությունը, իսկ «վերջին մաս»՝ արվեստի մասին հավելվածը: Դավիթը արվեստի վերաբերյալ ընդհանուր հարցի քննարկումը համարում է քերականության մաս և գտնում է, որ շարադրանքը կարելի է սկսել կամ քերականությունից, և կամ արվեստի սահմանումից, բայց երկու մասն էլ պետք է քննվեն ի շահ առարկայի ամբողջության:

Դավթի ազգակցությունը համառոտ ներածականների հետ հաստատ-

վում է նաև այնու, որ դրանց մեջ էլ, ինչպես և Դավթի ներածության մեջ, քննարկվում է քերականության սկզբնավորման խնդիրը, 4²⁰, մինչդեռ այլ լուծմունքներում այս հարցը զետեղված է Դիոնիսիոսի երկի առաջին գլխի մեկնությունում:

Ըստ Դավթի, «սկիզբն առեալ քերդողականիս (քերդողական՝ «քերական»-ի իմաստով) յառաջ գալոյ յերածշտականէ անտի, վասն զի բնատրեցաւ երկայնիւք և տիւք յիրն վարիլ նուագատր երգս» [82₁₄], այսինքն՝ երգի հիմքում ընկած են երկար և կարճ վանկերը¹: Ըստ երևույթին, Դավթի այս խոսքերում արտացոլվել է այն կարծիքը, թե առոգանությունը քերականության մասն է, և թե հենց առոգանությունից պետք է սկսել քերականության շարադրությունը: Այդպես էր կարծում նաև Պորփյուրիոսը, որից պահպանվել է առոգանության մասին հանգամանալից մի գրվածք՝ *Περὶ προσωδίας*, [«Առոգանության մասին»], 128-150, որտեղ և միտքն է արծարծվում, թե հականակ Դիոնիսիոսի, պետք է սկսել [«հենց առոգանությունից»] *ἀπ' αὐτῆς τῆς προσωδίας*: Նույն տեղից իմանում ենք, որ Դիոնիսիոսի [«Արվեստին»] կցված գլուխը առոգանության մասին պատկանում է ոչ թե նրան, այլ ոմն Թեոդոսիոսի:

Դավիթը բերում է նաև այն [հեղինակների] կարծիքը, ովքեր կնախընտրեին սկսել հնչյունից՝ «ի δαγνէ, իրր թե δαγνս է նիւք բանականութեան, որպէս հիւսնականին փայտ և դարբնականին երկաթ, այլ եւ վայելչութիւնք եւ կարգք աշխարհիս δαγնի սացեալ յարմարին. եւ հաստատելով յայս, զի բանի վարդապետեին եւ բանի աշակերտեալք կրթեին» [82₁₈]:

Հունարեն լուծմունքներում այս կարծիքը հիմնավորվում է փոքր ինչ այլ կերպ. այսպես, օրինակ, ըստ Հելիոդորոս քերականի, [«քանի որ հնչյունները բաղկացած են δαγնից, իսկ հնչյունը՝ մարդու առաջին և անմասն δαγն է, անհրաժեշտ է մեզ նախ և առաջ հասկանալ այն, ինչ վերաբերում է δαγնին»] *ἐπειδὴ ἐκ τῆς φωνῆς τὰ στοιχεῖα συνίστανται, στοιχεῖον δὲ ἐστὶν ἡ πρώτη καὶ ἀμερῆς τοῦ ἀνθρώπου φωνή, ἀναγκαῖον ἡμᾶς περὶ φωνῆς πρῶτον διαλαβεῖν*, 482₃ (հմմտ. 165, [արդյո՞ք բառը քերականության նյութ է]՝ *εἰ γὰρ ὕλη γραμματικῆς λέξις* և այլն):

Նույն կարծիքի էր և հռչակավոր քերական Ապոլլոնիոս Դիսկոլոսը. [«նրանք, ովքեր սկսում են δαγնից, ինչպես և Ապոլլոնիոս Դիսկոլոսը»] *οἱ δὲ ἀπὸ φωνῆς, ὡς καὶ Ἀπολλώνιος ὁ Δύσκολος*, 4²²:

Դավիթը հիշատակում է հնչյունի սահմանումը իբրև «վիրատրութիւն

¹ Հմմտ. Դավիթ, *Մահմանք*, էջ 176, *Քերդողն գիտէ թէ էն եւ ովն բնութեանք երկարք են, թէպէս եւ զպատճառսն ոչ գիտէ, այլ վերածգէ յերածշտական իմաստասէրն* = հուն. 39-40, *ὁ γραμματικὸς οἶδε μὲν ὅτι τὸ ἦ καὶ τὸ ὦ μακρὰ ἐστί, τὴν δὲ αἰτίαν τῆ μουσικῆ παραπέμπεται*:

աւղոյ»։ «[Եւ սասցին] զճայն վիրաւորութիւն աւղոյ, արհնակաւ զխիտն ինչ ընդ իրեարս բաղխելով, զի վիրաւորեալ աւղն ի միջոցին տացէ ճայն. իսկ անգայտն եւ կակուղն ոչ տացէ զհնչումն» [82₂₃]:

Հելիոդորոսը վկայում է, որ Դիոգենես Բարելոնացին հնչյունը սահմանում է իբրև «օդ հարվածյալ» [«վիրավորեալ»] (118)՝ *φωνή ἐστὶν ἀήρ πεπληγμένος*, բայց քանի որ ըստ Պլատոնի օդը մարմին չի ճանաչվում, ըստ այդմ նա ձևափոխում է Դիոգենեսի սահմանումը, դարձնելով այն «օդի հարվածում»՝ *πληγὴ ἀέρος*, 482₅ (հմմտ. *πληξίς ἀέρος* 312₁): Այս նույն բանաձևը մեջբերվում է Դավթի «Սահմանքում». *քանզի քերթողքն ի սահմանել զճայն՝ վիրաւորութիւն աւղոյ սասցին*, 178 = հունարենի *οἱ μὲν γραμματικοὶ τὴν φωνὴν ὀρίζονται πληγὴν ἀέρος*, 41₂₆:

Դավթը հաշվի է նստում նաև նրանց հետ, ովքեր համաձայն չէին մեջբերված կարծիքներին և ասում էին, թե «*ընդ արուեստաւորին անցանել յսափանի եւ արուեստն*», և «*սկիզբն արարին ի զրոյ, որպէս զի յառաջակայսն զիշատակն յարածգեսցէ*» [82₂₆]: Ուրեմն, նախամեծար համարվում է զիրը, իբրև արվեստի երկերի հավերժացման միջոցի:

Դիոնիսիոսը, ըստ մեր հեղինակի, հաշտեցրեց երկու կարծիքները կամ սկզբունքները, կարծելով, «*թե զճայնի բնութիւն գտանել իմաստասիրաց է, եւ զիրն տեսցի ի կարգի իւրում, զի մի՛ այլ ընդ այլայ քննութեամբ ծաղր լիցի արուեստաւորն. եւ իւր սկսեալ բուռն եհար զնայն ինքն զիրէս, եթե՛ “քերականութիւն է հմտութիւն”*» [83₄]:

Թրակացի հորջորջված (թեև նա Բյուզանդիայից էր) (119) Դիոնիսիոսի և նրա աշխատության մասին հունարեն լուծմունքները մեծ զովասանքով են արտահայտվում, 158₁₇:

Այն կարծիքը, թե հնչյունի ուսումնասիրությունը պատկանում է փիլիսոփայության բնագավառին, կարողում ենք Դավթի «Սահմանք»-ում. *եւ դարձեալ իմաստասիրութիւն զիտէ գրնութիւնս ճայնից*, 177 = հունարենի *καὶ πάλιν ἡ φιλοσοφία γινώσκει τὴν φύσιν τῆς φωνῆς*, 40₂₁:

Ապոլլոնիոսի որդի Հերովդիանոսի մասին հիշատակվում է հունարեն լուծմունքներում ևս՝ *ὁ δὲ Ἡρωδιανὸς οὗτος υἱὸς μὲν γέγονεν Ἀπολλωνίου τοῦπίκλην Δυσκόλου*, 129. սակայն Դավթի պատմածը նրա մասին, թե նա այրել է քերականական երկերը, հույն աղբյուրներին անծանոթ է¹:

¹ Համանման արարք երբայական ծագումնաբանական գրքերի նկատմամբ վերագրում էին Հերովդեսին, տես **Եւսեբիոս Կեսարացի, Պատմութիւն Եկեղեցւոյ**, էջ 41 (120):

§1. Քերականության մասին

Քերականությունն է հմտություն որք ի քերդողաց եւ ի շարագրաց իրրու բազում անգամ ասացելոց:

Դավիթը սկսում է իր մեկնությունը նույնից, ինչից և հունարեն լուծմունքները: Նրան հայտնի է ոմանց տարակուսանքը՝ նրանց, ում թվում էր, թե Դիոնիսիոսի *հմտությունն էմպեյրիա* բառը տանում է ավելի շուտ դեպի անմտություն, քան դեպի իմացություն: Նա այս կարծիքին համամիտ չէ և կարծում է, թե «*նա (իմա՝ Դիոնիսիոսը) ճշմարտի գոր ինչ եզրան և կարգաց ի հմտութենն եւ ի բանաւորութենն*¹»: Ընդ որում Դավիթը բացատրում է, թե ինչ են նշանակում *հմտություն* և *բանաւորություն* հասկացությունները. «*ձարցեայ զքեզ բայ եւ կամ անուն եւ քո ոչ կարացեայ ըստ արժանայն պատասխանել ի նախնեացն անկար սովորությունն ըստ նմանութեան երթալոյ անասնոցն ի սովորական տեղիս*»: Սակայն բանավորությունը ունակություն է «*որձանել զխնդիրն ըստ նշանաւոր հրամանաց ի լսելոյ մարդոյ ստուգելով զբազում անգամ ասացեալսն քերդողաց եւ շարագրաց, այլ ոչ զաւտար ինչ որ ոչ լսի բան*»:

Դավթի շոշափած խնդիրը քննվում է հունարեն լուծմունքներում ևս: Դրանցից իմանում ենք, որ այս հարցը բարձրացրել են Պաղոմենոս Անմականը և ուրիշներ, ովքեր տհաճությամբ էին վերաբերվում Դիոնիսիոսին այն պատճառով, որ նա «բանականագույն քերականությունը անվանել է “փորձառություն”, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ միշտ իրենց հավասար իրերի պահպանում և անգիտակից հիշողություն»:

Πτολεμαῖος ὁ Περιπατητικὸς καὶ ἄλλοι τινὲς ἐγκαλοῦσι Διονυσίῳ ἐμπειρίαν εἰρηκότι τὴν λογικωτάτην γραμματικὴν ἣτις ἐμπειρία[ν] φημί τῶν ὠσαύτως ἐχόντων πραγμάτων ἐστὶ τήρησις τε καὶ μνήμη ἄλογος, 165¹⁶, 300¹⁵:

Քերականներն ու առհասարակ հին փիլիսոփայական երկերի մեկնիչները զանազանում էին *πειρά* «փորձը» և *ἐμπειρία* «փորձառությունը» և համադրում էին դրանք *τέχνη* «արվեստ, արհեստ» և *ἐπιστήμη* «գիտություն» կամ *γνώσις* «ճանաչողություն» [հասկացություններին]: Ըստ Մելամարդեսի, *πειρά*-ն՝ [«փորձը»՝ որևէ իրի մեկական ոչ բանական ստուգումն է]՝ *ἢ ἅπαξ τινὸς πραγμάτων δοκιμασία ἄλογος*, իսկ *ἐμπειρία*-ն [«փորձառությունը»՝ նույն բանի հաճախակի ոչ բանական ստուգումն է]՝ *ἢ πολλακίς τοῦ αὐτοῦ πραγμάτων δοκιμασία ἄλογος, 10²⁵*: Մինչդեռ «արվեստը»՝ *τέχνη*-ն գիտություն է կամ գիտելիքների միագումար՝ *σύστημα ἐκ καταλήψεων, 162²⁰, 166²⁵*:

¹ Ավելի ճիշտ կլիներ փոխարեն *ի բանաւորութենն* կարդալ *ի բանաւորութենն* <է>, 84₄:

² Հմտ. Դավթ, Սահմանք, էջ 181, *Հմտությունն է միայ իրի անպատճառ գիտություն ... ներհմտությունն է ընդհանուր անպատճառ գիտությունն ... եւ դարձեալ ներհմտությունն է յիշումն եւ* CXXIV

Եվ երբ Դիոնիսիոսն ասում է, թե քերականությունը փորձառություն է, վարժվածություն կամ հմտություն, այդպիսով նա նսեմացնում է այս վերին աստիճանի բանական՝ *λογικωτάτη*, ամենից շատ բանականություն՝ *λόγος* պահանջող գիտությունը, վերածելով այն սովորական, բանականությունից զրկված վարժվածության՝ *δοκιμασία ἄλογος*, կամ, ինչպես արտահայտվում է մեր Դավիթը, անբանության՝ *ἀλογία*:

Լուծմունքների հեղինակները համարում են, որ սա թյուրիմացություն է և փորձում են այն մի կերպ փարատել: Մելամադդեսին թվում է, որ վիճահարույց բանն այստեղ գործածվում է «իմացություն» բառի փոխարեն. [«այստեղ ոչ բուն իմաստով է ասում՝ *δωδωζήθησιν* փոխարեն»] *ένταύθα καταχρηστικῶς εἶπειν ἀντὶ τοῦ γνῶσις*, 11₂: Այլ կարծիքի համաձայն, այն դրված է «արվեստ»-ի փոխարեն. [«*ψηροδωροῦσιν* բանն այստեղ Դիոնիսիոսը վերցնում է *արվեստ*-ի իմաստով»] *τὴν γὰρ ἐμπειρίαν ένταύθα ὁ Διονύσιος ἀντὶ τῆς τέχνης ἐξέλαβετο*, 300₂₆: Բյուզանդական դարաշրջանին պատկանող Մեկնության հեղինակը կարծում է, որ [«փորձառություն» բառով երբեմն անվանում են անբան ճանաչողությունը, և երբեմն՝ բանական»] *ἐμπειρία δὲ λέγεται ποτὲ μὲν ἢ ἄλογος γνῶσις, ποτὲ δὲ καὶ ἢ διὰ λόγου γνῶσις*, և որ Դիոնիսիոսի գործածմամբ այս բառը պետք է հասկանալ հենց «բանական ճանաչողություն»՝ *λογικὴ γνῶσις* իմաստով, 566₂₆:

Կա և այսպիսի մեկնություն, թե [«միշտ չէ, որ քերականությունն իր նպատակին է հասնում բանականությամբ, այլ հաճախ նաև զուտ սովորություններ ... հաճախ հայտնաբերում ենք, որ քերականությունը ոչ բանական է»] *οὐ λόγῳ πάντοτε κατορθοῦται ἢ γραμματικῇ, ἀλλὰ πολλάκις καὶ ψιλῇ παραδίδει ... πολλάκις εὐρίσκομεν τὴν γραμματικὴν ἄλογον*, 165₂₀:

Նույն միտքն է արտահայտում Ստեփանոս մեկնիչը՝ այլ ձևակերպմամբ: Քանի որ քերականությունը խառն՝ *μικτὴ* համակարգ է, մասամբ դա բանական է՝ *λογικῇ*, և մասամբ գործնական՝ *πρακτικῇ*, [«փորձառությունը որոշում և սահմանում է դրա գործնական մասը, իսկ մասից տարածվում է անորոշի վրա»] *διὰ τοῦ ἐμπειρία τὸ πρακτικὸν μέρος αὐτῆς ἀφορίζεται τε καὶ ὀρίζεται, ἀπὸ δὲ μέρους τὸ ὅλον διαλαμβάνει*: Ուստի և նրան հայտնի է այն կարծիքը, թե [«փորձառությունը անբան վարժվածություն է և բանական ճանաչողություն»] *ἐμπειρία ἐστὶν ἢ ἄλογος τριβὴ καὶ ἢ λογικῇ*

անբան պահպանությունն մարդկային բազմաբար եւ մոյնաբար երեւեցելոցն = հուն. էջ 43₂₃: *Ἐμπειρία* բառը միշտ է փոխանցվել իբրև *ներմատություն*, և նույն *ներմատություն*-ը սպասելի էր նաև Դիոնիսիոսի թարգմանության մեջ:

Նույն տեղում, *արուեստ ունակությունն ոմն է եւ գիտությունն*, 181 = *ἢ τέχνη ἔξις καὶ γνῶσις ἐστίν*, 43₃₂: Հմմտ. նաև էջ 182 = հուն. 44₂₃ (121):

γνώσις, սակայն նա չի կիսում դա, և պաշտպանում է սեփական բացատրությունը, այն է՝ որ Դիոնիսիոսի սահմանումը վերաբերում է սոսկ քերականության գործնական կողմին, 167⁵:

Սեր Դավիթը, հավանաբար, այն տեսակետին է հետևում, որ մեկնիչների գանգատները անհիմն են, և Դիոնիսիոսի բանաձևը պարփակում է քերականության ոչ միայն գործնական, այլև տեսական նշանակությունը, քանի որ այստեղ խոսվում է ոչ միայն *հմտութեան՝ էմպեiriά*, այլև փորձնական ճանաչողության մասին՝ ճանաչողություն այն ամենի մասին, ինչ որ մատենագրությունն է պարունակում: Սրա մեջ է նա տեսնում փորձառության և բանականության՝ *էմպեiriά* և *լογικη*-ի զուգակցումը:

Եւ մասունք են նորա վեց: Դավթի մեկնությունն (122) ասում է. եցոյց զքերդողական մասունս, որ հատեալք են ի բոլորէ. եւ եթէ զմի ոչ կայցի յայսցանէ քերդողն, ոչ ասի կատարեալ արուեստաւոր: Քանզի տեսալք ճարտասանականին երիւք այսոքիւք կատարին եւ վարին՝ ատենականաւ եւ բաղխոհականաւ եւ կացրդականաւ, զուգահաւասար հատեալք ի սեռէ. եւ զնոյն ինքն բերելով յինքեան, որպէս զկենդանութիւն կենդանին, որոց եթէ ոչ ունիցի որ զմի ի նոցանէ ոչ կատարեալ ասի ճարտասամ¹:

Խոսքն այն մասին է, թե ինչու քերականությունը բաժանվում է մասերի, և ո՛չ տեսակների, և ինչ տարբերություն կա դրանց միջև:

Մասը՝ *μέρος*, ըստ Դավթի, ինքնուրույն մեծություն չէ, այլ ամբողջի մի հատված. իսկ տեսակը՝ *είδος*, թեև նույնպես մասնավոր հասկացություն է սեռի՝ *γένος*-ի վերաբերությամբ, սակայն նա ամբողջական մի բան է: Ուստի, եթե որևէ մեկը չգիտե ինչ-որ բանի մի մասը, նա չգիտե և ամբողջը. մինչդեռ որևէ տեսակի իմացությունն արդեն մի ամբողջականության տիրապետելն է: Այս պատճառով քերականության որևէ մասի չիմացությունը նշանակում է քերականի անվան արժանի չլինելը. մինչդեռ ճարտասանության երեք տեսակներից մեկի իմացությունն արդեն ճարտասանի հոչակ է ստեղծում:

Դավթի դատողությունը համարյա բառացի համընկնում է հունարեն լուծմունքներում մեր ընթերցածին. [Ինչո՞ւ քերականությունը բաժանվում է մասերի, և ո՛չ տեսակների, և ի՞նչ է գանազանում մասը տեսակից: Պետք է ասել, որ տեսակները առանձնանում են սեռից և ինքնամփոփ են, ինչպես «կենդանի» սեռից առանձնանում է «մարդ» տեսակը. իսկ մասը՝ տեսակի բեկոր է, չէ՞ որ անկատար է մարդու մասը՝ գլուխը: Ուստի խոսում ենք ճարտասանության երեք տեսակի մասին՝ ատենական, բաղխոհական և կացրդական, և նրան, ով գիտե այս երեք տեսակներից մեկը, կոչում ենք

¹ «Ոչ» մասնիկները՝ էջ 84¹⁸⁻¹⁹, պետք է վերցնել փակագծերի մեջ, այսինքն՝ վերացնել:

կատարյալ ճարտասան, բայց նրան, ով չզիտե քերականության բոլոր մասերը, քերական չեն անվանում, քանի որ քերականությունը համարվում է այս բոլոր մասերից] *διὰ τὶ δὲ μέρη τῆς γραμματικῆς καὶ οὐχὶ εἶδη, καὶ τί διαφέρει μέρος εἶδους; καὶ λεκτέον ὅτι τὰ εἶδη ἐκ τῶν γενῶν διαιροῦνται καὶ αὐτοτελῆ εἰσιν, οἷον ἐκ τοῦ ζῴου γένους διαιροῦμεν τὸν ἄνθρωπον· τὸ δὲ μέρος ἀπόσπασμά ἐστὶ τοῦ εἶδους, ἀτελὲς γὰρ ἀνθρώπου μέρος ἢ κεφαλῆ. Ὅθεν ῥητορικῆς λέγομεν εἶδη τρία, συμβουλευτικόν, δικανικόν, πανηγυρικόν· καὶ ὅτι τὸν μὲν ἐπιστάμενον ἐν τῶν τριῶν τούτων εἰδῶν ῥήτορα τέλειον λέγομεν, τὸν δὲ μὴ ἐπιστάμενον πάντα τὰ τῆς γραμματικῆς μέρη γραμματικὸν οὐ λέγομεν· ἐκ πάντων γὰρ αὐτῆ τούτων τῶν μερῶν ἀναπληροῦται, 301³⁰ (նաև 168¹⁹):*

Ճարտասանության երեք տեսակները հիշատակվում են նաև «Մահմանք»-ում. այստեղ դրանք քարգմանված են նույն բառերով. *ճարտասանական սեռ գորով յերիս բաժանի ի տեսակս՝ յատենականն, ի բաղխոնականն եւ ի կացրդականն, 207 = հուն. 72₅*: Տերմինաբանությունն այնքան հատկանշական է, որ թույլ է տալիս Դավիթ քերականին մասնակից դարձնել «Մահմանք»-ի քարգմանությանը: Մակայն բանն այն է, որ «Մահմանք»-ում ճարտասանության տրոհումը երեք տեսակի սխալ է համարվում՝ *ոչ է բարոք բաժանումնը, ու՜ կալօ՜ճ է՛լի ա՛յտի ղ՛ ճա՛րսի՛ս*. Հետևաբար, մեր Դավիթը, որ այս տրոհման կողմնակից է, չի կարող լինել «Մահմանք»-ի ո՛չ հեղինակը և ո՛չ քարգմանիչը (123): Նրանց գործածած եզրույթների ընդհանրությունը հարկ է վերագրել աղբյուրների նույնությանը կամ քարգմանական գրականության հանրաճանաչ ավանդության:

Ճարտասանության տեսակների առնչությունը միմյանց և իրենց սեռին լուսաբանելու համար Դավիթը դիմում է համեմատության. *որպէս զկենդանութիւն կենդանին, ցանկանալով ասել, որ ճարտասանության տեսակներն այնպիսի հատկություն ունեն, ինչպիսին է կենդանու համար «կենդանի լինել»-ը՝ ինչպես յուրաքանչյուր կենդանի ունի «կենդանություն», նույնպես և ճարտասանության յուրաքանչյուր տեսակն ունի համապատասխան հատկանիշ*: Դավիթն իր օրինակին է հղում մի այնպիսի անբնագրասությանը, որ թվում է, թե մեջբերված օրինակը հանրաժանոթ է և [բռնորին] հասկանալի: Արդյո՞ք մեր հեղինակն ի նկատի չունեն Պորփյուրի հանրահայտ աշխատությունը՝ Ներածությունը:

Նախ՝ վերծանութիւն ներկուռ ըստ առողանութեան: Դավիթն իր առաջ հարց է դնում, թե ինչու Գիոնիսիոսը նախապատվություն է տալիս վերծանությանը՝ ըստ առողանության, այսինքն՝ թե ինչու նա սկսում է վերծանությունից: Նա գտնում է, որ նախապատվությունը (բառացի՝ *նախադասութիւն և ստորադասութիւն, praepositio et postpositio*) ընդհանրապես լինում է երեք տեսակ, երեք հիմքով՝ տեղ, ժամանակ, արժանիք, և

կարծում է, որ տվյալ դեպքում նախապատվությունն ըստ տեղի է, *«քանզի անկար էր առանց սորա այլևս առաջիկայիցն գյարմարութիւն ունել»*:

Ապա Դավիթն առաջարկում է «վերծանության»՝ *անάγνωσις*-ի մեկնությունը: Ըստ այդմ, *վերծանութիւն* նշանակում է «ընթերցում», իսկ փիլիսոփաներն ասում են, թե [դա նշանակում է] *«վերստին ճանաչել (124) հոգւոյ գմռացումն իմաստից արհնակաւ գիտի ծառային»*:

Նկատենք, որ *եւ վերծանութիւն ասի ընթերցումն* արտահայտությունը պակասում էր բնագրից, բայց այն թելադրված է ընդհանուր իմաստով: Մեր սրբագրումը հաստատվում է ոչ միայն ուշ շրջանի մեկնիչ Եսայիի կողմից, ինչպես նշում ենք ծանոթագրություններում, այլև իր իսկ Դավթի՝ նույն տեղի հղմամբ՝ հաջորդ, 87-րդ էջում. *եւ եթե զինչ է վերծանութիւն ըստ մեզ, կամ որպէս ըստ իմաստասիրացն, քաջայայտ է*:

Դավթի այս մեկնությանը հունարեն լուծմունքներից լավագույնս հարմարվում են Հելիոդորոսի խոսքերը. [«արվեստագիրը մասերի դասավորությունը կատարել է ըստ դասավանդման հաջորդականության. նախ երիտասարդը պետք է վերծանի... Իսկ վերծանությունը՝ հոգու նախապես սովորածների վերստին ճանաչումն է... քանի որ ասում են՝ կա հոգեփոխություն, և հոգին, մտնելով մարդկային մարմին, վերստին իմանում և ճանաչում է այն, ինչ արդեն նախապես գիտեր»]՝ *ή τῶν μερῶν τάξις πεποιήται τῷ τεχνουργῶφ κατὰ τὴν τῆς διδασκαλίας ἀκολουθίαν· πρότερον γὰρ ἀναγῶναι δεῖ τὸν νέον... Καὶ ἔστιν ἀνάγνωσις ἡ τῶν πρώτων μαθημάτων τῆς ψυχῆς ἀναγνώρισις... φασὶ γὰρ μετεμψύχωσιν εἶναι καὶ ἐρχομένην εἰς ἀνθρώπειον σῶμα τὴν ψυχὴν ἀναγνώριζεν καὶ ἐπιγινώσκειν ἃ ἦδε προέμαθεν, 453₂₅*:

Այս խոսքերից պարզվում է, որ հույն մեկնիչը նույնպես, ինչպես և Դավիթը, կարծում է, թե քերականության մասերը շարակարգելիս, Դիոնիսիոսը պահպանում էր այն կարգը, որ պահանջում է մանկավարժությունը. երիտասարդ կամ անտեղյակ մարդկանց, նախ քան քերականության մյուս մասերին անցնելը, պետք է սկզբից վարժեցնել վերծանության:

Վերծանության սահմանումը լիովին համընկնում է Դավթի՝ փիլիսոփաներին վերագրածին: Թեպետ ասենք, որ ըստ Հելիոդորոսի ևս, այս սահմանումը գալիս է փիլիսոփաներից, ինչպես երևում է նրա խոսքերից, որ ուղեկցում են նույն սահմանման կրկին հիշատակմանը. [«պետք է իմանալ (իմաստ. Դավթի՝ *եւ գիտելի է*)», որ փիլիսոփաները վերծանությունը սահմանում են հետևյալ կերպ. վերծանությունը հոգու նախնական սովորածների վերստին ճանաչումն է»]՝ *ιστέον δὲ ὅτι οἱ φιλόσοφοι τὴν ἀνάγνωσιν οὕτως ὀρίζονται· ἀνάγνωσις ἐστὶ ἀναγνώρισις τῶν τῆς ψυχῆς προτέρων μαθημάτων, 473₇*:

Հելիոդորոսը բերում է նաև այս սահմանման փիլիսոփաների բացատրությունը. «քանի որ ասում են, թե կա հոգեփոխություն, և հոգին, մտնելով մարդկային մարմին, վերստին իմանում և ճանաչում է այն, ինչ արդեն նախապես գիտեր»: Այս բացատրությունը չկա հայ մեկնիչի երկում, բայց այն, ըստ երևույթին, քաջնված է հակիրճ և անհասկանալի «արինակալ գիտի ծառային» արտահայտության մեջ: Հունարեն լուծմունքներից մեկում նույն հարցի վերաբերյալ ասվում է. «ինչպես ասում են փիլիսոփաների *զավակները* (թարգմանելի է նաև՝ *սարուկները*)», կա հոգեփոխություն և <հոգին>, մտնելով մարդկային մարմին» և այլն՝ *ὥς φασι φιλοσόφων παῖδες μετεμψύχωσιν εἶναι καὶ ἐρχομένην εἰς ἀνθρώπειον σῶμα*, և այլն, 305⁸:

Այստեղ հոգեփոխության մասին կարծիքը վերաբերում է ոչ թե փիլիսոփաներին, այլ նրանց [*զավակներին*]՝ *παῖδες*, իհարկե, ոչ բառի բուն, այլ փիլիսոփայությանը տեսաների իմաստով՝ *νέοι*, *համբակք*: Շատ հավանալի է, որ *Դավթի ծառայ* բառը փոխանցում է *παῖδες* [բառի երկրորդ իմաստը]՝ այն բառի, որ եղել է իր ձեռքի տակ գտնված աղբյուրում: Այդ դեպքում *Դավթի* անհասկանալի արտահայտությունը կարելի է մեկնաբանել այն իմաստով, որ վերծանության սահմանումը նա վերագրում է իսկական փիլիսոփաներին, իսկ դրա բացատրությունը հոգեփոխության միջոցով, որը նա չի բերում, այլ միայն ակնարկում է՝ *παῖδες*-փիլիսոփաներին¹:

Երկրորդ մասում *ἐξήγησις* բառը թարգմանված է *զրուցատրութիւն*, որ այնքան էլ ճիշտ չէ: Ըստ երևույթին, *Դիոնիսիոսի* թարգմանիչն այն շփոթել է *ժողովուրդի* բառի հետ, որն իսկապես նշանակում է *զրոյց*, մինչդեռ *ἐξήγησις* բառը նշանակում է բացատրություն կամ մեկնաբանում²: *Դավիթը* գործածում է *զրոյց* և *զրուցել* բառերը նույն *ἐξήγησθαι* [*բացատրել, մեկնաբանել*] իմաստով:

Այն հարցին, թե [*«ո՞րն է քերականության երկրորդ մասը»*] *τί ἐστί τὸ δεύτερον μέρος τῆς γραμματικῆς*, Մելամուղեցի պատասխանում է. [*«մեկնաբանում ըստ եղած և առկա եղանակների, որ առավել հարմար են բանաստեղծներին»*]՝ *τὸ ἐξηγεῖσθαι κατὰ τοὺς ὄντας καὶ ἐγχειμένους τρόπους τοὺς μάλιστα ποιηταῖς ἀρμόζοντα*, 13³⁰: Հելիոդորոսը կրկնում է

¹ Ծանոթագրություններում, էջ 85, բերում ենք մի նշում, որն առկա է Մագիստրոսի մեկնության մի գրչագրի լուսանցքում, թերևս իբրև *Դավթի* խոսքերի մեկնություն: «Ծառայ» ասելով իբր պետք է հասկանալ վաճառականների այն ծառաներին, ովքեր, օգտվելով իրենց տերերի երկարատև բացակայությունից, կենակցում էին նրանց կամանց հետ: Նրանցից ծնված զավակները վաճառականների վերադառնալու պահին արդեն այնքան էին մեծացած, որ հանդես են եկել վաճառականների դեմ ի պաշտպանություն իրենց ծառայայրերի: Պատմությունը ոչ մի կերպ չի առնչվում մեր բնագրին: Այն վերցված է Նոննոսի՝ *Գրիգոր Նազիանզացու* ճառերի լուծմունքներից, հրատ. Հ. Հ. Մանանդյանի, էջ 54 (125):

² Հմմտ. նաև Աստվածաշնչում՝ *ժողովուրդը ետուն զրոյց*, Թիբ ԺԳ. 28, *ժողովուրդը զրոյց*, Բ.Օր. ԻԸ, 37:

այս արտահայտությունը, ընդ որում [«ըստ բանաստեղծական եղանակների»] *κατὰ τοὺς ποιητικοὺς τρόπους* մեկնում է իբրև [«ըստ առանձնահատկությունների, որ բնորոշ են բանաստեղծություններին»] *κατὰ τὰς ιδιότητάς τὰς ἐγκειμέναις τοῖς ποιήμασιν*, 456₅:

Հայ մեկնիչը, սակայն, ասում է. «Եւ զրուցատրութիւն ասնելի է ոչ ըստ սովորական ինչ խաւսից, այլ կամ զքերդողացն արարուածս, կամ իւրաքանչիւր ուրուք, նոցուն գաղափարաւք ձեւացուցանելով զրուցելի»: Բնագրում ասկա է *գաղափարաւք* բառը, այսինքն՝ *τύποις*. հնարավոր է, որ Դավթի [տրամադրության ներքո եղած] օրինակում *τρόποις* էր, բայց նա սխալմամբ կարդացել է *τύποις*, և այդպես էլ թարգմանել է: Այլ դեպքում այն պետք է հասկանալ այստեղ *ιδιότητεζ* [«առանձնահատկություններ»] իմաստով:

Ջրուցատրութիւն, զրուցել բառերը Դավթի մոտ նույնպես, ինչպես նշեցինք, նշանակում են *ἐξήγησις, ἐξήγεισθαι* «բացատրել, մեկնաբանել»: Այս հիմամբ թերևս կարելի է Դավթին մերձեցնել Դիոնիսիոսի [Քերականության] թարգմանչին: Սակայն չի բացառվում, որ բառի սխալ կիրառության նմանությունը բացատրվում է Դավթի՝ [Դիոնիսիոսի երկի] հայերեն թարգմանությունից կրած ազդեցությամբ:

Քերականության երրորդ մասը Մելամուղեցի մեկնում է իբրև [«արտառոց բառերի և պատմությունների <վերաբերյալ հարցերի> առձեռն պատասխան»] *τῶν γλωσσηματικὸν λέξεων καὶ τῶν διηγημάτων ἢ ἔτοιμος ἀπόκρισις*, 14₂₀: Ըստ Հելիոդորոսի, [«գլոսսա»-ներ են կոչվում բարբառային <բառերը>»] *γλώσσας φησὶ τὰς διαλέκτους*, 462₃₆. Իսկ ինչ վերաբերում է իստորիա-ին, ապա այն հասկացվում է երկու կերպ [«և՛ որպես վաղեմի գործերի մասին պատմություն, և՛ որպես հների օգտագործում»]՝ *καὶ γὰρ τὴν διήγησιν τῶν πάλαι πραγμάτων ἱστορίαν φάμεν, καὶ τὴν τῶν παλαιῶν χρῆσιν*, ըստ որի զանազանում են [«պատմականները» և «գրքայինները»]՝ *ἱστορικοί* և *βιβλιακοί*, 470₄:

Մեր մեկնիչն ասում է. «Նա եւ հարկ է վարդապետին ոչ զաւտար ինչ, այլ զհիրայ լեզուին խաւսս եւ պատմութիւնս ինչ նախնեացն արարեալ լաւագոյնս համառատապէս զհտել, զի իբրեւ հարցանիցի, զհիրաւ լուիցի»:՝

Վերջին արտահայտությունն իր իմաստով և կառուցվածքով համադրելի է հունարեն լուծմունքին. [«ուստի քերականը, ասում է, հարցված լինելով թե՛ իմաստի, թե՛ արտառոց բառի, և թե՛ պատմության մասին, պետք է պատրաստ լինի տալ բացատրություն»]՝ *δεῖ οὖν τὸν γραμματικὸν φησίν, ἐρωτῶμενον ἢ περὶ σημασίας ἢ περὶ γλώττης ἢ ἱστορίας προχειρῶς ἀποδιδόναι τὴν αἰτίαν*, 169₁₆:

Տարօրինակ է թվում Դավթի պահանջը՝ *զհտել համառատապէս*, բայց

որա որոշ գուգահեռ է գտնվում Հելիոդորոսի [մեկնության մեջ], որը նույն-պես կարծում է, թե քերականը պարտավոր չէ իմանալ [պատմությունն ամբողջությամբ՝ այլ հաճախակի գործածվող (126) <ըրվագները>]՝ *πάσαν ιστορίαν, ἀλλὰ τὴν τετριμμένην*, 470¹⁰:

Ուշագրավ է հայերեն թարգմանության ևս մի առանձնահատկությունը՝ Դիոնիսիոսի *ιστοριῶν* բառի *հնագէտ պատմությանց* [համարժեքը]: Արդյո՞ք թարգմանիչը ծանոթ չէր այս բառի երկակի իմաստին և արդյոք չէ՞ր ցանկանում որևէ կերպ ընդգծել այն իմաստը, որն ի նկատի ուներ Դիոնիսիոսը:

Չորին՝ ստուգարանութեան գիտ: Ըստ Դավթի՝ «ստուգարանութեան ձեռք են երեք, յիշեն, յարուեստեն, ի ճայնեն» (եթե բառացի թարգմանենք հունարեն՝ *σχήματα γὰρ τῆς ἐτυμολογίας τρία, ἐκ πραγμάτων, τέχνης, φωνῆς*): «Եւ յարացոյց առաջնումն սափոր, եւ երկրորդին փայտհատ, եւ երրորդին ճնճորով: Բայց ոչ ամենեցուն է զհիտս այս, այլ խոհեմագունիցն եւ եք»:

Հունարեն լուծումներում, օրինակ, Մելամպոդեսը ստուգարանությունը հասկանում է իբրև [«բառերի բանում, որի միջոցով պարզվում է իսկությունը»]՝ *ἡ ἀνάπτυσζις τῶν λέξεων, δι' ἧς τὸ ἀληθὲς σαφηνίζεται*, 14²³: Մրան վալեի մտտ է մի այլ հայ մեկնիչի, Անանունի սահմանումը, ըստ որի ստուգարանությունն է «լուծումն փաղառութեանց ի կատարեալս եւ ի նախաաիպս բառն», 127: Խոսքը, հավանաբար, սկզբնական և ածանցյալ բառերի մասին է: Դրան հաջորդող օրինակից երևում է, որ հայ մեկնիչը, ինչպես և Մելամպոդեսը, կարծում է, թե ստուգարանության խնդիրն է՝ ըմբռնել բառը: Մելամպոդեսը ստուգարանությունն անվանում է «իսկարանություն»՝ *ἀληθολογία*, և համոզված է, որ «հունարեն բառերը առարկաների նկատմամբ իզուր, պատահականորեն չէին կիրառվում», այլ իմաստի վերհամմամբ՝ [«ինչի՞ համար ինչ-որ բան ասվում է այսինչ ձևով»]՝ *χάριν τίνος τόδε τι τοιῶσδε λέγεται*, 14²⁷: Իբրև ապացույց բերվում են օրինակներ: Նույն տեսակետի կողմնակից է նաև հայ մեկնիչ Ստեփանոսը, ըստ որի ստուգարանությունն է «ուղղութիւն անուանց եւ բայից, վասնզի յանհմտութենէ խաւսից թիրեալ են անուանք եւ բայք ամենից ազգաց բայց ի սակաւուց»¹:

Քանի որ Դավթին վերագրվող ստուգարանության [սահմանման]

¹ Ստեփանոս, էջ 188: Նկատելի է, որ Ստեփանոսը նման է Հելիոդորոսին մեթոդով, որ նա հանձնարարում է ստուգարանական ուսումնասիրությունների համար. հմմտ. Ստեփանոսի դատողությունը, 190²⁻⁵ Հելիոդորոսի խոսքերին. [«պետք է ստուգարանել, որպեսզի յուրաքանչյուրն ըստ առանձին մտադրության շարժվելով, շոշափի բառի նշանակությունը»] *δει δὲ ἐτυμολογεῖν ὡς ἂν ἕκαστος κατὰ ἰδίαν ἐπιβουλὴν κινούμενος ἄπτηται τοῦ κατὰ τὴν λέξιν σημαίνοντος*, 470³⁴:

մեկնաբանումը չի համընկնում հունարեն լուծմունքների [բացատրություններին], ապա դրա վավերականությունը վիճարկելի է, նամանավանդ, որ դա այնքան նման է Ստեփանոսի՝ նույն խնդրի վերաբերյալ ասածին:

Հինգերորդ մասը, համեմատությունը, ըստ Դավթի, «*համեմատութիւն է բայի առ բայ եւ անուան առ անուն, եթե ասասցի «անուան» առ «անուն», «ստեղծուածոյ» եւ կամ «կազմածոյ» եւ բերցին անուանք հանգոյն նորին, եւ առաւելն տանի զհաստատութիւն. նոյնպէս եւ բային՝ «ողորմեայն» քան «զողորմեացն»*¹:

Սելամպոզեքը նոյնպէս «համեմատությունը» հասկանում է որպէս բառերի համանման ձևերի համադրություն, որի միջոցով մշակվում են քերականական կանոնները. [«ի՞նչ պատճառով «Հոմերոս» - «Հոմերոսի» և «ընկեր» - «ընկերոջ»]՝ *τίνος ἔνεκεν ὁ Ὀμηρος τοῦ Ὀμήρου καὶ ὁ φίλος τοῦ φίλου*² (127), և բանաձևում է. [«անունները, բայերը և խոսքի այլ մասերը ճշգրիտ հետազոտելով և համադրելով նմանը նմանին, վստահելիորեն մշակում ենք կանոնները»] *ἐπὶ πάντων τῶν ὀνομάτων καὶ τῶν ῥημάτων καὶ τῶν ἄλλων μερῶν τοῦ λόγου ἀκριβῶς ζητοῦντες καὶ τὰ ὅμοια τοῖς ὁμοίοις παρατιθέμενοι τοὺς κανόνας ἀσφαλῶς ἀποφαινόμεθα*, 15¹¹:

Վերջին, վեցերորդ, «դատողական» մասի վերաբերյալ Դավիթը նկատում է, որ այն, «*մեծ թեպէտ եւ ի վերջէ դասեալ, զի սովորութիւն է բանական արուեստատրի յառաջադասել զառաւելն, որպէս զվերծանութիւն, զի զարթուսցէ զլսալսն եւ ապա ընդ միմեանս շաղկապին*»³:

Սելամպոզեքը, բացատրելով, թե ինչու «դատողական»-ը լավագույն մասն է, բերում է հետևյալ նկատառումը. [«եթե մեկը նախապէս չի իմանում վերը նշված քերականության մասերը, դատողի գործը կատարել չի կարող»] *εἰ γὰρ μὴ προοῖδε τις τὰ προλεχθέντα μέρη τῆς γραμματικῆς, τὸ ἔργον τοῦ κριτικοῦ ποιεῖν οὐ δύναται*, 15₃₀: Իսկն ասած, այս նկատառումն ավելի շուտ պատասխանում է Դավթի առաջադրած այն հարցին, թե ինչու «դատողականը» համարվում է վերջին մաս: Իսկ Դավիթն ինքը «դատողական»-ի՝ այլ մասերի հանդեպ առավելությունը տեսնում է նրանում, որ այն «*զհերձուածողացն ընդունայնաբանութիւն լուծանելով, որք ուղղափառութեան անուամբք կամեցան զհրեանցն արդարացուցանել զրիպանս, ի ստուգի քննութենէ դատելոցն յանդիմանի ատարարտի խառնուածն*»:

¹ Բնագիրը խաթարված է. վերջին բառերը ըստ [այլ] տրոհության կարելի է հասկանալ այլ կերպ, այսինքն՝ «*եւ բերցին անուանք հանգոյն նորին, եւ առաւել, [եւ] տանի զհաստատութիւն նոյնպէս եւ բային՝ «ողորմեայն» քան «զողորմեացն*»:

² Հմմտ. Անանուն, Մեկնութիւն, էջ 127:

³ Վերջին արտահայտությունը, որ անթերի չէ Երզնկացու մոտ ևս, Եսային փոխարինում է այլ արտահայտությամբ:

Նման մի միտք նույն խնդրի վերաբերյալ արտահայտում է նաև Բյուզանդացի մեկնիչը. «դատողականը» նա հասկանում է իբրև «ճշգրիտ գիտություն»՝ *ή ακριβής γνώσις*, իսկ քերականին պարտադրում է իմանալ «բոլոր եկեղեցական գրքերը»՝ *τὰ βιβλία τῆς ἐκκλησίας πάντα*, որպեսզի կարողանա տարբերել պարականոն գրքերը՝ [«որպեսզի, եթե լսի օտար ձայնը կամ կեղծ աշխատությունը կամ բանաստեղծությունը, չընդունի այն իբրև իսկական»]՝ *ἵνα ὅταν ἀκούσῃ φωνὴν ξενὴν καὶ συγγράμματα ἢ ποίημα ψευδές, μὴ δέξῃται αὐτό ὡς ἀληθινόν*, ինչպես, օրինակ, Թովմասի Ավետարանը, կամ Պողոսի՝ իրապես՝ Պողոս Սամոսատցու, կամ Աստվածաբանի հայտնությունը, 568¹⁵:

§ 2. Վերծանության մասին

Դավթի մեկնությունը (128) ասում է. «Վերծանութիւն նախադասեալ եղև իբրև զաստիճան առաջին կամ զմուտ դրան ի քաղաք իմաստութեան¹: Բայց խնդրելն արուեստատրիս զներկուս ընթեցմունս եւ զանդադար կրթութիւնս եւ այն ըստ ենթադատութեան, ըստ առճանութեան, ըստ տրոհութեան. եւ սակս այսորիկ զգուշացուցանէ զընթերցողն հմտանալ ներկուս կրթութեամբ, զի մի՛ դարձեալ ի սովորականսն թիրեալ ընթացի ուղեգնացութիւն:

Եւ եթե զինչ է վերծանութիւն (անճյունաց) ըստ մեզ, կամ որպէս ըստ իմաստասիրաց, քաջահայտ է:

Բայց զարմանալ գոյ ընդ արուեստիս, զի յառաջ ասաց զտրին մասունս, իսկ այժմ ասելոց է զմասանց մասունս մինչեւ տարեալ հասուցէ յանհատն, ուստի առաւելապէս շահիցն մատակարարիցի աւգուտ:

Եւ զի՞ նախակարգէ զվերծանութիւն քերդոդաց և ապա շարագրաց. Նախ՝ զի ամենայն արուեստատր զիրն կամի յարգուն ցուցանել. երկրորդ՝ զի նախադուռն իսկ եւ սկիզբն բանատր արուեստիս զիրեանցն ասել լինել քերդոդքն»:

Դավթի կշռադատությունից երևում է, որ քերդոդ բառը նա գործածում է քերական-ի իմաստով. եթե, նախ հանձնարարելով վերծանութիւն քերդոդաց, Դիոնիսիոսը ցանկանում է զիրն յարգուն ցուցանել, պարզ է, որ խոսքը քերականության մասին է: Բացի այդ, բանական արվեստը տրոհվում է քերականության, ճարտասանության և փիլիսոփայության. քերականությունը գտնվում է առաջին տեղում, ուստի այն համարվում է արվեստի սկիզբը կամ նախադուռը (129):

¹ Հմմտ. Հելիոդորոսի խոսքերը, 472-3:

Ենթադաստրիւն՝ *ὑπόκρισις* Դավիթը սահմանում է այսպէս. «*զենթա-
դրութիւն իմանալի է նմանութիւն ներքոկայ դիմացն ձեռով եւ ձայնի նմա-
նապէս, որ գործէ ընթերցողին ըստ քաջութեան հանդիսի, յերկշտութենէ եւ
ի յանդգնութենէ խոյս տալ եւ միայն միջակին սպասելով, յորժամ խորխտա-
կանն զայցէ քան եւ ձեւ ըստ այնմ ընթեռնուլ, եւ եթե խանդադատականն,
ըստ այնմ, զի եւ իւր եւ վասն որոյ քան է, ծանիցի արութիւն եւ մի՛ տապա-
լեսցի, զի մի՛ ծիծաղելի լսողացն լիցի»:*

Հելիոդորոսն ասում է. [«*դերասանութիւնն է առաջադրված անճանալի-
րութիւնների կամ իրադարձութիւնների նմանակում՝ խոսքի կամ արտաքի-
նի միջոցով*»]՝ *ὑπόκρισις δὲ ἐστὶ μίμησις τῶν ὑποκειμένων προσώπων ἢ
πραγμάτων ἢ διὰ λόγων ἢ διὰ σχήματος*, 474₂:

Ըստ Ստեփանոսի, [«*դերասանութիւնն է նմանակում, որ հարմարվում է
առաջադրված անճանալիութիւններին խոսքով կամ արտաքինով*»]՝
*ὑπόκρισις ἐστὶ μίμησις ἀρμόζουσα τοῖς ὑποκειμένοις προσώποις ἐν τῇ
λόγῳ καὶ σχήματι*, 172₂:

Ըստ Բյուզանդացու մեկնության, [«*դերասանութիւնն է ձայնի և արտա-
քինի արժանահավատ վիճակ, որ վայել է առաջադրված անճանալիության
և իրադարձության*»]՝ *ὑπόκρισις ἐστὶ φωνῆς καὶ σχήματος πιθανῆ
διάθεσις, πρέπουσα τῷ ὑποκειμένου προσώπῳ καὶ πράγματι*, 568₄₃:

Դավթի սահմանումը՝ *նմանութիւն ներքոկայ դիմացն ձեռով եւ ձայնի
նմանապէս* բխում է հունարէն բնօրինակից. [«*պետք է իմանալ, որ դերա-
սանութիւնը առաջադրված անճանալիութիւնների նմանակումն է ձայնի և
խոսքի միջոցով*»]՝ *ιστέον, ὅτι ὑπόκρισις μίμησις τοῖς ὑποκειμένοις
προσώποις διὰ φωνῆς τε καὶ διὰ λόγων ἐστὶ*: Ուշագրավ է Դավթի՝
ὑποκείμενος բառի քարգմանութիւնը. *ներքոկայ՝ ենթակայի փոխարէն*:
Այն, ինչ հետագայում Դավթն ասում է վերծանության մասին, կարելի է
համադրել Մելամպոդեսի բառերին, թե դյուցազնականը պետք է ընթերցել
[«*լարված ձայնով, ... և ո՛չ թուլացած*»]՝ *συντόνῳ τῇ φωνῇ... καὶ μὴ
ἐκλελυμένῃ*, իսկ կատակերգականը՝ [«*ինչպէս կյանքում, այսինքն՝ նմա-
նակելով երիտասարդ կանանց կամ պառավներին, վախկոտ կամ ջղային
տղամարդկանց*»]՝ *ὡς ἐν τῷ βίῳ, τουτέστι μιμουμένους γυναικας νέας ἢ
γραιδας ἢ δεδοικότας ἢ ὀργιζομένους ἄνδρας*, և այլն, 16₂₁:

Վերծանել ըստ առոգանության նշանակում է, ըստ Դավթի, «*վերծանել
ճշտորէն*», պահպանելով շեշտադրությունը: Հունարէն լուծմունքում, այն է՝
Ստեփանոսի մոտ, կարդում ենք. [«*և ըստ առոգանության, այսինքն՝ [ձայնի]
ճիշտ լարվածությամբ*»]՝ *κατὰ προσῳδίαν οὖν, τουτέστι κατὰ τὸν ὀρθὸν
τόνον*, 172₁₂:

Վերծանել ըստ տրոհության. «*Իսկ ոչ ուղիղ տրոհելն ըստ չար խոհա-*

կերի զանդամսն ոչ ուղիղ յաշել, որ է զմիտս ի մտաց եւ զքան ի բանէ ոչ զատուցանել»¹: Ըստ էութեան նույն միտքը արտահայտել է Մելամաղդեանը. «առանձնացնում և հեռացնում է բառը հաջորդ բառից և հնչյունները՝ հնչյուններից»] *ή διαστέλλουσα καὶ διαχωρίζουσα ἢ λέξεις ἀπὸ τῶν ἐπιφερομένων λέξεων ἢ στοιχεῖα ἀπὸ τῶν στοιχείων*, 17₁, նաև 172₁₅:

Երեք կետերով ներկայացված պահանջների անհաջող իրագործումը կարող է ծաղրանք հարուցել. *մի՛ ծիծաղելի յտղացն լիցի*, 88₃, *այլ ինքն ծաղրեկաց*, 88₈, *ինքն անարուեստ ցուցաւ*, 88₁₄: Բյուզանդացու մեկնության մեջ. «Այն ինչ կոչվում է դերասանություն, շատ է դուր գալիս ունկնդիրներին. բայց առողջությունը ևս երևան է հանում արվեստը և փայլուն է դարձնում վերժանությունը. և տրոհումը լավագույնս հայտնում է [բնագրում] պարունակվող միտքը»] *ή γὰρ ὑπόκρισις λεγομένη πᾶν ἀρέσκει τοῖς ἀκροαταῖς· ἀλλὰ καὶ ἡ προσωδία ἐκφαίνεται τὴν τέχνην καὶ τὸν ἀναγνωστὴν λαμπρύνει· καὶ ἡ διαστολὴ τὸν περιεχόμενον νοῦν κάλλιστα ἐκφαίνει*, 569₁₄ (*հմմտ. պարունակելան ի նմա միտք անյայտացաւ*, 88₁₃):

Վերժանության կանոնների բացատրությունը Դավիթն ավարտում է նկատելով, թե մինչ այստեղ ասվածն օգտակար է բոլոր բանավոր արվեստավորներին, «*իսկ յայսմ հետէ զհիրեանցն ձեռնարկութիւն ի մէջ առեալ քերդողացն*»: Խոսքը ողբերգության, կատակերգության, եղերերգության, հերոսավեպի և քնարերգության մասին է: Այստեղ *քերդող* բառը Դավիթն, անշուշտ, հասկանում է «բանաստեղծ» իմաստով: Թեև նա խոսում է հոգնակի թվով, սակայն պարզ է, որ նկատի ունի միմիայն Դիոնիսիոսին: Ըստ արտահայտության իմաստի, Դիոնիսիոսը նույնպես դասվում է բանաստեղծների կարգը (130):

Տրագոճիա բառը Դիոնիսիոսի թարգմանության մեջ փոխադրված է *ողբերգութիւն* բառով, բառացի՝ *Յրդնօճիա*: Մեկնելիս, Դավիթն առաջարկում է հունարեն բառի տառացի թարգմանությունը. «*Իսկ ողբերգութիւն նոխազերգութիւն տրագոճիա ասի ըստ յունականին առ ի պաշտաւն առեալ Դիոնիսեայ ումենն տուողի որթոյ, որ է պատմութիւն յայտնի*»:

Նրա սահմանմամբ, «*է ողբերգութիւն ... արարուած վեհականաց զքաջաց գործեցեալ իրս եւ զարութիւնս պատմել ահաւորապէս եւ ջընաղ հանգոյն ըստ գործեցելոցն գերազանցութեամբ ամենայնի ղիցազնարար եւ ոչ կաղս ի կաղ ինչ եւ քամահելիս*»:

Ըստ Մելամաղդեսի և այլ մեկնիչների, ողբերգությունն իր անվանումը ստացել է այն հանգամանքից, որ «հաղթողները պարզևատրվում էին

¹ Տե՛ս Դավիթ, Վերլուծութիւն Պորփիրի, էջ 303՝ *Նման է փցուն խոհակերի, որ ոչ ըստ յաղից առնէ զբակմունսն*, 308 = հուն. 162₈, *ἀτέχνω μαγεῖρω ἔοικε κατ' ἄρθρα τὰς τομὰς μὴ ποιοῦντι*.

նոխազով»՝ *ὅτι τράγον ἐλάμβανον ἐπαθλον οἱ νικῶντες*, 18₃, կամ [«վարձատրվում էին նոխազով»]՝ *ἀντὶ μισθοῦ τράγον ἐλάμβανον*, 172₂₀:

Այս բացատրությունը գտնում ենք նաև հայ Անանունի մոտ, ըստ որի «*զողբերգութիւն սակս այնորիկ ասեն նոխազերգութիւն, զի զողբերգութիւնս իրեանց ի սկսանելն եւ ի կատարելն նոխազաւք մեծարեալ լինելն, որք նուիրելն ձաւնեալք Գրոնիսեա, զտողի որթոյ*», 128₈:

Դավիթը նույնն ասում է շատ հակիրճ՝ իբրև հանրածանոթ բան, ուստի և նրա խոսքից այնքան էլ պարզ չի երևում ողբերգության առնչությունը Գրոնիսուսին (131): Ինչպես հայտնի է, ողբերգության ծագման մեջ իսկապես ինչ-որ դեր է խաղացել նոխազը, որը, որպես այգիներ ամայացնող, զոհ էր մատուցվում խաղողի այգիների հովանավոր՝ Գրոնիսուսին, և այդ ժամանակ երգեր էին երգում, որ կոչվում էին *տրագոճիա*, «նոխազի զենման երգեր»: Գրոնիսուսի՝ իբրև խաղողի վազի արարչի հիշատակումը կարելի է մեկնաբանել այն իմաստով, որ Դավիթն ավելի ճիշտ է ըմբռնում ողբերգության ծագումը (132), քան հույն քերականները:

Ինչ վերաբերում է ողբերգության սահմանման որպես այդպիսին, ապա հունարեն լուծումներում կան հանգամանքներ, որ Դավթի օգտին են խոսում. [«ողբերգությունը բանաստեղծություն է»]՝ *տրագոճիա ποιησις էστιν*, 172₁₇: [«Ողբերգությունն իր մեջ պարունակում է պատմություն և հայտարարում է եղած սխրագործությունները»]՝ *Ἡ μὲν τραγωδία ἱστορίαν ἔχει καὶ ἐπαγγελίαν πράξεων γενομένων*, 173₃. նաև Հեղիոդորոսի մոտ, 306₂₅ և 307₂ [«ողբերգությունը ճառում է հերոսական անձանց և գործերի մասին»]՝ *ἡ μὲν τραγωδία περὶ ἥρωϊκῶν προσώπων καὶ πραγμάτων λέγει*, 307₃: Մելամպոդեսն ասում է. [«պետք է վերծանել հերոսաբար, այսինքն՝ բարձր ձայնով, ամենայն լրջությամբ և հանդիսավորությամբ»]՝ *δεῖ ἥρωϊκῶς ἀναγινώσκειν, τουτέστι μεγάλῃ τῇ φωνῇ μετὰ πολλῆς σεμνότητος καὶ ὄγκου*, 17₃₂: Մի այլ մեկնիչ խորհուրդ է տալիս վերծանել [«ողբերգական պատմությունները վերամբարձ ձայնով, հերոսների պես»]՝ *τραγωδικὰ διηγήματα ἐν ὑψηλῇ φωνῇ καθὼς οἱ ἥρωες ἀναγινώσκειν*, 569₂₁:

Կատակերգությունը նույնպես բանաստեղծների ստեղծագործություն է, սակայն *ըստ իրում պատշաճի*, այսինքն՝ իրականության համաձայն, ինչպես ասում է Մելամպոդեսը՝ «այնպես, ինչպես դա լինում է կյանքում»՝ *ὡς ἐν τῷ βίῳ*, 20₁₁: Այն լինում է երկակի. «*ոմանց յանդիմանութիւն վաս կենցաղավարութեան եւ ոմանց յաւժարութիւն վաս կենցաղավարութեան*» [89₁₁₋₁₂]: Ըստ Մելամպոդեսի, [«շատ են եղել կատակերգություններ գրողները, որ ծաղրում և մերկացնում էին չար կյանք վարողներին, և անարդարությունների համար ուրախացողներին»]՝ *πολλοὶ γεγόνασι κωμῳδοί, διακωμῳδοῦντες καὶ ἐλέγχοντες τοὺς κακῶς βιοῦντας καὶ τοὺς ταῖς*

ἀδικίαις χαίροντας, 19¹²: Կան [«ըստ յուրաքանչյուրի կյանքի՝ որովհետև կա արդար կյանք, և կա անարդար»] *κατὰ τὸν ἐκάστου βίον ἔστι γὰρ βίος δίκαιος καὶ βίος ἀδίκος*, 569²⁶:

Դավթի մեկնությունը եղերերգության վերաբերյալ չի պահպանվել: Ըստ Մելամաղղեսի, եղերերգությունն [«է կոչվում դամբանական երգ, որով սինփանքի համար հիշատակում են հանգուցյալի արժանիքները և հորդորելով՝ վաճում են հարազատների և բարեկամների վիշտը»] *καλεῖται ἐπικήδεια πρὸς γὰρ παραμυθίαν, τοῦ τετελευτηκότος τὰ καλὰ μνημονεύοντες, καὶ τῶν συγγενῶν αὐτοῦ καὶ φίλων τῇ παραινῆσει τὴν λύπην ἀναστέλλοντες*, 20²⁸: *τὰ ἐλεγεία* եզրույթը Դավիթը թարգմանում է *դամբանական*, որը համապատասխանում է մեկնիչների *ἐπικήδεια* [եզրույթին]: Ողբերգության մեկնության մեջ Մելամաղղեսի բառերը հարմարվում են հայ Ստեփանոսին վերագրվող [արտահայտությանը]. *նաև մխիթարական՝, զորս ի վերայ մեռելոց եւ կամ այլ ինչ թշուառութիւն կրելոց առնեն*: Եթե այս խոսքերը նույնպես պատկանում են Ստեփանոսին, ապա դրանք, ըստ երևույթին, նա փոխառել է Դավթի մեկնությունից, որտեղ դրանք վերաբերում են եղերերգության, այլ ո՛չ ողբերգության:

Այն, ինչ գտնում ենք Ստեփանոսի մոտ եղերերգության վերաբերյալ՝ *կսկծողական ձայնի մակականչութեամբ ձայնել*, 193¹⁶, մեկնում է «ուժգնակի»՝ *ληγγρωօς* բառը և հիշեցնում Մելամաղղեսի արտահայտությունը. [«բանի որ վիշտն առավել ինչ սրությամբ է ազդում, եթե ձայնը փոխված է հեկեկանքով»]՝ *ή γὰρ λύπη τῇ παρατροπῇ τῆς φωνῆς ἐκ τοῦ κλαυθμοῦ ὀξύτερά τινα παρεισάγει*, 21⁴:

Եւ գտաղ քաջոլորակի: Տաղ [ձևով] թարգմանվել է «վեպ»՝ էպոս բառը: Ըստ Դավթի, «տաղ ասի հոմերականն, յորժամ յարմար բանիք եւ ոլորակաք ի սկսմանէ մինչեւ ցյանկումն զմիտս կատարեալ բերիցէ եւ զշափս» [89¹⁵]: Դավթին ծանոթ է ոչ միայն հունարեն լուծմունքների բացատրությունը. [«”վեպ” է կոչվում գլխավորապես չափածո խոսքը. և առավելապես “վեպ” է կոչվում հերոսական չափածոն»]՝ *ἔπος κυρίως ὁ ἔμμετρος λόγος· κατ’ ἐξοχὴν δὲ τὸ ἠρωϊκῶν μέτρον ἔπος ἐκάλεσαν*, բայց և դրա ստուգաբանությունը. [“վեպ” բառը ծագում է “հետևել չափին” <արտահայտությունից>]՝ *ἔπος δὲ ἀπὸ τοῦ ἔπεσθαι τῷ μέτρῳ*, հմմտ. *ի սկսմանէ մինչեւ ցյանկումն կատարեալ*, 89¹⁶: Դավիթը մերձ է հունարեն լուծմունքներին սրան հաջորդող տաղի սահմանմամբ. *բայց ասի եւ ոլորակ տաղ*, այսինքն՝ *ἀλλὰ τὸ ἔπος λέγεται καὶ τόνος*: Ահշտ այս սահմանումը, այս արտահայտությունը կարդում ենք Հելիոդորոսի մոտ. [«վեպ» է կոչվում <ձայնի պարբե-

¹ Տե՛ս վերը, էջ XCIX-C: Բնագրի մեջ ներմուծված է Z գրչագրի հիման վրա. *ողբերգութիւն զմխիթարական ասէ*, որն, ըստ երևույթին, ճիշտ չէ, 193⁶:

րական> լարում]՝ *τόνος δὲ λέγεται τὸ ἔπος*, 476₂₀ (նաև 307₃₈)։ նրանից իմանում ենք, որ այս ըմբռնումը հիմնվում է Հերոդոտոսի գործածության վրա։ [«այս քաները Պյութիան գուշակասում էր վեցաչափով (քառացի՝ վեցաչափ լարմամբ)»]՝ *ἡ δὲ Πυθία ἐν ἑξαμέτρῳ τόνῳ χρᾶ τάδε*, I, 47, 62:

Տաղի երկրորդ սահմանման վերաբերյալ Դավթի դատողությունն անհասկանալի է։ Խոսքը չափերին վերաբերող ինչ-որ նկատառումների, այն է՝ *անգայտ, մեծասար, մեծավերջ՝ փորրίχιοσ, τροχάιοσ, ἱαμβοσ* ուղղորդի մասին է (հմմտ. Մելամուղեան, 21₆, Հելիոդորոս, 476₁₅):

Եւ գրնարական քերդութիւնն ներդաշնակայէս: Անցնելով քնարերգությանը, Դավթն այն սահմանում է իբրև «մասն իմաստասիրութեան, ըստ աստեղագիտութեան, ըստ երկրաչափականին, ըստ քուականին ունի հանգամանս, զի գդաշնակումն ճայնին, զոտինն եւ զաղոյն ի ներքս ի յիրսն համանման եւ ոչ աւտարս ինչ քերիցէ»:

Հունարեն լուծումներում, ինչպես, օրինակ, Մելամուղեանի մոտ, խոսվում է [«չափը պահպանել և մեղեդիների հորինման հոգալ»] անհրաժեշտության մասին՝ *τὸ μέτρον διασώζειν καὶ τῶν μελῶν ἐπινοεῖν τῆν εὐρῆσιν*, 21₁₂:

Քնարերգության իբրև մաթեմատիկայի մասի սահմանմանը հանդիպում ենք Դավթի «Սահմանք»-ում։ Այստեղ խոսքը, իսկն ասած, երաժշտության մասին է։ Մաթեմատիկական գիտությունները բաժանվում են նշված չորս մասերի, քանի որ դրանց միավորող հասկացությունը քանակն է, որ քվարանության մեջ արտահայտվում է թվով, աստղաբաշխության մեջ՝ շարժումով, երկրաչափության մեջ՝ տարածությամբ և երաժշտության մեջ՝ հնչյունների տևողությամբ¹։ Մեր բնագրում առկա է *իմաստասիրութիւն՝ ուսումնականի* փոխարեն։

Եւ զխանդադատականն քուականի: Այս մասը պակասում է Դավթի մեկնությունից։ Ըստ Մելամուղեանի, «խանդադատականը» (կարեկցականը) [«նույնպես որոշ տեսակի բանաստեղծություն է, որն ասում էին աճյունի ներկայությամբ, ողբերգելով իրեն հանգուցյալին»]՝ *πάλλιν ἔστι τινὰ ποιήματα, ἃ ἐπικειμένον τοῦ λειψάνου ἔλεγον θρηνοῦντες αὐτὸν τὸν τεθνεῶτα*, 194₄։ Ստեփանոսի քառերը՝ *դարովական քանք ... երբեմն ի կենդանութեան եւ երբեմն ի մահու*, 194₄, թերևս փոխառված են Դավթի մեկնությունից (133):

Համադրելի է Դավթի՝ *եթե ոչ պահիցէ զխարութիւն* [արտահայտությունը] Մելամուղեանի [«եթե չպահպանի այս»]՝ *ἐὰν μὴ παραφυλάττωνται ταῦτα*, 22₂, ինչպես և *ունակացեալ...* [«հատկություններ ... այսինքն՝ այն, որին հաղորդ են»]՝ *ἔξεις... τουτέστιν ὧν τινῶν μετέσχοιν*, 22₈ հետ (134):

¹ Դավթ, Սահմանք, պրակ Դէ = հունարեն *πράξις κ*։
CXXXVIII

§3. Շեշտի մասին

Ուղղակի է քացազանչութիւն պատկանաւոր ձայնի: Դավիթը տրամաբանում է հետևյալ կերպ. Իսկ զի ասէ քացազանչութիւն՝ քացազանչութիւն ուղղակի սեն իմանի, քանզի հաւասարապէս անշնչիցն եւ շնչաւորացն եւ քանաւորացն է: Իսկ ուղղակն միայն քանականիս աս ի պատկանաւոր ունելոյ ձայն, եւ ռմանց ծանաւթ լեալ աս ի կրկնութենէ, որպէս ի յունական լեզուին, իսկ այլ ազգաց ոչ եւս:

Եւ թերեւ տարակուսեցի որ, թե շեշտ վերացմանն աղազաւ ասի ուղղակ, իսկ բութն ընդէ՞ր. այս է, զի որպէս նա ի վեր հանէ, սա ի խոնարհ նմանապէս զհջուցանելով հարթէ, որք ի մի տեղ եկեալ բաղկացուցանեն զպարոյկն, ըստ առակի ծայրիցն՝ ի սպիտակէն եւ ի սեւոյ գորշն, իսկ ընդ մահ եւ ընդ կեանս ոչ է միջոց:

Դավիթի բառերի իմաստն այն է, որ «ձայնի անդրադարձում»՝ *ἀπήχησις*-ը սեռային հասկացություն է, իսկ «ձայնը»՝ *φωνή*-ն՝ տեսակային է, որ հատուկ է միայն մարդուն: [Այս միտքը] արտահայտված է Մելամուղեւի մոտ ևս. [«Ի՞նչ է շեշտը: Ասում է, որ ձայնի անդրադարձում է, այսինքն՝ արձագանք: Ո՞ր ձայնի՞ ցանկացած ձայնի: Ո՛չ: Իսկ ինչպիսի՞: Ներդաշնակ՝ ... որպիսին է մարդկային ձայնը»] *τί οὖν ἔστι τόνοϛ; φησὶν ἀπήχησιϛ, τουτέστιν ἡχοϛ. Τίνοϛ φωνήϛ. Οἰασοδήποτε φωνήϛ; οὐ. Ἄλλὰ ποίαϛ; τῆϛ ἔναρμονίου, ... οἷα ἔστιν ἡ τοῦ ἀνθρώπου φωνή*, 22¹⁸:

Պետք է նշել Մելամուղեւի արտահայտությունները «սուր», «բութ» (քանացի՝ «ծանր») և «պարույկավաճ» շեշտերի վերաբերյալ. [«այս նշանն (իմա՝ «սուրը») ունի <տոնի> բարձրացման <նշանակություն>»] *τὸ σημεῖον τῆν ἐπὶ τὰ ἄνω φορὰν ἔχει*, 22²⁴ կամ [«ուղղված է վեր»] *ἐπὶ τὰ ἄνω νεύουσιν*, 23³. [«այս նշանն ունի <տոնի> իջեցման <նշանակություն>»] *τὸ σημεῖον αὐτοῦ τῆν ἐπὶ τὰ κάτω φορὰν ἔχει*, 23⁶, կամ [«՝ծանրը՝ ուղղված է վար»] *ἡ βαρεῖα κάτω νεύει*, 23¹³. [«՝պարույկավաճ՝ նշանը մատնում է «սուրից» և «բութից» կազմված լինելը, <որ> վերջիվերջո ի մի են գալիս միևնույն վանկում»] *τὸ σημεῖον ἐλέγγει συγκεῖμενον ἐξ ὀξεῖαϛ καὶ βαρεῖαϛ ... ὕστερον δὲ συνελθουσῶν εἰς μίαν συλλαβήν*.

Դավիթի համեմատությունը՝ *ի սպիտակէն եւ ի սեւոյ գորշն* չկա քերականական լուծումըներում, բայց առկա է Դավիթի փիլիսոփայության ներածությունում [«Փահի որ գորշը՝ սպիտակի և սևի խառնուրդ է»]՝ *τὸ γὰρ φαιδὸν μίγμα ἔστι τοῦ λευκοῦ καὶ μέλανοϛ*, 7³¹ (հայերեն քարգմանության մեջ, «Մահմանք»-ում, այս մասը բաց է թողնված) և Էլիասի փիլիսոփայության ներածականներում՝ [«նմանապես և գորշը՝ միջինն է (հմմտ. *միջոց*՝ Դավիթի մեկնությունում) սպիտակի և սևի»]՝ *ὁμοίωϛ καὶ τὸ φαιδὸν μέσον ὄν λευκοῦ καὶ μέλανοϛ*, 7¹⁰:

§ 4. Կետի մասին

Ներածականում քննվում է, թե ինչն՞ արվեստավորը շեշտի մասին խոսում է կետից առաջ: Դավթի կարծիքով, դա ունի երկու հիմք. *քանզի որոշակն մարդկայինս քարքառոյ է, եւ քանզի հարկաւորէ յասացուածին նախ որորակին եւ ապա կիտին ունել զկարգն*:

Այդպիսի միտք չկա հունարեն լուծմունքներում, բայց դրանց ոգով է շարադրված:

«Իսկ զի՞ սասց զիրաքանչիր որ ի կիտին յառաջագոյն»,- շարունակում է Դավիթը:

Դավթի արծարծած խնդիրը լիովին հասկանալի չէ, այն սխալ էր մեկնարանվել նաև հնում¹: Ամենայն հավանականությամբ, վեճի առարկան հետևյալն է՝ ինչու Դիոնիսիոսը անմիջապես հիշատակում է երեք կետ, և դրանցից յուրաքանչյուրի վրա կանգ չի առնում առանձին-առանձին: Դավթի կարծիքով, արվեստավորը միանգամայն ճիշտ է վարվել, կամ, ինչպես ինքն է արտահայտվում՝ «արուեստի», ընդորում բերում է երկու նկատառում. նախ, «կէտք են երեք, կէտ աւարտեալ, միջակ, ստորակէտ» սահմանմամբ արվեստավորն իսկույն բնութագրում է դրանց էությունը. երկրորդ՝ «զի տեղեալն եւ ձայնի զաւարտեալ կէտն իբրեւ զարքայ, իսկ զերկուսն իբրեւ զծառայս նորին»:

Այս խոսքի ըմբռնման բանալին մեզ ընձեռում է Ստեփանոսի հունարեն լուծմունքը. [«կետերը երեք չեն, այլ <ուներ> երեք կերպարան»] *ού τρεις είσι στιγμαί, ἀλλὰ τύποι τρεις, 177*⁶, ընդ որում [«վերջակետը դրվում է տառի գլխին»] *ή τελεία τίθεται δὲ ἐπὶ κεφαλῆς τοῦ γράμματος, 177*¹⁰, [«միջակետը դրվում է տառի մեջտեղը, իսկ ստորակետը՝ ներքևում, տառի ծայրին»] *τίθεται δὲ ἡ μὲν μέση ἐν τῷ μέσῳ τοῦ γράμματος, ἡ δὲ*

¹ Դիոնիսիոսի բնագիրը ճանաչում էր սկզբնապես միայն երկու նշան. *մέση*՝ «միջինը» համարվում է ընդմիջարկություն (*Μέση* bei Dionysius, G. Uhlig, Heidelberg Festschrift zur XXXVI Philologenversammlung in Karlsruhe, S.76): Շատ հավանական է որ վեճի առարկան՝ սկզբնական արտահայտությունը չի եղել նախնական բնագրում: Դավթի հարցը չի կարելի շփոթել այն տարակուսանքի հետ, որ հայտնում է հույն մեկնիչ Ստեփանոսը նույն կետի մասին գլխի առթիվ: Տրոհության նշանները նա ավելի առոգանությանն է վերապահում և այս պատճառով նշված գլխի մեկնության ներածության մեջ փորձում է բացատրել, թե ինչն՞ արվեստավորը նախընտրել է կետի մասին գրել առոգանությունից առաջ: Նա հանգում է այն եզրակացության, որ արվեստավորը շրջանցել է առոգանությունը՝ ելնելով զուտ մանկավարժական նկատառումներից, հատկապես ի նկատի առնելով նյութի անմատչելիությունը երեխաների համար և կանգ է առել կետի վրա, նրանց անտեղյակ չթողնելու և նրանց մարտելի սնունդ մատուցելու համար, 176¹⁹:

Հայ մեկնիչը՝ Եսայի Նչեցին ճիշտ չի հասկացել Դավթի հարցը, և կարծել է՝ խոսքն այն մասին է, թե ինչու սկզբնական արտահայտությունը հայտնվել էր նախորդ գլխի վերջում, ինչպես այն կա Դիոնիսիոսի շատ գրչագրերում:

ὑποστιγμῆ κάτω ἐν τῷ ἄκρῳ τοῦ γράμματος, 177¹⁶: Այսինքն՝ կետերի [տեսակը] որոշվում է ըստ տեղի կամ դիրքի, որ դրանք գրադեցնում են տառին առընթեր, կամ, ըստ մեզ, տողի վրա. դրվում է այն տողից կամ տառից բարձր, ցածր կամ դրանց մեջտեղում՝ դրա համաձայն այն ստանում է իր անվանումը: Այն կետը, որ տողից բարձր է, համեմատվում է «արքային», իսկ դրանից ցածր՝ մեջտեղում կամ ներքևում, վայր են բերվում մինչև դրա սպասավորների դիրքը:

Կետերի այս փոխհարաբերությունները որոշվում են, ըստ Դավթի, ոչ միայն իրենց գրաված դիրքով, այլև հնչմամբ. *տեղեւան եւ ձայնի*: Վերջինիս ներքո հասկացվում է այն, ինչով զանազանվում է, ըստ Դավթի, վերջակետը ստորակետից՝ *չրօնօ*՝ ժամանակով, կամ, ավելի ճիշտ, հապաղմամբ: [«Ասած “ժամանակով”՝ ոչ պահի իմաստով»] ասում է նույն Ստեփանոսը, [«այլ ձայնի տարածությամբ»] *չրօնօ ծէ էիքն օս՝ տօ քարօ, ալլա՞ տօ ճաօտիմաւ տի՞ց փօնի՞ց*, 178¹³ (ինչպես և Հելիոդորոսը, 314¹²), և բացատրում է, թե ինչ է այս «ձայնի տարածությունը». վերջակետից հետո թուլատրելի է հապաղել որքան որ կամենում ես, իսկ ստորակետից հետո միայն շունչ են առնում, որպեսզի անմիջապես անցնեն հաջորդին: Ստեփանոսի խոսքի լուսաբանմամբ հասկանալի է դառնում Դավթի արտահայտության իմաստը՝ արտահայտություն, որ հաջորդում է կետերի՝ արքայի և ծառաների համեմատությանը և դյուրին չէ թարգմանության համար. *արինակ իմն նուազեայն եւ զառաւելեայն այնորիք նշանակութեամբք, իսկ զշափաւորսն* (ավելի ճիշտ՝ *զշափաւորն*, ինչպես J օրինակում) *յտակ*: Այստեղ *այնորիք նշանակութեամբք* նշանակում է *տեղեւան եւ ձայնի*, ընդորում դրանցով *առաւելեայն* կետ-արքան է, այն, որ ունի [այդ հատկությունները] ոչ բավարար քանակությամբ՝ *նուազեայն* ստորին կետ-ծառան է, իսկ *շափաւորն* միջակը:

Ապա Դավթիքը մեկնում է [«ձայնի տարածություն»]՝ *ճաօտիմա տի՞ց փօնի՞ց* [արտահայտությունը]. *Եւ են հանգամանք բնակիտիս* (բառացի՝ *փստիօստիցմի*), *մի՛ ըստ բացարձակ ձայնի, որպէս «ոչ շունք» եւ որ ի կարգին* (Կորնթ. Զ, 10), *եւ միս՝ յորժամ ի միջին կիտին հանգիստ առնուցու, երթեայ ի ստորակետէն, ուստի պատրաստական ի կէտն ելանիցէ ըստ առակի ճանապարհորդութեան՝ Եւ ստորակիտիս է եւ այս, առաջին՝ ունել զբացարձակն եւ սմա, որպիսի՛ «ոչ ապաքէն առաքեայ են»* (Կորնթ. Թ, 1), *երկրորդ, յորժամ պատասխանայ ինչ կարատանայ բանն ըստ այնմ, «ինձ պիտոյ է ի քէն մկրտիլ եւ դու առ իս գաս»* (Մատթ. Գ, 14):

Հույն վերլուծողները՝ Մելամպոդեսը, Ստեփանոսը խոսում են նույն ոգով. վերջակետից հետո կարելի է լռել, որքան որ կամենաս՝ *ծօսս օրօս Թէլօ սիօնօ*, 24²³, և [հետո] անցնել [խոսքի] հաջորդ [հատվածին «մեկ ժամից, և

¹ Հմմտ. Մովսէս, Մեկնութիւն, 161⁹:

երկու, և երեք»] *μετὰ μίαν ὥραν καὶ μετὰ δύο καὶ μετὰ τρεῖς*, 178₁₅: Իսկ ստորակետից հետո չի կարելի այդպես վարվել, չի կարելի երկար հապաղել՝ ինքն ունկնդիրը մեզ ստիպում է շարունակելու (բառացի՝ «անցնել որևէ այլ խոսքի»)՝ *οὐτι ὅσον χρόνον θέλω σιωπῶ, ἀλλὰ καὶ ὁ ἀκούων ἀναγκάζει με ἐπαγαγεῖν τινὰ ἕτερον λόγον*, 24₂₆, 25₂₀, նաև Ստեփանոսի 178₁₆:

Պարզ է, որ Դավթի *բացարձակ ճայն* արտահայտությունը հավասարազոր է «երկար հապաղում» հասկացության. ապա, *ψαυσαυψαυδου ηδὲ ψαυσιωσιωδου* նշանակում է այն, ինչի մասին ասում են լուծմունքները, այսինքն՝ ստորակետը դրվում է այնտեղ, որտեղ արտահայտությունը ավարտված չէ, և ունկնդիրը սպասում է դրա շարունակման: Մխալմամբ Դավիթը ստորակետին ևս հատկացնում է «բացարձակ ճայն»: Ավելի ճիշտ է Անանունը. *ոչ ինչ ստորակետ բացարձակ ճայնի ստի, այլ խոնարհեցուցանէ եւ յերկարէ առ ի վերայ ածելոյ* և այլն 130₁₉ (հմմտ. [*«ակնհայտորեն իջեցնում են ճայնը»*] *καταβιβάζοντες ἐκφαντικώτατα τὴν φωνήν* 178₁₀. *ի վերայ ածել հմմտ. ἐπαγαγεῖν*, 178₁₅):

Հունարեն լուծմունքներում քննարկվում է նաև այն խնդիրը, թե ինչու արվեստավորը նշում է վերջակետի և ստորակետի տարբերությունը, բայց լռում է միջակետի մասին: Պատճառն իսկապես այն է, որ Դիոնիսիոսի մոտ սկզբնապես ոչ մի խոսք չի եղել միջակետի մասին. [դրան վերաբերող հատվածն] ընդմիջարկվել էր ուրիշների կողմից: Մինչդեռ հույն մեկնիչները փորձում էին բացատրել նրանով, որ [*«ծայրերը, քանի որ գրեթե միշտ հակառակ են <միմյանց>, այդ իսկ պատճառով կարոտ են միմյանց համեմատության, իսկ միջակը ոչ լիովին... ինչպես ցուրտը հակառակ է տաքությանը»*]՝ *ὅτι τὰ ἄκρα ἀεὶ ποτε ἐναντία ἐστί, καὶ ἐκ τοῦ ἐναντίως ἔχειν πρὸς ἀλλήλα δεῖται συγκρίσεως, ἢ δὲ μέση οὐδ' ὄλωσ... ὥσπερ οὖν τὸ ψυχρὸν τῷ θερμῷ ἐναντίον*, և այլն, 178₁₉ (հմմտ. Դավթի խոսքերը՝ *ըստ առակի ծայրիցն* և այլն 91₈, ինչի մասին խոսվեց նախորդ գլխի վերջում):

§ 5. Հազմերգության մասին

Հազմերգությանն անցնելիս¹, Դավիթը նախ և առաջ վերապահություն է անում, *«զի ոչ եթե ի հարկատրացն է մասանց արուեստիս, որպէս եւ այլքն, այլ առ կրթութիւն մանկանց»*:

¹ Դիոնիսիոսի բնագիրը մեջբերում է Մագիստրոսը՝ Պետրոս կաթողիկոսին հղած թղթում, որտեղ պետք է սրբագրել *ներտարեալ-ը ներպարառեալ, ստորագութիւն-ը ստորադրութիւն, պարա գոլով՝ պար գոլով*, Կ. Կոստանյանցի հրատ. էջ 33 (135): Թղթերում կան և այլ Դիոնիսիոսից փոխառված արտահայտություններ, օրինակ՝ *վերծանութիւն անվթար յառաջաբերութեամբ*, 207, *տաղս եւ ստիմչս*, 40 (հրատարակիչն իզուր է սրբագրում *ստիմչս*, դարձնելով այն *ստիմչս*, 328) և այլն:

Հելիոդորոսը նույնպես ծանոթ է այն առարկությանը, թե արվեստավորը չպետք է զբաղվի հազներգությամբ՝ քանի որ քերականությունը լոկ խոսքի մասերով է պարապում, իսկ հազներգությունն այդպիսի միտք չունի՝ «[խոսքի մասերը նույնը չեն, ինչ և հազներգությունը]՝ *τὰ δὲ μέρη τοῦ λόγου οὐκ ἔστιν ὁπερ ἡ ραψῳδία*, 314²³: Մակայն նկատի առնելով, որ արվեստավորը պահանջում է բանաստեղծությունների վարժ իմացություն, իսկ դպրոցներում դասավանդվող հազներգությունը դրանց մասն է, Հելիոդորոսն բնավ անտեղի չի համարում դրա մասին խոսելը. [«հազներգությունը բանաստեղծության մասն է, երիտասարդներին առավելապես ծանոթ. դրա համար ցա առանձին խոսում է հազներգության մասին»]՝ *μέρωσ δὲ ποιήματος ἔστιν ἡ ραψῳδία καὶ μάλιστα νέοις ἐγνώσμενων, τούτου χάριν περὶ ραψῳδίας διέλαβε*, 314²⁹: Այստեղից երևում է, որ հարցադրման և լուծման առումով հայերեն և հունարեն լուծումները համերաշխ են:

Դավիթն անցնում է ստուգաբանության. «*հազներգութիւն քստ հռոմիւն լսի գաւազաներգութիւն, վասն զի սարդենի գաւազանաւ, զոր փոխանակ սուգելոյ կուսին, որպէս ասեն, բուսոյց երկիր, պար գոյով Ապողոնի երգեն զհոմերական քերդածսն վասն խնդրելոյ շնորհին, որ ի Հոմերոնէ ասացեալ քերդածացն, որ զանխլացեալ յաղազս դիր ուսման մանկանց յերկուս զիրս՝ յԷդիական եւ յՈդիսիական ի քսան եւ չորս ճառս, քանզի մանկանց է խրոխտելն եւ սրտմտելն բարոք, այլ ոչ զբարոք նախանձն ախտանան եւ զբանական ունել հզար գարութիւն խորհրդոցն: Վասն այնորիկ բաժանմամբ ճառիցն, զի բժշկեսցին միտքն առ ի յամբողջ պատասխանելոյ առ հարցումսն ասել, յորում ճառի է, եւ մի՛ վիատեալ պատահեսցէ ի քաղցր ճաշակէ ուսումնասիրութեանն անգիտանալովն»:*

Մելամպոդեսը և մյուս մեկնիչներն ընդունում են Գիոնիսիոսի առաջարկած *րափօճիա* բառի ստուգաբանությունը, բխեցնելով այն *րափօճիա*-ից, որ համապատասխանում է Դավթի *գաւազաներգութիւն* բառին: Բառի ծագումը նրանք բացատրում են նրանով, որ հոմերոսյան պոեմների երգիչները կատարում էին դրանք [«դափնե ճյուղը ձեռքին»]՝ *ράβδον δαφνίην κατέχοντες*, 28²⁵, 315²³: Մելամպոդեսը սահմանափակվում է [«Ապոլլոնի խորհրդանիշ»]՝ *σύμβολον Ἀπολλωνιακόν* արտահայտությամբ, իսկ Պորփյուրիոսը վերլուծազիրը, Դավթի նման, բերում է նաև դափնիի գոյացման մասին հայտնի առասպելը. Ապոլլոնը, սիրահարվելով Դափնե գեղեցկուհուն, հետապնդում էր նրան, և երկիրն, իբրև մայր, ցանկանալով փրկել զոհին, ճեղքեց իր կուրծքն ու ընդունեց աղջկան, իսկ փոխարենը տվեց մի ծառ, որը կույսի անվամբ էր կոչվում՝ դափնի, *δάφνη*: Ապոլլոնը դրա ոստերից իր համար պսակ պատրաստեց: Ի հիշատակ որի հոմերականք ևս, դափնե ճյուղերը ձեռքին՝ *κατείχον δὲ καὶ κλάδους δαφνῶν*, երգաբանում են Ապոլլոնի

տոնին, 180¹⁵: Այս առասպելը բերվում է և Նոննոսի լուծմունքներում, 71:

Հայ Անանուրը, 131²⁵, հայտնում է, որ «մանկունս յունաց ... գործարանս երածշտականութեան առեալ մահակս սարդենի, որ է դափնի, ելեալ յոս միմեանս եւ երկուս գաւազանաւքն քա<ղ>խեն, կալով ի վերայ ուսոցն եւ երգեն զհոմերական տաղսն»

«Եւ եթէ է՞ր աղագաւ զդափնին առնուն. - շարունակում է Անանուրը,- սակս անթառամութեանն եւ կանաչութեանն եւ հոտոցն, քանզի սա միշտ անթառամ գոյ, իբրոյ թե զայս զուշակելով նոցա միշտ լինել ուրախ»:

Այս հանգամանքը, որ չկա Դավթի մեկնությունում, ամկա է նույն Պորփյուրիոսի մոտ. [«Բնչո՞ւ Հոմերոսի պոեմները երգում են, կրելով այդպիսի ճյուղը: Որովհետև դա բանաստեղծության մշտադալար <մասն> է, ինչպես և դափնին մշտադալար է՝ տերևները երբեք չի թափում»]՝ *διὰ τὴ τοιαύτην ῥάβδον κατέχοντες τὰ Ὀμηρικὰ ἴδουν; Διὰ τὸ ἀειθαλὲς τῆς ποιήσεως, ἐπεὶ καὶ ἡ δάφνη ἀειθαλὲς ἐστὶν οὐδέποτε φυλλορ<ρ>οοῦσα*, 180, ¹⁷:

Իլիականն ու Ոդիսականը, ինչպես և դրանց՝ Ա, Բ և այլ հազներգությունների տրոհվելը, հիշատակվում է հունարեն լուծմունքներում ևս, 315, 480: Քսանչորս հազներգության տրոհման մասին խոսվում է տառի մասին գլխում, 320²⁹: Պետք է առանձին նշել Դավթի կիրառած *Հոմերոսն, Իդիականն, Ոդիսականն* ձևերը:

Հատկանշակա՞ն է, որ Դավթը ոչինչ չի ասում *հազներգութիւն* բառի մեկ այլ ստուգաբանության մասին, որն ընթերցվում է Դիոնիսիոսի հայերեն թարգմանության ամկա գրչագրերում. *ի հազներոյ կարկատուն քանս*: Հունարեն լուծմունքները ջանասիրաբար մեկնաբանում են այս ստուգաբանությունը. անշուշտ, այն ամկա էր վերլուծողների օգտագործած՝ Դիոնիսիոսի գրչագրերում: Մելամպոդեսը վկայում է, որ [«Դիոնիսիոսն ինքը երկու ստուգաբանություն է տվել՝ կամ *կարել* բառից, այսինքն՝ բաժանվածը միացնել, և կամ *ճյուղ-ից*»]՝ *αὐτὸς ὁ Διονύσιος εἶπε τὰς δύο ἐτυμολογίας, ἢ ἀπὸ τοῦ ῥάπτειν, τουτέστι τὰ διεστῶτα συνάγειν, ἢ ἀπὸ τοῦ ῥάβδου*, և այլն, 29¹³:

Դիոնիսիոսի քերականության հենց այդպիսի մի օրինակ էլ, ըստ երևույթին, աչքի առաջ է ունեցել հայ թարգմանիչը: Բայց ի նկատի ամենելով, որ նշված ստուգաբանության մասին չեն հիշատակում ո՛չ Դավթը, և ո՛չ Դիոնիսիոսի հետագա հայ մեկնիչները՝ մինչև Մազիսարոսը, որը դրա առաջին մեկնաբանողն է, կարելի է վիճարկել դրա ամկայությունը Դիոնիսիոսի թարգմանության սկզբնօրինակում: Այստեղ, ինչպես և նույն դպրոցի այլ հուշարձաններում, *Րաֆաճիճ* թարգմանվում է *հազներգութիւն*¹: Հուշար-

¹ **Դափք**, Վերլուծ. Պորփ., հունարեն քննարկի [«Հոմերոսյան տաղերը»]՝ *Ὀμηρικὸς στίχος*, 82⁹⁻¹⁰, առաջին անգամ թարգմանվել է *Հոմերականաց հազներգութեանցն*, երկրորդ CXLIV

ճանների քվազման խնդրի ներկա վիճակում դժվար է ասել, թե ով է եղել այդ բառի հայտնագործողը: Այն, հավանաբար, *ժափածիւ* բառի նյութական քարգմանությունն է՝ [«ճյուղերգություն»]՝ *ժափածիւ*-ի իմաստով, ընդ որում *ժափած*՝ «ճյուղ» բառն արտահայտված է ոչ համապատասխան բառով, այլ փոխարինված է *հազնի* (դափնի) ծառի անվանումով: Համապատասխանում է իսկապես *հազնին* դափնուն՝ դա ուրիշ խնդիր է. համենայնդեպս, *հազներգութիւն* եզրույթի հորինողի պատկերացմամբ դրանք հավասարազոր էին¹:

Եթե դա այդպես է, ապա ուրեմն եզրույթի հորինողին չի կարելի ճանաչել իբրև Դիոնիսիոսի քարգմանչի, քանի որ վերջինը [«դափնե»] ծափունջի ձևը քարգմանում է *սարդենի*, ուրեմն, այլ կարծիքի է դափնի հայերեն համարժեքի մասին: Եվ որքանով խոսքը դափնի՝ *ծափոյ* բառի մասին է, Դիոնիսիոսի քարգմանչին չի կարելի նույնացնել նաև Նոննոսի լուծմունքների քարգմանչի հետ, քանի որ վերջինը *ծափոյ*-ն արտահայտում է *մուրա*² ձևով:

Սակայն եթե մեր տարակուսանքները *ի հազներոյ կարկատուն բանս* արտահայտության վերաբերյալ անհիմն են, և դա իրոք բնագրի բուն մասն է կազմում, ապա հարկ կլինի ենթադրելու, որ Դիոնիսիոսի քարգմանիչը ոչ միայն չի կարող համարվել *հազներգութիւն* բառի հեղինակը, այլև նույնիսկ ճիշտ պատկերացում չունեք դրա բաղադրության մասին: Չգիտենալով, թե ինչ է նշանակում բաղադրյալ բառի առաջին մասը, նա *հազն-(երգութիւն)-ից* ստեղծել է նոր արտահայտություն՝ *հազնել*, արտաքնապես միանգամայն ճիշտ՝ *կատակել՝ կատակ-(երգութիւն)* օրինակով: Հեղինակի կարծիքով, *հազնել* պետք է ունենա այն նույն իմաստը, ինչ և *հազներգել*:

Հնարավոր է, որ այստեղ առկա է նաև *հազագ* բառի ազդեցությունը: Դիոնիսիոսի հնագույն մեկնիչներից մեկը՝ Մովսեսը, հաստատում է երկու բառերի կապը՝ *հազներգութիւն է ելք շնչոյ հազագին*, 161₁₂: Չարմանալի չէ, եթե նույն կերպ մտածում էր նաև Դիոնիսիոսի քարգմանիչը: Առկա գրականությունից փոխառելով պատրաստի *հազներգութիւն* բառը, նա կարող էր

անգամ՝ *տաղս Հոմերականս*, 253. նույն տեղում՝ *ἐπλάττοντο στίχους տաղս ստեղծանելով*: Նոննոսի լուծմունքներում [H. Masnadian, Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz // Zeitschrift für armenische Philologie, Marburg, N 1, 1902, 3, SS. 220-272; N 1, 1903, 4, SS. 273-300], էջ 60 և 61՝ *ի Հոմերոսի հազներգութիւնս գրեալ է*: Փիլոնի Հեսս[եայթ]՝ [Թաղագս վարուց կենաց տեսականի], էջ 10 (136), *ի սկզբանէ Դգ հազներգութեան ի ձեռն այսոց տաղից*:

¹ Աստվածաշնչում երկու անգամ հանդիպում է *հազնի* բառը, և երկու անգամ այն դրվում է հունարեն բնագրի *δγνος* բառի դիմաց՝ *զոսոս հազնեաց, δγνου կածոց*, Գևտ. ԻԳ, 40, և երկրորդ անգամ, Յոր. Խ, 17՝ *κλώνες άγροϋ* [«դաշտի ստալաններ»], սակայն որոշ գրչագրերում, ինչպես, օրինակ, Cod. Alex., կարդում ենք *δγνου*, ինչը համապատասխանում է հայերենի *ձողը հա(ն)զնոյ*:

² Նոննոսի հրատարակության մեջ, էջ 71₁₀ ընթերցվում է. *յաղագս Դափնոյն որ քարգմանի մարտ*՝ փոխանակ *մուրա*-ի: *Տունկելու ուզանէր* նույնպես հարկավոր է սրբագրել՝ *տունկելու-զանէր*, 71₁₆:

մեկնաբանել այն, ստուգաբանորեն մերձեցնելով *հազագ*¹ բառին: Պատասխանի են հասել նրան, ըստ երևույթին, նաև *ողրերգութիւն* եւ *կատակերգութիւն*² բառերը:

§ 6. Տառի մասին

Ներածական մասում, որով օժտված է սովորաբար յուրաքանչյուր գլուխը, Դավիթը նշում է. «Արդ մինչեւ ցայս վայր սկիզբն արարեալ արուեստատրիս քննեաց զմասունս եւ զմասանց մասունս: Իսկ այժմ բուռն հարեալ զնիւթոյն, զի առ փոքր փոքր ելցէ ի վերին կատարելագոյնն»:

«Մասերը» հասկացվում են իբրև Դիոնիսիոսի քվարկած վեց զիտությունները, իսկ «մասերի մասերը»՝ իբրև վերծանության ստորաբաժանումներ: «Նյութ» է կոչվում զիրը՝ նվազագույն միավորը, որից, այնուամենայնիվ, առաջանում են ավելի կատարյալ մեծությունները՝ վանկը, բառը և խոսքը:

Նույն միտքը զարգացվում է նաև հունարեն լուծմունքներում՝ Դավիթի հաջորդ բառերի կապակցությամբ. «Եւ զի առ յաղագս տառի եւ բուռն հարկանէ զգոյ. քանզի տառն անմարմին, իբր թե քանի նշանակ, զի զիտելի կացուցանէ զրովն զբանն, որպէս այրին զայրն: Իսկ նախադասեալ տառիս արինակ իմն ըստ պատուոյ³, իբրեւ ոզի քան զմարմին լուսագոյն»:

Ըստ Մելամպոդեսի, [«որոշ դժվարություն և խնդիր է հարուցում ինքն իսկ խորագիրը. ինչո՞ւ, վերտառելով “Հնչյունների մասին”, նա սկսում է ոչ թե “հնչյուն է”..., այլ՝ “տառ է”»] *ἀπορίαν τινὰ εὐθέως καὶ ζήτησις ἔχει ἢ ἐπιγραφῆς, τίνοσ ἔνεκεν ἐπιγράψας "περὶ στοιχείου" οὐκ ἐπίγαγε "στοιχεῖον ἐστίν... ἀλλὰ "γράμματά ἐστίν"*. Նա հարց է արծարծում, թե [«ի՞նչ է հնչյունը»] *τί οὖν ἐστίν στοιχεῖον*, և տալիս է մի քանի սահմանում. [«արտասանում»] *ἢ ἐκφώνησις*, կամ [«առաջին և մասեր չունեցող ձայն մարդու»] *ἢ πρώτη καὶ ἀμερῆς τοῦ ἀνθρώπου φωνῆς*, կամ ինչ-որ [«նվազագույն»] *ἐλάχιστον*, որից կազմվում են [«վանկեր»] *αἱ συλλαβαί*, վանկերից՝ [«բառեր»] *αἱ λέξεις*, բառերից՝ [«խոսքեր»] *οἱ λόγοι*, խոսքերից՝

¹ Հազագ՝ **հազ-հազ*-ից, գավառական **հեկ-հեկ* = *հեկեկ-եմ*, արդյո՞ք կապված չէ *հեզ, հեզնե* բառերի հետ: Փիլոնի [Այնոցիկ որ ի Լիմելութեան խնդրոց եւ լուծմանց] երկում հանդիպում է *հազածել* բառը, էջ 130, 143, 201՝ որի իմաստը դեռ պետք է պարզել: Այն չունի և ոչ մի առնչություն մտացածին *հազնե*, իբր *բάπτειν*, բառի հետ՝ որպիսի նշանակություն ցանկանում են դրան վերագրել «Հայկազեան»-ի հեղինակները մեր վերլուծած Դիոնիսիոսի տեղիի հիման վրա:

² Դրանք հանդիպում են Նոննոսի Լուծմունքներում, էջ 58 և 36: Գայթակղիչ է ստուգաբանորեն համադրել *կատակ-երգութիւն կոմփոզիա*-ի հետ *ἢ τῶν κώμων φῶν* [«գյուղերի երգ»] իմաստով. *κῶμαι γὰρ λέγονται οἱ μείζονες ἄγροί* [«գյուղեր են կոչվում առավել խոշոր ագարակները»], Մելամպոդես, էջ 208: «Կատակ» պարսկ. - «ճ արար.՝ «տուն» [իմաստով լավագույնս] կհարմարվեր *κῶμαι* [«գյուղեր» բառին]:

³ Հմմտ. վերը, էջ CXXVI:

[«բանաստեղծություններ և արձակ երկեր»] *τὰ ποιήματα և συγγράμματα*, 30₂₆-31₁₈:

Գիտնիստի «դրանք անվանվում են “հնչյուններ” (στοιχεία)» խոսքի վերաբերյալ Մելամուղեանը հայտարարում է. [«և իրոք, քանի որ հնչյունը՝ արտասանումն է, իսկ տառերը՝ պատկերներ և գծագիրներ են»]՝ *τὸ δὲ ἀληθές, ὅτι στοιχεῖον μὲν ἐστὶν ἡ ἐκφώνησις, γράμματα δὲ αἱ εἰκόνες καὶ οἱ χαρακτήρες*, 32₁₈ (հմմտ. Գավթի <զիր> իրր նշանակ բանի): Նրան նաև հայտնի է, որ զիրն է կոչվում *στοιχεῖον*՝ «տարր», «տառ»՝ չորս տարրերի նմանությամբ. [«թերևս ասելի է, որ դրանք անվանվել են *στοιχεῖα*՝ “տարրեր”, «տառեր»՝ չորս տարրերի նմանությամբ»]՝ *εἶποι δ’ ἂν τις αὐτά՝ στοιχεῖα εἰρήσθαι καὶ κατὰ μίμησιν τῶν τεσσάρων στοιχείων*, և դրանցից [«բաղկացած է ամեն ինչ և իրական գոյություն ունի այն, ինչ կա աշխարհում»]՝ *σύγκειται πάντα καὶ ἐν ὑποστάσει ἐστὶ τὰ ἐν τῷ κόσμῳ*. Ընդ ընդունումն 24 տառերից՝ *στοιχείων* կազմվում են խոսքն ու գրականությունը, 36₈:

Գիտնիստի նույն խոսքերը նույն կերպ է մեկնում և մեր քերականը. «*եւ զի ասաց կրկնաբանելով զտառս, ցուցանէ զտարրումն եւ զմիաբանութիւն գրոյ եւ ձայնի անգոյ տարերց հանգոյ՝ ընդ երկրի եւ ընդ կենդանիս միաբանութեան*»:

Հելիոդորոսն ասում է. «ինչպես տարրերը [«խառնվելով, կազմում են մեր մարմինները»]՝ *τῆ μίξει τῆ πρὸς ἄλληλα τὰ ἡμέτερα σώματα καθίστησι*, այդպես և տառերից [«փոխադարձ ընդհանրությամբ»]՝ *τῆ πρὸς ἄλληλα κοινωνίᾳ* կազմվում են վանկեր և այլն, 317₂₅: [«Խառնուրդը»]՝ *μίξις*, կամ [«միահյուսված» <լինելը>]՝ *μετ’ ἀλλήλων συμπελεγμένα*, ինչպես մյուս անգամ արտահայտվում է նույն հեղինակը, 324₃₅, ինչպես և [«միմյանց հյուսվածները»]՝ *καταλλήλως πλεκόμενα*, 197₈, համապատասխանում են Գավթի *միայարութիւն* բառին, իսկ *κοινωνία*-ն հավասարազոր է *միաբանութիւն* արտահայտությանը: Գավթի՝ *միառութիւն գրոյ եւ ձայնի* բառերից երևում է, որ նրան, ի միջի այլոց, խորթ չէր *տառ՝ στοιχεῖον*-ի ըմբռնումը *ձայն՝ ἐκφώνησις*-ի նշանակությամբ, հավանաբար, այս իմաստով նա *տառք* անվանում է *անմարմին*²:

Հայ Անանունը շատ ավելի պարզ, քան Գավթը, արտահայտում է հիմնական միտքը. «*Բայց խնդրելի է (բառացի՝ չդէօն, հմմտ. Մելամուղեանի չդէոսին էջի), թե ընդէ՞ր ի մակագրութեանն տառ անուանելով, բռան հարկանէ զգրոյ. եւ ասեմք, եթե տառ մակագրելով յայտ արար թե, որպէս*

¹ Բնագրում (*անգոյ*) *տարերց հանգոյն*. ըստ երևույթին, *անգոյ՝ տարերց* բառից հետո կրկնվող *հանգոյն*-ի աղավաղումն է: Ե-ն ընթերցում է *հանգոյն տարերց* (137):

² Հմմտ. Մանվանու, *Մեկնութիւն*, 184:

տարերք ճիթ են ամենայն մարմնոյ, այսպէս զիր տարր է եւ ճիթ ամենայն խաւից»¹, 131₉:

Դիոնիսիոսի խոսքերն այն մասին, որ տառերն ունեն [*«շարքն ու կարգ»*] *στοίχον και τάξιν*, Մելամպոդեսը պարզաբանում է, ստուգաբանելով *στοιχείον*-ը *στείχω* [*«անցնել, ընթանալ»*] բայի միջոցով. [վերջինը, ըստ նրա], նշանակում է [*«կարգով ընթանալ»*] *μετὰ τάξεως πορεύμαι*: Տառերն այդպէս են անվանվում, ըստ Մելամպոդեսի, այն պատճառով, որ տառերը հետևում են միմյանց որոշակի հաջորդականությամբ, և ոչ ինչպէս պատահի. [*«ինչպէս κλέος “լուր, համբավ” <բառում> կ <տառը> նախորդում է չ-ին մի վանկում»*] *ὡς ἐν τῷ κλέος τὸ κ̄ τοῦ λ̄ προετάρχη ἐν μιᾷ συλλαβῆ*, 35₂₈:

Այս դաստորոջումը նույն բառի մասին արձագանք է գտել Դավթի մեկնության մեջ. *դասութիւն, զի երբեմն այր ասի եւ երբեմն յար*, և այլն, 94₃:

Հույն քերականները հետաքրքրվում էին տառերի քանակության խնդրով՝ թե ինչու են դրանք 24, և ոչ ավելի: Մելամպոդեսը միանգամայն իրավացիորեն նշում է, որ «գծագիրները 24 են, բայց հնչյունները՝ շատ ավելի բազմաթիվ»: Շատ հետաքրքրական է Ստեփանոսի հայտարարությունն այն մասին, թե կան ժողովուրդներ, որոնք ունեն ավելի շատ տառեր, քան հույները, ընդ որում այս դեպքում հիշում է նաև հայերին. [*«ասում ենք, որ դրանք (իմա՛ տառերը) համարակալվում են, և ասում, որ հույների մոտ ճանաչված են միայն քսանչորսը, մինչդեռ կան ավելի շատ <հնչյուններ>, ինչպէս հայերի և դպտացիների մոտ»*] *λέγομεν οὖν ὅτι ἐκεῖνα ἀριθμεῖται καὶ λέγει εἶναι κδ' τὰ παρ' Ἑλλησι μὴ γινωριζόμενα, ἐπεὶ ἔστι πλείω, ὡς τὰ Ἀρμενίων καὶ τὰ Αἰγυπτίων*, 196₂₉:

Այս խնդիրը ծանոթ է նաև Դավթին, և նրա լուծումը հետևյալն է. *«Բայց բազմութիւն գրոյս, մի՛ զի անարուեստ (քառացի՝ ἄτεχνος) խաւսք, եւ բարբարիկոն լեզու, եւ երկրորդ՝ վասն թաւութեան (քառացի՝ δασύτης) զնոյն կարգել՝ ի գրին, որ ըստ խաւսիցն յարմարին»*, 92₁₃:

Վերջին խոսքերը հղում են հունարենի համեմատությամբ հայերեն այբուբենի հավելյալ տառերին, որ անշուշտ ներառվել են նաև Դավթի մեկնած Դիոնիսիոսի գրի մասին դրվագում:

Հնչյունների դասակարգման բացատրության մեջ Դավթն ունի մի դիտողություն, որ առկա է և Մելամպոդեսի մոտ. *«Բայց ոմանց հակառակելի դէպ եղել եւ ասել եռամանակս՝ տրίχρονα, իսկ ոչ կալաւ գտեղի, վասն զի ոչ համանգամայն երեքին ամանակք ասին, այլ երբեմն մին եւ երբեմն երկուն»*, 94₁₈ (հմմտ. Մովսէս, 163₂₀): Մելամպոդեսն ասում է. [*«իսկ ոմանք <անվանում են դրանք> “եռամանակ”, որովհետև երբեմն տևում են երկու ամանակ,*

¹ Ավելի ճիշտ կլիներ *կարգեալ՝ կարգել* ձևի փոխարեն: Ե-ն կարդում է՝ *պարտ է կարգել*, ի նկատի ունենալով Դիոնիսիոսի թարգմանչին:
CXLVIII

երբ երկար են, և երբեմն՝ մեկ, երբ կարճ են. սակայն անտեղի կոչվեցին եռամսակ. չէ՞ որ չեն ընդունում երեք ամսակ (138) միևնույն պահին»՝ *τινὲς δὲ τρίχρονα, ὡς ποτὲ μὲν ἔχοντα δύο χρόνους, ὅτε μακρὰ ἐστί, ποτὲ δὲ ἓνα, ὅτε βραχέα ἐστίν· ἀλλ' οὐ καλῶς οὗτοι ὠνόμασαν αὐτὰ τρίχρονα· οὐ γὰρ ὁμοῦ ἐπιδέχεται τοὺς τρεῖς χρόνους*, 38¹⁹:

Բաղաձայնները և դրանց դասակարգումը Դավիթը մեկնաբանում է պատկերավոր ձևով, համեմատելով գիրը մարդու մտքի հետ, ձայնավորները՝ նրա զգացողությունների, իսկ բաղաձայնները՝ մարմնի անդամների հետ: Ինչպես զգացողության համար ոչ բոլոր անդամներն են հավասարապես կարևոր, այդպես և «բաղաձայնության» (բառացի՝ *εὐφωνία*՝ «բարեհնչություն») համար բաղաձայնները տարբեր արժեք ունեն:

Հույն մեկնիչ Ստեփանոսի մոտ գտնում ենք նույնպիսի համեմատություն ձայնավորների՝ հոգու և բաղաձայնների՝ մարմնի հետ. [«ձայնավորները նման են հոգուն, իսկ բաղաձայնները՝ մարմնին»] *τὰ <μὲν> φωνήεντα τῆ ψυχῆ εὐόκασιν, τὰ δὲ σύμφωνα τῷ σώματι*, և այլն, 198¹⁶, 497¹⁷ (հմմտ. Հելիոդորոս, 325³⁵):

«Կրկնակ»՝ *διπλά* բաղաձայնները նույն կերպով մեկնաբանվում են և Դավթի, և Մելամպոդեսի կողմից. ըստ Դավթի, «կրկնակ» են, «յորժամ մի գիր բառական լիցի ունել գերկուց տեղի», իսկ ըստ Մելամպոդեսի, դրանք [«իրև ունեն երկու բաղաձայնների գորություն»]՝ *ὡς δύο συμφώνων δύναμιν ἔχοντα*, 45³⁰:

Նայ հնչյունների՝ Դավթի մեկնությունը որոշ տարակուսանք է հարուցում: Դիոնիսիոսն այս հնչյուններն անվանում է *անփոփոխք ἀμετάβολα*, որովհետև դրանք չեն փոխվում բայի ապառնի ժամանակում և անունների թերման պարագայում: Նույն հնչյունները նա կոչում է *խոնալք ὑγρά*:

Հայերեն ներկա բնագրում այս ամենի դիմաց ունենք. «*եւ նայք են չորք. դ, մ, ն, ր*»:

Հունարեն լուծումները լուսաբանում են Դիոնիսիոսի սահմանումը *πάλλω παλώ, νέμω, κρίνω, σπείρω, Νέστωρ, Μέμνων* [«ցնցել, պարսվել, բաշխել, դատել, ցանել, Նեստոր, Մեմնոն»] օրինակներով, իսկ [խոնալք]՝ *ύγρά* անվանումը հասկանում են [իրև ունել]՝ *ὡς εὐόλισθα*, կամ [բացատրում են. «քանի որ դրանց արտասանությունը քերուշ է և հավասարաչափ»]՝ *διὰ τὸ τὴν ἐκφώνησιν αὐτῶν λείαν καὶ ὁμαλήν εἶναι*, 46¹⁰:

Հայ Անանունը ճիշտ է մեկնաբանում Դիոնիսիոսի բնագրի *նայք* եզրույթը *խոնալք* իմաստով, ընդ որում ավելացնում է, որ «*ըստ յունիկ նայքն ի խոնարհումն բային երեւին. իսկ ի հայումս ի հոլովումն անուանց, յորժամ միով բաղաձայնի յանգի, որպէս անն առին, անգղ անգեղ, վագր վագեր, ար աւոր*», 134⁹:

Նույնպես է հասկանում և Մովսեսը, և, օրինակներ բերելով *Թ*-ի և *դ*-ի հանգավորությամբ, նկատում է, որ *Մ*-յով ավարտվող բառերը հազվադեպ են, քանի որ դրանք պատկանում են *խ*- թեքման, 166¹⁹:

Ինչ վերաբերում է *Դ*-ավթին, ապա նրան վերագրվող մեկնաբանությունը չի հարմարվում իր մեկնության ընդհանուր բնույթին: Այն ասում է. «*Տիմա, եւ նայի բնութիւն իմանի իբր թե խոնաւագոյն, եւ արուեստ ունի զհամբառնայն եւ զնուաստանայն իբր թե հողմոյ, եղեգան*», 96⁷:

Համբառնայն եւ նուաստանայն, ըստ երևույթին, ճարտասանական դարձվածներ են, որ նշանակում են *հողմումն եւ խոնարհումն*, իսկ հաջորդ՝ *հողմոյ, եղեգան* բառերը օրինակներ են ծառայում, թեև, ինչպես ճիշտ նկատում է Մովսեսը, *հողմ*-ը՝ անհաջող օրինակ է:

Բայց կարելի է ենթադրել, որ մեկնիչը համեմատել է *ճայ*-ը եղեգնի հետ և նայ բաղաձայնների հատկությունը հավասարեցրել եղեգնի ճկունության՝ եղեգն, որ տատանվում է հողմից (այդ դեպքում հարկավոր է կարդալ *իբր թե <ի> հողմոյ եղեգան*): Այդպես էին հասկանում ընդօրինակողները և անգամ ուշ մեկնիչները (հմմտ. *Եսայի*, էջ 96, ծան. *եղեգն ի հողմոյ*): Եթե վերլուծվող արտահայտությունը պատկանում է *Դ*-ավթին, ապա առաջին ըմբռնումը ավելի նախընտրելի է: Իսկ եթե ընդունենք երկրորդ մեկնաբանությունը, ապա արտահայտությունը չի կարելի *Դ*-ավթին վերագրել: Ի նկատի առնելով այն, որ դա մեջբերվում է վերը MS [տառանիշով] նշված Ստեփանոսի աստվածաբանական գրվածքում ևս, անհիմն չէր լինի այն վերագրել Մովսեսին, որին նա իր բնույթով ավելի է հարմարվում (139): Անանունի՝ նայերի մեկնությունը, թերևս, գալիս է *Դ*-ավթից, իսկ այն, ինչ գետեղված է Մովսեսի անվան ներքո, իր հերթին պատկանում է Անանունին:

Հայ մեկնիչները ճիշտ են ըմբռնում *ճայ* եզրույթի նշանակությունն իբրև *խոնաւ՝ յ՛յրճ*: Նայ բառը՝ հայկական, թերևս ժողովրդական ձևն է պարսկական *nam*՝ «խոնավ» բառի: Այս իմաստով այն գործածվում է նաև Պիտոյից գրքում¹: Սակայն հարցական է մնում, արդյոք *յ՛յրճ* բառի *ճայ* համարժեքը պատկանում է *Դ*-իոնիսիոսի թարգմանչին, թե նա օգտվում է դրանից որպես արդեն կայունացած տեխնիկական եզրույթից:

Ցավոք, հնչյունների թվարկման ժամանակ *Դ*-ավիթը չի պահպանում *Դ*-իոնիսիոսի հստակ դասակարգումը: *Դ*-ա շատ կարևոր կլիներ հայերեն բնագրի քննության համար: Հայերենի հնչյունների դասակարգումն ըստ *Դ*-իոնիսիոսի կանոնների այն տեսքով, որ ներկայացված է պահպանված գրչագրերում՝ արդյոք բխում է թարգմանության բուն բնագրի՞ց, թե խաթարված է օտար ձեռքով՝ դժվար է ասել: Այս կամ այն պատասխանը անկա-

¹ Յաղագս Պիտոյից (140). *եւ զնայ տառին*, 564, *նայ տառիդ*, 568, *նայամէտս բնութիւն*, 577: CL

ընտր չէ հայոց լեզվի պատմության համար: Հունարենում բացակայող հայերենի հնչյունների մեկնաբանման մեջ Դիոնիսիոսի թարգմանությունում նկատվում է որոշակի անհետևողականություն: Պայթաշփական *ժ, ց, ծ* հնչյունները ճիշտ են բաշխվում միջակների, շնչեղների և խուլերի շարքերի միջև, մինչդեռ *ժ-ն* հայտնվում է միջակների շարքում, իսկ *ջ-ն* և *չ-ն*՝ շնչեղների:

Այսպես է և Անանունի երկում, որն ամբողջությամբ արտագրում է համապատասխան տեղին Դիոնիսիոսից: Ոչ մի հիմք չկա խոսելու Անանունի հակադարձ ազդեցության մասին Դիոնիսիոսի բնագրի վրա: Ստիպված ենք խոստովանելու, որ քաջ հայտնի հնչունային այն տեղաշարժը, որով բնորոշվում են հայոց բազմաթիվ գավառաբարբառներ և որն ընկած է գրական արևմտահայերենի հիմքում, խորք չէր հայերին դեռևս Դիոնիսիոսի թարգմանության դարաշրջանում:

§§7-10. Վանկի մասին

Հունարեն *σλλαβή* բառը թարգմանված է երկու ձևով՝ խորագրում իբրև *վանգ*, իսկ բնագրում՝ *փաղառություն*: Սովորական ներածական խոսքերից հետո Դավիթը հարց է հարուցում այն մասին, թե ինչու արվեստավորն այդպես է վարվում, ինչու է նա վերտառում *վանգ* բառով, բայց խոսում է *փաղառութեան* մասին:

Դավթի կարծիքով, արվեստավորը տարբերում է *վանգ-ը փաղառութիւն-ից*. մի դեպքում ձայնավորը փակվում է բաղաձայնով մեկ, իսկ մյուս դեպքում՝ երկու կողմից: Այս դատողությունը ցույց է տալիս, որ դրա հեղինակը չի կարող համարվել Դիոնիսիոսի թարգմանիչը: Ավելին, այն մատնում է նաև նրա անծանոթությունը հունարեն աղբյուրներին՝ այլապես նրան հայտնի կլիներ, որ հայերեն երկու արտահայտություններն էլ համապատասխանում են միևնույն հունարեն բառին, ուստի և քննարկվող հարցը փաստորեն գոյություն չի ունեցել Դիոնիսիոսի համար:

Թվում է, որ մեջբերված դատողությունը Դավթին՝ հունարեն լուծմունքներից անկասկած ծանոթ լինելու պարագային (ինչպես այդ երևում է նրա աշխատության քննությունից) չի կարող պատկանել (141): Ցավոք, ձեռագրական միջավայրը նույնպես բավական անբարենպաստ է և տարակուսանքները չի փարատում: Մագիստրոսի մեկնությունում մեզ այժմ հետաքրքրող բնագրին անմիջապես հաջորդում են այն տողերը, որոնք մենք զետեղել ենք Անանունի անվան ներքո, 135₂₋₇: Հովհաննես Երզնկացին, ընդօրինակելով Մագիստրոսից ամբողջ հատվածն այնպես, ինչպես որ դա կա,

կողքին՝ լուսանցքում նշում է միայն Դավթի անունը: Հատվածի վերջին տողերը՝ առաջին մասի կրկնություն են և այդ պատճառով չեն կարող վերագրվել միևնույն հեղինակին: Այս նկատառումներից ելնելով, մենք առանձնացրինք դրանք և հատկացրինք Անանունին, այն հեղինակին, որ սովորաբար հաջորդում է Դավթին՝ Մագիստրոսի և Հովհաննեսի շարադրանքներում: Հնարավոր է, որ Դավթի անվան նշումը վերաբերում է միայն բնագրի սկզբին՝ ներածությանը, ուստի և նրան է պատկանում միայն այդ մասը¹: Նկատի առնելով, սակայն, որ *վանգ* և *փաղառութիւն* հասկացությունների տարբերությունը բերում են Անանունն ու Մովսեսը, ավելի հավանական կլինի ենթադրել, որ երկուսն էլ տվյալ դեպքում կախված են Դավթից: Այդ դեպքում հարկ կլինի ճանաչել վիճարկվող բնագրի վավերականությունը (հմմտ. ոճի տեսակետից՝ *խկ զի ճառէ* և այլն, 96¹⁷ և *ես զի աւէ յաղագս տառի* և այլն, 93⁸):

Եթե դա այդպես է, ապա Դավիթը չի կարող մասնակից լինել Դիոնիսիոսի թարգմանությանը: Գուցե նա գիտեր, որ նրա դատողությունը երկու բաների տարբերության մասին չի հաստատվում հունարեն բառի օգտագործմամբ, և նպատակ ուներ միմիայն պարզաբանել հայերեն թարգմանության առանձնահատկությունը: Նրա բացատրությունը, համեմայնդեալս, կամայական է: Իրապես *վանգ*-ը կենդանի բառ է (142), մինչդեռ *փաղառութիւն*-ը արհեստական բառ է, որ ստեղծվել է *σλλαβή*-ի կաղապարով (143): Այլ հուշարձաններում հունարեն այս բառը հանդիպում է ասորերեն՝ *սիդորայ* ձևով²:

Դավթի մեկնությունը երկար, կարճ և հասարակ վանկերի մասին ցույց է տալիս, որ նրան ծանոթ էր հունարենի վանկի մասին ուսմունքը: Այն ամենը, ինչ նա ասում է դրա վերաբերյալ, կիրառելի է միայն հունարեն տաղաչափության նկատմամբ: Քննելով վանկերի քանակական կողմը՝ Դիոնիսիոսի հայերեն թարգմանությունում բերված օրինակների հիման վրա, նա, կարծես թե, աչքի առաջ է ունեցել հունարեն բնագրի օրինակները: Որքան էլ որ հայերեն բնագրում հաջող ընտրվելին բառերը՝ բնօրինակին համապատասխան և համահունչ, դրանց հիման վրա դատել երկարության և կարճության մասին այնքան ճիշտ, ինչպես դա անում է Դավիթը, անհնարին և աներևակայելի է առանց հունարեն բնագրին ծանոթ լինելու: Վանկերի մեկնարանումը Դավթին մերժեցնում է Դիոնիսիոսի թարգմանչի անձին:

Ուշագրավ է Դիոնիսիոսի մեջբերած հոմերոսյան երեք տաղերի մեկնու-

¹ Հաջորդ գլխում Դավիթն ասում է. *յորժամ ծանոյց զվանգին բնութիւն 97*, սակայն *փաղառութիւն*-ը չի հիշատակում:

² **Կորին**, *սիդորայս*, էջ 18, *սիդորայիք*, 19, **Եսեթի** Ժամանակագրութիւն (144). *մինչեւ ցսիդորայս*, 37 (տե՛ս J. Karst, գերմաներեն թարգմանություն (145), էջ 242, ծան. 31):

թյունը: Այդ տաղերը Դավիթը սխալ է լուսարանում: Թեպետ, անմիջապես
առաջին տաղի մեկնության բնագիրն անշուշտ աղավաղված է: Երկու ան-
գամ է ընթերցվում է *Պրիամոս* անունը. սակայն մի դեպքում պետք է ընթեր-
ցել *Պարիս* և կատարել համապատասխան վերականգնում. և կամ պետք է
սրբագրել՝

*Պրիամոս Տրովացի, որոյ <որդոյ> զկինն յափշտակեալ էր հելլենա-
ցոցն, – որոյ նորա Պարիս (և ո՛չ Պրիամոս) – քննելով և այլն, կամ էլ*

*Պարիս (և ո՛չ Պրիամոս) Տրովացի, որոյ զկինն յափշտակեալ էր հելլենա-
ցոցն, հայր (և ո՛չ որդի) նորա, և այլն:*

Հունարեն լուծմունքներում մենք չենք հանդիպում հոմերոսյան տաղերի
մեկնության. միայն Բյուզանդացու մեկնությունում տրվում է որոշ բացատ-
րություն: Առաջին տաղի վերաբերյալ ասվում է. [«եթե ցանկանում ես իմա-
նալ հոմերոսյան տաղի պատճառը, ապա այն հետևյալն է. երբ Պրիամոսն
ու իշխանավորները նախատում են Հեղինեին, թե քո պատճառով շատ չա-
րիք ենք տեսել, և նա համաձայնում և ինքն իրեն է դատապարտում, Պրիա-
մոսը, խղճալով նրան, պատասխանում է այս բանատողով. “ոչ, [մեղավոր
չես]”»] *εί δὲ θέλεις τὴν αἰτίαν τοῦ Ὀμηρικοῦ στίχου μαθεῖν, ἔστιν
οὕτως. ἡ Ἑλένη ὄνειδιζομένη ὑπὸ Πριάμου καὶ τῶν λοιπῶν ἀρχόντων,
ὅτι διὰ σὲ πολλὰ κακὰ ἔγνωμεν, καὶ συγκαταθεμένης αὐτῆς καὶ ἑαυτὴν
κατακρινούσης, ἔλεήσας αὐτὴν ὁ Πρίαμος ἀπεκρίθη τὸν στίχον τοῦτον
λέγων· οὐ τί μοι և այլն, 571³⁰:*

Հոմերոսյան երկրորդ տողը Դավիթը, թվում է, վերագրում է Աբիլլեվսին,
մինչդեռ Հոմերոսն այն դնում է Բրիսեիս հարճի շուրթերին: Ողբալով Պատ-
րոկլեսի մահը, Բրիսեիսն, ի միջի այլոց, հիշատակում է նաև հանգուցյալի
խոսքերը՝ հարճին Աբիլլեվսին կնության տալու մասին. [«բայց ասում էիր,
որ դու ինձ օրհնավոր կնության կտաս Աբիլլեվսին»] *ἀλλὰ μ' ἔφασκες
Ἀχιλλῆος θείοιο κουριδίην ἄλοχον θήσει. այս տողը բերում և Դավիթը՝
զքեզ յամուսնութիւն տամ Աբիլլեա, սակայն կրկին վերաբերում է Աբիլլեվ-
սին: Եթե հեռացվի Աբիլլեա բառը զհարճն բառից հետո, և հանվի ստորակե-
տը լալով բառից առաջ, ապա ամուսնության մասին տողը կարող է վերաբե-
րել հարճին. «ե: իբրեւ ետես Աբիլլեւս զՊատրոկղէ մեռեալ հանդերձ քաջու-
թեամբ, լալով զհարճն Աբիլլեա, թե «զքեզ յամուսնութիւն տամ Աբիլլեա».
ատ՝ «ինձ հիբիս կարի յոյժ սիրեցեալ անձին»»: Քերականորեն վերջին տա-
ղը վերաբերում է Աբիլլեվսին. բայց քանի որ Հոմերոսի վեպում այն արտա-
սանում է Բրիսեիսը, ապա կարող էր մեր բնագրում այն վերաբերել հարճին:
Սակայն տարօրինակ զուգադիպմամբ նման սխալ մեկնությունը գտնում
ենք Բյուզանդացու մեկնության մեջ ևս. [«Պատրոկլեսի զոհվելուց հետո
Աբիլլեվսը, որ յուրայինների հետ ողբում էր նրան, ասում էր. “իմ Պատ-*

ռոկլես»] *τετελευτήσαντος του Πατρόκλου ὀδυρόμενος αὐτὸν ὁ Ἀχιλλεύς σὺν τοῖς ἰδίοις ἔλεγεν· Πάτροκλέ μοι* և այլն, 572₁: Այս հանգամանքը ստիպում է մեզ մտածելու, որ Դավթի սխալը պայմանավորված չէ գրչագրերի վիճակով, այլ բխում է նրա հունարեն աղբյուրից:

Անխաթար չէ նաև երրորդ տողի մեկնությունը: Ըստ Դավթի, ստացվում է, թե իբր Նեստորն է հանձնվել բժիշկ Մաքառնի խնամակալության: Մինչդեռ իրականում բժիշկ Մաքառնը, մարտում Պարիսից վիրավորված, դուրս է տարվել Նեստորի կողմից (Իլիական, XI, 505, 598): Հոմերոսը Նեստորին վերագրում է թուլություն գինու նկատմամբ. նա վայելում էր ըմպելիքը, երբ նրա ականջին հասնում է տրոփացի առաջնորդների բարձրացրած աղմուկը, և նա, թողնելով Մաքառնին իր կնոջ՝ Հեկամեդեի խնամքին, դուրս է գալիս ռազմակայանից, XIV, 1: Նեստորի և Մաքառնի դերերի շփոթությունը Դավթի «Մեկնությունում» դյուրին բացատրվում է այն հանգամանքով, որ Մաքառնը բժիշկ է անվանվում: Կարծում ենք, որ այս սխալով նույնպես Դավթի պարտական է իր հունարեն աղբյուրին: Բյուզանդական մեկնությունը միայն վերապատմում է տողը՝ առանց ծագումը պարզաբանելու. [«Եվ Նեստորի ուշադրությունից, թեև հարբում էր, աղմուկը չի վրիպել»] *καίπερ πίνοντα τὸν Νέστορα ὁ ἦχος οὐ διέλαθεν*, 572₉:

Անանունի մեկնությունում Դիոնիսիոսի օրինակները փոխարինված են Դավթի՝ մեզ չհասած էպիկական երկից վերցված տաղերով, որոնց իմաստը լիովին ըմբռնելի չէ:

§11. Բառի մասին

Բառը, ըստ Դավթի համեմատության, խոսքի հիմքն է այնպես, ինչպես ողնափայտը՝ նավի: Հույն մեկնիչները գտնում են, որ Դիոնիսիոսի՝ բառի սահմանումը լիակատար չէ՝ դրան հարմարվելու են և առանձին վանկերը, և նույնիսկ տառերը, քանի որ դրանք բոլորը խոսքի մասեր են: Նրանք մտադիր են լրացնելու Դիոնիսիոսի սահմանումը, ներմուծելով [«բանական որևէ բան նշանակող»] *νοητὸν τι σημαίνον*, ինչպես առաջարկում է Մելամպոդեսը, 56₁₆, կամ, ըստ Ստեփանոսի, [«իմաստները»] *διανοίας*, 212₁:

Մեր Դավթիքը, թեև հարցն այդքան կտրականապես չի դնում, ինչպես հույները, բայց համաձայն է նրանց առարկություններին, քանի որ նա նույնպես համարում է, որ իմաստը կամ նշանակությունը բառի անհրաժեշտ հատկանիշ է. *«եւ յի բառ ասածուածն, որ է ըստ միում վանգի կամ ըստ երկուց կամ ըստ երից. նշանակն մի է»*, 101₅:

Բնագրի վերջին բառերն¹ անցում են ծառայում հաջորդ գլխին և կրկնում են բազմիցս արտահայտված միտքն այն մասին, որ արվեստավորը սկսել է հիմնական նյութից և հետզհետե սանդղաձևով վեր է բարձրանում դեպի խոսքը: Նման կշռադատություն մենք գտնում ենք և հույն Մտեփանոսի մոտ, 211₂₅:

§ 12. Խոսքի մասին

Այն հարցը, թե որքան են խոսքի մասերը՝ հները զանազան կերպ էին լուծում: Այս հարցի վերաբերյալ տարածայնությունները հայտնի են մեր մեկնիչին: Նա գիտե, որ ոմանք համարում են ինը մաս, ավելացնելով ութ մասերին նաև ածականը. «*բայց զմասունս բանի եւ զառասութիւնս եւս յաւելլով սասցին ինն*», 102₃: Դրան համընկնում են Մելամպոդեսի բառերը. [«*ոմանք ցանկացան առանձին կարգել ածական անունը, որպեսզի այն լինի խոսքի իններորդ մասը*»] *τινὲς τὸ προσηγορικὸν ὄνομα ἠθέλησαν κατ' ἰδίαν τάξαι, ἵνα ᾖ ἔννατον μέρος λόγου, 58*₂₁:

Դավիթը մեջ է բերում և այն փիլիսոփաների կարծիքը, որոնք ճանաչում էին խոսքի հինգ մաս՝ անուն, բայ, շաղկապ, հոդ և նախդիր: Հելիոդորոսից իմանում ենք, որ նույնքան մաս էին համարում ստոյիկյանները, բայց խմբավորում էին դրանք փոքր ինչ այլ կերպ. [«*Ստոյիկյանները ասում են հինգ՝ անուն, ածական, հոդ, բայ, շաղկապ*»] *οἱ δὲ Στωϊκοὶ πέντε λέγουσιν, ὄνομα, προσηγορίαν, ἄρθρον, ῥήμα, σύνδεσμον, 517*₃₃: Ըստ Հելիոդորոսի բացատրության, առաջին մասը ճանաչվում էր անունը, երկրորդը՝ ածականը. երրորդը՝ բայը դերբայով հանդերձ, չորրորդը՝ հոդն ու դերանունը, իսկ հինգերորդը՝ նախդիրն ու շաղկապը, 356₇:

Դիոնիսիոսը, ածականը հատկացնելով անվանը, ընդունում է խոսքի ութ մաս՝ Ապոլլոնիոսի ուսուցիչ Տրյուփոնի համաձայն, որին, ինչպես հայտնում է Հելիոդորոսը, և պատկանում է այդ գաղափարը, 356₂₁:

Դավթի մեկնությունում կարդում ենք, որ Արիստոտելեսն էլ էր ընդունում խոսքի հինգ մաս, ընդորում բերվում են *ստորասութիւն, բացասութիւն, բացերեւութիւն, անուն, բայ*: Վկայակոչումը բերվում է [Մեկնության մասին]՝ *Περὶ Ἑρμηνείας* գրվածքի սկզբի ասությունից, և խնդրին չի առնչվում. հնարավոր է, որ լուսանցագիր է:

¹ Դրանցով է Երզնկացին սկսում հաջորդ գլուխը, ընդ որում *զնիքն* 101₁₂ [բառից] հետո ներմուծում է Մտեփանոս Սյունեցու խոսքը՝ *զմանրկութիւն* – 202_{1.3}, իսկ վերջին ասությունը փոխարինում է *եւ ելեալ ընդ աստիճանս եւ հասոյց մինչեւ ի բան* [հատվածով], տե՛ս էջ 202, ծան.:

«Խոսքի մասեր» արտահայտությունը հարկադրում է Դավթին կրկին կանգ առնել տեսակի և մասի հասկացությունների վրա և սահմանել դրանց փոխհարաբերությունները նույն ոգով, որով նա լուսաբանում էր նույն հարցը քերականության մասերի վերաբերյալ:

Վերջում Դավիթը հիշեցնում է, որ վեճ է ընթանում այն մասին, թե ո՞րն է առաջնայինը՝ անունը, թե բայը: Դավիթը միտվում է դեպի անունը, ելնելով նույն նկատառումներից, ինչ և Հելիոդորոսը, այսինքն՝ [«անունը սկզբից է դասվում, քանի որ նշանակում է էությունը, իսկ բայը՝ պատահականությունը. իսկ էությունները միշտ էլ նախադաս են պատահականություններից»] *τὸ δὲ ὄνομα προτέτακται, ἐπειδὴ οὐσίας ἐστὶ σημαντικόν, τὸ δὲ ῥήμα συμβεβηκότος, αἱ δὲ οὐσαὶ προτερεύουσι τῶν συμβεβηκότων*, 521¹³:

§ 13. Անվան մասին

Դավիթը մեկ անգամ ևս հիշեցնում է անվան և բայի միջև եղած տարբերությունը, կրկնելով այն, ինչով ավարտվել է նախընթաց գլուխը:

Ապա, իր սովորության համաձայն, տալիս է Դիոնիսիոսի՝ անվան սահմանման տրամաբանական վերլուծությունը, մատնանշում [սեռը]՝ *genus* և [բաղկացուցիչ տարբերությունները]՝ *differentia*, և անցնում անվան բնորոշ հատկանիշների քննությանը:

Կարիք չկա մի ամ մի կանգ առնել Դավթի դատողությունների վրա: Նրա հակիրճ մեկնությունները մեծ մասամբ զարգացնում են Դիոնիսիոսի խոսքն ու միտքը և չեն ներկայացնում ոչ մի այնպիսի բան, որում անպայման տեսնենք փոխառություններ կողմնակի աղբյուրից: Բայց առանձին բառերն ու արտահայտությունները, երբեմն էլ՝ մտքի ընթացքը մատնում են հունարեն լուծմունքների ազդեցությունը նրա մեկնության նաև այն մասերում, որոնք կարող էին համարվել քիչ թե շատ ինքնուրույն: Դրանք բոլորը մանրուքներ են, որոնց մեջ հնարավոր են և պատահական զուգադիպություններ, և մեր նպատակի համար դրանք վճռական նշանակություն չեն կարող ունենալ: Մահմանափակվենք միայն ամենաբնորոշ տեղիների արձանագրմամբ:

Դավիթը միանգամայն ճիշտ է բացատրում, որ քերականական սեռը նշվում է ոչ թե գոյությամբ, այլ հնչմամբ, 103²⁰: Հույն մեկնիչ Ստեփանոսն ասում է՝ սեռը զանազանվում է [«ոչ իսկությամբ, այլ բարեհնչությամբ»]՝ *οὐ κατὰ τὴν ἀλήθειαν κατὰ τὴν εὐφωνίαν*, 218¹³: Ըստ Հելիոդորոսի, [«փիլիսոփաները զատորոշում են սեռերը ոչ թե հնչմամբ, այլ նշանակությամբ»]՝ *οἱ φιλόσοφοι οὐκ ἀπὸ τῆς φωνῆς νοοῦσι τὰ γένη, ἀλλ' ἐκ τῆς σημασίας*, 361³⁵:

CLVI

Դավիթը նշում է, թե «ասեն ոմանք եթե ի հոռոմին լիով արական եւ իզական եւ չեզոքական, իւ եւ կամեսցի որ յայտնել ըստ երիցունց կարողութիւն է յայտնել» [103²²]:

Դավիթի խոսքերը չպետք է հասկանալ այն իմաստով, թե նա ինքը չգիտե՛լ լեզվին անծանոթ լինելու պատճառով, թե ինչպիսին է կացութիւնը հունարեանում: Դավիթի բերված դատողությունը կապ ունի իր հետագա շարադրանքի հետ: Սեռի մասին ուսմունքի վերաբերյալ նա երկու կարծիք է բերում, որ առկա են հունարեն մատենագրության մեջ: Ոմանք ընդունում են սոսկ երեք սեռ, կարծելով, որ դրանցով սպառվում են մեր գիտելիքները սեռի վերաբերյալ: Ուրիշներն էլ երեք սեռերին զումարում են ևս երկուսը՝ *զհասարակն եւ զմկալաւսարն*: Ընդորում Դավիթը ճիշտ է սահմանում այդ եզրույթները, ասելով, որ *հասարակ* են կոչվում այն բառերը, որոնք նշանակում են և արական և իզական սեռ, ինչպես, օրինակ, շուն և ձի՝ *օ կամ ղ կժօն* [որձ կամ էգ շուն], *օ կամ ղ իππος* [հովատակ կամ զամբիկ] (146), իսկ *մկալաւսար*՝ այն բառերը, որոնք քերականորեն մեկ սեռի գոյականներն են, որոնք, սակայն, նշանակում են երկու սեռ՝ և՛ արական, և՛ իզական. ինչպես, օրինակ, ծիծեռնակն ու աքիսը, թեև քերականորեն իզական սեռի են՝ *ղ չելիծօն, ղ յալղ*, բայց նշանակում են և՛ իզականը, և՛ արականը. կամ արծիվն ու առյուծը՝ արական սեռի բառեր են՝ *օ ձետօց, օ լէօն*, բայց կիրառելի են նույն կենդանիների իզական սեռի համար:

Նույն կերպ մեկնում են և հունարեն լուծմունքները, 218²² և 572³⁵: Պարզ է, որ առանց հունարեն լեզվի իմացության և հունարեն աղբյուրի, միմիայն Դիոնիսիոսի հիման վրա անկարելի է գլուխ հանել այս բոլոր հասկացություններից:

Որ Դավիթն իր ձեռքի տակ ունեցել է ինչ-որ հունարեն աղբյուր, երևում է նաև նրանից, որ հայերեն թարգմանության մեջ Դիոնիսիոսի [*«արծիվ»*]՝ *ձետօց* օրինակը փոխարինված է *աքիս՝ յալղ* բառով, մինչդեռ Դավիթը բերում է երկու բառն էլ, ինչպես և *աքիս՝ լէօն* բառը:

Վերջին բառը հանդիպում է հունարեն լուծմունքներում ևս, սակայն Դիոնիսիոսի *κοινῶς հասարակաբար* հասկացության վերաբերյալ, ինչպես, օրինակ, Ստեփանոսի մեկնությունում, 217¹⁶: Ինչ վերաբերում է [*«աքիս»*]՝ *յալղ* օրինակին, ապա այն չկա ներկա հունարեն լուծմունքներում, բայց որ այն եղել է այնտեղ, մասնավորապես այն լուծմունքում, որից օգտվում էր Դավիթը, շատ հավանական է. *յալղ mustela* հիշատակվում է լատին քերականների կողմից¹:

Հայրանվանական անունների մասին Դիոնիսիոսի պարբերությունում փոխանակ [*«Էռլյաններից»*]՝ *τῶν Αἰολείων*-ի հայերեն թարգմանությունում

¹ G. Uhlig, Dionysii Thracis ars, էջ 25, ծան.:

կարդում ենք *Գորդայից*: Սակայն Դավթի մոտ, բացի *Գորդայից* ձևից, [որպես օրինակ] բերվում է նաև դորյան բարբառը՝ *ի հռոմին Դավրացի*, 105₃: Ներկա լուծումը քննարկում այս օրինակը չի հանդիպում, բայց այն անկասկած եղել է Դավթի աղբյուրում:

Փաղաքական եզրույթը Դավիթը մեկնաբանում է *աղջկական* բառով, ինչը միանգամայն հասկանալի է, բայց միայն համապատասխան՝ *ύποκοριστικόν* հունարեն եզրույթի նկատմամբ, որը, հույն մեկնիչների համաձայն, [«անվանում է ստացել կόροι (մանուկներ), այն է՝ փոքր տղաներ կամ աղջիկներ <նշանակող բառից>»]՝ *είρηται δὲ παρὰ τοὺς κόρους, τούτέστι τοὺς μικροὺς νέους ἢ τὰς κόρας*, 227₂₅:

Դավթին քաջածանոթ է վեճն այն մասին, թե կարելի՞ է արդյոք *ուղականը*՝ օրո՞ր հոլով անվանել: Դիոնիսիոսի բառերի՝ *հոլովք են անուանց վեց, ուղական* և այլն, վերաբերյալ Դավիթը նկատում է, որ ոմանք այստեղ հակասություն կամ անհետևողականություն տեսան այն բանում, որ արվեստավորը, խոսելով հոլովների մասին, հիշատակում է ուղականը, և կարծում են, որ *ուղական*-ը պետք է անվանել *հոլովական*, 107₁₁:

Այս հարցն արծարծում են և հունարեն լուծումը քննարկողը. [«եթե ուղիղ է (այսինքն՝ ուղական), ապա ինչո՞ւ անկում (այսինքն՝ հոլով)»]՝ *εἰ ὀρθή, πῶς πτώσις*, հարցնում է Ստեփանոսը, 230₂₄: Ավելի ևս պարզ է ասում Հելիոդորոսը. [«պետք է իմանալ, որ շատերը հարցնում էին ուղական հոլովի մասին, թե ինչպես կարող է նույն ուղիղը լինել նաև «անկում» («հոլով»)»]. Քվում է, որ հակասական է միևնույն բանը անվանել ուղական և հոլով]՝ *ιστέον δὲ ὅτι ἐξήτηθη παρὰ πολλοῖς περὶ τῆς ὀρθῆς, πῶς δύνανται ἡ αὐτὴ ὀρθή καὶ πτώσις εἶναι· ἐναντίον γὰρ ἔδοξεν εἶναι τῆν αὐτῆν ὀρθὴν καὶ πτώσιν καλεῖσθαι*, 383₇:

Խոսքն այստեղ ճեմականների և ստոիկյանների միջև եղած վեճի մասին է: Առաջինները պնդում էին, որ ուղականը հոլով չէ, քանի որ «հոլով»՝ *πτώσις* [եզրույթը, որ ածանցվել է] «ընկնել»՝ *πίπτω* բառից, կիրառելի է միայն այն ձևերի նկատմամբ, որոնք առաջանում կամ «ընկնում» են ուղականից, այսինքն՝ թեք հոլովների նկատմամբ, իսկ ուղականը ոչնչից «ընկնել» չի կարող: Ստոիկյաններն առարկում էին դրան, ասելով, թե ուղական հոլովը կամ իրերի անվանումները առաջանում են ընդհանուր գաղափարների հստակեցման միջոցով. այլ կերպ ասած, դրանք նույնպես «ընկնում» են, միայն թե մեր գաղափարներից¹:

Հոլովները մեկնաբանելիս, հունարեն լուծումը քննարկողը օգտվում են երկու կարծիքներից էլ. [«և թույլատրելի է ասել այսպես, քանի որ հոլովը կոչվում է "անկում" կամ այն պատճառով, որ այն, "ընկնելով", փոխարկվում է մնացած

¹ Scholia in Aristotelem, IV 104, ed. Academia Regia Borussica, 1836:

հուլովների, կամ սեռից փոխարկվում է տեսակների, և կամ “ընկնում” է մարմինների վրա»] *καὶ ἔστιν εἰπεῖν οὕτως, ὅτι κατὰ τοῦτο μὲν πτώσις καλεῖται, καθὸ μεταπίπτει εἰς τὰς λοιπὰς πτώσεις, ἢ καθὸ ἀπὸ τοῦ γενικοῦ μεταπίπτει εἰς τὸ εἰδικόν, ἤγουν ὅτι ἐπιπίπτει τοῖς σώμασιν*, 383₉:

Այս դատողությունը մենք գտնում ենք և Դավթի մոտ, բայց փոքր ինչ այլ՝ այսպես ասած քրիստոնեացված բանաձևով: Ըստ Դավթի, բոլոր էակները, բոլոր իրերն իրենց անվանումները ստացել են Աստծուց, կամ նրանցից, որոնց Աստված այդ բանի համար գորություն է տվել: *«Արդ ըստ վերուստ դրութեան անունն անկումն (πτώσις) ասի եւ նույն ինքն ուղղական (ὁρθή). արիճակ իմն գրչի ի վերոյ կահուղ իրիք նիթոյ նկարմամբ ուղիղ կացուցանելոյ, [եւ անդուստ ասպա հոլովումն անելով ի սեռականն եւ ի տրականն եւ որ ի կարգիւն]»*:

Նման համեմատության մենք հանդիպում ենք նաև հունարեն լուծմունքներում. [*ուղղական է կոչվում թերևս այնպես, ինչպես ասում ենք և գրչի մասին՝ եթե ինչ-որ մեկը վերցնի այն և զգի հատակին, և այն ուղիղ կանգնի»*] *καλοῖτο ἂν ὀρθή, ὡς ἂν εἴπομεν καὶ περὶ γραφείου, ὥσπερ ἔὰν τις λάβῃ γραφεῖον καὶ ἀφῆ εἰς γῆν καὶ ὀρθὸν στῆ*, 231₂₄:

Դիոնիսիոսն ուղղականը՝ *ὀρθή* նմանապես անվանում է նաև «անվանական»՝ *ὀνομαστική* և «անմիջական»՝ *εὐθεία*. վերջին բառը սխալմամբ թարգմանվել է *պարզ*, և Դավիթը մեկնում է այն հայերեն իբրև *մեկնակ, անշարաղիք*, այսինքն՝ պարզ, ոչ բարդ, որը չի համապատասխանում հունարեն եզրույթի նշանակությանը:

Այնուհետև Դավիթը մեկնում է մնացած հուլովները, թվարկելով, ըստ Դիոնիսիոսի հայերեն բնագրի, վեց հուլով՝ հունարեն բնագրի հինգի փոխարեն: Սկզբնազրի այդպիսի ստրկական հավատարմության պարագային օտար տարրի երևան գալը հայերեն բնագրում իրավամբ կարող է տարակույս հարուցել: Արդյո՞ք ավելորդ՝ *առաքական* հուլովը իսկապես չի առաջացել թյուրիմացության հետևանքով: *Δοτική ἐπισταλτική* թարգմանված է *տրական պատուիրական*, որից հետո գալիս է եւ *առաքականն ցուցական*: Թերևս, *առաքական* բառը վերաբերում է նախորդ հատվածին, և *տրական*-ի հետ միասին արտահայտում է *ἐπισταλτική* եզրույթի երկակի իմաստը՝ եզրույթ, որ առաջացել է *ἐπιστέλλω* «հրամայել» և «ուղարկել, առաքել» նշանակություն ունեցող բայից: Այդ դեպքում *ցուցական*-ը պետք է համարել լուսանցազիր կամ հաջորդ *հայցական*-ի աղավաղված կրկնազիր (147):

Դավիթը մեկնաբանում է *տրական*-ը որպես *թրթական*, հույն Ստեփանոսի մյան. [*«գեղեցիկ է այս անվանումը, քանի որ գործածում ենք այն բարեկամներին <նամակներ> հղելիս»*] *καλῶς οὕτως εἴρηται, ἐπεὶ περ καὶ τοῖς φίλοις ἐπιστέλλοντες ταύτη χρώμεθα*, 231₃₁:

Վիճահարույց հոլովի մասին Դավթի տված մեկնությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ *ցուցական*-ի բացատրություն, և չի տալիս դրա մասին որևէ որոշակի պատկերացում: Դիոնիսիոսի թարգմանության մեջ *առաքական*-ը դարձյալ կրկնվում է դերանուններին վերաբերող գլխում, և այստեղ, ինչպես երևում է հոլովումից, այդ հոլովը հավասարեցված է գործիականի հետ, 28²⁵: Դավթի ասելով, «*Եւ ցուցական իսկ առաքականը ըստ երկուց դիմաց. յորժամ առաքիցի որ ուրեք յումեքէ զհեռաւորն նշանաւոր բանիւ ցուցանել եւ զմատաւորն եւ որ երեւին տեսութեամբն*», 108²:

Չի կարելի կարծել, որ այս սահմանումը կարող է վերաբերել գործիական հոլովին: Այս խոսքերի հեղինակը, ամենայն հավանականությամբ, ոչ մի հոլով ի նկատի չի ունեցել, այլ միայն զուգադրել է միևնույն արտահայտության մեջ երկու եզրույթների՝ *առաքական-ցուցական*-ի նշանակությունները: Եթե մեկնությունը պատկանում է Դավթին, և մեր կասկածները *առաքական* հոլովի վերաբերյալ անհիմն չեն, ապա հարկ կլինի ընդունել, որ բնագրի աղավաղումը կատարվել է Դավթից առաջ, և Դավիթը՝ Դիոնիսիոսի թարգմանության հեղինակը չէ:

Հայցական՝ *աίτιατικῆ* Դիոնիսիոսի երկում թարգմանված է *հայցական խնդրական*, այն նշումով, որ հունարենում այն հնչում է իբրև *փաստական*: Դավիթն այս վերջին ձևը փոխարինում է ավելի հասկանալի *պատճառական*-ով:

Հույն մեկնիչ Ստեփանոսն ասում է. [«ըստ “պատճառի” է ասում, կամ ըստ “խնդրանքի”, և կամ ըստ “մեղադրանքի”․ որովհետև, երբ խնդրում ենք՝ որևէ բան ստանալու համար կամ մեղադրում ենք որևէ մեկին, այս հոլովն ենք դնում»] *κατ’ αίτιαν φησὶν ἦτοι αίτησις ἢ καὶ αίτιασιν, ἐπειπερ αίτούμενοι λαβεῖν τι ἢ αίτιώμενοι <τινα> ταύτην προφερόμεθα*, 232³: Բյուզանդացին մեկնում է. [«ինչպես *Պետրոսին* խնդրում կամ փնտրում են, որպեսզի նրան պատիվ տան կամ անպատվեն, կամ ուղարկեն ճանապարհ<որդության>, կամ բարձրացնեն նրան դեպի մեծ փառքը»] *οἶον τὸν Πέτρον αίτώ ἢ ζητώ, ἵνα αὐτὸν τιμήσω ἢ ἀτιμάσω, ἢ καὶ ἐν ὁδῶ ἀποστείλω ἢ εἰς μεγάλην ἀξίαν ἀναβιβάσω*, 575¹⁰:

Այստեղից երևում է, որ հույն մեկնիչները համոզված չէին, թե արդյոք *αίτιατικῆ* անվանումն ծագում է *αἰτέω* «խնդրել», թե *αἰτιόμαι* «մեղադրել» բայերից: Այս երկբայությունն անդրադարձվել է Դիոնիսիոսի հայերեն թարգմանությունում: Արդյո՞ք այստեղ իր հետքն է թողել հույն լուծումների ազդեցությունը, թե թարգմանիչն օգտվել է իր ժամանակին ընդունված *հայցական* եզրույթից, սակայն գտնելով, որ այն չի համապատասխանում հունարեն բառին, ստիպված էր վերապահություն անել. սա մի խնդիր է, որը չի լուծվում Դավթի բնագրի միջոցով:

Կոչական հուլովի մեկնությունում Դիոնիսիոսի *հռչական* բառը ընթերցվել կամ ըմբռնվել է իբրև *կոչական*, իսկ *առասական*-ը՝ իբրև *առհասարակական*: Այս մեկնությունը կարելի է վերագրել Դավթին ճիշտ ընթերցումները վերականգնելու պայմանով:

Այնուհետև Դավիթը քննում է անվան տեսակները այն հաջորդականությամբ, որով դրանք թվարկվում են Դիոնիսիոսի երկում, օժտելով դրանք համառոտ դիտողություններով:

Առաջին տեղում Դիոնիսիոսը դրել է *յատուկ* անունը, ապա գալիս է հասարակը: Այս առթիվ Դավիթը նշում է պլատոնականների և արիստոտելականների միջև եղած տարածայնությունն այն մասին, թե որն է նախնականը՝ հասարակ անունը, ինչպես պնդում էր Պլատոնը, թե հատուկը՝ ինչպես կարծում էր Արիստոտելը: Դավիթը գտնում է, որ Դիոնիսիոսը վարվել է Արիստոտելեսի ուսմունքի համաձայն:

Այն հարցը, թե [*Ինչո՞ւ արվեստավորը չի նախադասում հասարակ անունը հատուկին*)] *διὰ τὴ μὴ προέταξεν ὁ τεχνικός τὸ προσηγορικὸν τοῦ κυρίου* դրվում է և հունարեն լուծումներում, բայց լուծվում է այլ կերպ. [*Քանի որ արվեստավորները սովոր են անհատը նախադասել տրոհվածին*)] *ὅτι ἕθος ἐστὶ τοῖς τεχνικοῖς τὰ άτομα προτάσσειν τῶν τεμνομένων*, 386³:

Դավթի բացատրությունները <4> և <5> տեսակի՝ *ամնչունակ* անունների մասին համընկնում է հունարենի հետ. [*Քանի որ ամնչունակները միաժամանակ և գտնվում են և կործանվում, իսկ իբր ամնչունակները մեկը մյուսից չեն առանձնանում*)] *τὸ μὲν γὰρ πρὸς τι ἔχον καὶ συνευρίσκεται καὶ συναπόλλυται, τὸ δὲ ὡς πρὸς τι ἔχον ἐν τοῦ ἑτέρον ἀναιρετικόν ἐστίν*, 235²⁵: Բացի Դիոնիսիոսի օրինակներից, Դավիթը բերում է նաև *որպէս տէր գծառայ*, որ ընթերցվում է և հունարենում. *ὡς δοῦλος πρὸς δεσπότην*, 388³². այնուամենայնիվ դրանց ընդհանուր աղբյուրն է Արիստոտելեսի «Մտորոգությունները»՝ *«առինչքն առ հակադարձսն ասին, հիկէն ծառայ տեսան»* և այլն, 379:

Հոմանունը, Դավթի համաձայն, լինում է *«ըստ պատահման եւ ըստ մտածութեան. պատահմամբ՝ յորժամ երկուց իրաց նույն դիպեսցի անուն տիրական եւ առասական, արծուի՝ քոչուն եւ արծուի՝ շինուած փայտից. իսկ մտածութեամբ՝ ըստ պատուոյ, ըստ յուսոյ, ըստ աղաւթից եւ այլոցն եւս»*, 109¹¹: Այստեղից երևում է, որ Դավիթը վերցնում է մեկնվող բառը ոչ թե քերականական, այլ տրամաբանական իմաստով: Նրա նշած հոմանունների տեսակները արտացոլում են տրոհումը, որն ընդունել են Արիստոտելի «Մտորոգությունների» մեկնիչները, օրինակ՝ Էլիասի, ըստ որի հոմանունները լինում են՝

ἀπὸ τύχης ἢ ἀπὸ διανοίας

κατὰ χρονικὴν ἢ οὐ κατὰ

κατὰ μνήμην, κατὰ ἐλπίδα, ἢ αἰῶν, 139₂₉ = *hajterin* 49₁:

Այս տեսակներից Դավիթը հիշատակում է *ἀπὸ τύχης ἢ αἰῶν* (=Էլիասի հայերեն քարգմանությունում՝ *ի բասաէ*, 49₃), *ἢ αἰῶν* մտածութեան *ἀπὸ διανοίας* կամ *κατὰ ἔννοιαν*, *ἢ αἰῶν*, որն իր իմաստով հավասարազոր է *κατὰ μνήμην* [«ըստ հիշողության»], *ἢ αἰῶν* *κατὰ ἐλπίδα*, իսկ *ἢ αἰῶν* Էլիասի բնագրում չկա¹:

Որ հոմանունները կարող են լինել *տիրական* և *առասական*, հիշատակվում է նաև հունարենում. [«հոմանուններ...բուն իմաստով (տիրական)... անվանումով (առասական)»] *ὁμώνυμα...ἐπὶ μὲν κυρίων...ἐπὶ δὲ προσηγορικῶν*, 389₁₈:

Հոմանունը (148) մեկնարանելիս, Դավիթը զանազանում է բառի քերականական իմաստը փիլիսոփայականից, ինչ որ անում են և հույն մեկնիչները. [«պետք է իմանալ, որ հակասում են միմյանց քերականներն ու տրամախոսները. քերականները *հոմանուններ* են անվանում այն, ինչ նույն անվան միջոցով հավասարապես կիրառվում է զանազան կերպարանների նկատմամբ, իսկ փիլիսոփաները՝ այն, ինչ միևնույն սեռի է պատկանում և ունի միևնույն էություն, ինչպես եղջերուն և մարդը՝ քանի որ երկուսն էլ կենդանիներ են»] *ἰστέον δὲ ὅτι ἐναντιοῦνται οἱ γραμματικοὶ καὶ οἱ διαλεκτικοί· οἱ μὲν <γὰρ> γραμματικοὶ ὁμώνυμά φασι τὰ τιθέμενα ὁμοίως διὰ τοῦ αὐτοῦ ὀνόματος ἐπὶ διαφόρων προσώπων, οἱ δὲ φιλόσοφοι ὁμώνυμά φασι τὰ τὸ αὐτὸ γένος ἔχοντα καὶ τὴν αὐτὴν οὐσίαν ὡς ἔλαφοι καὶ ἄνθρωποι, ἄμφω γὰρ ζῶα*, 554₂₇:

Հույն քերականները նշում են, որ փիլիսոփաները, այն է՝ ճեմականները, հոմանիշը անվանում էին [«բազմանուն»] *πολώνυμα*, 236₂₀, նաև 390₁, 554₃₅: Դավիթն, ընդհակառակը, *բազմանուն* եզրույթը վերագրում է քերականներին, որոնք այն այդպես էին անվանում, «իրրու թե իրն բազում անուանս ունի զիրեալ բարդեալ, իսկ իմաստասիրացն է փաղանուն (*συνώνυμος*), զի կենդանին զբազում բնութեանց անուանս փաղեաց», 109₁₇:

Էլիասի «Մտորոգությունների մեկնություն»-ում կարդում ենք. *ոչ է ընդունելի քերական, որ զհոմանունսն փաղանունսն կոչեն. որպէս խաղ, դալապր, մարտացու, վաղանաւոր, սուսեր, նրան*, 54₂₄ (հմմտ. 51₂₃) = *οὐκ ἀποδεκτόν*

¹ Հմմտ. տրոհումը Scholia in Arist[otelem], t. IV, p. 34 մեջ: Փոքր ինչ այլ կերպ տրոհում է Օլիմպիոդորոսը, Commentarii in Aristotelem, XII, p. 34, ed. A. Busse, 1902: CLXII

τὸν ποιητὴν...οὐδὲ τοὺς λέγοντας τὰ πολυώνυμα συνώνυμα ἀποδεκτέον, ὡς τὸ ξίφος μάχαιρα σπάθη ἄορ, 143₂₃ (հմմտ. 141₃₃): Էլիասի քվարկած օրինակները փոխառված են Դիոնիսիոսից, ուստի, նա էլ, Դավթի նման, *πολυώνυμα* եզրույթը վերագրում է քերականներին, և ոչ թե փիլիսոփաներին:

Էլիասի հունարեն բնագրում պակասում է հինգերորդ օրինակը՝ *τὸ φάσγανον*. հայ քարգմանչի ունեցած գրչագրում, հավանաբար, եղել է նաև այդ բառը: Թեպետ Էլիասը մեկ անգամ ևս մեջբերում է այս օրինակները, և այստեղ նույնպես կարդացվում է *φάσγανον*, 141₃₃=հայերեն 51₂₃: Սակայն բանն այդ չէ: Թվարկված հոմանիշների քարգմանությունը Էլիասի երկում համընկնում է Դիոնիսիոսի հայերեն քարգմանության հետ: Դա կարելի է բացատրել կամ այն հանգամանքով, որ երկու քարգմանությունն էլ միևնույն գրչին են պատկանում, կամ էլ Էլիասի քարգմանիչն օգտվել է Դիոնիսիոսի հայերեն բնագրից: Թարգմանությունների պատահական զուգահեռության մասին խոսք անգամ լինել չի կարող, քանի որ բառերը խիստ հատկանշական են և դրանցից մի քանիսը այլ աղբյուրներից ծանոթ չեն. օրինակ, *խառ*, Անանունը կարդում է *խարբ*, 144₂₃, որը հանդիպում է նաև Փիլոնի Լին (149), 432, Ծննդ. ԻԷ, 40 մեջբերված տողում. *խարբի քով կեցցես*, Ընկալյալի՝ *սրով քով կեցցես* [ընթերցման] փոխարեն՝ *ἐπὶ τῇ μάχαιρῇ σου ζήσῃ*: Դալյալը (150) ծագում է լատիներեն *dolabra*-ից, որը, թերևս, գործածական էր ժողովրդի մեջ, և, վերջապես, *մարտացու*՝ արհեստական բառ է, որ գոյացել է *μάχαιρα*-ի ազդեցության ներքո՝ *մարտ*՝ *μάχη* բառից:

Էլիասի և Դիոնիսիոսի քարգմանությունների հարաբերակցության հարցն ունի պատմաբանասիրական մեծ հետաքրքրություն. դրա լուծման համար կարևոր է նշել նաև հետևյալ հանգամանքը:

Վերը նշված տեղում Էլիասն այնուհետև վիճում է Դիոնիսիոսի հետ հարանունների վերաբերյալ: Այժմ մեզ հետաքրքրում է ոչ թե վեճի էությունը, այլ Դիոնիսիոսից փոխառված որոշ եզրույթների քարգմանությունը: *Θέων և Τρύφων* անունները Դիոնիսիոսի հայերեն բնագրում քարգմանված են *Տիրիճան*, *Խրախճան* ձևով, իսկ *Φιλήμων և Νοήμων* իբրև *Սիրուն* և *Իմաստուն*, 16₂₋₅: Էլիասի խոսքը՝ *τὸ Τρύφων ἀπὸ τοῦ τρύφη καὶ Θέων ἀπὸ τοῦ θεός*, 143₂₈, հայերեն է քարգմանվել՝ *Փափկանէս ի փափկութենէ և Աստուածանէս յաստուծու*, 55₄: Նմանապես և Էլիասի արտահայտությունը՝ *ρήματικὰ δὲ τὸ Φιλήμων Νοήμων ἀπὸ τοῦ φιλῶ καὶ νοῶ*, 143₃₀, հայերեն է հնչում իբրև *բայականք ի սիրելոյ սիրեն* (իմա՝ *սիրուն*) *եւ յիմանալոյ իմաստուն*, 55₅:

Եթե միևնույն բառերը մի դեպքում քարգմանվում են *Տիրիճան*, *Խրախճան*, իսկ մյուսում՝ *Աստուածանէս*, *Փափկանէս*, ապա քվում է, թե քարգմա-

նությունները պատկանում են տարբեր անձանց, հետևաբար վերոբերյալ հարցը, թե արդյո՞ք Դիոնիսիոսի և Էլիասի թարգմանությունները միևնույն անձին են պատկանում, թե՞ մի թարգմանությունը կախված է մյուսից, պետք է լուծվի ի նպաստ վերջին ենթադրության: Իրականությունը, սակայն, այդքան պարզ չէ: Հունարան թարգմանությունները աչքի են ընկնում այնպիսի առանձնահատկություններով, հաճախ միմյանց հակասող, որ լիովին հնարավոր է, եթե միևնույն հեղինակը տարբեր ձևով է թարգմանում միևնույն արտահայտությունները: Տվյալ դեպքում, ցանկանալով հայացնել հունարեն ամուսնները, նա կարող էր թարգմանել *Տիրիճան*, *Խրախճան*, իսկ բնագրին ավելի մերձենալու նկատառումները կարող էին ստիպել նրան թարգմանելու այն մյուս անգամ իբրև *Ստտուածանէս*, *Փափկանէս*, նամանավանդ որ այդտեղ պահանջվում էր ավելի իրազնին ներկայացնել բառերի ստուգաբանությունը:

Այս պատճառով հիշյալ աշխատությունների հարաբերակցության հարցը պետք է առկախ մնա մինչև ընդգրկվեն այնպիսի փաստեր և դիտարկումներ, որոնք ընդհանուր առմամբ ավելի ամուր հենք կընձեռեն Դիոնիսիոսի և Էլիասի թարգմանությունների ազգակցությունը, այն է՝ Էլիասի՝ Դիոնիսիոսից կախված լինելը պնդելու համար:

Անունների այլ տեսակների մեկնությունները բնորոշ տեղիներ չեն տրամադրում՝ դրանք հունարեն լուծմունքների հետ համադրելու համար, թեև դրանց կապը անտարակուսելի է և սակավ չեն քիչ թե շատ նշանակալից շփման կետերը:

Դիոնիսիոսի բնագրի այս մասում ուշադրության արժանի են անվան *ագգական* <11> տեսակի հայկական օրինակները. *գողերձական*, *տուի*, *վրացի*, փոխանակ հույն բնագրի [*«Թրակացի, Գաղատացի»*]՝ *Θραξ, Γαλαττης*: Առաջին անունը կապ չունի՞ արդյոք Պտղոմեոսի հիշատակած *Κοταρζήνη* երկրի անվան հետ, որը սովորաբար ընդունվում է իբրև աղավաղված *Καλαρζήνη*, հայերեն *Կղարջք*: *Տուի* անվանունը հանդիպում է Խորենացու մոտ, իսկ *վրացի*, ըստ երևույթին, լուսանցագիր է:

§14. Բայի մասին

Բայի վերաբերյալ կշռադատությունը սկսվում է մեր մեկնիչի համար սովորական հարցերով՝ բայի տեղի և դրա սահմանման մասին: Մեր հետապնդած նպատակների համար հատկապես հետաքրքիր է նրա դատողությունը ժամանակի մասին: *«Ամանակ հալաստեալ երեք. ներկայ, անցեալ, ապառնի: Ասացին ոմանք զներկայ երիցագոյն վասն անցանելոյ ընդ նա*

երկուցն եւ. եւ այլք զանցեալն՝ յաղագս յառաջ անցանելոյն՝ ըստ նախադասութեան (բառացի՝ praepositione)» [113⁷]:

Ստեփանոսից իմանում ենք, որ առաջին կարծիքը պատկանում է ստոիկյաններին. [«ստոիկյանները ներկան սահմանում էին իբրև «ներկա տևական», քանի որ տևում է և՛ դեպի անցյալը, և՛ դեպի ապագան»]՝ *τὸν ἐνεστώτα οἱ Στωϊκοὶ ἐνεστώτα παρατατικὸν ὀρίζονται, ὅτι παρατείνεται καὶ εἰς παρεληλυθότα καὶ εἰς μέλλοντα*, 250²⁶, ինչպես և [«ներկան մաքերվելու է չնչին <պահի> ընթացքում, <քեև> ներառում է անցյալն ու ապագան»]՝ *ἐν ἀκαριαίῳ νοηθῆσεται ὁ ἐνεστώας, περιέχων τὸν παρεληλυθότα καὶ τὸν μέλλοντα*, 249⁷:

Երկրորդ կարծիքի վերաբերյալ նույն հեղինակը [հայտնում է]. [«իսկ եթե մեկը հարցնի, թե ինչն է մենք չենք սկսում անցյալից, որ իր բնությամբ ներկայից առաջ է»]՝ *εἰ δὲ τις ζητοῖη, πῶς μὴ ἀπὸ παρωχημένου ἀρχόμεθα, ὡς φύσει προτέρου ὄντος τοῦ ἐνεστώτος*, 249⁹:

«Դարձեալ հարցաւ յոմանց,- շարունակում է Դավիթը,- թե զինչ իցէ ժամանակն, ի զոյից թե յոչ զոյից: Ոյք ի զոյիցն՝ ասացին զայս արինակ թե յուսատրաց շարժումք եւ բնաւին լինելութեանս անմունք եւ յարմարութիւնք աշխարհի ի ժամանակի կատարին: Իսկ Արիստոտելէս ասաց՝ յոչ զոյից. որպիսի յուշկապարկացն համբաւ անուամբ միայն եւ ոչ ճշմարտութեամբ. զանցեալն այսպէս աղարտէ, որպէս զի էանց եւ ապականեցաւ, զապանինն՝ զի չէ իսկ ի միջի. զներկայն՝ աներևութարար իմն, զոր արինակ եթէ ի քուն որ իցէ եւ կամ յայլ գրասանս ըստ նմանութեան ջրոյ իջելոյ ի խողովակէ յառաջին տեղիս, իջանէ յաւազն եւ ոչ երեւի եւ ընդ իջանելն ծորի», 113¹⁰:

Դավթի խոսքերում, ասես, համադրվում են ժամանակի վերաբերյալ Պլատոնի և Արիստոտելեսի կարծիքները¹: Մակայն հայտնի չէ, թե որտեղից է վերցված այստեղ բերվող համեմատությունը. դրա աղբյուրը, համեմայն-դեպս, չհաջողվեց որոշել:

§15. Լծորդության (խոնարհման) մասին

«Առ սովաւ ասելի է զլծորդութիւնս, զի խառնուած է սա բայի, ճեռն տալով ստուգարանութեան. եւ լծորդութիւն ասի, յորժամ ելեալ միճն ի լծոյն, մտանէ ընկերակիցն բառնալով զլուծն, որպէս բենն զմենի եւ կամ մենն զպէի, նոյնպէս եւ այլքն», 114²:

¹ Հմմտ. Պլատոնի կարծիքը, որը մեջբերում է Արիստոտելեսը [«Բնագիտական ունկնդրություն»] *Փոսուկի՝ ἀκρόασις* երկում (Թ, 251¹⁷): Նույն կարծիքը, փոխառված «Տիմայից», մեջբերվում է Փիլոնի կողմից՝ Յառաջախնամութիւն, էջ 10: Արիստոտելեսի կարծիքի հետ համեմատելի է *յիրողութեանցն ոմանց անգոյզ են, որպէս եղջերուաքաղն*, Մահմանք, էջ 121 = հուն. 117:

Դավթի հետ համաձայնում են և հունարեն լուծմունքները, գտնելով, որ լծորդությունը խոսքի մաս է, և արվեստավորն ինքը դասում է այն [«բային ուղեկցող <հանգամանքների մեջ>»]՝ *τῶν παρεπομένων τῷ ῥήματι*, 251²⁸: Նույն տեղում բառի ստուգաբանության վերաբերյալ ասվում է. [«լծորդություն է կոչվել փոխաբերաբար, լծկան կենդանիների օրինակով, որոնք միևնույն լծի տակ միևնույն ուղիով են ընթանում»]՝ *εἴρηται δὲ <συζυγία> μεταφορικῶς ἀπὸ τῶν ὑποζυγίων, ἃ ὑπὸ τὸν αὐτὸν ζύγον ὄντα ἴσων δρόμον ποιεῖται*, 252⁶:

Դավթի համեմատությունը այնքան էլ չի համապատասխանում հունարենին, բայց ևայնպես մատնում է իր հունարեն ծագումը:

Ցավոք, Դավիթը չի բերում խոնարհումները: Դիոնիսիոսի հայերեն բնագիրն այս մասում, ինչպես արդեն նշեցինք, խաթարված է. այստեղ խոսվում է լծորդությունների ութ դասերի մասին, սակայն թվարկվում են տասը. այս դասերից երկուսը համարում ենք ընդմիջարկություն, և եթե Դավթի բնագրում լինեք լծորդությունների ցանկը՝ չենք կասկածում, որ դա կհաստատեր մեր նկատառումները:

Դավիթը ոչինչ չի հիշատակում նաև վերջին լծորդության վերաբերյալ՝ *գեամ, գեաս, գեայ եւ ըստ լեզուաց ո-իւ, որզոն գոմ, յղոմ*: Վարդանն իր քերականության մեջ (տե՛ս վերը, էջ LX), պարզաբանում է այս ձևերը, վերագրելով *գեամ*-ը՝ *գամ*-ի փոխարեն Կորճեքի, Բարգուշատի և Գոռոզի գավառաբարբառային առանձնահատկություններին: Նա ինքն է մատնանշում *լուս* ձևը՝ *լույս*-ի, *գոռն*՝ *գառն*-ի և *գոյլ*՝ *գայլ*-ի փոխարեն: Դժվար չէ կռահել, ի միջի այլոց, որ խոսքը Ղարաբաղի և Ջոկի բարբառների մասին է: Շատ կարևոր է նշել, որ դեռևս Դիոնիսիոսի երկի թարգմանության ժամանակ հայերեն բարբառներից առավել բնորոշներն արդեն ձևակերպվել էին՝ մի հանգամանք, որը պետք է հեղաշրջի հայոց լեզվի անցյալի մասին համատարած պատկերացումները:

§16. Դերբայի մասին

Ըստ Դավթի, դերբայը՝ «*ընդունելություն*»-ը «*հասարակ ասի գոյանայ ի բայէ եւ յանուանէ. եթե կատարեալ ունէր գերկոսեան, ապա նախագահ դասեր քան գերկոսեան: Իսկ զի մասն ինչ ի միոջէն ունի եւ մասն ինչ ի միւսմէն, այնր աղագաւ ոչ քան զնոսա նախկին, բայց ըստ սոցանէն կարգեցաւ*», 114¹⁶:

Ստեփանոսն ասում է . [«դերբայը գրավել է անհրաժեշտ տեղը. եթե ասում ենք, որ նա հաղորդ է (151) և՛ անվան և՛ բայի <հատկություններին>

ապա արդարացի է դասել դրան այն <խոսքի> մասերից հետո, որոնց այն, ինչպես կարծում են, հաղորդ է»] *ἀναγκαίαν ἢ μετοχὴν τὴν τάξιν εἶληχεν· εἰ γὰρ ὀνόματος τε ῥήματος αὐτὴν φάμεν μετέχειν, δίκαιον καὶ αὐτὴν ταγῆναι μετ' ἐκεῖνα τὰ μέρη, ὧν δοκεῖ μετέχειν*, 254²⁸:

§ 17. Հոդի մասին

Այս դրվագը մեկնելիս, Դավիթը շեղվում է Դիոնիսիոսի քարգմանությունից: Թարգմանությունը չի դրսևորում հարցի ըմբռնումը. հունարենի հոդը հայերեն քարգմանության մեջ փոխարինված է ցուցական դերանունով: Իսկ Դավիթը միանգամայն ճիշտ նկատում է, որ հունարենում հոդը դրվում է բառից առաջ և զանազանվում է սեռով ու թվով. ճիշտ է, այս առթիվ նրա առաջարկած օրինակը՝ *πῦ Νικηρρου*, անհաջող է, եթե այդ հասկանանք որպես *ὁ Πέτρε* և ոչ *ὁ Πέτρος* (152) (հմմտ. *ὁ Ὅμηρος*, 257⁵), բայց այս հանգամանքը նույնպես մատնանշում է ծանոթություն հունարեն լուծմունքներին՝ լուծմունքներ, որոնց մեջ քննարկվում է այն հարցը, թե արդյոք *ὦ*-ն հո² է՝ *ὦ Μενέλαε* [«*πῦ* Մենելաոս»], թե ոչ, 257³³:

Սակայն հայերենում, ըստ Դավթի, հոդը դրվում է բառավերջում, օրինակ՝ *δῆυ, δῆη, δῆε*: Նա միանգամայն ճիշտ է զանազանում *δῆ եկն* և *δῆε եկն* արտահայտությունների իմաստը: Իսկ հոդի մնացած նշանակությունները, այսինքն՝ սեռը, թիվը, հոլովումը, հայերենում հայտնի չեն և նշվել են Դիոնիսիոսի քարգմանության մեջ, Դավթի ասելով, միայն *«αὐτετησὺν ἰσῆτις»*, 115²⁴:

Հունարեն լուծմունքներում շեշտվում է, թե հոդը երբեմն նշանավորում է հարաբերություն՝ արդեն հիշատակվածին վերադառնալու իմաստով՝ [«կրկնություն»]՝ *ἀναφορὰ*: [«Իսկ կրկնությունը՝ վերադարձ է նախապես ծանոթ և բացակայող անձնավորության. մի բան է՝ ասել “մարդ եկավ”, և այլ է, եթե հոդով»] *ἀναφορὰ δὲ ἐστὶν ἀναπόλησις προεγνωσμένου καὶ ἀπόντος προσώπου· ἄλλο γὰρ τί ἐστὶν εἶπεῖν „ἄνθρωπος ἦλθε“, καὶ ἄλλο μετὰ τοῦ ἄρθρου*, և այլն, 256²⁰: Այս կշռադատությունը գտնում ենք և Դավթի «Մահմանք»-ում, նույն՝ *այդ եկն* օրինակով, և համապատասխան պարզաբանություններով հանդերձ, 158-9=հունարեն 27²⁸ (հմմտ. նաև Էլիասի Prolegomena, 10³⁰): Եթե մեր Դավիթ մեկնիչը առնչվեր «Մահմանք»-ին իբրև հեղինակ կամ քարգմանիչ, ապա նշված երկում և քերականությունում հոդի մասին դատողություններում սպասելի էր ավելի մեծ նմանություն:

§18. Դերանվան մասին

Դավիթը *դերանունություն* եզրույթը երեք իմաստով է հասկանում՝ իբրև *փոխանունություն*, *քերանուն* և *հասարակ անուն*: Առաջին անվանումը բացատրվում է նրանով, որ դերանունը գործածվում է «հատուկ անվան փոխարեն»՝ «*իբր փոխանակ տիրակազին (հմմտ. *ἀντί μόνου τού κυρίου*, 258³⁰, հմմտ. նաև 77²⁵), եւ միւտ՝ զի ոչ զեկուցանէ զհսկն իբրեւ զանուն, եւ երրորդ՝ հաւասարապէս ի վերայ արուի եւ իզի եւ կատարելումն եւ մանկան առեայ լինի*», [116⁶]:

Եթե այս բառերն իսկապես պատկանում են Դավթին, ապա նա, անկասկած, չի կարող լինել Դիոնիսիոսի թարգմանության հեղինակը, քանի որ նա վատահ չէ *դերանուն* բառի ծագման հարցում, և հմարավոր է համարում բխեցնել այն *քերանուն* ձևից¹:

Մնացած մասերում Դավթի մեկնությունը չունի և ոչ մի յուրահատկություն, որը համադրելի լինի հունարեն լուծմունքներին: Մակայն նրանում, ինչպես և Դիոնիսիոսի թարգմանությունում կա մի առանձնահատկություն, որի պատմական-մատենագրական շահեկանությունը արժանի է հատուկ ուշադրության, որը և պետք է շեշտվի:

Հունարան դպրոցում, ինչպես հայտնի է, փորձեր են արվել ստեղծելու իզական սեռի դերանվանական ձևեր՝ *սէ, դէ, ճէ՝ աստի, էքեւոյ*: Որքան որ արհեստական լինելն այս ձևերը, դրանք մասամբ արմատացան և հանդիպում են հունարան դպրոցի բազում հուշարձաններում: Դրանք պատահում են Փիլոնի երկերում՝ *Այլար. 156, Յեսս. 6, Պիտոյից* գրքում՝ 377, 384, Իրինոսի *Հերձ. 85, 140*. հատկապես սիրված է Տիմոթեոս Կուզի կողմից՝ *սէ 42¹⁷, զսէ, 26¹⁴, 33³⁴, զճէ 35¹⁷, ճէրա 221⁵ 20, 222¹¹, ճէրում 105¹⁵ (153), ճէմայ 31³⁰, 93²⁶, 95³* և այլն: Մակայն ոչ Դիոնիսիոսի, և ոչ էլ Դավթի ու մի քանի այլ երկերում այս ձևերը չեն հանդիպում: Կարելի՞ է արդյոք օգտվել այս հանգամանքից տվյալ դպրոցի հուշարձանների ժամանակագրական հարաբերությունները որոշելու համար, և կա՞րդյոք որևէ հիմք կարծելու համար, թե հուշարձանները, որ անժամոթ են այս նորամուծության, ավելի հին են, քան այն հուշարձանները, որոնց մեջ նույնը ընդունված է: Եթե նման հարցադ-

¹ Սուրբ Գրքի՝ Կյուրեղ Ալեքսանդրացուն վերագրվող մեկնության մեջ, հատկապես այն մասում, որ հրատարակել է հ[այր] Թ. Թոռնյանը *Հատընտիր ընթերցվածք*-ում, Վիեննա, 1893, հանդիպում են մի քանի քերականական եզրույթներ, անկասկած, այն ժամանակի թարգմանությամբ, որ նախընթաց է հունարան դպրոցին. *ձայնատր, նշանագիր* տառ, *արուարար* արական, *իզարար*՝ իզական, *միատր*՝ եզակի, *բազմատր*՝ հոգնակի, *փոխանակ-անուն* դերանուն, էջ 300: Ըստ ցանկալի է, որ այս՝ լեզվի կողմից նշանավոր հուշարձանը, լույս տեսնի շուտափույթ, որի ձեռագիրը պահվում է Վիեննայում և նկարագրված է Հ. Տաշյանի «Ցուցակ»-ում, 231:

րումը թույլատրելի է, ապա հունարան դպրոցի մի քանի հուշարձաններ պետք է հատկացնել Տիմոթեոս Կուզի [թարգմանությանը] նախորդող ժամանակին, ուրեմն՝ VI դարին:

Քանի որ խոսքը վերաբերում է մեզ այստեղ զբաղեցնող հուշարձանին, այն է՝ Դիոնիսիոսի թարգմանությանը, պետք է վերապահում անել, նշելով, որ այնտեղ, որտեղ սպասելի էին նշված արհեստական ձևերը՝ հենց դերանունների մասին գլխում, հունարեն բնօրինակը և ոչ մի առիթ չի ընձեռում թարգմանչին նշված ձևերը գործածելու համար: Հունարեն բնագրում իզական սեռի ցուցական դերանունները չկան, այս պատճառով հայ թարգմանչին իրապես չէր կարող ցուցաբերել իր ծանոթությունն արհեստական դերանվանական ձևերին, եթե անգամ համաձայնեմք, որ այդպիսի ծանոթություն իրոք եղել է: Հողի իզական սեռի հոլովաձևերը՝ *ή τής* և այլն, 27¹⁹, նախընթաց՝ հողի վերաբերյալ գլխում, արտահայտելու համար թարգմանչը կարող էր օգտագործել իզական սեռի գոյացումները *սա* դերանունից, սակայն, երևում է, նրա՝ Դիոնիսիոսի գրչագրում այս ձևերը պակասում էին, ուստի բացակայում է նաև դրանց թարգմանությունը: Հետաքրքիր է, որ Հելիոդորոսին նույնպես այս ձևերի [կիրառությունը] Դիոնիսիոսի երկում անծանոթ է. [«այս հոլովները միայն արական սեռի են և եզակի քվի»] *αὐταὶ αἰ πτώσεις γένους εἰσὶ μόνου ἀρσενικοῦ καὶ ἀριθμοῦ μόνου ἐνικοῦ*, 76²⁷:

§19. Նախդրի (նախադրության) մասին

Դավիթը քննում է նախդրի գրավված տեղի խնդիրը իր անվանակոչության կապակցությամբ, որ կարծես հավակնում է ավելի նախապատվելի դրության, քան թե իրեն հատկացված է, և գտնում է, որ ամեն ինչ ճիշտ է:

Այս գլխում հատկապես կարևոր է Դավթի նշումն այն մասին, որ նախդիրները «*ի հռոմին Ρ եւ Τ, L պարզք եւ երկոտասան քարոք: Իսկ ի մերումս ըստ երկայնութեան լեզուիս յանրաւս հատեալք*», [118¹⁵]:

Այս դատողությունը կարևոր է նրանով, որ, նախ՝ դա կասկածի տեղիք չի տալիս Դավթի ծանոթությունը հունարեն լուծմունքներին, որտեղից էլ նա կարող էր քաղել այս տեղեկությունները, քանի որ դրանք, թեև առկա են Դիոնիսիոսի երկում, սակայն բաց են թողնված հայերեն թարգմանության մեջ (տե՛ս վերը, էջ XLV), և երկրորդ՝ ապացուցում են, որ հայերեն բնագրում թվարկված մասնիկները՝ նախդիրները և ոչ նախդիրները, բխում են թարգմանության բուն բնագրից:

§ 20. Մակրայի մասին

Ներածական խոսքում Դավիթը մակրայի դիրքը լուսաբանում է հետևյալ օրինակով՝ եթե ոմն իշխանի ծառան ավելի հարուստ է, քան որևէ ազատ, դա չի նշանակում, որ ծառան կարող է ազատից նախադաս համարվել:

Համեմատությունը նույնքան հատկանշական է, ինչպես և նախորդ գլխում նախորդի համադրությունը *«իմն կարապետի թե եւ եկեալ յառաջ, այլ ոչ զպատիւ թագաւորին կամ զանուն նորա կարասցէ բերել»*, [118₈]: Այս ամենը մատնանշում է հունական ծագմամբ մի յուրահատուկ աղբյուր, որից օգտվել է մեր մեկնիչը:

Հունարեն լուծմունքներին են հարում մակրայի մասերի մեկնության որոշ տեղիները ևս: Այն, ինչ Դավիթն ասում է ժամանակի մակրայների մասին, 119₁₄, լիապես համընկնում է Մելամպոդեսի խոսքերի հետ. [«այժմ» մակրայի միջոցով՝ ներկան, “այնժամ”-ի միջոցով՝ անցյալը, իսկ “հետո”-ի միջոցով՝ ապանիհն]՝ *δια μὲν τοῦ νῦν ὁ ἐνεστώς, δια δὲ τοῦ τότε ὁ παρελθυστός, δια δὲ τοῦ αὐτίς ὁ μέλλων*, 59₁₉:

<2> Մակրայների երկրորդ տեսակը՝ «միջակութեան»՝ *τὰ δὲ μεσότητος* մակրայները այդպես են անվանվում ըստ հունարեն լուծմունքների՝ ոչ իմաստի համար, այլ այն պատճառով, որ ածանցվում են հոգնակի թվի սեռական հոլովի ձևից, որը ընդհանուր է բոլոր երեք սեռերի համար՝ միայն վերջավորության *ν*-ը փոխարինվում է *ς*-ով, 59₂₇: Իսկ Դավիթը, մեջբերելով Դիոնիսիոսի բերած այս տեսակի մակրայների օրինակները՝ *բարութ, յայտնապէս* (հունարեն «խելացի, իմաստուն կերպով»՝ *σοφῶς* հայն ընթերցում է իբրև *յայտնապէս սօֆῶς*, որը, աղճատվելով ընդօրինակողներից, ընդունում է *յատկապէս* ձևը), ասում է, որ դրանք *«իրր արականաց եւ իգականաց միջակ* (հմմտ. Մելամպոդեսի՝ [«լինելով երեք սեռերի միջինը»]՝ *τῆς μέσης οὐσης τῶν τριῶν γενῶν*), *զի հասարակ ես եւ կինն ասեմք գովելոցն բարութ»*, [119₁₈]:

Կասկածից վեր է, որ Դավիթն այստեղ էլ ի նկատի է ունեցել հունարեն մեկնությունը, բայց փոխադրել է այնպիսի ձևով, որը քիչ թե շատ մատչելի լինի հայ ընթերցողին, այլ կերպ ասած՝ հայացրել է:

<3> Երրորդ տեսակի [անվանումը]՝ *որակական* մակրայներ՝ *τὰ δὲ ποιότητος*, հայերեն են փոխանցվել *բերդողութեան* բառով, *τὰ δὲ ποιήσεως* սխալ ընթերցման պատճառով:

Դավիթը ոչ միայն չի ուղղում ակամա սխալը, այլ աշխատում է պատահական եզրույթը մեկնաբանել, հաղորդելով դրան ընդունելի իմաստ: *βοτρυδόν, ἀγελῆδόν* բառերի վերաբերյալ նա ասում է. *«զոր քերդեալ է ի յատութենէ պատերազմիկ զարուն երթալոյ, իբր թե տարմարար երթային եւ ողկուզարէն»*, [120₂]:

Դիոնիսիոսի բառերը, որ մեկնում է Դավիթը, վերցված են Հոմերոսից, և այնտեղ, II 89, *ողկուզարէն βοτρυδόν* ասված է մեղուների մասին, ուստի և նշանակում է՝ «պարսով», իսկ *տարմատար՝ άγγεληδόν XVI 160՝* գայլերի մասին, ուստի նշանակում է «ռհմակով»:

Հետաքրքրական է, որ հայ մեկնիչ Մովսեսին հայտնի է՝ հիշյալ բառերը պատկանում են Հոմերոսին, իսկ Հոմերոսն արտասանեց դրանք, *«տեսեալ զար, զի հանդիսանայր ի պատերազմի եւ ժողովեին սակաւիկ սակաւիկ»*, 177₁:

Եթե այս տեղեկությամբ Մովսեսը պարտական է Դավթին, ապա վերջինիս առձեռն բնագիրը պետք է խաթարված համարվի:

§ 21. Շաղկապի մասին

Շաղկապի՝ վերջին գլխում գետեղվելու վերաբերյալ Դավիթը նկատում է, *«զի ոչ ամենայն վերջադասեալքն պատուականք են եւ ոչ բնաւ անարգք, զի տեսանես զկառավարն ի վերջէ մտեալ, թեպէտ եւ տեղին զայս խնդրեսցէ հրամանատարութեան աղագաւ, այլ եւ վասն պատուոյ: Իսկ սա ոչ պատուոյ քան թե պիտոյից, առակ իմն՝ յորժամ նիւթ ի միջի կայցէ, ապա պիտի կայն. սոյնպէս եւ սա՝ քայի եւ անուան եւ այլոց եւս եկելոց ի մէջ»*, [120₇]:

Ըստ էության նույնկերպ է կշռադատում և Հելիոդորոսը, գտնելով, որ արվեստավորը միանգամայն ճիշտ է վարվել, վանելով շաղկապը վերջին տեղը, քանի որ ցանկացած արվեստավոր նախ նյութ է պատրաստում, և ապա՝ գործի է անցնում, 102₅:

Դիոնիսիոսի դասակարգած շաղկապների զանազան տեսակների մեկնություններում կան ինչ-ինչ տեղեր, որոնք առնչվում են հունարեն լուծմունքներին, բայց ընդհանուր առմամբ Դավթի պարզաբանումներն այդքան էլ զոհացուցիչ չեն. դրանք միշտ չէ, որ ցույց են տալիս, թե հեղինակը ճիշտ է հասկանում քննության առարկան, ինչը պարզվում է նրա առաջարկած օրինակներից՝ եթե, իհարկե, բնագիրն աղավաղված չէ: Բայց և այս ճախողություններում Դավթի կախվածությունը հունարեն լուծմունքներից անտակուսելի է և բացատրում է [թույլ տված սխալները]:

§ 22. Հավելված

Վերջին գլուխները առոգանության, <արվեստի> և ոտքի մասին, իսկն ասած, Դիոնիսիոսին չեն վերաբերում, բայց հավելված են եղել, ըստ երևույ-

թին, Գիոնիսիոսի այն գրչագրին, որից կատարվել էր հայերեն թարգմանությունը:

Արվեստի մասին գլուխը իսպառ բացակայում է, իսկ երկու մնացած գլուխները վնասված են, իսկ փրկված հատվածները վատ են պահպանվել: Բայց այստեղ էլ նշմարվում է հունարեն աղբյուրի ազդեցությունը. օրինակ, խոսքն այն մասին, թե պարույկածև շեշտը դրվում է սեռական և տրական հոլովների վրա, 124⁶, հասկանալի է միմիայն հունարեն լեզվի տեսանկյունից, հմմտ. 565²⁸:

Նկատենք, որ առողանության այդքան բնորոշ եզրույթները հանդիպում են նաև Փիլոնի [Աստուածային օրինաց] Այլաբանութիւն, 109 հատվածում. *եւ զբարբառոյ սաստկութիւնս ոլորմանցն եւթն գոլ դէպ եղև. շեշտ, բութ, պարոյկ, թաւ, սոսկ, երկար, սուր: Եվ դա կարևոր է երկու հուշարձանների փոխհարաբերությունները պարզելու համար:*

Ուրքի մասին գլխում Գավթի սկզբնական հատվածը փոքր ինչ այլ կերպ է վերարտադրվում Մովսեսի կողմից՝ *որպէս կենդանի մարմին ի վերայ ոտից հաստատուն կայ, 178¹⁸, և գրեթե նույն այս ձևով կրկնվում է նաև Խորենացու՝ Սահակ Բագրատունուն հղած նամակում. եւ որպէս ի վերայ երկուց ոտից բոլոր մարմին հաստատի¹:*

Խոնարհման հարացույցի առթիվ: Գիոնիսիոսի աշխատության վերջում զետեղված է նաև *տύπτω* բայի խոնարհման օրինակը, որը վերագրվում է Թեոդոսիոս Ալեքսանդրացուն: Հայերեն բնագրում թարգմանված է ոչ միայն բայը՝ *τύπτω = կռիւն*, այլև դրա բոլոր ձևերն ըստ ժամանակների և եղանակների, ընդորում հեղինակը, արհամարհելով հայերենի լծորդության թե կանոնները, և թե ոգին, աղճատում է լեզուն ի հաճույս հունարենի ձևերի:

Գավթի վերաբերմունքն այս հարացույցի նկատմամբ անհայտ է: Մի դրվագում, որը պատկանում է Գիոնիսիոսի ուշ մեկնիչներից մեկին՝ հավանաբար Եսայի Նչեցուն, այս բոլոր քմահաճ գոյացումները անվանվում են *բաջաղմունք* և խորհուրդ է տրվում «սանձահարել մտքի երիվարը» և մնալ ճշմարտության սահմաններում (տե՛ս էջ 66):

ԲԱՈՔ ԶԵՐԱԿԱՆԻՆ բառգիրքը, որը գտնվում է Գիոնիսիոսի հայերեն գրչագրերին կից, ըստ երևույթին, հին ծագում ունի, թեև անհայտ է, թե ով է կազմել այդ: Բառերն ընդհանուր առմամբ ճիշտ են մեկնաբանվում, սակավ բացառությամբ. օրինակ՝ *բաղալք* և *անբաղալք* ընկալվել են իբրև *բաղայք* և մեկնաբանվել իբրև *պատճառք*, էջ 63:

¹ Մովսես Խորենացի, Մատենագրութիւնք, էջ 284:
CLXXII

V. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դավիթ-քերականի առնչությունը Դավիթ-փիլիսոփային: Հունարան դպրոցի հուշարձանների փոխհարաբերությունները պարզելու մեթոդները:

Դավթի «Մեկնության» մեր առաջադրած վերլուծության մեջ մենք հետամուտ էինք երկու նպատակի. մի կողմից, «Մեկնությունը» նույնատիպ հունարեն լուծումներին համեմատելիս, աշխատում էինք բացահայտել դրանց ընդհանուր տեղերը, շեշտել առավել կամ պակաս մերձավոր շփման կետերը՝ սա մեր գլխավոր խնդիրն էր: Բայց մյուս կողմից, մենք առիթ չէինք փախցնում նաև մատնանշելու ուսումնասիրվող բնագրի առանձնահատկությունները, որոնք նույնը հարազատացնում են հունարան դպրոցի այլ թարգմանական հուշարձանների հետ:

Մեր դիտարկումները կարող են ամփոփվել հետևյալ կերպ. բաղդատության արդյունքները տեղիք չեն տալիս տարակուսելու, որ Դավթի քերականական աշխատությունը սերտ ազգակցական կապերով կապված է հույն հեղինակների համանման լուծումների հետ: Աշխատության ընդհանուր նկարագիրը, հարցերի ներկայացման ձևական ոգին, հունարեն լուծումների ոչ միայն մտքի ընթացքի, այլև արտահայտությունների հաճախ զուգադիպությունները՝ այն նշաններն են, որոնք փոխադրում են մեր հուշարձանը հույն քերականների հոգևոր աշխարհը:

Երբեմն այդ նմանություններն այնքան ցայտուն են, որ կարող է տարակույս ծագել, թե Դավթի երկն իրականում արդյո՞ք չէր թարգմանվել հունարենից: Այլ կերպ ասած, արդյո՞ք Դավթի «Մեկնության»ը նույնը չպատահեց, ինչ որ «Մահմանք իմաստութեան»-ը:

Ինչպես հայտնի է, հայ ավանդությունը «Մահմանք»-ի հեղինակ էր համարում Դավիթ Անհաղթին: Սակայն պարզվեց, որ դրա հեղինակն իրոք Դավիթն էր, բայց ոչ թե հայ մատենագիրը, այլ նույնանուն, թերևս ծագումով հայ, բայց հույն մատենագրության ասպարեզում գործող մի անձնավորություն, որը նշված աշխատությունը գրել է հունարեն: Այժմ այն հրատարակված (154) և հայտնի է, և հայերեն բնագիրը դրա թարգմանությունն է, որ զգալի կրճատումներով է կատարվել (155): Միգուցե նման մի բան պատահել էր նաև Դավթի «Մեկնության» հետ, և այն նույնպես պատկանում է հույն մատենագիր Դավթին, որը միայն հետագայում է ճանաչվել որպես հայ հեղինակ:

Սակայն, ինչպես վերև արդեն շեշտվեց, մեր քերականը ճարտասանու-

թյան՝ երեք մասերի տրոհելու խնդրում էապես տարածայնվում է «Մահմանք»-ից. նա հավանություն է տալիս այս տրոհմանը, մինչդեռ «Մահմանք»-ի հեղինակը՝ Դավիթն այն գոհացուցիչ չի համարում: Այս պատճառով, մեզ թվում է, չի կարելի նրանց նույնացնել, և պետք է համաձայնել, որ Դավիթ-քերականը տարբերվում է Դավիթ-փիլիսոփայից: Նա, հավանաբար, հայ մատենագիր էր, որն իր «Մեկնություն»-ը կազմել էր հունական աղբյուրների, թերևս ժամանակին կայսերական դպրոցներում ճանաչում ստացած ինչ-որ ձեռնարկի հիման վրա:

Դավթի անձնավորության խնդրի լուծումը (եթե նույնիսկ այն վերջնական համարենք) դեռևս չի նշանակում, որ սպառված է նրա՝ հույն մատենագիր Դավթին առնչվելու հարցը: Դավիթ-քերականը կարող է հանդիսանալ իբրև Դավիթ-փիլիսոփայի երկի թարգմանիչը. հենց այս հանգամանքում, այն է՝ [երկու աշխատության] լեզվական փոխհարաբերությունները պարզելու խնդրում է թաքնվում բանասիրական չափազանց կարևոր շահեկանություն:

«Մեկնության» և «Մահմանքի» փոխհարաբերության հստակեցումը առհասարակ մեզ առաջնորդում է քննելու հունարան հուշարձանների փոխհարաբերությունները՝ և դա այս դպրոցի ուսումնասիրման առանցքային խնդիրն է: Սրա քննությունը էապես մեր նպատակներից դուրս է. այժմ կցանկանայինք միայն մատնացույց անել, թե որն է նշված խնդրի բարդությունն ու դժվարությունը և ինչպիսի մեթոդներ կարելի է նախատեսել դրա լուծման համար:

Հայ բանասիրության մեջ խորամուխ անձանց քաջ հայտնի է, թե որն է հունարան լեզվի յուրօրինակությունը, և թե ինչպես դյուրին է դրա հատկանշան գծերով զանազանել հունարան դպրոցի հուշարձանը ցանկացած այլ գրական [հուշարձանից]: Բացի շարահյուսական և այլ առանձնահատկություններից, այդ յուրօրինակությունն արտահայտվում է նաև բառերի որոշակի կազմության մեջ, որը հարմարեցված է հունարենի բառակազմությանը: [Բուն] հայերեն բառապաշարը հունարենից զանազանվում է առաջին հերթին նախածանցված բառերի բացակայությամբ (156): [Հունարան դպրոցի] ներկայացուցիչները, ձգտելով մերձեցնել երկու լեզուները, փորձում էին լրացնել այս պակասը, յուրաքանչյուր հունարեն նախդրի (157) համար հայերենում գտնելով համապատասխան համարժեք, ընդորոմ գործածվում էին ոչ միայն գոյություն ունեցող նախդիրները, այլև ստեղծվում էին նորերը՝ առկա, քիչ թե շատ հայտնի բառամթերքի հարմարեցմամբ: Ստացվում էր նախդիրների մի ամբողջ շարք.

առ <i>πρός,</i>	մատ } <i>παρά,</i>	մակ <i>ἐπί,</i>
ապ } <i>ἀπό,</i>	յար } <i>մոտ, կող-</i>	վեր <i>ἀνά,</i>
բաց }	տար <i>παρά,</i>	նախ <i>πρό,</i>
	(-ից)	
արտ <i>ἐκ,</i>	տրամ <i>διά,</i>	գեր <i>ὑπέρ,</i>
ներ <i>έν,</i>	պար } <i>περί,</i>	դեր } <i>ἀντί,</i>
բաղ, փաղ }	բաղ }	փոխ }
շաղ, շար, ջղ }	եմք } <i>ὑπό,</i>	հոմ } <i>ὁμο-:</i>
	ստոր }	համ }

Օրինակ՝	առ-նգանութիւն	<i>προσ-ωδία</i>
	ապ-ա-ցոյց	<i>ἀπό-δειξις</i>
	բաց-ա-տրութիւն	<i>ἀπό-δοσις</i>
	արտ-ա-բերիլ	<i>ἐκ-φέρεισθαι</i>
	ներ-գործութիւն	<i>έν-έργεια</i>
	բաղ-դասութիւն	<i>σύν-ταξις</i>
	փաղ-առութիւն	<i>συλ-λαβή</i>
	շաղ-առակ	<i>σύλ-ληψις</i> [միաձուլում]
	շար-ա-դրութիւն	<i>σύν-θεσις</i>
	ջղ-ա-ման	<i>συμ-πλεκτικός</i> [միահյուսված, միացնող]
	մատ-հրաման	<i>παρα-κέλευσις</i> [հրահանգ, խրատ, քաջա-լերում]
	յար-անուն	<i>παρ-ώνυμον</i> [պիտականուն]
	տար-բաղ-մատ	<i>παρα-συν-απτικός</i> [պատճառական կապ]
	տրամ-ա-դրութիւն	<i>διά-θεσις</i>
	պար-բեկութիւն	<i>περί-κλασις</i>
	բաղ-ձածական	<i>περι-ληπτικός</i> [պարունակ, հավաքական]
	եմք-ա-դասութիւն	<i>ὑπό-κρισις</i>
	ստոր-ա-դրութիւն	<i>ὑπό-θεσις</i>
	մակ-անուն	<i>ἐπ-ώνυμον</i>
	վեր-ծանութիւն	<i>ἀνά-γνωσις</i>
	նախ-ա-դասել	<i>προ-τάσσω</i>
	գեր-ա-դրական	<i>ὑπερ-θετικόν</i>
	դեր-անուն	<i>ἀντ-ωνυμία</i>
	հոմ-անուն	<i>ὁμ-ώνυμον</i>

Ստոր՝ կատա [նախածանցը] Գիտնիսիոսի մոտ չի հանդիպում, բայց առկա է այլ հուշարձաններում, օրինակ՝ ստոր-նգութին՝ *κᾶτῆγορῶα* [բառում] և այլն:

Նման կազմություն ունեցող բառերի առկայությունը որևէ հուշարձանում, եթե անգամ հաշվի չառնենք լեզվի այլ հատկությունները, որ բխում են նյութական քարզմանության [մեթոդի] էությունից, բավական է դրա ճակատագիրը անսխալ որոշելու համար՝ հունարան դպրոցին պատկանելու իմաստով: Այս առանձնահատկություններին այս կամ այն չափով հաղորդ են հունարան գրականության բոլոր երկերը: Նյութական քարզմանության սկզբունքները¹ դրանց մեջ կիրառվում են այնպիսի հետևողականությամբ, որ առաջին հայացքից թվում է, թե դրանք միևնույն գրչի արտադրանքներ են: Մինչդեռ դրանց ավելի մերձավոր ծանոթությունը հանգեցնում է այն եզրակացության, որ քարզմանության միանմանությունը՝ մի առանձնահատկություն է, որ պայմանավորված է ոչ թե անձնավորության, այլ տվյալ դպրոցում ընդունված քարզմանական արվեստի [կանոններով]: Հետևաբար անձինք, որ անցել են այս դպրոցի հունով, կարող էին միմյանցից անկախ քարզմանել միևնույն բնագիրը այնքան նման, որ նրանց քարզմանությունները կմիաձուլվեին, կամ, համեմայնողես, դժվար կլինի դրանք ճանաչել իբրև տարբեր [անհատների] աշխատանքներ: Այս պայմաններում անկարելի է թվում լեզվական փաստերի հիման վրա որոշել և հավաստել քարզմանական հուշարձանների հեղինակների անձնավորությունը:

Թվում է, թե քարզմանության տարբեր աստիճանի հարազատությունը բնագրին, այսինքն՝ դրա նյութականությունը կարող է հիմք ծառայել քարզմանությունները զանազանելու և տարբեր հեղինակների վերագրելու համար: Մակայն և այստեղ մենք կսխալվեինք, որովհետև հելլենացման աստիճանը պայմանավորված է, ինչպես պարզվում է, ավելի շուտ այն բանով, թե ո՛ւմ են քարզմանում, քան թե ո՛վ է քարզմանում: Մեծ հեղինակությունների աշխատությունները, այն աշխատությունները, որոնք ուսումնասիրության և մեկնության առարկա էին, քարզմանվում էին բժախնդի ճշգրտությամբ, բնագրի տառին ստրկական հավատարմությամբ, իսկ մեկնությունները և ուսումնասիրությունները, որ գրել են պակաս հայտնի հեղինակները այս նույն երկերի վերաբերյալ, հայերեն քարզմանությամբ աչքի էին ընկնում

¹ Հովհաննես Պետրիժինին սահմանում է նյութական քարզմանության սկզբունքը Վրաստանի XI-XII դդ. համանման մատենագրական իրականության համար հետևյալ կերպ. «Պետք է ամենայն ճշգրտությամբ հետևել բնօրինակի լեզվի առանձնահատկություններին», տե՛ս **Н. Марр**, *Иоанн Петрицкий*, стр. 35 (158):

պակաս կաշկանդվածությամբ և առավել ազատությամբ՝ հօգուտ մայրենի լեզվի կանոնների պահպանման: Դիոնիսիոսի, Արիստոտելի (Մտորոզութիւն, Պերիարմենիաս, Վերլուծական), Պորփյուրի, Ափթնիոսի թարգմանություններն այնքան նյութական են և հելլենացված, որ առանց բնօրինակի պարզապես անհասկանալի են: Մինչդեռ դրանց վերաբերյալ Դավթի, Էլիասի կազմած մեկնությունները թարգմանված են շատ ավելի պարզ կերպով (159), և թեպետ հեռու են սովորական հայերեն խոսքից, բայց միանգամայն հասկանալի են և ընթերցվում են պարզորոշ՝ առանց բնօրինակի օգնության:

Թարգմանական հեղինակների նկատմամբ երկակի վերաբերմունքը հասարակ պատահականություն չէ, այլ հստակ մտածված համակարգ, որ ընդունված է տվյալ դպրոցում: Դրա էությունն այն է, որ հետդասական ամբողջ գիտնականությունը շրջաբերվում է անտիկ աշխարհի մեծ վարդապետների սովերների շուրջ՝ ձգտելով հասկանալ և մեկնաբանել նրանց մտքերը, որ դյուրըմբռնելի չէին բավարար պատրաստվածություն չունեցող մեկնիչների համար: Մրանց մեկնությունները հաճախ ձևական-քերականական բնույթի էին՝ մեռյալ սխոլաստիկությանը հատուկ բոլոր թերություններով հանդերձ:

Այս գիտնականությունը հայ հողի վրա պատվաստողները աշխատում էին մեկնության ենթակա բնագրերը հայերեն վերարտադրել՝ բնօրինակի լեզվի բոլոր դժվարությունների պահպանմամբ՝ դժվարություններ, որոնք պարզաբանման առարկաներ էին: Այլ վերաբերմունքի դեպքում, այն է՝ պարզ և միանգամայն հասկանալի թարգմանության պարագային կանխորոշվելու էր բնագրի այս կամ այն ըմբռնումը, ինչը կբացառեր մեկնողական գիտնականության հնարավորությունն ու անհրաժեշտությունը (160): Քանի որ խոսքս վերաբերում է փիլիսոփայական բնույթի գրվածքներին, հենց նշված հանգամանքներով է բացատրվում թարգմանական լեզվի ստրկականության պատճառը: Նույնանման նկատառումները, որոնք ոչ միայն տեսական, այլև գործնական շահի հետամուտ էին, հիմք էին դարձել մաև դավանաբանական բովանդակություն ունեցող մույնատիպ թարգմանություններին համար:

Ըստ այդմ հունարան արհեստական լեզուն, լինելով դպրոցի առավել ակնառու և բնորոշ հատկանիշը, որն իսկույն առանձնացնում է դրա ստեղծագործությունները ուրիշ հուշարձաններից, չի տալիս, այնուամենայնիվ, քիչ թե շատ վստահելի կովան դպրոցի ներսում աշխատությունները սահմանազատելու համար: Եվ մենք չենք կարող սոսկ լեզվով ղեկավարվելով, որքան որ այն բազմերանգ լինի իր բնութագրով, այսինքն՝ հունարանու-

թյամբ, դպրոցի ժառանգությունը բաժանել դասերի՝ հեղինակների կամ ժամանակների համեմատ:

Այս առումով մեզ օգնության են գալիս ավելի թարգմանության վրիպումները՝ այն դեպքերը, երբ հունարեն բնագրի միևնույն արտահայտությունը, զանազան հուշարձաններում վերարտադրվում է տարբեր ձևով՝ արտահայտության տարբեր ըմբռնման պատճառով: Մեզ հաջողվեց նկատել մի քանի այդպիսի՝ չափազանց կարևոր և հատկանշական դեպքեր:

Վերը (161) մենք հիշատակեցինք արվեստի սահմանմանը վերաբերող ստոիկյանների բանաձևը, որ Դավիթը վերլուծում է «Մեկնության» ներածության մեջ. *արուեստ է բաղկացութիւն ի թողմանէ նախակրթեալ առ ի պիտանացու ինչ իրս որ ի կենցաղումս:*

Դա հանդիպում է Դավթի «Մահմանք»-ում փոքր ինչ այլ թարգմանությամբ. *արհեստ է բաղկացութիւն ի հաստդութենէ ներհմտութեամբ նախակրթեալ առ ի պիտանացու ինչ կատարումն որ ի կենցաղումս*, 182: Համապատասխան հունարեն բնագիրը հետևյալն է. *τέχνη ἐστὶ σύστημα ἐκ καταλήψεων ἐμπειρίᾳ συγγεγυμνασμένη πρὸς τι τέλος εὐχρηστον τῶν ἐν τῷ βίῳ*, 44: Վերը մենք ծանոթացանք *κατάληψις* բառի իմաստին: Այն ճիշտ է թարգմանված «Մահմանք»-ում՝ որպես *հաստդութիւն*, այն է՝ «հասկացություն»: Մինչդեռ մեր Դավթին իր «Մեկնությունում» այս նույն բառը թարգմանել է *թողումն* բառով, հավանաբար, դրա ստուգաբանական կազմի ոչ ճիշտ ըմբռնման հետևանքով: *Κατάληψις* կարող է սերել և՛ *καταλαμβάνω*-ից՝ «հասկանալ, ըմբռնել», և՛ *καταλείπω*-ից՝ «թողնել» (162): «Մահմանք»-ում բառն ընդունվել է առաջին իմաստով, իսկ «Մեկնությունում»՝ երկրորդ: Եզրակացությունը պարզ է՝ հույն մատենագրի հեղինակած «Մահմանք»-ի թարգմանությունը չէր կարող պատկանել այն հեղինակին, որ գրել է «Մեկնությունը» (կամ թարգմանել այն, եթե մեկը հակված չէ դիտելու դրա հեղինակին իբրև հայ մատենագրի): Եվ իրոք, չի կարելի ընդունել, որ միևնույն անձը, թարգմանելով հայտնի փիլիսոփայական դպրոցի հստակորեն բանաձևված դրույթը, այդքան կտրուկ տարածայներ ինքն իրեն ոչ թե հոմանիշների ընտրության, ինչը հասկանալի կլիներ, այլ եզրույթի բուն իմաստի ըմբռնման մեջ: Տարակույսից վեր է, որ թարգմանությունները պատկանում են երկու տարբեր անձանց:

Մենք ենթադրեցինք նաև, որ արվեստի քննարկվող սահմանումը Դավիթը վերցրել էր Դիոնիսիոսի հավելվածից՝ հավելված, որ առկա է Դիոնիսիոսի հունարեն գրչագրերին կից, բայց չի պահպանվել հայերեն թարգմանության ներկա օրինակներում: Մեր ենթադրությունը վերը հիմնավորված է և այլևս չի կարող էական առարկություններ հարուցել: Եթե դա այդ-
CLXXVIII

պես է, ապա ուրեմն Դիոնիսիոսի թարգմանիչն էլ այլ անձնավորություն է, քան «Սահմանք»-ինը: Հետևաբար, *κατάληψις* բառի երկակի թարգմանությունը թույլ է տալիս ենթադրել երեք մատենագիրների գոյություն. մեկը թարգմանել է «Սահմանք»ը, երկրորդը՝ Դիոնիսիոսի [երկը], իսկ երրորդը նա է, ով Դիոնիսիոսի մեկնաբանության մեջ անվերապահորեն օգտվում է հիշյալ բառի սխալ թարգմանությունից:

Հնարավոր է, որ վերջին երկու մատենագիրները միաձուլված են միևնույն անձում, այսինքն՝ «Մեկնության» հեղինակ Դավիթը նաև Դիոնիսիոսի, ուրեմն և քննվող արտահայտության թարգմանիչն է: Բայց վերը նշեցինք, որ եթե Դավթին վերագրվող «Վանկի մասին» դրվագի մեկնությունն իսկապես իրենն է, ապա նա չի կարող ճանաչվել Դիոնիսիոսի թարգմանության հեղինակ: Այն հանգամանքը, որ երկու թարգմանություններն էլ նշված բառի բացատրությամբ, մնացած հանգամանքներում լրիվ համընկնում են ցույց է տալիս դրանց՝ միևնույն գրական դպրոցից սերելը:

Մեկ այլ բառ, որ տարբեր ձևով է մեկնաբանվել և թարգմանվել՝ *τὸ προοίμιον*-ն է:

Այն հանդիպում է «Ստորոգություններում»՝ *τὸ γὰρ προοίμιον τῆς διηγήσεως πρότερον*, 14^b₃, ինչը հայերեն է թարգմանված՝ *քանզի նախերգությունն քան զպատմութիւն նախկին է*, 404^{<21>}: Նույն արտահայտությունը հանդիպում է նաև Դավթին վերագրվող «Ստորոգութեանց մեկնութիւն»-ում՝ *նախկին է նախերգանն* 448^{<5>}:

Պորփյուրի «Ներածության» մեկնությունում, *κόρον ἔχειν τῶν προοιμίων*, 95⁵, հայերեն է վերարտադրվել որպես *յանկումն ունելով նախերգանաց*, 264^{<4>}: Մյուս անգամ՝ *μετὰ τὰ διττὰ προοίμια*, 121²¹, թարգմանված է՝ *յետ երկակի նախերգութեան*, 281^{<16>}:

Արիստոտելեսի Վերլուծականի մեկնությունում նույնպես բազմիցս կարդացվում է *նախերգան* 557, 569, 570, 578: Անտարակույս դա այստեղ էլ համապատասխանում է հունարեն *προοίμιον* բառին, թեև փաստական ստուգումն անկարելի է, քանի որ նշված Մեկնության բնագիրը մինչ օրս չի հայտնաբերվել:

Այս բառը գործածվում է և Էլիասի Ստորոգությունների մեկնության մեջ՝ *զնախերգանն*, 41⁵ = *τὰ προοίμια*, 134³ (հմմտ. *զնախերգանացն*, 41⁶ = *τῶν μὲν προοιμίων*, 134¹⁰), *նախազոյն է նախերգան քան զպատմութիւն*, 131⁴ = *πρότερον τὸ προοίμιον τῆς διηγήσεως*, 195³:

Ըստ Մագիստրոսի, Դավթի քերականության ներածությունը նույնպես

կոչվել էր *ճախերգան*, ինչպես և նշված է մեր հրատարակության մեջ, 79¹:

Մեզ հետաքրքրող *προοίμιον* բառը Պիտոյից գրքում հետևողականորեն թարգմանվում է իբրև *ճախաշավիղ*, ընդ որում այս դեպքում ի նկատի ունենք Պիտոյից գրքի ոչ թե «նախակրթությունները» կամ օրինակները, այլ դրա հիմնական մասը, որ սերում է Ափթոնիոս ճարտասանից (163): Հայերեն թարգմանության և հունարեն բնօրինակի փոխհարաբերություններին ծանոթ ուսումնասիրողները գիտեն, որ բաղդատության պարագայում խոսք կարող է լինել միմիայն շարակարգի համադրելիության, և ոչ բնագրային համընկնումների մասին, ինչը մեր նպատակի համար լրիվ բավական է: Հունարեն՝ *προοιμιάση μὲν πρὸς τὴν οὐσαν ὑπόθεσιν· εἶτα θήσεις τὸ γένος* և այլն 87², հայերենում համապատասխանում է. *ճախաշավիղ առնելը ստանդարտ պատճառին: Ապա դնել զագգն*, 413^{<14>}:

προοιμιαζόμενος ἐποίσεις τὸ γένος 93¹² = հայերեն *ճախաշավիղ առնել որպես ի ներքողեանս: Ի վերայ ածել եւ զագգն* 445^{<10>}:

πρώτον μὲν τῆ καλουμένη ἐφόδῳ, ἣν ἀντὶ προοιμιῶν ἐρεῖς, 102¹² = հայերեն *առաջին ճախաշավիղան*, 551^{<27>}: Հնարավոր է, որ այստեղ հայերենը վերարտադրում է *ἔφοδος* բառը, սակայն ավելի հավանական է, որ այստեղ, ինչպես և նախորդ բաղդատություններում այն համապատասխանում է *προοίμιον*-ին:

Մի դեպքում նույն բառը թարգմանված է որպես *յառաջարան*.

διὸ προοίμιον μὲν ὁ κοινὸς τόπος οὐκ ἔχει, 81⁴ = հայերեն *յաղագս որոյ յառաջարան տեղի ոչ ունի*, 386⁹:

προοίμιον բառի առաջին թարգմանությունը՝ *ճախերգան* հիմնվում է բառի երկրորդ մասի՝ *-οἶμιον*-ի ոչ ճիշտ ըմբռնման վրա. թարգմանիչն այն բխեցնում է *οἶμῆ* «երգ» բառից: Մինչդեռ *-οἶμιον*-ը առաջացել է *οἶμος* «ուղի, ճանապարհ, շավիղ» բառից և ամենայն ճշտությամբ թարգմանվել է *ճախաշավիղ*:

Միանգամայն պարզ է, որ երկու տարբեր թարգմանություններ անկարելի է վերագրել միևնույն անձին: *Նախաշավիղ* բառը առանձնացնում է Պիտոյից գիրքը, ավելի շուտ՝ Ափթոնիոսի բնագիրը այլ թարգմանական երկերի շարքից: Ովքեր էլ որ լինեն վերջիններիս հեղինակները՝ ուսումնակիցներ թե այլ փոխհարաբերություններով կապված անձինք, նրանք փոքր-ինչ ավելի են հեռանում Ափթոնիոսի թարգմանչից, թեև նրա հետ միասին պատկանում են միևնույն դպրոցին:

¹ Անանիայի Մնացորդ բանից (164), 67 կարդացվում է. *Պաղոսի Ալեքսանդրացույ ճախերգան ի ներքսածութեանէ <> յոյժ (:)* գեղեցկարար և այլն: *Նախերգան* բառից դատելով, գրվածքը չի կարող նրան պատկանել:

² *Rhetores Graeci*, ed. Ch. Walz, vol. I.

Ուշադրության արժանի է և *γραμματικός* եզրույթի երկակի թարգմանությունը: Ոչ միայն Դիոնիսիոսի [բնագրում], այլև հունարան դպրոցի բոլոր այլ հուշարձաններում *γραμματικός* թարգմանվում է *քերական, γραμματική` քերականութիւն*: Այսպես, օրինակ, «Ստորոգություններում»՝ *ἀπὸ τῆς γραμματικῆς ὁ γραμματικός*, 10^a₁₄ = հայերեն *ի քերականութենէ քերական*, 359^{<29>}. ինչպես և 10^a₃₁ = հայերեն 391, 1^a₂₆=360^{<10>}, 1^b₃=360^{<16>}, 1^b₈=360^{<22>}, 1^b₂₉=362^{<9>}, 3^a₄=365^{<28>}, 3^a₅=366^{<1>}, 14^b₁=404^{<19>}, *γραμματικώτερος* 10^a₃ = *քերականագոյն* 393^{<8>} և այլն:

Նույն համապատասխանությունները կան նաև Դավթի՝ Ստորոգությունների մեկնությունում, 421-422, Վերլուծականի մեկնությունում՝ 565, «Ցառագս աշխարհի» գրվածքում՝ 617^{<1>} = հունարեն 396¹⁷:

Հանդիպում է նաև Փիլոնի (*Լին.*, *ի քերականին*, 275^{<22>}) և Իրինեոսի, (*Հերձ.*, *քերականք*, 101) թարգմանություններում:

Որոշ այլ հուշարձաններում *քերական* բառը հերթագայում է *քերդող*-ին «քերական» իմաստով: Այսպես, օրինակ, «Սահմանք»-ում *քերականութիւն* 177^{<13>} համապատասխանում է հունարեն *ή γραμματική* 40²⁷, ինչպես և *ի քերականութենէն* 134^{<29>} = *ἀπὸ τῆς γραμματικῆς*, 10¹⁷, *քերական* 147^{<32,37>} = *γραμματικός*, 19^{17, 18} և այլն: Բայց հունարեն բնագրի *ὁ γραμματικός οἶδε*, 39³², հայերեն է վերարտադրվել որպես *քերթողն զհստ* 176^{<1>}, իսկ *ὁ γραμματικός λαμβάνει*, 21¹⁸ = հայերեն *քերթողն առնու* 151^{<15>}, կամ *οἱ μὲν γραμματικοὶ τὴν φωνὴν ὀρίζονται πληγὴν ἀέρος* 41²⁶ = հայերենի *քերթաղք ի սահմանել զձայն վիրաւորութիւն աւղոյ սասցին* 178^{<20>}. *δίδωσι τῇ γραμματικῇ*, 40²² = հայերեն *ես զհստել քերթողին* 177^{<6>}:

Դավթի՝ Պորփյուրի մեկնությունում *οἱ γραμματικοί*, 83²⁵ = հայերեն *քերդողք*, 254^{<25>}, Էլիասի՝ Ստորոգությունների մեկնությունում *τούς γραμματικούς*, 143²⁷ = հայերեն *զքերդողս* 55², ինչպես և 167⁹ = հայերեն 84²⁵. վերջին երկու աշխատություններում *քերական* բառը չի հանդիպում:

Այսպիսով, որոշ հուշարձաններում գործածվում է բացառապես *քերական* բառը, որոշ հուշարձաններում այն հերթագայում է *քերդող* բառին, և, վերջապես, երրորդներում դա վտարվում է վերջինիս կողմից: Պետք է ենթադրել, որ առաջին հուշարձանները համեմատաբար ավելի վաղ են, քան երկրորդները, իսկ սրանք՝ քան երրորդները:

Դիոնիսիոսի թարգմանությունը տակավին չզիտել *քերդող* բառը, իսկ Էլիասն, ընդհակառակը, չի գործածում *քերական* ձևը: Վերը մենք շեշտեցինք Դիոնիսիոսի և Էլիասի հատկանշական մի արտահայտության նույնությունը, այն է՝ սրի անվանումների համընկնումը: Այժմ մենք կարող ենք դա բացատրել Էլիասի թարգմանության՝ Դիոնիսիոսի թարգմանությունից կախվածությամբ:

Περὶ ἐρμηνείας-ին վերաբերող մեկնությունում հնչյունը սահմանվում է իբրև *αιτιαυ παῖσιν* 496^{<14>}: Այստեղ ի նկատի է առնվում այն սահմանումը, որ «Սահմանք»-ում բերվում է այլ թարգմանությամբ՝ *վիրավորութիւն αιτιαυ*, ինչը համապատասխանում է հունարենի *πληγῆ ἀέρος*: *Πληγῆ* նշանակում է ինչպես «հարված», այնպես էլ հարվածից ստացած «վերք», ըստ այդմ թարգմանվել է մեկի կողմից՝ *παῖσιν*, իսկ մյուսի կողմից՝ *վիրավորութիւն*:

Թվում է, թե թարգմանությունները պատկանում են զանազան անձերի: Սակայն *Միմն կարուակ* օրինակը, որ բերվում է *Περὶ ἐρμηνείας*-ի մեկնությունում, 515^{<25>} և կրկնվում է «Սահմանք»-ում, 180^{<8>} = *Σίμων σκυτεύς*, 42²⁷ հարկադրում է վարանել: *σκυτεύς*՝ «կոշկակար» բառը գտնվում է Արիստոտելեսի [*Մեկնության մասին*] երկում՝ *Περὶ ἐρμηνείας*, 20^b₃₅ = *կարուակ*, հայերեն բնագիր, 477^{<11>}, բայց մեկնիչն իր կողմից ավելացնում է *Միմն*, և այս՝ *Միմն կարուակ* կապակցությամբ այն հանդիպում է Գավթի «Սահմանք»-ում: *Կարուակ* հատկանշական եզրույթը մերձեցնում է նշված երկերի թարգմանությունները, իսկ *Միմն Σίμων* ընդհանուր օրինակը մատնանշում է նաև դրանց հեղինակների մերձավոր կապը, հակառակ այն եզրակացության, որին հանգեցրել են Հ. Մանանդյանին իր հետաքրքրական դիտարկումները¹:

Դրանով մենք բնավ մտադիր չենք [վերջնականապես] լուծելու հունարան դպրոցի հուշարձանների փոխհարաբերությունների այդքան բարդ խնդիրը: Մեր թուօղիկ դիտողությունների նպատակն էր, ընդհակառակն, ապացուցել, թե որքան բազմազան են միահյուսված նշված հարաբերությունները և որքան դժվար է գտնել դրանք հստակեցնող որևէ չափորոշիչ: Դրանից է կախված և շատ ավելի կարևոր խնդրի ձևակերպումը՝ հունարան դպրոցի երկերի ժամանակագրության խնդիրը, որ կապված է [նույն դպրոցի] առանձին հուշարձանների թվագրման հետ:

Մենք ցանկանում էինք լուրջ ուրվագծել առաջադրյալ խնդրի լուծման մեթոդը և կարծում էինք, թե նշված ուղին ճշմարիտ միջոց է այդ նպատակի համար: Վճռորոշ պետք է համարել այն դեպքերը, երբ բնօրինակի միևնույն արտահայտությունները հայերեն են թարգմանվում տարբեր ձևով տարբեր երկերում, ընդ որում տարբերությունը երևում է ոչ թե չհամընկնող, բայց հոմանիշ արտահայտությունների ընտրության մեջ, այլ արդյունք է միևնույն անձի մեջ անհամատեղելի՝ տվյալ տեղի վերաբերյալ բառերի տարբեր ըմբռնման:

Հունարան դպրոցի ծագման և ծաղկման ժամանակը որոշելիս պետք է ի նկատի առնել [այստեղ] առաջին անգամ լույս տեսնող քերականական

¹ Հ. Մանանդյան, Գավթ Անհաղթի խնդիրը, 1904 (165):
CLXXXII

լուծմունքները: Դպրոցի այլ երկերի համեմատ դրանք ունեն այն առավելու-
թյունը, որ գիտության որոշակի բնագավառ են ներկայացնում՝ զարգացման
անընդհատ հաջորդականությամբ ի դեմս մի շարք հեղինակների: Մեզ հե-
տաքրքրող ժամանակաշրջանում Ստեփանոսը՝ քերականական կրթվածու-
թյան վերջին ներկայացուցիչն է. նրա աշխատությունն իր որակով շատ
ավելի հեռու է կանգնած Դավթի երկից և բնավ չի նշանավորում տվյալ գի-
տության ծաղկումը: Ստեփանոսի ժամանակը քաջ հայտնի է: Նրա ուսուցիչ
Մովսեսը նրանից առաջ էր, իսկ նրանից ավելի վաղ էին Անանունն ու Դա-
վիթը: Դրանով տեղափոխվում ենք արդեն VII դար, որի սահմաններում,
ըստ երևույթին, պետք է հաստատել հիշյալ քերականների ժամանակա-
շրջանը: Բյուզանդական մատենագրության մեջ էլ VII դարն այն ժամանա-
կաշրջանն է, երբ ավարտվում և ամփոփվում է քերականական և փիլիսո-
փայական մտքի ճոխ զարգացումը, որ տեղի էր ունեցել մախորդ VI դարում:
Այս տվյալներով հանդերձ հրատարակվող հուշարձանները կարող են օգ-
տակար լինել հունաբան դպրոցի խնդիրը ընդհանրապես քննելու համար:



EXPLICATIO SIGLORUM*

- T = cod. 2297 Etschmiatsinensis
MS = cod. p. q. 1104 Venetianus
M = cod. u. η. 875 “
E = cod. t. q. 306 “
E₂ = cod. p. p. 174 “
E₃ = cod. p. q. 1317 “
N = cod. u. q. 994 “
J = cod. 336 Vindobonensis
A = cod. p. q. 39 Venetianus
V₁ = cod. p. q. 957 “ } V
V₂ = cod. 2372 Etschmiatsinensis }
Is = cod. 2359 “
- D^c A^c M^c S^c H^c E^c J^c = Commentarii Davidis, Anonymi, Moysis, Stephani,
Hamami, [Joannis] Erzencaiensis, Jesaiae Nixensis
- His uncis < > inclusa verba in codd non extant.
“ “ () inclusa quae a textu aliena mihi videntur.
“ “ Γ γ vel L l verba ambigua apud M vel E solum leguntur.
- Vide etiam pp. XCV-XCVI.

ՆԻՇԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

- T = ձեռ. 2297, Էջմիածին
MS = ձեռ. ը. գ. 1104, Վենետիկ
M = ձեռ. ա. ղ. 875 “
E = ձեռ. է. գ. 306 “
E₂ = ձեռ. ը. ք. 174 “
E₃ = ձեռ. ք. գ. 1317 “
N = ձեռ. ա. գ. 994 “
J = ձեռ. 336 Վիեննա
A = ձեռ. ք. գ. 39 Վենետիկ
V₁ = ձեռ. ք. գ. 957 “ } V
V₂ = ձեռ. 2372 Էջմիածին
Is = ձեռ. 2359 “
D° A° M° S° H° E° J° = Դավթի, Անանունի, Մովսեսի, Ստեփանոսի,
Համամի, Հովհաննես Երզնկացու, Եսայի
Նչեցու մեկնությունները
Այս՝ <> փակագծերում գտնվող բառերը մատյաններում չեն պահպանվել:
“ () գտնվողները, ինձ թվում է, բնագրին խորթ են:
“ Γ 7 կամ L 1 փակագծերի մեջ վերցված բառերը տարակուսելի են՝
ընթերցվում են միայն M կամ E մատյաններում:
Տե՛ս նաև էջ XCV-XCVI:

CLXXXVI

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Բնագրերի ավարտին՝ «Անուանց եւ բառից» ցանկերից հետո, Ն. Ադոնցը առանձին բաժնով ներկայացրել է նաև աշխատանքում տեղ գտած վրիպումները, ուղղելիքները և հավելումները: Մենք անհրաժեշտ համարեցինք այդ ուղղումներն ու հավելումները տեղադրել հրատարակվող բնագրերի համապատասխան հատվածներում: Փաստորեն, այժմ բնագրերը գերծ են Ադոնցի մատնանշած վրիպակներից, իսկ հավելումներն էլ տեղ են գտել համապատասխան դրվագներում: Այնուհանդերձ, հնարավոր թյուրիմացություններից խուսափելու նպատակով, անհրաժեշտ համարեցինք վրիպակների և հավելումների ադոնցյան ցանկը ևս ներկայացնել ընթերցողների ուշադրությանը:

Նշենք նաև, որ բացի մատնանշված վրիպակներից, բնագրերում և հատկապես գիտական ապարատում, նկատելի են նաև սխալագրության առանձին դեպքեր, որոնց սակայն չենք անդրադառնում՝ Ադոնցի կատարած աշխատանքին չմիջամտելու մտավախությամբ:

CORRIGENDA ET ADDENDA

Վրիպակք եւ յաւելիք

213	զգաւրութիւնն	corr	(զ)զա(ւ)րութիւնն.
3 not 1-2	E ₂	»	E ₃
» not 11-12		add	T
5 not 24 -		corr	23
not 26		»	25
8 not 17		»	18
» » 20		»	26
96	մանուէղ	»	Մանուէղ
1622	մարդիթ	»	Մարդիթ
20 not 25		add	M E E ₂
2410	շեշտոր	corr	շեշտոր
2624	ante քստ	add	է
407	դիկդիկոն	corr	Դիկդիկոն
82 not 23	վերաւորութիւն	»	վերաւորութիւն
82 »	ՄՀՄ. թ.	»	ՄՀՄ. p.
842	տաւեալ	»	տաւել
8518	երողին	»	երողին
85 not 2-4	ի պատերազմ	add	նոնոս, 54.
8710	տաւելապես	corr	տաւելապէս
8720	զործէ	»	զործ է
898	կաղս իկաղ	»	կաղ իկաղս
» not	ի կաղ] ի կաղս E	»	ի կաղս] ի կաղ M
9113	E 44	»	E 84
1036	<ժք>	»	<ժգ>
112	<ժգ>	»	<ժղ>
10722	մենակ	»	մեկնակ
10911	ըստ	»	ըստ
1147	յանձիւր	»	յանձնիւր
1291	քերթութիւն	»	քերդութիւն
1309	փողատեղեցին	»	փողատեղեցին
13015	նախասահմանաւ	»	նախ սահմանաւ
13112	յայտարար	»	յայտ արար
14718	ըստ գիտեմ	»	ըստգիտեմ
1653	ըննաքարքսոն	»	ըննաքարքսոն
16512	զլաւդակսն	»	զլուդակսն

170 5	զմանկաւասարն	corr	զմակաւասարն
186 16	սիտականութեանն	»	սիտակութեանն
199 18	արտաքելել	»	արտաքերել
206 28	բարտակ	»	բարդակ
217 17	կերքը	»	կերքը
219 8	չորեքնգեան	»	չորեքնգեան
»	այոաչին	»	սոաչին
229 29	Դաւիթ	»	(Անան) <Դաւիթ>
229	not	add	դրոս ԵՍԷ՝ durrā'a
234 29	ութերեակն	corr	ութերակն
238 8	Դաւիթ	»	<Դաւիթ>
241 10	բարովորք	add	notam vox corrupta ex perroquet?
253	Ողայն եւ Ողորբայն	corr	Ողայն եւ Ողորբայն
254 18	զԱնիտն եւ զՄեկտոնն]	add	notam: v. Isag Porph 243.
258 16	վեր ի	corr	ի վեր
279 8	փութով	»	փութով

CXC

ԱՐՈՒԵՍՏ ԴԻՈՆՈՍԵԱՅ ՔԵՐԱԿԱՆԻ

CXCI

ΤΕΧΝΗ ΔΙΟΝΥΣΙΟΥ ΓΡΑΜΜΑΤΙΚΟΥ

CXCII